ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հեղինակային և խմբագրական խումբ

Հիմնադրամի նախագահ և Ծրագրի նախաձեռնող և ղեկավար՝
Սամվել Աղասու Մխիթարյան

Հիմնադրամի տնօրեն, դրամաշնորհային ծրագրի համակարգող՝
Մկրտիչ Ռուբիկի Անուշյան

Դրամաշնորհային ծրագրի ղեկավար՝
Վախթանգ Մուրադի Մարգարյան

Ծրագրի աշխատակազմի ղեկավար՝
Արթուր Մարատի Համբարձումյան

Աշխատանքային և փորձագիտական խումբ՝
Արա Մարատի Համբարձումյան
Կարինե Սամվելի Մխիթարյան
Ռոման Սեդրակի Մելիքյան
Լուսինե Համլետի Մուրադյան
Եվգենյա Բորիսի Դանիելյան
Անուշ Վալոդի Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2007թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆՏՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2007

ՀՏԴ 329 (479.25) (03)
ԳՄԴ 66.6 (2 Հ) g^2
Հ 247

Հ 247 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2007թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԸՆՏՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

«Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամ», Երևան, 2007. – 136 էջ:

Հեղինակային և խմբագրական խումբ՝ Սամվել Աղասու Մխիթարյան, Մկրտիչ Ռուբիկի Անուշյան, Վախթանգ Մուրադի Մարգարյան, Արթուր Մարատի Համբարձումյան, Արա Մարատի Համբարձումյան, Կարինե Սամվելի Մխիթարյան, Ռոման Սեդրակի Մելիքյան, Լուսինե Համլետի Մուրադյան, Եվգենյա Բորիսի Դանիելյան, Անուշ Վալոդի Գրիգորյան:

ԳՄԴ 66.6 (2 Հ) g^2

Ընտրողի սույն ուղեցույցում ներկայացվում է ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի ընտրություններին մասնակցող ՀՀ կուսակցությունների գործունեության, խնդիրների, նպատակների և ծրագրային հիմնադրույթների վերաբերյալ ամփոփ, անաչառ և համադրելի տեղեկատվություն: Ուղեցույցը կազմվել է «Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամ» ոչ առևտրային կազմակերպության (Հիմնադրամ) կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունների տեղեկագիր և ընտրողի ուղեցույց» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակված հարցաթերթիկին կուսակցությունների կողմից տրված պատասխանների և նրանց պաշտոնական հրապարակային փաստաթղթերում ներառված հիմնադրույթների համադրման հիման վրա: Ուղեցույցը նախատեսված է հասարակության լայն շրջանակների, ինչպես նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների, ուսումնական հաստատությունների, հիմնադրամների և պետական կառավարման մարմինների համար:

«Սույն Ուղեցույցի հրապարակումը, հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում:

Ուղեցույցի հրատարակման համար Հիմնադրամին աջակցություն է ցուցաբերվել նաև ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից:

Ուղեցույցի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են համապատասխանաբար ՀՀ կուսակցություններին և «Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամ» ոչ առևտրային կազմակերպությանը, գտնվում են նրանց պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության, Միացյալ Նահանգների կառավարության, Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի, ԵԱՀԿ կամ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետների հետ:

Սույն Ուղեցույցը նախատեսված չէ վաճառքի համար:

© ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, 2007

ISBN 978-99941-832-1-1

Հարգելի ընթերցող

Կուսակցությունների գաղափարախոսական առանձնահատկությունների, ծրագրային նպատակների և խնդիրների, ինչպես նաև հանրության ուշադրության կենտրոնում գտնվող կարևորագույն հիմնախնդիրների նկատմամբ ունեցած դիրքորոշումների վերաբերյալ անաչառ, համադրելի, մատչելի և այժմեական տեղեկատվության ապահովումը վճռորոշ դեր ունի քաղաքացիների կողմից գիտակցված քաղաքացիական դիրքորոշման ձևավորման խնդրում:

Սակայն, ՀՀ հանրությունը հիմնականում զրկված է ՀՀ կուսակցութուններեի և նրանց գործունեության վերաբերյալ անաչառ և համադրելի տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, որը նվազեցնում է քաղաքացիների անկախ մտածելու, իմաստավորված կարծիք ձևավորելու և ինքնուրույն գիտակցված որոշումներ կայացնելու հնարավորությունը: Այս երևույթը՝ հանդիսանալով հասարակության լայն շրջանակների քաղաքական անտարբերության պատճառներից մեկը, խոչընդոտում է նաև քաղաքական կուսակցությունների կայացմանը, նրանց պատասխանատվության և հաշվետվողականության բարձրացմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը: Մասնավորապես, այդ պատճառով է, որ մեր երկրում նախընտրական գործընթացները՝ գաղափարների, ծրագրերի և կարևորագույն ու վճռորոշ հիմնախնդիրների վերաբերյալ կուսակցությունների ու քաղաքական գործիչների դիրքորոշումների հրապարակային մրցակցության փոխարեն, հաճախ վերածվում են ինքնագովերգման ու մրցակիցների վարկաբեկման:

Արդյունքում բազմաթիվ կուսակցությունների ու քաղաքական գործիչների դիրքորոշումներում առկա փաստացի տարբերություններում չկողմնորոշված և անձնական գիտակցված վերաբերմունք չձևավորած քաղաքացիների քաղաքական կողմնորոշման վրա առավել հաճախ ազդում են գովազդները, կուսակցությունների ու նրանց առաջնորդների հանրաճանաչությունը, անգամ տարաբնույթ հորդորանքներն ու ընտրակաշառքները: Առավել ևս, կուսակցութունների և նրանց գործունեության վերաբերյալ անաչառ տեղեկատվությանը երբեմն փոխարինող անձնավորված գնահատականները, որակումները, ապատեղեկատվությունը, գովազդը և այլն՝ բուն տեղեկատվության բացակայությունից ավելի վտանգավոր լինելով հանդերձ, խիստ բացասաբար են անդրադառնում նաև ընդհանրապես անաչառ տեղեկատվության նկատմամբ հանրային պահանջարկի և վստահության ձևավորման վրա:

Վերը նշված հիմնախնդիրների լուծման և քաղաքական կուսակցությունների գործունեության, խնդիրների, նպատակների և ծրագրային հիմնադրույթների վերաբերյալ հանրությանն անաչառ, համադրելի և մատչելի տեղեկատվության տրամադրման փորձ էր Հայաստանում ԱՄՆ դեսպանատան օժանդակությամբ Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամի կողմից 2004 թվականին իրականացված «ՀՀ քաղաքական կուսակցությունները» ծրագիրը, որի ընթացքում ստեղծվել էր 01.09.04թ. դրությամբ գործող ՀՀ քաղաքական կուսակցությունների տեղեկատվական բազա, ինչպես նաև մշակվել, հրապարակվել և հանրությանն էր ներկայացվել ՀՀ քաղաքական կուսակցությունների տեղեկագիրը հայերեն և անգլերեն լեզուներով:

Սակայն քաղաքական դաշտն անընդհատ փոփոխվում է, փոփոխություններ են կատարվում այդ դաշտը կարգավորող օրենդրության մեջ, որի արդյունքում որոշ քաղաքական կուսակցություններ լուծարվել և միավորվել են, փոխել են իրենց քաղաքական դիրքորոշումները, ստեղծվել են նորերը և այլն: Ուստի քաղաքական կուսակցություններին վերաբերող տեղեկատվությունը պարբերաբար վերանայման և նորացման կարիք ունի՝ առավել ևս ՀՀ Ազգային Ժողովի և Նախագահական գալիք ընտրությունների նախաշեմին:

Այսպիսով, սույն ուղեցույցի, մշակման և հրապարակման, ինչպես նաև համապատասխան տեղեկատվական բազայի և ինտերնետային կայքի նորացման գլխավոր նպատակն է համակարգված, համադրելի, անկողմնակալ, մատչելի և այժմեական տեղեկատվության պարբերական տրամադրման միջոցով բարելավել բնակչության իրազեկվածությունը ՀՀ կուսակցությունների վերաբերյալ և վերջիններիս հաշվետվողականության և պատասխանատվության ապահովման համար անհրաժեշտ տեղեկատվական հիմքերը, դրանով իսկ նպաստելով նաև ՀՀ քաղաքացիների քաղաքացիական ակտիվության և պատասխանատվության բարձրացմանը, իմաստավորված քաղաքական դիրքորոշումների ձևավորմանը և գիտակցված որոշումների կայացմանը:

Սամվել Աղասու Մխիթարյան՝
տ.գ.թ., «Քաղաքացիական և Սոցիալական
Զարգացման Հիմնադրամի» նախագահ,
ծրագրի նախաձեռնող և ղեկավար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2007թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ*....7

1. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԱԺԿ)....7

2. «ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԱՀԿ)....12

3. «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ» (ԱՄԿ)....16

4. ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԲՀԿ)....21

5. «ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ....31

6. «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԺԿ)....35

7. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (Ժող Կուս)....44

8. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ....48

9. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՈՒԺԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԺՈՒԿ)....52

10. «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՅԴ)....57

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԱԿ)....62

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԴԿ)....65

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԵԿ)....70

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԺԿ)....74

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԿԿ)....79

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀԿ)....82

17. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ» (ՀՄԿ)....88

18. «ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀՇ)....92

19. «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ»....96

20. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՄԱԿ)....99

21. ՄԻԱՑՅԱԼ ԱԶԱՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՄԻԱԿ)....103

22. «ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՆԺԿ)....106

23. ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ (ՊԿ)....111

24. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՍԴՀԿ)....114

25. «ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ....118

26. «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ....122

ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՐՑԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱԽՍԱՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .126

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՀՀ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ....128

ՉԼՐԱՑՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ....130

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ....135

* Սույն ուղեցույցից և համապատասխան տվյալների բազայից օգտվելու պարզության ապահովման նպատակով կուսակցությունները ներկայացվում են ըստ նրանց հայերեն անվանումների այբբենական հաջորդականության:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամ» ոչ առևտրային կազմակերպությունը (ՔՍԶՀ, Հիմնադրամ), շարունակելով իր կողմից 2004-2005թթ. սկսած ՀՀ կուսակցությունների գործունեության, ծրագրային նպատակների և խնդիրների, ինչպես նաև մեր երկրի առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրների նկատմամբ նրանց ունեցած դիրքորոշումների վերաբերյալ հանրությանն անաչառ, համադրելի և այժմեական տեղեկատվության տրամադրման աշխատանքները, ՀՀ Ազգային ժողովի 2007թ. ընտրությունների նախաշեմին ընտրողների լայն զանգվածների ուշադրությանն է ներկայացնում սույն հանրամատչելի ուղեցույցը 2007թ. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների վերաբերյալ:

Ուղեցույցը մշակվել է Հիմնադրամի կողմից կազմված հարցաթերթիկին կուսակցությունների կողմից տրված պատասխանների և նրանց պաշտոնական հրապարակային փաստաթղթերում ներառված հիմնադրույթների համադրման հիման վրա: Այն հանդիսանում է Հիմնադրամի կողմից իրականացվող ՀՀ բոլոր քաղաքական կուսակցությունների գործունեության, խնդիրների, նպատակների և ծրագրային հիմնադրույթների վերաբերյալ հանրությանն անաչառ, համադրելի և մատչելի տեղեկատվության տրամադրման ծրագրի արդյունքներից մեկը, որի շրջանակներում նորացվում է նաև ՀՀ բոլոր քաղաքական կուսակցությունները ներառող Հիմնադրամի համակարգչային տեղեկատվական բազան և կայքէջը, ինչպես նաև մշակվել և հանրությանն է ներկայացվելու ՀՀ քաղաքական կուսակցությունների ամբողջական տեղեկագիրը՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

ՀՀ Ազգային ժողովի 2007թ. ընտրություններին մասնակցող կուսակցությունների սույն ուղեցույցի մշակման և հրապարակման, ինչպես նաև կուսակցությունների ամբողջական տեղեկատվական բազայի և ինտերնետային կայքէջի նորացման գլխավոր նպատակն է համակարգված, համադրելի, անկողմնակալ, մատչելի և այժմեական տեղեկատվության պարբերական տրամադրման միջոցով կուսակցությունների վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարելավումը, ինչպես նաև կուսակցությունների հաշվետվողականության և պատասանատվության բարձրացման տեղեկատվական հիմքերի ապահովումը, դրանով իսկ նպաստելով նաև քաղաքացիների քաղաքացիական ակտիվության և պատասխանատվության բարձրացմանը, իմաստավորված դիրքորոշումների ձևավորմանը և գիտակցված որոշումների կայացմանը:

ՀՀ կուսակցությունների վերաբերյալ այժմեականացված տպագիր և էլեկտրոնային տեղեկատվական նյութերի սույն վերահրատարակման հիմնական նպատակներից է նաև Հայաստանում կայանալիք ընտրությունների նախաշեմին հանրությանը ներկայացնել գործող քաղաքական ուժերի ծրագրային և կանոնադրական դիրքորուշումներն ու մոտեցումները երկրի զարգացման հեռանկարների, ինչպես նաև տնտեսության և հասարակական կյանքի առանցքային հիմնախնդիրների և զարգացման ուղիների վերաբերյալ: Հուսով ենք, որ հրապարակվելիք տեղեկատվական նյութերն ընտրողներին հնարավորություն կտան հանգամանալիորեն ծանոթանալ կուսակցությունների գաղափարախոսական առանձնահատկություններին ու ծրագրային մոտեցումներին, ինչն էլ կնպաստի առաջիկա ընտրություններում կողմնորոշվելուն և գիտակցված որոշումներ կայացնելուն:

Համապետական ընտրությունները լուրջ փորձություն են ցանկացած երկրի համար, առավել ևս, երբ առկա բազմաթիվ արտաքին մարտահրավերներին դիմագրավելուն զուգահեռ պետք է կարգավորվեն պետական նշանակության մի շարք ներքին բարդագույն խնդիրներ ևս: Մայիսի 12-ին Հայաստանում կայանալիք ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները նախ և առաջ կարևորվում են հենց այս համատեքստում: Ժամանակակից միջազգային չափանիշներով ժողովրդավարական ընտրությունների անցկացմամբ են պայմանավորված լինելու Հայաստանի հետագա զարգացման հեռանկարները, աշխարհին մեր երկրի ու հայ ժողովրդի ըստ արժանվույն ներկայացված լինելը և առկա համազգային մի շարք հիմնախնդիրների լուծման հետագա ջանքերի արդյունավետությունը: Այս առումով խիստ կարևոր է ընտրություններին մասնակցող կուսակցությունների կանոնադրական նպատակներին, ծրագրային հիմնադրույթներին, ինչպես նաև ներքին և արտաքին քաղաքական հրատապ խնդիրների վերաբերյալ նրանց դիրքորոշումներին ընտրողների լայն զանգվածների ծանոթ լինելը:

Գաղտնիք չէ, որ Հայաստանում կուսակցություններին ընտրողը, որպես կանոն, ճանաչում է դրանց առաջին դեմքերով՝ երբեմն պատկերացում անգամ չունենալով այդ քաղաքական ուժերի գաղափարախոսության և ծրագրային հիմնադրույթների ու նպատակների մասին: Լավագույն դեպքում ընտրողների լայն շերտերի համար կուսակցությունները տարբերվում են ըստ իրենց քաղաքական կողմնորոշվածության՝ իշխանություն - ընդդիմություն: Այսպիսով, կուսակցությունների ծրագրային մոտեցումներն ու գաղափարախոսական տարբերությունները ոչ միայն մղվում են ետին պլան, այլև շատ դեպքերում ընդհանրապես անտեսվում են: Դրան մեծապես նպաստում է նաև այն հանգամանքը, որ Հայաստանի հանրությունը հիմնականում զրկված է ՀՀ կուսակցությունների և նրանց գործունեության վերաբերյալ անաչառ և համադրելի տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, ինչն իր հերթին նվազեցնում է նաև քաղաքացիների անկախ մտածելու, իմաստավորված կարծիք կազմելու և գիտակցված ընտրություն կատարելու հնարավորությունը: Պատահական չէ, որ շարքային ընտրողը այս պայմաններում հեշտությամբ դառնում է քարոզչական տարբեր հնարքների, հորդորանքների, ընտրակաշառքի և տարաբնույթ պոպուլիստական խոստումների զոհ:

Հենց այս բացը փորձեց լրացնել Հիմնադրամը 2004 թ.-ին՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան օժանդակությամբ մշակելով և հրատարակելով «ՀՀ Քաղաքական Կուսակցություններ» խորագրով տեղեկագիրը: Սակայն, քաղաքական և օրենսդրական դաշտերի անընդհատ փոփոխման, բեմահարթակից առանձին ուժերի հեռանալու և նորերի ի հայտ գալու, կամ նրանց քաղաքական դիրքորոշումների տեղաշարժերի պատճառով կուսակցությունների, դրանց գործունեության ու նպատակների վերաբերյալ առանց այն էլ սուղ տեղեկատվությունը պարբերաբար վերանայման և թարմացման կարիք ունի: Հիմնադրամը շարունակելով իր ստանձնած առաքելությունը հանրությանն է ներկայացնում սույն «Ընտրողի Ուղեցույցը»՝ հաշվի առնելով նաև վերը նշվածը:

Քաղաքական ուժերի գաղափարախոսական առանձնահատկությունների, նրանց ծրագրային նպատակների և դիրքորոշումների վերաբերյալ քաղաքացիների իրազեկված լինելը առավել մեծ նշանակություն ունի նախընտրական շրջանում, քանի որ քաղաքացիական հասարակության ձևավորման գործում առանձնահատուկ նշանակություն ունի հանրության գիտակցված և հիմնավորված ընտրությունը: Դրանով բոլորս քաղաքացիական պատասխանատվություն ենք ստանձնում մեր պետության առջև և հայտ ներկայացնում՝ մասնակցելու երկրի զարգացման գործին: Ուստի, եկեք ճանաչենք մեր երկրի ապագան տնօրինելուն հավակնող քաղաքական ուժերին՝ իրենց ծրագրերով, որդեգրած ռազմավարությամբ, ինչպես նաև մեզ բոլորիս հուզող և մեր երկրի ապագայի համար կարևոր նշանակություն ունեցող հիմնախնդիրների նկատմամբ ունեցած դիրքորոշումներով: Միայն այս դեպքում բոլորիս ընտրությունը կլինի կշռադատված ու հիմնավորված, իսկ երկրի առաջընթացն ապահովողների կողմից ստանձնված պատասխանատվությունը՝ արդարացված և ընդունելի:

Բացի սույն «Ընտրողի Ուղեցույցի» տպագիր և էլեկտրոնային տարբերակների հրապարակումից Հիմնադրամը 2007թ հունվարի 10-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված և գործող բոլոր կուսակցությունների պաշտոնական փաստաթղթերի և իր կողմից մշակված հարցաթերթիկին կուսակցությունների տված պատասխանների միջոցով ձեռք բերված տեղեկատվության հիման վրա արդիականացրել է Հիմնադրամի ստեղծած ՀՀ քաղաքական կուսակցությունների տվյալների համակարգչային բազան և www.fcsd.am կայքէջը, ինչպես նաև վերահրապարակելու է ՀՀ բոլոր կուսակցություններն ընդգրկող «ՀՀ կուսակցություններ» խորագրով արդիականացված տեղեկագիրը և նրա էլեկտրոնային տարբերակը:

Սույն ուղեցույցում, հրապարակվող տեղեկագրում և նորացվող կայքում ներկայացված կուսակցությունների ցանկը և նրանց վերաբերյալ ընդհանուր տեղեկությունները (կուսակցության գրանցման համարը, հիմնադրման տարին, գրանցման օրը, անվանումը, հասցեն, գործադիր մարմնի ղեկավարը և այլն) Հիմնադրամի գրավոր դիմումի համաձայն իր 17.01.07թ. թիվ 3-2/0043-07 գրությամբ տրամադրել է ՀՀ Արդարադատության նախարարությունը: Ի տարբերություն սույն ուղեցույցի, վերոհիշյալ կայքէջում և տեղեկագրում ընդգրկված են ոչ միայն ՀՀ Ազգային Ժողովի 2007թ. ընտրություններին մասնակցող, այլ 10/01/2007թ.-ի դրությամբ գրանցված բոլոր 74 կուսակցությունները, ինչպես նաև 2007թ. փետրվարի 26-ին գրանցված և վերոհիշյալ ցուցակում չընդգրկված մեկ կուսակցություն, որը նաև մասնակցում է ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններին և ընդգրկված է սույն ուղեցույցում: Ընդ որում, կայքէջում և տեղեկագրում ընդգրկված այն 18 կուսակցությունները, որոնք տարբեր պատճառներով չեն մասնակցել Հիմնադրամի հարցմանը, մեր տեղեկատվական նյութերում ներկայացված են միայն ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվությամբ:

Վերը նշված ցանկի և նրանում ներառված տվյալների հիման վրա Հիմնադրամը կուսակցությունների պաշտոնական ներկայացուցիչներին փոխանցել է իր կողմից մշակած հարցաթերթիկ, որում ներառված հարցերը կազմվել են հաշվի առնելով կուսակցությունների ծրագրերում ներառված հիմնադրույթներն ըստ դրանց կարևորության, ինչպես նաև երկրի զարգացման ներկա հանգրվանին առնչվող մի շարք հրատապ և կարևոր նշանակության հիմնախնդիրներ, որոնց համադրումը հնարավորություն է տալիս տարբերակել կուսակցություններին առանձին հիմնահարցերի վերաբերյալ իրենց ունեցած պաշտոնական դիրքորոշումներով:

Չնայած 2007թ.-ի հունվարի 22-ից մարտի 20-ը ընկած ժամանակահատվածում բոլոր կուսակցություններին Հիմնադրամի կողմից ուղղված բազմաթիվ գրություններին, առաջարկներին ու հորդորներին, ինչպես նաև ձեռք բերված նախնական պայմանավորվածություններին և մամուլում հրապարակված հայտարարություններին՝ Հիմնադրամին հաջողվել է կապ հաստատել և հարցաթերթիկներ տրամադրել հունվարի 10-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված և գործող 74 կուսակցություններից 63-ին, որոնցից 7-ը տարբեր պատճառաբանություններով նպատակահարմար չեն գտել իրենց կուսակցության մասին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել: 11 կուսակցության ընդհանրապես հնարավոր չի եղել մասնակից դարձնել հարցմանը և Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի աշխատանքներին, քանի որ չնայած ձեռնարկված բազմաթիվ փորձերին անհնար է եղել նրանց գտնել Արդարադատության նախարարությունից ստացված հասցեներով կամ կապ հաստատել նշված հեռախոսահամարներով: Այսպիսով, 2007թ.-ի հունվարի 10-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված և գործող 74 կուսակցություններից իրենց կուսակցության մասին անհրաժեշտ տեղեկատվություն Հիմնադրամին տրամադրել են հարցմանը մասնակից դարձված 63 կուսակցություններից 56-ը, այդ թվում խորհրդարանական ընտրություններին մասնակցող գրանցված 26 կուսակցություններից 25-ը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, խորհրդարանական ընտրություններին մասնակցող և սույն Ուղեցույցում ընդգրկված կուսակցություններից մեկը պաշտոնապես գրանցվել է 2007թ. փետրվարի 26-ին: Կուսակցությունների պատասխանատու ներկայացուցիչների կողմից, կամ Հիմնադրամի փորձագետների հետ համատեղ լրացված հարցաթերթիկների պատասխանները համեմատվել են համապատասխան կուսակցությունների կանոնադրություններում, ծրագրերում և պաշտոնական այլ փաստաթղթերում ամրագրված դրույթների հետ: Համեմատության արդյունքում ցանկացած բնույթի անհամապատասխանության հայտնաբերման դեպքում (տվյալ հարցին տրված այլ մեկնաբանություն, բացակայություն, իմաստային տարբերություն, անավարտ միտք և այլն) լրացված հարցաթերթիկները խմբագրվել և լրամշակվել են, Հիմնադրամի կողմից նախապես մշակված չափանիշների և տարբերանշանների միջոցով նշվել են անհամապատասխանություն պարունակող առանձին դրույթներն ու հատվածները և խմբագրված տարբերակները ներկայացվել են համապատասխան կուսակցություններին՝ վերստուգման և հաստատման համար՝ հարկ եղած դեպքում նաև լրացուցիչ լրամշակման, հրապարակվելիք վերջնական տեսքի ճշգրտման և անաչառության ապահովման համար: Հրապարակվող հարցաթերթիկներում ներառված վերջնական պատասխանների և համապատասխան կուսակցությունների պաշտոնական փաստաթղթերում ամրագրված դիրքորոշումների միջև պահպանված բոլոր անհամապատասխանությունները դասակարգված և համապատասխան մեկնաբանություններով ու բացատրություններով ներկայացված են ինչպես սույն ուղեցույցում, այնպես էլ ամբողջական տեղեկագրում և կայքէջում:

Սույն ուղեցույցում ներկայացված նյութերի ընդհանուր տեսքը և կառուցվածքը՝ համադրման և ծանոթացման համար առավել դյուրին և ընթեռնելի դարձնելու նպատակով, տարբերվում են հարցաթերթիկի աշխատանքային տարբերակից, որի չլրացված տարբերակը ևս ներկայացված է ուղեցույցում:

Ուղեցույցի ծավալների նախատեսված սահմանափակության պատճառով, առանձին կուսակցությունների կողմից հարցաթերթիկի այս կամ այն հարցի վերաբերյալ պատասխանների և պաշտոնական փաստաթղթերում համապատասխան դիրքորոշումների բացակայության դեպքում, հարցաթերթիկի չլրացված հատվածները հանվել են՝ պահպանելով հարցաթերթիկի ընդհանուր կառուցվածքը, տրամաբանությունը և համարակալումները: Ուղեցույցի ծավալների նախատեսված սահմանափակումներով է պայմանավորված նաև ներկայացվող հիմնախնդիրների կազմի և տեղեկությունների ծավալի ամփոփ և սեղմ ներկայացված լինելը:

Իրականացվող աշխատանքների ընթացքում քաղաքական կուսակցությունների կողմից Հիմնադրամին ներկայացվել են համապատասխան գնահատականներ, դիտողություններ և առաջարկներ, որոնք ևս ամփոփ կերպով ներկայացված են սույն ուղեցույցի վերջում և հաշվի կառնվեն տեղեկատվական նյութերի հաջորդ թողարկումների մշակման և հրապարակման ընթացքում: Մասնավորապես, հնարավորինս կընդլայնվի տեղեկագրում ներառված հիմնահարցերի շրջանակը, կմեղմացվեն ծավալային սահմանափակումները և այլն:

Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում իրականացված աշխատանքներին օժանդակած կազմակերպություններին և Ծրագրին մասնակցած բոլոր կուսակցություններին և անձանց՝ համապետական ընտրություններից առաջ սույն ուղեցույցի և կուսակցությունների ներկայացման տեղեկատվական նյութերի նշանակությունը կարևորելու, համագործակցության և ցուցաբերած աջակցության համար:

Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2007թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԱԺԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Կորյունի 9, բն.4
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 56-21-50
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** ajk_info@yahoo.com, ajk_info@web.am
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.ajk.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 27.05.2001թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 27.05.2006թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 06.07.2001թ
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 26.11.2003թ.
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Բրոշյուր» 2007թ. «Առավոտ» օրաթերթ, նոյեմբեր 2006թ., «168 ժամ» պարբերական, հունվար 2007թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Խորհուրդ՝ 22 անդամ
- Վարչություն՝ 11 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Շավարշ Միքայելի Քոչարյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱԺԿ-ն՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության ժողովրդի և հայության բոլոր հատվածների բարգավաճման ու հզորացման գերագույն նպատակով, ներկա փուլի իր առաջնային նպատակն է համարում Հայաստանի Հանրապետության կայացումը՝ որպես ժողովրդավարական և իրավական պետություն:

Հայաստանում ժողովրդավարության հետևողական ամրապնդումն անհրաժեշտ պայման է այլ կարևորագույն նպատակներին զուգահեռ և արդյունավետ իրականացման համար: Այդ նպատակներից են՝

- ավտորիտար քաղաքական համակարգից և կլանային ու ստվերային տնտեսությունից ձերբազատումը,
- ազգային և համամարդկային արժեքների վրա խարսխված իրավական և սոցիալական պետության ստեղծումը,
- քաղաքացիական հասարակության ձևավորումը,
- մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորումը,
- մրցունակ տնտեսական համակարգի և աշխատատեղերի ստեղծումը, աղքատության հաղթահարումն ու սոցիալական բևեռացման մեղմացումը,
- ազգային անվտանգության ապահովումը,
- ազգային մշակութային ժառանգության պահպանումն ու զարգացումը,
- գիտության՝ հայագիտական և նոր տեխնոլոգիաների հիմք հանդիսացող ճյուղերի առաջնային զարգացումը,
- կրթական համակարգի՝ ազգային ավանդույթներին և ժամանակակից պահանջներին բավարարող բարեփոխումը,
- Հայաստանի՝ տարածաշրջանում առաջատար դիրքերի նվաճումը, միջազգային դերի բարձրացումը և միջազգային կառույցներին ինտեգրացումը,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչումը,
- սփյուռքի հետ արդյունավետ և բազմակողմանի կապերի խորացումը,
- արտագաղթը ներգաղթով փոխարինելը, ինչը նշված նպատակների իրականացման հավաքական ցուցանիշներից է:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Հայաստանի արտաքին քաղաքականության առաջին ուղենիշը Եվրահինտեգրումն է:
2. Երկրորդ ուղենիշը քաղաքակրթությունների միջև երկխոսության գաղափարի լիարժեք կրողի, զարգացնողի և Արևելքի հետ երկխոսության կամուրջ հանդիսացողի առաքելությունն է:
3. Երրորդ ուղենիշը մի կողմից Հայաստանի ազգապահպանության երաշխավորի պարտականության առանձնացումն է, մյուս կողմից՝ Հայաստանի Եվրահինտեգրման և քաղաքակրթությունների երկխոսության գործընթացում Սփյուռքի վրա հենվելն է:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Եվրահինտեգրում

Կուսակցությունը կարևորում է ինտեգրումը Եվրոպական կառույցներին (Եվրոպայի Խորհուրդ, ԵԱՀԿ) երկկողմանի հարաբերություններ եվրոպական երկրների հետ և Հայաստանի անդամակցությունը Եվրամիությանը՝ որպես արտաքին (և ներքին) քաղաքականության նպատակ:

բ. ԱՊՀ

Կուսակցությունը գտնում է, որ պետք է շարունակել փոխշահավետ համագործակցությունն ԱՊՀ-ի բոլոր երկրների հետ՝ շեշտը դնելով ոչ թե Ռուսաստան-Արևմուտք հակասություններն օգտագործելու, այլ Հայաստանը Եվրոպական արժեհամակարգին և չափանիշներին համապատասխանեցնելու վրա:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)[5]

Կուսակցությունը գտնում է, որ պետք է շարունակել անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության հետ:

դ. ՀԱԴԿ (NATO)

NATO-ի հետ ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցության խորացումը պետք է ուղղված լինի բանակի արդիականացմանն ու ռազմական ներուժի հզորացմանը:

ե. ԱՄՆ

Հաշվի առնելով ԱՄՆ-ի թե՛ Եվրաատլանտյան անվտանգության համակարգում (ՆԱՏՕ) առանցքային դերակատարումը, թե՛ առկա և աճող ազդեցությունն աշխարհում և մեր տարածաշրջանում ընթացող գործընթացների վրա՝ կուսակցությունը կարևորում է ԱՄՆ-ի հետ խորացող հարաբերությունները:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Կուսակցությունը կարևորում է փոխշահավետ համագործակցությունը Ռուսաստանի և ԱՊՀ այլ երկրների հետ՝ Հայաստանի եվրաինտեգրացման գործընթացում շեշտը դնելով ոչ թե Ռուսաստան-Արևմուտք հակասություններն օգտագործելու, այլ Հայաստանը եվրոպական արժեհամակարգին և չափանիշներին համապատասխանեցնելու վրա:

է. Թուրքիա

Պետք է Թուրքիայի հետ հարաբերություններում առաջնորդվել հետևյալ մոտեցումներով՝

- Հայաստանը պատրաստ է Թուրքիայի հետ թե՛ երկխոսությանը, թե՛ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն առանց որևէ նախապայմանի.
- Թուրքիայի ժողովրդավարացումը, Եվրոպական արժեհամակարգի կրող դառնալը և, որպես դրանց հետևանք, Եվրամիությանն անդամակցելը կնպաստի Հայաստանի հետ հարաբերությունների բարելավմանը.
- արձանագրելով, որ Թուրքիան դեռևս հեռու է եվրոպական արժեհամակարգի կրողը դառնալուց (ինչի ապացույցներն են մասնավորապես Հայոց ցեղասպանության ժխտումը, Հայաստանի շրջափակումը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարցում բացահայտ կողմնակալ քաղաքականությունը), Հայաստանի հիմնական անելիքն է ոչ թե Արևմուտքին ապացուցել, թե Թուրքիան ներկայումս չի համապատասխանում եվրոպական չափանիշներին, այլ առաջին հերթին մրցակցել Թուրքիայի հետ այդ չափանիշներին ավելի արագ հասնելու գործում:

ը. Ադրբեջան

Ադրբեջանի հետ հարաբերություններում ներկա փուլում պետք է առաջնորդվել հետևյալ մոտեցումներով՝

- ՀՀ-ն պետք է պատրաստակամ լինի Ադրբեջանի հետ տարբեր ուղղություններով (տնտեսական, հումանիտար, ինֆորմացիոն, մարզական) և տարբեր մակարդակներում (պետական կառույցներ, տնտեսվարող սուբյեկտներ, հասարակական կազմակերպություններ, լրագրողներ, գիտնականներ) հարաբերությունների ձևավորմանը՝ չպայմանավորելով դրանք ԼՂՀ հարցի կարգավորման հետ և գիտակցելով, որ այդպիսի հարաբերությունները կնպաստեն փոխադարձ անվստահության, անհանդուրժողականության ու թշնամանքի նվազեցմանը, ինչը բարենպաստ միջավայր կստեղծի ԼՂՀ հարցի կարգավորման գործընթացի համար,
- միջազգային ասպարեզում ազդեցության ավելացման մրցակցությունում Հայաստանը Ադրբեջանի նավթային գործոնին պետք է հակադրի ժողովրդավարություն և լիարժեք եվրաինտեգրացում,
- բանակին տրամադրվող նավթային դոլարներով ոգևորված Ադրբեջանի իշխանությունների ռազմատենչ հայտարարությունները և պատերազմի սպառնալիքը կանխելու համար Հայաստանը պետք է հզորացնի իր պաշտպանական համակարգը, ինչը ենթադրում է տնտեսության որակական աճի ապահովում, որը հնարավոր է միայն ժողովրդավարական, իրավական պետության արագ կայացման դեպքում:

թ. Իրան

Կուսակցությունը կարևորում է բազմաբնույթ հարաբերությունների խորացումը մեր հարևանների՝ հատկապես Իրանի և արաբական երկրների հետ:

ժ. Վրաստան

Պետք է Վրաստանի հետ բազմաբնույթ հարաբերություններում մասնավորապես հետամուտ լինել ջավախքահայության քաղաքական, սոցիալական, տնտեսական, կրոնական և կրթամշակութային խնդիրների լուծմանը՝ առաջնորդվելով եվրաինտեգրացման ուղին բռնած Վրաստանի՝ եվրոպական և միջազգային այլ կառույցների առջև ստանձնած և ստանձնելիք պարտավորություններով, ինչպիսիք են՝ հայոց լեզվին տարածաշրջանային լեզվի կարգավիճակի տրամադրումը, իրական տեղական ինքնակառավարումը, մշակութային ժառանգության պահպանումն ու զարգացումը, Վրաստանի ներպետական և քաղաքական կյանքում վրացահայության նկատմամբ ցանկացած խտրականության բացառումը:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Կուսակցությունը կարևորում է Հայաստանի՝ տարածաշրջանում առաջատար դիրքերի նվաճումը, միջազգային դերի բարձրացումը և միջազգային կառույցներին ինտեգրումը:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Կուսակցությունը դիտարկում է Արցախի հիմնահարցի այնպիսի կարգավորում, որը՝

- ելնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչումից և ինտեգրումից միջազգային կառույցներին,
- ապահովում է հուսալի տարածքային կապ ԼՂՀ-ի և ՀՀ-ի միջև,
- երաշխավորում է Ադրբեջանական ԽՍՀ-ից բռնագաղթած հայ բնակչության ոտնահարված իրավունքների (ներառյալ՝ կորցրած հայրենիքը) համարժեք փոխհատուցում:

խ. Ցեղասպանության ճանաչում[4]

Կուսակցությունը կարևորում է և հետամուտ է լինելու ցեղասպանության ճանաչմանը:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Սփյուռքը, հետևողականորեն շարունակելով Հայ դատին հետամուտ լինելու իր առաքելությունը, միաժամանակ կարող է նպաստավոր դերակատարում ունենալ այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝

- Հայաստանի ժողովրդավարացումը միջազգային կառույցներին,
- ինտեգրումն ու միջազգային ասպարեզում նրա կշռի բարձրացումը,
- ԼՂՀ-ի ամրապնդումը և միջազգային ճանաչումը,
- Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ներդրումների նկատմամբ վստահության ձևավորումը,
- դեպի Հայաստան և Արցախ ներգաղթի կազմակերպումն ու խրախուսումը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

ԱԺԿ-ն, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության ժողովրդի և հայության բոլոր հատվածների բարգավաճման ու հզորացման գերագույն նպատակով, ներկա փուլի իր առաջնային նպատակն է համարում Հայաստանի Հանրապետության կայացումը՝ որպես ժողովրդավարական և իրավական պետություն:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Տնտեսական խնդիրների լուծումն իրավական պետության կայացման հետ զուգահեռ ենթադրում է՝

- ռազմավարական գիտատեխնիկական և տնտեսական նպատակային համալիր ծրագրերի մշակում և իրականացում՝ ուղղված տնտեսության քիչ նյութատար ու գիտատարության բարձր մակարդակ ունեցող և հեռանկարային ուղղությունների (ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները, կենսատեխնոլոգիան, նանոտեխնոլոգիան) զարգացմանը,
- Հայաստանը տարանցիկ երկիր դարձնելու նպատակով Իրանի հետ Հայաստանի տարածքով անցնող ավելի հզոր գազամուղի, ինչպես նաև նավթամուղի և երկաթգծի կառուցում՝ միաժամանակ ջանքեր գործադրելով Գյումրի-Ղարս և աբխազական երկաթգծերի վերագործարկման ուղղությամբ,
- նոր, ժամանակակից և անվտանգ ատոմակայանի կառուցում, որի հզորությունը կապահովի էլեկտրաէներգիայի արտահանում,
- ինովացիոն տնտեսության կայացմանն ուղղված քաղաքականություն, այդ թվում վենչուրային հիմնադրամների ստեղծում,
- տնտեսական բոլոր բարեփոխումների ընդունումից առաջ դրանց սոցիալական և էկոլոգիական հետևանքների համալիր վերլուծություն:

Տնտեսական խնդիրների լուծումները ենթադրում են պետության կողմից տնտեսական լծակների (սուբսիդիաներ, վարկեր, հարկային արտոնություններ) վրա հիմնված կարգավորում:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Տնտեսական բարեփոխումների հիմնական նպատակն է ստեղծել տնտեսվարող սուբյեկտների իրավահավասարություն և հավասար մրցակցային պայմաններ ապահովող, ժամանակակից աշխարհում մրցունակ, գիտական ներուժի վրա հիմնված և տեղեկատվական հասարակությանը բնորոշ տնտեսություն:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Կուսակցությունը տնտեսության զարգացման և ժողովրդի բարեկեցության ապահովման անկյունաքարն է համարում մասնավոր հատվածի տնտեսական ներուժն ազատ մրցակցության պայմաններում:

ա. Ներդրումների խթանում

Անհրաժեշտ է ապահովել բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումն ու խրախուսումը:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Կուսակցությունը կարևոր է համարում ներքին շուկայում կոոպերացիայի մակարդակի բարձրացումը:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Անհրաժեշտ է տնտեսական հարաբերություններում ազատ մրցակցության դաշտի ապահովումը:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Հայաստանի տնտեսական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է փոքր և միջին բիզնեսի զարգացումն ու աջակցումը:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում[5]

ԱՀԿ պահանջների կատարման ներքո ապահովել տեղական արտադրության խթանումը և միջազգային շուկայում հայրենական արտադրանքի մրցունակության ապահովումը:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Մարզերի համաչափ զարգացման բնագավառում կուսակցությունը կարևորում է բնական մենաշնորհի պետական կարգավորումը և հակամենաշնորհային քաղաքականության զարգացումը:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Կուսակցությունը գտնում է, որ հակաստվերային տնտեսության քաղաքականությունը Հայաստանի տնտեսական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիայի արդյունավետ հաղթահարումը պայմանավորված է այնպիսի համակարգային բարեփոխումներով, որոնք իշխանությանը կդարձնեն վերահսկելի:

թ. Արդյունաբերության զարգացում

Կուսակցությունն առաջնահերթային է համարում վերամշակող արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը՝ որպես բնակչության զբաղվածության բարձր մակարդակի երաշխիք:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Գյուղատնտեսության զարգացման մեջ գյուղատնտեսության պետական աջակցությունն ավելի նպաստավոր պայմաններ պետք է ունենա:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Կուսակցությունը գտնում է, որ պետք է ժամանակակից և անվտանգ ատոմակայան կառուցել, որի հզորությունը կապահովի էլեկտրաէներգիայի արտահանում:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Հայաստանը տարանցիկ երկիր դարձնելու նպատակով Իրանի հետ Հայաստանի տարածքով պետք է անցնի ավելի հզոր գազամուղ, ինչպես նաև նավթամուղ և երկաթգիծ կառուցվի՝ միաժամանակ ջանքեր գործադրելով Գյումրի-Ղարս և աբխազական երկաթգծերի վերագործարկման ուղղությամբ: Կուսակցությունը կարևորում է ռազմավարական գիտատեխնիկական և տնտեսական նպատակային համալիր ծրագրերի մշակումը և իրականացումը՝ ուղղված տնտեսության քիչ նյութատար ու գիտատարության բարձր մակարդակ ունեցող և

հեռանկարային ուղղությունների (ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները, կենսատեխնոլոգիան, նանոտեխնոլոգիան) զարգացմանը:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ տնտեսության ինովացիոն զարգացման հիմքում ընկած է գիտության՝ հայագիտական և նոր տեխնոլոգիաների հիմք հանդիսացող ճյուղերի առաջնային զարգացումը:

ծ. Կորպորատիվ կառավարման բարելավում

Կուսակցությունը գտնում է, որ անհատի հոգևոր ու նյութական բարգավաճման, մարդու իրավունքների և ազատությունների ապահովման, կառավարման համակարգի առողջ և արդյունավետ գործունեության երաշխիքը ժողովրդավարությունն է: Քաղաքական համակարգի բարեփոխումների հիմնական նպատակը (և այդ նպատակին հասնելու չափանիշը) անձնիշխանական պետությունից հնարավորինս արագ անցումն է կայացած ժողովրդավարական պետության:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Աղքատության հաղթահարում

Կուսակցությունը գտնում է, որ աղքատության բարելավումն ածանցյալ է տնտեսական և քաղաքական համակարգի արդյունավետ բարեփոխումներից:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում[4]

Կուսակցությունն առաջնային է համարում առկա ծայրահեղ սոցիալական բևեռացման հաղթահարումը:

գ. Զբաղվածության ապահովում

Կուսակցությունն առաջնահերթային է համարում մրցունակ տնտեսական համակարգի և աշխատատեղերի ստեղծումը:

դ. Արտագաղթի նվազեցում

Կուսակցությունը կարևորագույն խնդիր է համարում արտագաղթը ներգաղթով փոխարինելը:

ե. Առողջապահական համակարգի բարելավում[5]

Պետք է իրականացնել անցում ապահովագրական բժշկությանը, պետք է անապահով խավի համար ապահովել մատչելի բուժսպասարկում: Կուսակցությունը կարևորում է նպատակային ծրագրերի իրականացումը, որոնց արդյունավետությունն ուղղակի կապված է տնտեսական բարեփոխումների և աշխատատեղերի ստեղծման ծրագրերի իրականացումից:

է. Կրթական համակարգի բարեփոխում[5]

Մտավոր և հոգևոր ներուժը Հայաստանի զարգացման հիմքն է, ինչը ենթադրում է պետության և հասարակության հատուկ վերաբերմունք գիտությանը, կրթությանը և մշակույթին: Պետք է անապահով խավին ապահովել անվճար բարձրագույն կրթությամբ:

ը. Գիտության զարգացում

Կուսակցությունը նախատեսում է ռազմավարական գիտատեխնիկական և տնտեսական նպատակային համալիր ծրագրերի մշակում և իրականացում՝ ուղղված տնտեսության քիչ նյութատար ու գիտատատարության բարձր մակարդակ ունեցող և հեռանկարային (ինչպիսիք են ինֆորմացիոն տեխնոլոգիաները, կենսատեխնոլոգիան) ուղղությունների զարգացմանը:

թ. Մշակույթ

Պետք է իրականացվի մշակութային ժառանգության պահպանմանը, զարգացմանը և արտերկրներում քարոզմանը (այդ թվում՝ ինտերնետային ցանցով) ուղղված համալիր ծրագրերի մշակում:

ժ. Սպորտ[5]

Կուսակցությունն առաջնային նպատակ է համարում առողջ սերնդի համար համապատասխան պայմանների ստեղծումը:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Երկիրը պետք է համապատասխանի Եվրամիության անդամակցության պահանջներին:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցությունն այս հարցում կարևորում է ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորումը, մասնավորապես.

- օրենքով մարդու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումները, որոնք մի կողմից համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու չափավոր են դրանց հասնելու համար (սահմանափակումների համաչափություն), մյուս կողմից այդպիսի սահմանափակումները կամ դրանց հանրագումարը չեն խախտում իրավունքի էությունը (սահմանափակումների սահմանափակում),
- լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը, այդ թվում՝ հեռարձակվող լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող մարմնի այնպիսի իրավունքների ամրագրումը, որոնք ուղղված են հեռարձակվող լրատվամիջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովմանը (իրավասու պետական մարմիններին և դատարան դիմելը՝ ոտնձգություններից պաշտպանվելու նպատակով, ոլորտում տիրող վիճակի մասին Ազգային Ժողովում ամենամյա, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հրատապ զեկույցով հանդես գալը),
- պետական կամ առևտրային գաղտնիք չհանդիսացող և մարդու անձնական կյանքին չվերաբերող ցանկացած տեղեկատվության մատչելիությունը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցությունը կարևորում է մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորումը:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Այս հարցում կուսակցությունը կարևորում է անկախ և արդար դատական իշխանության կայացումը, վարչական արդարադատության ինստիտուտի ստեղծումը՝ օրենքներին հակասող իրավական ակտերն անվավեր ճանաչելու և պաշտոնյաների հակաիրավական գործողությունները դադարեցնելու նպատակով:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Այս հարցի լուծումը կուսակցությունը տեսնում է Նոր ընտրական օրենսգրքի ընդունման մեջ, որը մասնավորապես կերաշխավորի՝

- խորհրդարանական ընտրությունների 100% համամասնական համակարգ՝ միաժամանակ ընտրողին վերապահելով կուսակցությունների (դաշինքների) կողմից առաջարկված թեկնածուների ցուցակում հերթականության ձևավորումը,
- ընտրական հանձնաժողովների ձևավորման և նրանց ղեկավար կազմի ընտրության քաղաքական հավասարակշռվածությունն ամրագրող կարգ,
- ընտրական գործընթացների թափանցիկությունը և վերահսկելիությունը՝ այդ թվում ժամանակակից տեխնիկական միջոցներով:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում[5]

Այս հարցում կուսակցությունը գտնում է, որ պետք է իշխանության կենտրոնը տեղափոխել անձից դեպի քաղաքական մարմին (խորհրդարան), ինչը միայն կարող է նպաստել կուսակցության կայացմանը և քաղաքական դաշտի զարգացմանը:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում[5]

Կուսակցությունը կարևոր է համարում արդար ընտրությունների երաշխավորումը, առանց որի անհնարին է կուսակցությունների և քաղաքական գործիչների պատասխանատվության բարձրացումը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները[5]

Կուսակցութունը գտնում է, որ հնարավոր պատերազմի կանխումը, ԼՂ-ի միջազգային ճանաչումը տարածաշրջանում, ՀՀ տրանսպորտային, տնտեսական մեկուսացման հաղթահարումը և ազգային անվտանգությանը սպառնացող ներքին մարտահրավերների հաղթահարումը ենթադրում է որոկական փոփոխություններ՝ ուղղված զարգացած մրցունակ տնտեսության կայացմանը և բանակի հզորեցմանը, ինչը հնարավոր է ժողովրդավարության հասարակության դեպքում:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Հայաստանն իր ժողովրդագրական ցուցանիշներով դարձել է մեր տարածաշրջանի ամենախոցելի երկիրը՝ ամենացածր բնական աճ (բացասական), ամենացածր ծնելիություն (հեռու է բնակչության վերարտադրումն ապահովելուց), ամենաարագ ծերացող հասարակություն (աշխատունակ և թոշակային տարիքի մարդկանց նվազող հարաբերակցություն): Հայաստանի «ժողովրդագրական փոսը» հաղթահարելու և դրա հետևանքները մեղմելու քաղաքականությունը պայմանավորված է երկու առկա բացասական գործոնների հաղթահարմամբ: Առաջին գործոնը հոգեբանականն է՝ մարդն օտարված է իշխանությունից, անպաշտպան է, իրեն չի զգում երկրի տեր և ընդհանուր նպատակների իրականացման մասնակից ու չունի հավատ ապագայի նկատմամբ: Երկրորդ գործոնը համապատասխան ծրագրեր իրականացնելու համար բյուջեում բավարար գումարների բացակայությունն է:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Բնապահպանական և քաղաքաշինական վիճակի առողջացման ծրագրերը ենթադրում են՝

1. անտառների և բնակավայրերի կանաչ գոտիների վերացման դադարեցումը և երկրի կանաչապատման երկարաժամկետ ծրագրի իրականացումը,
2. Երևան քաղաքի առողջացման համալիր ծրագրի իրականացումը, մասնավորապես՝
   - պետք է սահմանափակել քաղաքի կենտրոնում բազմահարկ շենքերի կառուցումը,
   - խթանել (հարկային և վարկային լծակների կիրառմամբ) բնակֆոնդի զգալի հատված կազմող վթարային և ոչ սեյսմակայուն շենքերի փոխարինումը նորակառույցներով,
   - խրախուսել բենզինին և դիզվառելիքին այլընտրանք հանդիսացող վառելիքով՝ հեղուկ գազով, էլեկտրաէներգիայով (տրոլեյբուսային ցանցի վերականգնում և զարգացում, մետրոյի զարգացում), հեռանկարում՝ ջրածնով աշխատող փոխադրամիջոցների օգտագործումը:

Պետք է իրականացնել համալիր ծրագրեր՝ ուղղված Հայաստանի ջրերի՝ գետերի, ստորգետնյա ջրերի, լճերի և հատկապես Սևանա լճի աղտոտման և բնապահպանական հավասարակշռվածության խախտման կանխմանը:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **2003թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 6
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 1

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ III Գումարում՝1

2. «ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԱՀԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Փ.Բուզանդի 1/3
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 58-01-37
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** NUR_NAP@rambler.ru
- **Հիմնադրման տարեթիվը՝** 04.04.2000թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 04.04.2000թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 27.04.2000թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 20.11.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 4876 անդամ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Խորհրդարանական ընտրություններ», «Նախագահական ընտրություններ», (Լրատվամիջոցների Կովկասյան Ինստիտուտ) 2003 թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ[1]

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 12 անդամ
- Մարզային խորհուրդ՝ 12 անդամ
- Համայնքային խորհուրդ՝ 12 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Արամ Սերգեյի Հարությունյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ[1]

Կուսակցության կանոնադրական նպատակներն ու խնդիրներն են.

- ամրապնդել ազգային պետականությունը,
- ազատական ժողովրդավարական սկզբունքների հիման վրա ստեղծել իրավական քաղաքացիական հասարակություն, որտեղ նրա անդամներին տրվում է առավելագույն ազատություն, համատեղելի ուրիշների ազատության հետ,
- բարձրացնել ժողովրդի քաղաքական կուլտուրան՝ այն դիտարկելով որպես անձի ներքին ազատության, նրա քաղաքացիության և ժողովրդավարության զարգացման չափանիշ,
- նպաստել ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանը ու դրսևորմանը, ինչպես նաև նպաստել հասարակական համաձայնության կայացմանը:

Վերը նշված նպատակների իրականացման համար անհրաժեշտ է ժողովրդի արժանապատիվ, բարեկեցիկ և անվտանգ ապրելու իրավունքն ապահովող պետության կառուցում:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[1]

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Առաջնորդվելով Հայաստանի շահերով՝ աշխատել համադրել գերտերությունների շահերը տարածաշրջանում:
2. Հայաստանի հզորացման, ազգային համաձայնության և հասարակության՝ որպես քաղաքացիական հասարակության ազգային մոդելի, ստեղծման համար անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանը գլոբալացման կրավորական և հարմարվողական օբյեկտից վերածվի գլոբալացման ակտիվ ազգաշինարար սուբյեկտի:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Անհրաժեշտ է վարել ճկուն և բազմավեկտորային արտաքին քաղաքականություն, որը ներառում է քաղաքական երկխոսության հիման վրա բարիդրացիական հարաբերությունների ամրապնդում բոլորի, նախևառաջ, հարևան պետությունների հետ, կառուցողական մասնակցություն տարածաշրջանային գործընթացներին, ինչպես նաև փոխշահավետ համագործակցություն միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

ա. Եվրաինտեգրում

Կուսակցությունը հեռավոր նպատակ է դիտում Եվրամիությանն անդամագրվելը:

բ. ԱՊՀ

ԱՊՀ-ի հետ անհրաժեշտ է արդյունավետ զարգացնել տնտեսական համագործակցությունը և շարունակել գործունեությունը կոլեկտիվ անվտանգության համակարգում:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Պետք է շարունակել ակտիվ անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը:

դ. ՀԱԴԿ (NATO)

Լինելով Հավաքական անվտանգության պայմանագրի անդամ՝ անհրաժեշտ է շարունակել ընդլայնել ներգրավվածությունը NATO-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում և առաջնորդվել գործակցության և համագործակցության սկզբունքներով՝ առանց վնասելու այլ կազմակերպությունների հետ հարաբերությունները:

ե. ԱՄՆ

Անհրաժեշտ է համադրել ԱՄՆ-ի և Ռուսաստանի շահերը տարածաշրջանում:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Կուսակցությունը Ռուսաստանը դիտում է որպես ռազմավարական գործընկեր և կարևորում է փոխշահավետ տնտեսական համագործակցության զարգացումն ու խորացումը:

է. Թուրքիա

Թուրքիայի հետ պետք է առանց նախապայմանների սահմանների բացում և դիվանագիտական հարաբերությունների հաստատում:

ը. Ադրբեջան

Անհրաժեշտ է շարունակել Ադրբեջանի հետ բանակցությունները Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ՝ ձգտելով ապահովել դրանցում Արցախյան կողմի վճռորոշ մասնակցությունը:

թ. Իրան

Պետք է ընդլայնել տնտեսական համագործակցությունն Իրանի հետ՝ որպես ռազմավարական դաշնակից պետության:

ժ. Վրաստան

Վրաստանի հետ պետք է շարունակել պահպանել բարիդրացիական հարաբերությունները՝ չանտեսելով ջավախահայության խնդիրները:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Կուսակցությունը կարևորում է կառուցողական մասնակցությունը տարածաշրջանային գործընթացներին:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Հաստատագրելով նվիրվածությունը Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և արդար կարգավորմանը՝ պետք է նպաստել բանակցային գործընթացների արդյունավետության բարձրացմանը՝ ապահովելով դրանցում Արցախյան կողմի վճռորոշ մասնակցությունը:
Կուսակցությունը հիմնահարցի կարգավորման համատեքստում ընդունում է հետևյալ տարբերակները՝ կամ անկախ ինքնավար պետություն, կամ վերամիավորում Հայաստանի հետ: Այլ լուծումների դեպքում երաշխավորված չէ ԼՂՀ բնակչության ինքնորոշման իրավունքը և անվտանգությունը:

խ. Ցեղասպանության ճանաչում

Հայ դատը դիտելով որպես ազգային գաղափարախոսություն՝ պետք է պայքարել ցեղասպանության հետևանքների վերացման համար:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Կուսակցությունը կարևորում է համայն հայության (մերձավոր և հեռավոր Սփյուռք) տնտեսական, ֆինանսական, ինչպես նաև մտավոր ներուժի առավել ներգրավումը, ինչը ենթադրում է անհրաժեշտ իրավական (երկքաղաքացիության ընդունում և այլն) և բարոյահոգեբանական պայմաններ:

կ. Այլ /Միջազգային ահաբեկչություն/

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում Հայաստանի ներգրավումը միջազգային ահաբեկչության դեմ պայքարին:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Նպաստել ժողովրդավարական արժեքների ձևավորմանը և իրականացմանը:
2. Հենվելով ազգային համաձայնության հասարակության՝ որպես առաջնային, ժողովրդավարական արժեքի վրա՝ աջակցել հասարակական համագործակցության գործընթացներին:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Այս հարցում անհրաժեշտ է ազատ մրցակցային պայմանների ստեղծում և ապահովում, հակամենաշնորհային քաղաքականության իրականացում, ներդրումների խրախուսում, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Տնտեսական քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի լիբերալ պահպանողական գաղափարախոսությունը՝ որպես գործնական քաղաքականության ռազմավարական ծրագիր՝ ուղղված բնակչության բարեկեցության բարձրացմանը: Պետք է իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կձևավորեն համագործակցության ամբողջական համակարգ պետության, տնտեսվարող սուբյեկտի և աշխատողների միջև՝ դարձնելով այս ընկերակցության հնարավորությունների օգտագործումն ազգային համաձայնության հասարակության սոցիալական հիմք:

ա. Դրամավարկային

Պահպանելով դրամական շուկայի հավասարակշռությունը և խուսափելով տատանումներից ու ցնցումներից՝ պետք է վարել հրապարակային և թափանցիկ դրամավարկային քաղաքականություն:

բ. Բյուջետային

Բարեփոխելով օրենսդրական և նորմատիվային դաշտը՝ անհրաժեշտ է ապահովել պետական ծախսումների առավել արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկելի դարձնել պետական բյուջեի կատարումը:

գ. Հարկային

Անհրաժեշտ է վարել մեղմ հարկային քաղաքականություն՝ նվազեցնելով հարկատեսակների թիվը, ինչպես նաև շահութահարկի տոկոսադրույքը: Պետք է առաջնորդվել հարկային կադաստրի սկզբունքով ու օրենսդրորեն կարգավորել պետության և հարկատուի փոխհարաբերությունները (ապահովել հարկատուի պաշտպանվածությունը կամայականություններից):

զ. Տարածքային

Տարածքային քաղաքականության հիմնադրույթները պետք է ամրագրված լինեն Սահմանադրությունում: Տարածքային քաղաքականությունը պետք է նպաստի հանրապետության տարածքի ողջ բնակչության կենսապահովման խնդիրների լուծմանը և տարածքների համաչափ զարգացմանը: Վարելով նպատակային տարածքային քաղաքականություն՝ հատուկ ուշադրություն դարձնել առավել քիչ զարգացած շրջաններին:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Արտաքին ներդրումների ներգրավման գործում ՀՀ-ն գրավիչ դարձնելու համար անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական դաշտի բարեփոխում:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Պետք է ազատ մրցակցության ապահովում(մենաշնորհի վերացում), փոքր և միջին բիզնեսի խթանում ու վարկերի մատչելիության ապահովում:

ա. Ներդրումների խթանում

Անհրաժեշտ է այնպիսի օրենսդրական դաշտի ապահովում, որը հնարավորություն կտա խթանելու ներդրումները: Պետք է բարեփոխել բանկային համակարգը (դիտարկելով բանկերը որպես գործընկերներ):

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Անհրաժեշտ է ապահովել բանկային համակարգի կայունությունն ու վերահսկողությունը և համապատասխան օրենսդրական դաշտի ու ազատ մրցակցության մթնոլորտի ստեղծմամբ՝ բարելավել մրցակցային դաշտը՝ պաշտպանելով տնտեսվարողների շահերը:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Ընդունելով պետության կարգավորիչ դերը՝ կուսակցությունը կարևորում է այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք կձևավորեն ամբողջական համակարգ պետության, փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների և աշխատողների միջև՝ դարձնելով այս ընկերակցության հնարավորությունների օգտագործումն ազգային համաձայնության հասարակության սոցիալական հիմք:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Անհրաժեշտ է զարգացնել տնտեսությունը սահմանամերձ և հեռավոր շրջաններում՝ սահմանելով հարկային ու վարկային արտոնություններ, և ստեղծել պետական ԲՈՒՀ-երի մասնաճյուղեր՝ աստիճանաբար ապահովելով տեղական կադրերով:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Տնտեսական և իրավական բարեփոխումների շնորհիվ պետք է ստեղծել մի իրավիճակ, որը կապահովի հասարակության համար ամուր հակակոռուպցիոն նորմատիվային բազա՝ դարձնելով կաշառակերությունը հասարակության բոլոր խավերի բարոյական խնդիր:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Պետությունը, որպես գյուղացու հուսալի գործընկեր պետք է օժանդակի նրան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման (վարկերի տրամադրում, սերմնացուի, թունաքիմիկատների և պարարտանյութի ձեռքբերման հարցերում աջակցություն) և գյուղմթերքների վերամշակման գործում:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Սոցիալական ոլորտում պետք է իրականացնել այնպիսի քաղաքականություն, որն էապես կթուլացնի հասարակության մեջ առկա բևեռացումը՝ նպաստելով հասարակության բոլոր անդամների կենսամակարդակի բարձրացմանը:

ա. Աղքատության հաղթահարում

Կուսակցությունն աղքատության հաղթահարումը դիտում է որպես ճիշտ տնտեսական և սոցիալական քաղաքականության հետևանք:

գ. Զբաղվածության ապահովում

Արդյունավետ տնտեսական քաղաքականությունը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, որը կապահովի բնակչության աշխատունակ մասի զբաղվածությունը՝ աստիճանաբար նվազեցնելով գործազրկությունը: Ակտիվ ներդրումային քաղաքականության շնորհիվ պետք է ստեղծել նոր աշխատատեղեր՝ նվազեցնելով գործազրկությունը:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Իրականացվող նպատակային սոցիալական և ներդրումային քաղաքականությունը կնպաստի առողջապահական ծառայությունների որակի բարձրացմանը և մատչելիությանը:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Պետք է բարձրացնել դպրոցի դերը, ապահովել սահուն անցումը դպրոցից ԲՈՒՀ, նպաստել հեռավոր մարզերում պետական ԲՈՒՀ-երի մասնաճյուղերի ստեղծմանը և անհրաժեշտ օրենսդրական բարեփոխումներով ապահովել ներբուհական ժողովրդավարություն, որը կնպաստի ԲՈՒՀ-երում ֆինանսական միջոցների ծախսման թափանցիկությանը և ԲՈՒՀ-երի աշխատակիցների սոցիալական վիճակի բարելավմանը:

ը. Գիտության զարգացում

Անհրաժեշտ է աջակցել գիտության հիմնարար ճյուղերի և նոր տեխնոլոգիաների զարգացմանը՝ ապահովելով այդ ոլորտների հենակետային և թեմատիկ ֆինանսավորման թափանցիկությունը և արդյունավետությունը:

թ. Մշակույթ

Պետք է վարել այնպիսի մշակութային քաղաքականություն, որը կնպաստի անհատի և հասարակության ստեղծագործական ներուժի դրսևորմանը՝ պահպանելով ազգի հոգևոր ժառանգությունը: Անհրաժեշտ է առաջնորդվել «Մեկ ազգ մեկ կշակույթ» կարգախոսով:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդի քաղաքական կուլտուրայի բարձրացման, մարդու իրավունքների պաշտպանության և անձի ներքին ազատության ապահովման ճանապարհով պետք է ձևավորվի հասարակություն՝ ամրապնդելով ժողովրդավարության հիմքերը:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Պետք է նպաստել փաստաբանական ինստիտուտի կայացմանը՝ որպես դատական համակարգի կայացման երաշխիք:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Անհրաժեշտ է ընտրական 5% շեմի իջեցում, համամասնական ընտրական համակարգի առավել գերակայություն մեծամասնական համակարգի նկատմամբ և ընտրությանը մասնակից կուսակցությունների մեկական ներկայացուցիչներից ընտրական հանձնաժողովների ձևավորում:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Պետք է ներկուսակցական ժողովրդավարության ապահովում, գաղափարապես մոտ կուսակցությունների միավորում և ազատ ու արդար ընտրությունների անցկացում:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Պետք է մշակել ազգային անվտանգության հայեցակարգ, որը կլինի կենսագործունեության բոլոր ոլորտներում արտաքին և ներքին սպառնալիքներից, անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովմանն ուղղված տեսակետների՝ սահմանված կարգով ընդունված համակարգ: Ազգային անվտանգության տեսանկյունից շատ կարևոր է կանխել արտագաղթը, ապահովել ազգային տնտեսության պաշտպանվածությունը և տեղեկատվական անվտանգությունը, ազգային գաղափարախոսությունը և բարոյականությունը, երկրի բնական հարստությունները, ռազմական հզորությունը, արդյունաբերական և ագրարային պոտենցիալը, ինչպես նաև աշխատանքային և ինտելեկտուալ ներուժը:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Անհրաժեշտ է հատուկ ուշադրության արժանացնել շրջակա միջավայրի պահպանմանը, վերականգնել էկոլոգիական հավասարակշռությունը և բարձրացնել բնական ռեսուրսների օգտագործման ու վերահսկողության արդյունավետությունը:

4.12. Այլ

Գիտությունը, կրթությունը և մշակույթը՝ որպես ազգի հարատևման կարևորագույն գործոններ, պետք է դառնան պետության հոգածության առարկա: Նրանց զարգացումն անհրաժեշտ է դիտել որպես առաջնահերթություն:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **2003թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 13
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 2

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **2003թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

3. «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ» (ԱՄԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Մոսկովյան 33 ա
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 53-36-32, 53-13-43, 56-88-80
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** amiab@arminco.com
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.amiab.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 27.12.1996թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 27.12.1996թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 28.02.1997թ.
- **Պետական. վերագրանցման ամսաթիվը՝** 24.11.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 46700 անդամ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Իրավունք» օրաթերթ, 27.12.1996թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար՝ 1675 անդամ
- Նախագահություն՝ 21 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Արտաշես Մամիկոնի Գեղամյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուսակցության գլխավոր նպատակն է նպաստել հասարակության մեջ յուրաքանչյուր անհատի ինքնիրացման իրավունքի պաշտպանությանը, նրա տնտեսական ազատության ապահովմանը, մեծամասնության ժողովրդավարական կամքի կենսագործմանը և փոքրամասնության իրավունքի պաշտպանությանը: Կուսակցությունը հանդես է գալիս հանուն այն ըմբռնման, որ մարդու կյանքը, նրա արժանապատվությունն ու խիղճը անպայմանորեն առաջնային են պետական իշխանության համեմատ:

Կուսակցությունն իր առջև խնդիր է դնում ՀՀ-ում ձևավորելու.

- քաղաքացիական հասարակություն,
- քաղաքակիրթ պետական կարգ, որի պայմաններում պետությունը պաշտպանում է քաղաքացիների իրավունքները,
- մրցունակ, սոցիալական կողմնորոշում ունեցող տնտեսական համակարգի ձևավորում:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

Արտաքին քաղաքականությունն առաջնահերթ պետք է միտված լինի հետևյալ նպատակների իրագործմանը.

1. Երկրի հուսալի անվտանգության ապահովում, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ամրապնդում և պահպանում.
2. Արտերկրում Հայաստանի քաղաքացիների և Սփյուռքի մեր հայրենակիցների իրավունքների և շահերի համակողմանի պաշտպանություն.
3. ՀՀ հարող տարածաշրջաններում լարվածության և կոնֆլիկտների պոտենցիալ օջախների առաջացումը կանխելու և եղածների վերացմանը ցույց տրվող աջակցություն, հայկական սահմանների պարագծով բարիդրացիության գոտու ձևավորում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Եվրաինտեգրում

Եվրոպական կառույցներին ինտեգրման ոլորտում անհրաժեշտ է իրատեսական և արդյունավետ ծրագրերի մշակում ու իրագործում՝ խոսքից անցնելով գործին:

բ. ԱՊՀ

Պետք է առաջնահերթության կարգով խորացնել տնտեսական կապերն ԱՊՀ պետությունների հետ՝ վերականգնելով հումքի և սպառման շուկաները:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Հարավային Կովկասում ստեղծված արտաքին քաղաքական բարդ իրավիճակային պայմաններում հայկական պետությանը խիստ անհրաժեշտ է պատմության դասերի յուրացումը և ՀԱՊԿ անդամ լինելը: Դա կարևորվում է ազգային անվտանգության տեսակետից:

դ. ՀԱԴԿ (NATO)[5]

Կուսակցությունը կարևորում է եվրակառույցներին ինտեգրման ոլորտում խոսքից գործի անցնելը և գտնում է, որ NATO-ի հետ պետք է շարունակել համագործակցությունը հանուն տարածաշրջանի խաղաղության:

ե. ԱՄՆ

Կուսակցությունը կարևորում է ԱՄՆ-ի հետ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական հարաբերությունների խորացումը և զարգացումը:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Կուսակցությունը կարևոր է համարում ռազմավարական գործընկերության սկզբունքների հիման վրա հայ-ռուսական հարարաբերությունների համակողմանի զարգացումը և հարստացումը, ինչն առաջին հերթին կնպաստի երկու երկրների տնտեսական ինտեգրացիայի ամրապնդմանը:

է. Թուրքիա

Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանը պետք է հարևան Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատի: ՀՀ քաղաքացիները պետք է սթափ գիտակցեն, որ Հայ դատի արդարացի լուծումը պետք է ընթանա խաղաղ ուղիով՝ հենվելով պատմական իրողությունների և միջազգային նորմերի ու սկզբունքների վրա: Չափազանց կարևոր է համարվում նաև թուրք-հայկական սահմանի բացումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը:

ը. Ադրբեջան

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում բարիդրացիական հարաբերությունների հաստատումն Ադրբեջանի հետ՝ միաժամանակ ԼՂՀ խնդրի լուծումը տեսնելով տարածաշրջանի ինտեգրման ճանապարհով:

ԼՂՀ խնդիրը պետք է լուծվի միմիայն ԼՂՀ քաղաքացիների ինքնորոշման իրավունքով՝ հաշվի առնելով եվրաինտեգրման նորմերն ու սկզբունքները:[5]

թ. Իրան[5]

Կուսակցությունը գտնում է, որ պետք է առաջնահերթության կարգով և հեռանկարային ուղիով հարևան Իրանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել՝ հատկապես էներգետիկ-տրանսպորտային ոլորտում:

ժ. Վրաստան[5]

Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանը Վրաստանի հետ ունի ուրույն դիրքորոշում այն կապակցությամբ, որ այնտեղ է գտնվում բազմաշատ հայկական Սփյուռքը՝ հատկապես Ջավախքում: Անհրաժեշտ է նկատի ունենալալ այն իրողությունը, որ հայ-վրացական հարաբերությունների զարգացումը թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ տնտեսական, և թե՛ այլ ոլորտներում լավ է երկուստեք երկրների համար: Պետք է նաև հաշվի առնել այն փաստը, որ այսօր միջազգային ատյանների տարածաշրջանում գտնվող կենտրոնը համարվում է Թբիլիսին:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Կուսակցությունը կարևորում է ՀՀ ամենաակտիվ մասնակցությունը տարածաշրջանի բոլոր ծրագրերին: Պետք է ձգտել բարիդրացիական հարաբերություններ հաստատել սահմանակից երկրների հետ: Միաժամանակ համակովկասյան կայունացման առանցքը պետք է լինեն Ռուսաստանը, Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը: Մյուս շահագրգիռ պետությունները կարող են ներգրավվել Կովկասում առկա վիճահարույց հարցերի կառուցողական, խաղաղ կարգավորման գործընթացի մեջ՝ չհավակնելով թելադրել իրենց կամքը: Այս հիմքի վրա պետք է էլ ավելի խորացնել փոխշահավետ համագործակցությունն Իրանի հետ, ինչպես նաև երկխոսություն վարել Թուրքիայի հետ:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Արցախյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորման և բանակցային գործընթացը փակուղուց դուրս բերելու հարցում պետք է ելնել հետևյալ իրողությունների ամրագրման անհրաժեշտությունից.

- արցախյան հիմնախնդիրն ազգերի ինքնորոշման և մարդու իրավունքների հարց է,
- հիմնահարցի խաղաղ կարգավորման գործընթացում Հայաստանի Հանրապետությունը հարգելու է միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը,
- Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում ոչ մի համաձայնություն չի կարող ձեռք բերվել առանց բանակցային գործընթացին ԼՂ-ի լիիրավ մասնակցության:

խ. Ցեղասպանության ճանաչում[5]

Կուսակցությունը գտնում է, որ ցեղասպանության ճանաչումը չպետք է դարձնել պետական խնդիր: Դա առաջին հերթին բարոյական խնդիր է, որում մեծ է Սփյուռքի աջակցությունը և դիվանագիտության խորը քաղաքականությունը: Ցեղասպանության ճանաչումը կարևոր է հանուն մարդկության համար, այն չպետք է դառնա երկու երկրների քավության նոխազը:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Կուսակցությունը գտնում է, որ Հայ ժողովուրդն ունի համազգային քարոզչական կենտրոնացված մարմնի կարիք, որը կկարողանա համակարգել և ուղղություն տալ աշխարհասփյուռ հայության քաղաքական ու հասարակական կազմակերպությունների աշխատանքներին: Պետք է էլ ավելի աշխուժացնել Հայաստանի և Սփյուռքի միջև տարբեր բնագավառներում համագործակցության գործընթացը: Անհրաժեշտ է ընդլայնել Հայաստանի բարձրագույն ուսումնական և միջնակարգ հաստատություններում սփյուռքահայ ուսանողների ուսումնառության հնարավորությունները:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

1. Պատասխանատվության զգացում և բարոյականություն:
2. Կանխատեսելիություն:
3. Պրոֆեսիոնալիզմ:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Կուսակցությունը կարևորում է համակարգային և կառուցվածքային բարեփոխումների համալիր ծրագրի իրականացումը՝ պահպանելով մակրոտնտեսական ընդհանուր, առաջին հերթին, հարկային, բյուջետային եւ դրամավարկային քաղաքականության կայունությունը:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունը գտնում է, որ ՀՀ իրականացվող բոլոր փոփոխությունները, տնտեսական փոխակերպումները պետք է հարաբերակցել երկրի արտադրական, ազգային անվտանգության շահերի հետ:

ա. Դրամավարկային

Կուսակցությունը կարևորում է դրամական զանգվածի այնպիսի աճի ապահովումը, որի դեպքում հնարավոր կլինի՝

- էապես իջեցնել վարկավորման տոկոսադրույքները,
- տնտեսության մեջ ապահովել դրամական զանգվածի վերահսկելի բավարար քանակություն, կայունություն և կանխատեսելիություն:

բ. Բյուջետային

Կուսակցությունը գտնում է, որ բյուջետային ծախսերի ավելացումը պետք է իրականացվի այն հոդվածներով, որոնք հետագայում կապահովեն ռեալ հատուցում: Պետական ֆինանսների իրական, երկարաժամկետ, կայուն առողջացումն անքակտելիորեն կապված է հանրապետության ողջ տնտեսության առողջացման հետ:

գ. Հարկային

Հարկային քաղաքականության բնագավառում կուսակցությունը գտնում է, որ առաջնահերթ խնդիրներն են՝

- արմատապես թեթևացնել հարկային բեռը, որը կխթանի տնտեսական աճը,

- մաքսային դրույքաչափերի իջեցում և միօրինականացում,
- հարկային համակարգի պարզեցում,
- ներդրումային ռեալ ծախսերի չափով հարկվող բազան նվազեցնելու իրավունքի սահմանում:

դ. Մաքսային

Կուսակցությունը գտնում է, որ մաքսային քաղաքականությունը պետք է ուղղված լինի ներքին արտադրողի խթանմանը: Կուսակցությունն առաջնահերթ է համարում ներքին արտադրողի շահերի պաշտպանումը. երբեք չպետք է հավասար լինի ներմուծողի և արտադրողի իրավունքները, մենք պետք է խթանենք ներքին արտադրողի շահերը:

ե. Ճյուղային[4]

Կուսակցությունը գտնում է, որ պետք է անպայման զարգացնել Հայաստանի արդյունաբերությունը և հետամուտ լինել, որպեսզի այն լինի բազմաճյուղ, հատկապես այն ճյուղերի զարգացումը, որն ուղղված է գիտատեխնոլոգիաների և ինովացիոն գործընթացների վրա:

զ. Տարածքային

Կուսակցությունը գտնում է, որ տարածքային քաղաքականության նկատմամբ պետք է լինի հավասար քաղաքական մոտեցում և զարգացում:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Կուսակցությունն առաջնային է համարում արտաքին ներդրումների բարելավումը և զարգացումը:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ՀՀ իրականացվող բոլոր փոփոխությունները, տնտեսական փոխակերպումները պետք է հարաբերակցել երկրի արտադրական, ազգային անվտանգության շահերի հետ:

ա. Ներդրումների խթանում

Ներդրումային քաղաքականության բնագավառում կարևոր է ապահովել ոչ միայն վարկային ցածր տոկոսադրույքների մակարդակը, այլև խթանել ձեռնարկատերերի շահագրգռվածությունը՝ ստացած եկամուտները արտադրության մեջ ներդնելու համար:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում[5]

Շուկայական տնտեսության մեջ պետության հիմնական գործառույթը ֆինանսական շուկաներին համապատասխանող օրենսդրության մշակման և անշեղ կիրառման պայմանների ապահովումն է, շուկայական՝ այդ թվում ֆինանսական, ինստիտուտների ձևավորման աջակցությունը:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Կուսակցությունը կարևոր է համարում գործունեության հավասար պայմանների ապահովումը տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար: Կարևոր է նաև պետպատվերի լայն կիրառումը հանրապետության տնտեսության մրցունակ ճյուղերում:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ փոքր ու միջին մասնավոր ձեռներեցությունը պետք է ներառված լինի պետական քաղաքականության մեջ, որը պետք է խարսխվի արդարացի մրցակցության սկզբունքների վրա:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում[5]

Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանը հանդիսանում է ԱՀԿ անդամ, հետևաբար նա պետք է կատարի իր պահանջները՝ չխախտելով մեր արտադրողների իրավունքները:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ պետք է մշակել մարզերի համաչափ զարգացման ամբողջական ծրագիր և հետամուտ լինել այդ ծրագրի անմիջական իրականացմանը:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Կուսակցությունը կարևորում է պետական պատվերի իջեցումը և առաջնային համարում տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար գործունեության հավասար պայմանների բարելավումը:

ը. Կոռուպցիայի հաղթահարում[4]

Այս ոլորտում անհրաժեշտ է հանցագործ ճանապարհով կուտակած եկամուտները դատապարտող օրենքի ընդունում, պատգամավորների և պետական ծառայողների գույքային վիճակի, ըստ ամենայնի, վերահսկման համար օրենսդրական դաշտի հստակեցում, ՀՀ քաղաքացիների մեջ հակակոռուպցիոն աշխարհայացքի ձևավորում, տնտեսության մասնավոր հատվածի ներգրավում պետական հակակոռուպցիոն քաղաքականության մեջ:

թ. Արդյունաբերության զարգացում

Տնտեսության զարգացման ամենակարևոր և օպտիմալ ճյուղերից է արդյունաբերությունը: Առանց արդյունաբերության զարգացման հնարավոր չէ պատկերացնել Հայաստանը որպես կայուն երկիր:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ պետք է հայրենական գյուղատնտեսական ապրանք արտադրողներին ապահովել պետական պաշտպանություն այն սննդամթերք ներկրողներից, որոնք, դեմպինգային գներով իրացնելով Հայաստանում արտադրվող նույնանուն սննդամթերքը, անհավասար պայմանների մեջ են դնում հայրենական գյուղացիական տնտեսությունները: Կուսակցությունը կարևորում է գյուղացիական տնտեսություններին անհրաժեշտ օրենսդրական, նյութական և կազմակերպական պայմանների ստեղծումը, հարկման համակարգի կատարելագործումը:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում[5]

Ցանկացած պետության կենսունակությունը կախված է նրա էներգետիկ անվտանգությունից, դրա համար էլ կուսակցությունը կարևորում է ՀՀ-ում այլընտրանքային էներգետիկ քաղաքականության իրականացումը: Կուսակցությունը կողմ է միջուկային էներգիայի ոլորտի զարգացմանը ՀՀ-ում, որն էլ իր բնույթով վահան է հանդիսանում արտաքին քաղաքականության ասպարեզում:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում[4]

Կուսակցությունը գտնում է, որ առանց ենթակառույցների արտադրության ոչ մի ճյուղ ապագա չունի: Կուսակցությունը կարևորում է այն փաստը, որ ՀՀ տնտեսության զարգացման մեջ առաջնային է համարվում արտադրության զարգացումը:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում[5]

Անհրաժեշտ են առաջնահերթության կարգով բյուջետային հատկացումներ ինովացիոն ծրագրերին:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Կուսակցությունը գտնում է, որ սոցիալական քաղաքականությունը պետք է ուղղված լինի Հայաստանի քաղաքացիների սոցիալական անվտանգության ապահովմանն իշխանության բոլոր ատյանների կողմից: Կուսակցությունը կարևորում է հասարակության մեջ ծայրահեղ բևեռացվածության մեղմացումը ֆիսկալ լծակների կիրառման շնորհիվ:

ա. Աղքատության հաղթահարում

Կուսակցությունը նախատեսում է աշխատանքի վարձատրության ամենացածր մակարդակի, կենսաթոշակի չափի կտրուկ մոտեցում նվազագույն կենսամակարդակի չափերին, սոցիալական երաշխիքների մակարդակի բարձրացում անաշխատունակների, հատկապես հաշմանդամների ու երեխաների համար:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում[4]

Անհրաժեշտ է բյուջետային և բարեգործական ֆինանսական միջոցների ներդաշնակեցում և հասցեականության ճշգրտում:

գ. Զբաղվածության ապահովում

Անհրաժեշտ է հասնել աշխատավարձի կանոնավոր մակարդակի վերականգնմանը, վերացնել հարկադրված զանգվածային գործազրկությունը և կանխել բարձրագույն կրթությամբ բարձրորակ կադրերի արտահոսքը:

դ. Արտագաղթի նվազեցում

Արտագաղթի նվազեցումը կուսակցության հիմնադրույթների մեջ ամենակարևոր տեղն է զբաղեցնում:[4]
Մեր երկրի զարգացումը կախված է արտագաղթի նվազեցումից:

ե. Առողջապահական համակարգի բարելավում[4]

Բժշկական ցանցի օպտիմալիզացիայի միջոցով հասնել բուժծառայության մատչելիությանը: Անհրաժեշտ է վերականգնել գյուղական առողջապահությունը, հատուկ ուշադրություն դարձնել մոր և մանկան պաշտպանությանը, ապահովել շտապօգնության մատչելիությունը, անվճար բժշկական օգնություն իրականացնել սպառողական նվազագույն զամբյուղից ցածր եկամուտներ ունեցող քաղաքացիների նկատմամբ:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում[4]

Սերունդների համերաշխությունը կուսակցության հիմնական հիմնադրույթն է: Նրա հիմնական խնդիրը պետք է լուծվի պետական ապահովման, հետևողական սոցիալական և պետական ծրագրերի քաղաքականությամբ (ծրագիր կանանց հարցում, ծրագիր երիտասարդների հարցում) : Ապահովագրական համակարգի հստակ կազմակերպում և բարելավում՝ հիմնականում տնտեսության ոլորտում: Դա կատարելագործման խնդիր է համարվում:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Հասարակական կյանքում անհրաժեշտ է բարձրացնել ուսուցչի և դպրոցի դերը, բարելավել ուսուցչի սոցիալական պայմանները, ամրապնդել դպրոցների նյութատեխնիկական բազան: Թե՛ պետական, և թե՛ մասնավոր կրթության հիմքում պետք է լինեն հավասար, արդարացի պայմաններ մտավոր, հոգևոր և ֆիզիկական զարգացման համար: Անհրաժեշտ է կիրառել մասնավոր բուհերի հավատագրման և արտոնագրման ավելի խիստ կանոններ:

ը. Գիտության զարգացում

Գիտության բնագավառի կարևորագույն խնդիրներն են.

- իրագործել Հայաստանի տնտեսական, քաղաքական, հոգևոր վերածննդին նպաստող գիտական հետազոտությունների սատարման պետական ծրագրեր,
- աջակցել գիտական նախագծերին,
- վերջնականապես ճշտել գիտության հեռանկարային ճյուղերի զարգացման առաջնահերթությունները:

թ. Մշակույթ

Կուսակցությունը կարևորում է պետության կողմից մշակույթի հովանավորչության հաստատումը: Մշակույթի գործիչների և ստեղծագործողների նյութական ու բարոյական խրախուսումը պետք է պայմանավորված լինի զուտ գեղագիտական նկատառումներով՝ անկախ քաղաքական կոնյուկտուրայից:

ժ. Սպորտ[5]

Անհրաժեշտ է պետական հոգածություն, հիմնադրամի ստեղծում:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Կուսակցությունը գտնում է, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու զարգացմանը նպաստող միջավայրի ձևավորումն առաջնահերթ նշանակություն ունի ժողովրդավարական պետության կերտման, ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդման գործում:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցությունը կողմնակից է ժողովրդավարական բոլոր ինստիտուտների կիրառմանը և զարգացմանը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում[5]

Յուրաքանչյուր երկիր իր առջև խնդիր է դնում ապահովել և զարգացնել մարդու իրավունքների բոլոր ինստիտուտները՝ հիմնականում ընտրական համակարգը, որը կուսակցությունն առաջնային է համարում:

դ. Դատահիրավական համակարգի բարեփոխում[5]

Դատական համակարգի բարեփոխումը կուսակցությունը դիտարկում է իշխանության տարանջատման սկզբունքում և դատական համակարգի անկախացման և ինքնուրույնության մեջ: Դատական համակարգի բարեփոխումը կուսակցությունը դիտարկում է իր լիակատար անկախացման մեջ:

ե. Ընտրական համակարգի բարելավում[5]

Կուսակցությունը գտնում է, որ ընտրական համակարգի հետ կապված անհրաժեշտ է ընտրական օրենսգրքի դրույթների հստակեցում՝ շեշտը դնելով ընտրական ցուցակների կազմման, ընտրական իրավունքի ամրապնդման, ընտրական գործընթացների վերահսկման և քարոզարշավի հավասար պայմանների մեջ:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում[5]

ԱՄԿ-ն կուսակցությունների աճը դիտարկում է գաղափարների, այլ ոչ ավելացող քանակի մեջ: Կուսակցությունը կողմ է գաղափարների միաձուլմանն ու հզորացմանը:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում[5]

Կուսակցությունը կարևոր է համարում քաղաքական ընդդիմախոսի կայացումը և այն հասկացության ընդունումը, ըստ որի ինչքան կայացած է քաղաքական կուսակցությունը և քաղաքական դաշտը, այնքան զարգացած է երկիրը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները[5]

Կուսակցությունն ազգային անվտանգությունը դիտարկում է ոչ միայն որպես արտաքին անվտանգություն: Դա հավաքական խնդիր է, որը ներառում է ազգի, էկոլոգիայի և բոլոր այն խնդիրները, որոնք վերաբերում են ժողովրդի բարեկեցիկ ապրելակերպին և բարգավաճմանը:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները[4]

Ժողովրդագրական (դեմոգրաֆիկ) հիմնախնդիրների հետ կապված կուսակցությունը դիտարկում է երկու հիմնախնդիր.

- արտագաղթի նվազեցում,
- ծնելիության խթանում (ապահովել մոր և մանկան խնդրի լուծումը):

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Անհրաժեշտ է չվերականգնվող բնական պաշարների օգտագործումից տնտեսության վերակողմնորոշումը դեպի վերականգնվող պաշարների օգտագործում, Սեվանա լճի փրկության ազգային ծրագրի իրականացում, այնպիսի օրենքների ընդունում, որոնք կսահմանեն օդի, ջրի, հողերի, անտառների պահպանությունը:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1999թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 58
- **2003թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 77
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 2

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1998թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2003թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ II Գումարում՝ 3
- ԱԺ III Գումարում՝ 9

4. ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԲՀԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Թումանյան 21
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 56-60-92, 54-88-07
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** info@bhk.am
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.bhk.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 30.04.2004թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 18.06.2004թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 370000 անդամ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** ծրագիրը՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Իրավունք» թերթ, «Առավոտ» օրաթերթ 20.12.2006թ., կանոնադրությունը՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Իրավունք» թերթ, «Առավոտ» օրաթերթ, 12.12.2006թ

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- ԲՀԿ քաղխորհուրդ՝ 35 անդամ
- ԲՀԿ նախագահ
- Կուսակցության նախագահ՝ Գագիկ Նիկոլայի Ծառուկյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բարգավաճ Հայաստան կուսակցությունը ստեղծվել է ժողովրդին ծառայելու, նրա համար արժանավայել կյանք ապահովելու և մեր հայրենիքի բարգավաճմանն իր նպաստը բերելու նպատակով:

ԲՀԿ անդամներին միավորում են ազատության, արդարության, համերաշխության և հայրենասիրության գաղափարները:

Հայաստանի առջև ծառացած հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն ժողովրդի վստահությունը վայելող, բարձր արժեքներ, ազնիվ նպատակներ ու վեհ գաղափարներ դավանող անհատների և քաղաքական ուժերի համախմբման ու համագործակցության պարագայում: Երկրի քաղաքական համակարգում ԲՀԿ-ն իր առաքելությունը տեսնում է հենց այդ համատեքստում և հանդես է գալու քաղաքացիական համախմբվածության ու համերաշխության դիրքերից:

ԲՀԿ-ն քաղաքացիական համաձայնության կուսակցություն է: Առաջնորդվելով այն հանրահայտ ճշմարտությամբ, որ մարդը բարձրագույն արժեք է, կուսակցությունն իր գործունեությունը նպատակաուղղելու է «Մարդու կողքին, մարդու միջոցով և մարդու համար» կարգախոսի իրականացմանը:

Մենք նպաստելու ենք երկրում ժողովրդավարական կարգերի ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը:

ԲՀԿ-ն կենտրոնամետ քաղաքական ուժ է, որի գործունեությունը խարսխվում է իրատեսության և ողջամտության վրա: Մերժելով ծայրահեղականությունը, քաղաքական արկածախնդրությունն ու դոգմատիզմը՝ կուսակցությունը ձգտելու է առարկայական և հիմնավոր կերպով լուծել հասարակության առջև ծառացած հիմնախնդիրները: Համոզված ենք, որ հասարակության զարգացման կարևորագույն երաշխիքը բարոյական և հոգևոր արժեքային համակարգի առկայությունն է:

Ժողովրդավարությանը և ազատականությանը դավանելու, արժեքային նոր համակարգի ձևավորմանը նպաստելու ձգտումով հանդերձ՝ ԲՀԿ-ն ազգային և ավանդական արժեքների պահպանության կողմնակից է՝ արժեքային այդ համակարգում կարևորելով ընտանիքը, եկեղեցին և պետականությունը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ապահովում:
2. Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համակարգված զարգացում:
3. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Որպես արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներ ԲՀԿ-ն դիտարկում է՝

1. միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր երկրների հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունների զարգացումը, այդ հիմքի վրա արտաքին քաղաքականության կառուցումը, դիվանագիտական ծառայության կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգի ձևավորումը,
2. Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, արտաքին քաղաքական ակտիվ կուրսի իրականացումը, երկրի տնտեսական և սոցիալական կայուն զարգացման համար բարենպաստ պայմանների ապահովումը, էներգետիկ անվտանգության ապահովմանն ուղղված պայմանների ստեղծումը, համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական և քաղաքական կառույցներին ինտեգրումը,
3. ահաբեկչության և այլ հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում այլ պետությունների և միջազգային կառույցների հետ համագործակցությունը, անհրաժեշտության դեպքում հակամարտության գոտիներում միջազգային կառույցների խաղաղապահ գործունեությանը մասնակցելը:

ա. Եվրաինտեգրում

Անհրաժեշտ է Եվրոպական Միության հետ համագործակցության սերտացումը, որի համատեքստում պետք է՝

- ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ՀՀ օրենսդրությունը Եվրոպական Միության չափանիշներին համապատասխանեցնելու, ինչպես նաև եվրոպական կառույցներին ինտեգրվելու ուղղությամբ,
- նպատել բոլոր բնագավառներում Եվրոպական Միության երկրների հետ փոխշահավետ հարաբերությունների զարգացմանը, ընդլայնել և խորացնել համագործակցությունը եվրոպական անվտանգությունն ապահովող հիմնական կառույցի՝ ՆԱՏՕ-ի հետ:

բ. ԱՊՀ

Անհրաժեշտ է հետխորհրդային երկրների հետ զարգացնել երկկողմ հարաբերություններ: Անցյալում գոյություն ունեցած տնտեսական կապերի, հումքի և սպառման շուկաների վերականգնման, հոգևոր մշակութային բնագավառներում համագործակցության իրականացման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան քայլեր:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

ՄԱԿ-ի, ԵԱՀԿ, Եվրամիության, ԱՀԿ, ՍԾՏՀ և եվրոպական ու միջազգային այլ կազմակերպությունների և կառույցների հետ Հայաստանի Հանրապետության արդյունավետ համագործակցություն:

դ. ՀԱՊԿ (NATO)

Անհրաժեշտ է նպատել բոլոր բնագավառներում Եվրոպական Միության երկրների հետ փոխշահավետ հարաբերությունների զարգացմանը, ընդլայնել և խորացնել համագործակցությունը եվրոպական անվտանգությունն ապահովող հիմնական կառույցի՝ ՆԱՏՕ-ի հետ:

ե. ԱՄՆ

ԱՄՆ-ի հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հետագա խորացումը և քաղաքական, տնտեսական, ռազմական, անվտանգության, հոգևոր-մշակութային, սոցիալական և այլ բնագավառներում համագործակցության մակարդակի էական բարձրացումը պետք է նպատակաուղղել այդ երկրի համակողմանի ներգրավմանը Հայաստանում ժողովրդավարական, սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացմանը, տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների լուծմանը, Հարավային Կովկասում կայուն և երկարատև խաղաղության հաստատմանն ու ամրապնդմանը, ԱՄՆ կողմից իրականացվող կամ համակարգվող տարածաշրջանային և միջազգային տարաբնույթ ծրագրերում ու կառույցներում ՀՀ մասնակցության ապահովմանը:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Հայ-ռուսական ավանդական, բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացումն իրականացնել՝ ելնելով քաղաքական, սոցիալ-տնտեսական, ռազմական, տարածաշրջանային անվտանգության, հոգևոր-մշակութային և այլ բնագավառներում փոխշահավետ համագործակցության և ռազմավարական գործընկերության սկզբունքներից:

է. Թուրքիա

Հայ-թուրքական միջպետական հարաբերությունների կարգավորումը և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պետք է իրականացվի առանց նախապայմանների առաջադրման: Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի մերժումը բացասաբար է անդրադառնում հայ-թուրքական հարաբերությունների վրա: Հայաստանի և Թուրքիայի միջև բնականոն փոխհարաբերությունների հաստատման շրջանակներում քննարկման առարկա կարող են դառնալ, մասնավորապես, տարածաշրջանային անվտանգության և համագործակցության, արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացում Թուրքիայի կողմից կշռադատված, կառուցողական, ոչ գաղափարախոսական դիրքորոշում ցուցաբերելու, հայ-թուրքական սահմանի բացման, հաղորդակցության ուղիների, այդ թվում՝ Գյումրի-Կարս երկաթուղու վերագործարկման, Թուրքիայում հայկական մշակութային արժեքների պահպանման հարցերը:

Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությունը, կուսակցության կարծիքով, չի հակասում Հայաստանի Հանրապետության ազգային, պետական շահերին, քանզի անդամակցության պարագայում Թուրքիան կարող է կանխատեսելի և վերահսկելի քայլեր կատարել իրական ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության, Հայաստանի հետ համագործակցության, շրջափակման վերացման և Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ:

ը. Ադրբեջան

Պետք է կառուցողական քայլեր իրականացնել Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա կնճռոտ հիմնախնդիրները կարող են լուծվել ոչ թե ատելության, այլ հանդուրժողականության մթնոլորտում՝ ելնելով պատմական փաստերից, արդի իրողություններից, միջազգային իրավունքի նորմերից և սկզբունքներից: Եվրոպական ընտանիքին անդամակցության, աշխարհում ժողովրդավարական գործընթացների անշրջելիության և անմիջական հարևաններ լինելու հանգամանքները ենթադրում են, որ հայ ժողովուրդը կարող է կողք կողքի խաղաղ գոյակցել թուրք և ադրբեջանցի ժողովուրդների հետ:

թ. Իրան

Տրանսպորտի և էներգետիկայի ոլորտներում հաղորդակցության ուղիների, էներգետիկ համակարգերի ստեղծման համատեղ ծրագրերի իրականացման, մշակութային և այլ բնագավառներում պետք է խորացնել փոխշահավետ, բարիդրացիական և ավանդական հարաբերություններն Իրանի հետ: Շարունակել «Իրան-Հայաստան» գազատարի և հաղորդակցության այլ ուղիների կառուցումը (մասնավորապես՝ հեռանկարում ձեռնարկել Իրան-Հայաստան երկաթուղու կառուցումը):

ժ. Վրաստան

Քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տարածաշրջանային անվտանգության, հաղորդակցության ուղիների, հոգևոր-մշակութային, հումանիտար և այլ բնագավառներում անհրաժեշտ է զարգացնել ավանդական, բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունները Վրաստանի հետ: Հայ-վրացական հարաբերություններում կարևորում ենք նաև Վրաստանում բնակվող հայերի, մասնավորապես՝ ջավախահայության անվտանգության և ինքնակառավարման իրավունքների ապահովման, Ջավախքի սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային հիմնախնդիրների լուծման հարցում վրացական իշխանությունների առարկայական և ծրագրային մոտեցումները: Այդ համատեսքտում, Հայաստանը վրացական իշխանությունների հետ փոխհամաձայնեցված ձևով մշտապես պետք է աջակցի Ջավախքի խնդիրների լուծմանն ուղղված Վրաստանի քայլերին:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Կարևոր է Հայաստանի անմիջական հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, տարածաշրջանում կայուն և երկարատև խաղաղության հաստատմանը նպաստելը, միջազգային և տարածաշրջանային ծրագրերի իրականացման գործընթացում Հայաստանի ընդգրկումը, Հայաստանը տարածաշրջանային զարգացման կենտրոնի վերածելը: ԲՀԿ-ն կարծում է, որ տարածաշրջանային նշանակության ծրագրեր կարող են հանդիսանալ Իրան – Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի երրորդ հերթի շինարարությունը, Իրան–Հայաստան երկաթգծի կառուցումը եւ Իրան – Հայաստան երկրորդ գազամուղի կառուցումը: Մենք կարծում ենք, որ նույնիսկ առկա տրանսպորտային շրջափակման պայմաններում Հայաստանը

կարող է դառնալ տարածաշրջանային զարգացման կենտրոն, մասնավորապես բանկային, առողջապահության, բնապահպանության և գիտության որոշ ոլորտներում: Այդ նպատակով վերոհիշյալ և մի քանի այլ բնագավառներում պետությունը պետք է մշակի և իրականացնի համալիր ծրագրեր: Մենք պետք է լիարժեքորեն օգտագործենք մեր բաց սահմանները հարևանների հետ: Դրա հետ մեկտեղ կուսակցությունը կարծում է, որ քանի դեռ ԼՂ հակամարտությունը կարգավորված չէ, քանի դեռ Հայերի Ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցը լուծված չէ, մեր մասնակցությունը տարածաշրջանային ծրագրերին հանդիպելու է խոչընդոտների:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման ապահովմամբ, հակամարտության երկու կողմերի՝ Արցախի և Ադրբեջանի կատարած փոխզիջումների հիման վրա, անվտանգության միջազգային երաշխիքների ամրագրմամբ Արցախի հիմնախնդրի խաղաղ, քաղաքական ճանապարհով կարգավորումը ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից մեկն է: Կուսակցությունը անհրաժեշտ է համարում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բազմակողմ և ուղղակի բանակցություններին զուգընթաց համակողմանիորեն աջակցել Արցախի անվտանգության ապահովմանը, ժողովրդավարացմանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը և տարածաշրջանային ինտեգրմանը: ԲՀԿ-ի համար ընդունելի է արցախյան հիմնախնդրի այնպիսի կարգավորումը, որի բանակցային գործընթացում ԼՂՀ-ն հանդես կգա որպես լիիրավ կողմ, իսկ Արցախի կարգավիճակի հարցում կբացառվի որևէ լուծում՝ առանց Արցախի ժողովրդի համաձայնության:

խ. Ցեղասպանության ճանաչում

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության մասնակցության չափն ազգային, պետական իրատեսական շահերով պայմանավորելը: Կուսակցության կարծիքով Հայոց ցեղասպանության դատապարտումը և միջազգային ճանաչումն այլընտրանք չունի:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Սփյուռքահայության հետ հարաբերությունները՝ մասնավորապես Հայաստան- Սփյուռք հարաբերությունների համակարգված զարգացումը և հետագա խորացումը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան սփյուռքահայերի օրինական իրավունքների ու շահերի պաշտպանությունը համարել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը: Հայաստան-Սփյուռք հարաբերությունների հիմքում պետք է դրվի այն գաղափարը, որ համահայկական հոգևոր-մշակութային կենտրոնը Հայաստանի Հանրապետությունն է, որը պետք է ստանձնի մայր հայրենիքի շուրջ հայության միավորման առաջատարի և ազգապահպանության երաշխավորի դերակատարությունը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Իրավական պետության կառուցում:
2. Քաղաքացիական հասարակության զարգացում:
3. Արդյունավետ տնտեսական և սոցիալական քաղաքականություն:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Պետական վարչարարության բարեփոխման և կատարելագործման նպատակով ԲՀԿ-ն անհրաժեշտ է համարում՝

1. բացառել նախարարությունների, գերատեսչությունների և պետական կառավարման այլ մարմինների կողմից միանման գործառույթների իրականացումը,
2. ընդունել վարչական կանոնակարգ՝ սահմանելով ու հստակեցնելով որոշումներ ընդունելու կարգը և ժամկետները, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության և վարչարարության կանոնների խախտման համար պատասխանատվությունը,
3. բարձրացնել պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկության մակարդակը՝ արմատավորելով հասարակական վերահսկողության միջազգային փորձը,
4. հնարավորինս կրճատել պետական պաշտոնյաների և ծառայողների թվաքանակը, բարձրացնել նրանց պատասխանատվությունը և կատարելագործել պետական ծառայողների վարձատրության համակարգը:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Դրամավարկային

ԲՀԿ-ն դրամավարկային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղություններ է դիտարկում՝

- տնտեսության զարգացմանը նպաստող արդյունավետ ֆինանսավարկային քաղաքականության մշակումը և իրականացումը,
- ոչ կանխիկ դրամաշրջանառության ծավալների ընդլայնումը և դրամի փոխարկելիության ապահովումը,
- բանկային համակարգի նկատմամբ վստահության լիարժեք վերականգնումը և համակարգի կողմից խնայողությունների ներգրավման գործընթացի խթանումը,
- վարկային դրույքաչափերի նվազեցումը, երկարաժամկետ վարկերի ծավալների մեծացումը և վարկային ռեսուրսների մատչելիության ապահովումը,
- վարկերի կամավոր ապահովագրության մեխանիզմների ներդրումը և բնակչության ավանդների անվտանգության երաշխիքների համակարգի կատարելագործումը,
- արժութային կարգավորման կատարելագործումը և արժութային օրենսդրության կիրարկման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը,
- գնաճի նպատակադրման ռեժիմում գնաճի կառավարման ճկունության ապահովումը,
- վճարահաշվարկային հարաբերությունների բարելավումը,
- ոլորտի կարգավորման իրավական դաշտի կատարելագործումը:

բ. Բյուջետային

Անհրաժեշտ են բյուջետային համալիր վերափոխումներ, հետևյալ ուղղություններով.

- պետական ֆինանսների կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում,
- բյուջետային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝ բյուջետային օրենսգրքի մշակում և ընդունում,
- բյուջետային գործընթացի և միջբյուջետային հարաբերությունների կատարելագործում,
- գանձապետական համակարգի զարգացում,

- բյուջեների և բյուջետային ընթացակարգերի կայունության և թափանցիկության ապահովում,
- ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրում,
- բյուջետային ծախսերի և պետբյուջեի մակրոտնտեսական համամասնությունների կանխատեսման մեթոդական հիմքերի մշակում և ներդրում,
- բյուջետային հաշվետվության և վերահսկողության ընթացակարգերի կատարելագործում,
- ֆինանսատնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունների (մասնավորապես՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների) միջև կոորդինացման մակարդակի բարձրացումը,
- ֆինանսական կարգապահության ամրապնդում:

գ. Հարկային

Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար Կուսակցությունը կարևորում է՝

- հարկային վարչարարության արդյունավետության և հարկային մարմիններում (հատկապես դրանց տարածքային ստորաբաժանումներում) ընդգրկված աշխատակիցների մասնագիտական մակարդակի բարձրացումը,
- օրենսդրության պահանջների պատշաճ կատարման, հարկային քաղաքականության թափանցիկության և կանխատեսելիության ապահովումը, այդ քաղաքականության արդյունքների կանխատեսման մեթոդական հիմքերի կատարելագործումը,
- հարկային օրենսդրության ու քաղաքականության կայունության ապահովումը և հարկման մեխանիզմների շարունակական կատարելագործումը,
- հարկային քաղաքականության մշակման և իրականացման վրա լոբբիստական գործունեության բացասական ազդեցության բացառումը,
- հարկային ապառքների և հարկային անհիմն գերավճարների կուտակման գործընթացի կանխումը,
- հայրենական արտադրության, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար հարկային դաշտի բարենպաստության մակարդակի բարձրացումը,
- օրենսդրական դաշտի պարզեցումը և օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմների ներդրումը,
- համապատասխան հնարավորությունների ստեղծումից հետո պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների և շահութահարկի նվազագույն պարտադիր վճարների կիրառման պրակտիկայից հրաժարումը,
- հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովումը:

զ. Տարածքային

Հայաստանի Հանրապետության տարածքային քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան՝

- հիմնավորված սկզբունքներով ու չափանիշներով համայնքների խոշորացումը, հանրապետության վարչատարածքային նոր բաժանման ձևավորումը և պետական կառավարման երկաստիճան համակարգին անցումը,
- հանրապետության վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական ներդաշնակ զարգացումը,
- ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների վերաբնակեցումը:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Արտաքին պարտքի կառավարման կատարելագործումը սերտորեն կապված և պայմանավորված է նաև ընդհանուր առմամբ արտաքին տնտեսական գործունեության պետական կարգավորման և այս ոլորտում ազգային անվտանգության ապահովման խնդիրների լուծման հետ: Այս առումով, որպես արտաքին տնտեսական գործունեության ակտիվացման կարևորագույն խնդիրներ պետք է դիտարկվեն՝

1. համաշխարհային տնտեսությանը ՀՀ առավել լայն ինտեգրումը, այլ պետությունների, միջազգային տնտեսական և ֆինանսական կառույցների հետ համագործակցության ակտիվացումը,
2. հայրենական արտադրանքի իրացման շուկաների ընդլայնումը,
3. արտաքին առևտրի զարգացման և համաշխարհային շուկայում մրցակցության ուժեղացման պայմաններում հայրենական արտադրողների շահերի պաշտպանության ապահովումը,
4. ՀՀ արտաքին պարտավորությունների կրճատմանն ուղղված և հաշվեկշռված տնտեսական քաղաքականության իրականացումը,
5. արժութային կարգավորման և վերահսկողության ոլորտում ներքին շուկայում արտասահմանյան արժութային հաշիվների կրճատման և կապիտալի անվերահսկելի արտահանման կանխարգելմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Ներդրումների խթանում

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական նպատակը, մեր համոզմամբ, պետք է հանդիսանա տնտեսական ակտիվության բարձրացման, բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման, ներդրումային գրավչության մակարդակի բարձրացման և ներդրումների ծավալների մեծացման միջոցով տնտեսական կայուն աճի ապահովումը:

ԲՀԿ-ն ներդրումային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղություններ է դիտարկում՝

- նորարարական (ինովացիոն) քաղաքականության կատարելագործումը և ինովացիոն նախաձեռնությունների խրախուսումը,
- ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական և իրավապայմանագրային դաշտի կայացումն ու կատարելագործումը,
- ներդրումների և ներդրողների շահերի պաշտպանության ապահովումը,
- օտարերկրյա և տեղական ներդրողների համար տնտեսավարման հավասար պայմանների ապահովումը,
- մեծածավալ ներդրումների համար, ինչպես նաև տնտեսության զարգացման համար որոշիչ, գերակա համարվող ոլորտներում և ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներում խստորեն վերահսկելի արտոնությունների տրամադրումը
- ներդրումային ծրագրերի մշակման և իրականացման հարցում պետական աջակցությունը,
- ներդրումները խթանող ենթակառուցվածքների կայացումը և զարգացումը,
- պետական ներդրումային համալիր ծրագրերի իրականացումը:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Արժեթղթերի շուկայի զարգացման հարցում պետական քաղաքականության հիմնական նպատակ պետք է հանդիսանա ինստիտուցիոնալ ներդրողների ու ներդրումների կարիք ունեցող ձեռնարկությունների միջև կապերի աշխուժացումը և արժեթղթերի շուկայի մասնակիցների օրինական շահերի պաշտպանությունը:

ԲՀԿ-ի կարծիքով արժեթղթերի շուկայում իրականացվող պետական քաղաքականության ռազմավարական ուղղություններ պետք է հանդիսանան՝

- արժեթղթերի շուկայի բոլոր մասնակիցների շահերի հաշվեկշռվածության և պաշտպանության ապահովումը,
- արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցների միջև մրցակցության ուժեղացումը,
- արժեթղթեր թողարկողների գործունեության թափանցիկության մակարդակի բարձրացումը,
- արժեթղթերի շուկայում տրանսակցիոն ծախսերի կրճատումը,
- այս շուկայի մասնակիցների ինքնակարգավորիչ մեխանիզմների ակտիվացումը:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

ԲՀԿ-ն առաջարկում է որդեգրել ակտիվ հակամենաշնորհային քաղաքականություն՝ լուծելով հետևյալ կարևորագույն խնդիրները.

1. էականորեն բարձրացնել ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի դերը և գործառութային անկախությունը, նրան օժտել մրցակցության պաշտպանության և ակտիվ հակամենաշնորհային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ բոլոր լիազորություններով, ապահովել պետական մյուս մարմինների և Հանձնաժողովի միջև տեղեկատվության փոխանակման և համագործակցության մեխանիզմների անխափան գործողությունը,
2. հստակեցնել և տարանջատել մենաշնորհային և գերիշխող դիրք զբաղեցնող սուբյեկտների գրանցամատյանները, օրենքով սահմանել «մենաշնորհ» ու «գերիշխող դիրք» կարգավիճակների որոշման չափանիշները և դրանց նկատմամբ վարել իրենց կարգավիճակին համարժեք, տարբերակված և հիմնավորված հակամենաշնորհային քաղաքականություն,
3. ապրանքային նույն շուկաներում պարբերաբար իրականացնել մրցակցային դաշտի ուսումնասիրություններ և վերլուծություններ, այդ թվում նաև վարչատարածքային մակարդակով,
4. օպերատիվ կերպով վերացնել հանրապետության ներսում կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի խոչընդոտները և նպաստել այս բնագավառում տրանսակցիոն ծախսերի նվազեցմանը,
5. հստակեցնել և հնարավորինս պարզեցնել տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով կիրառվող ընթացակարգերն ու մեխանիզմները,
6. կարգավորման հատուկ մեխանիզմներ սահմանել փոքր ու միջին ձեռնարկությունների շահերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև վերանայել գովազդային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրությունը՝ բացառելով թաքնված գովազդի կիրառման և համապատասխան սահմանափակումների շրջանցման հնարավորությունները:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Ձեռնարկատիրական գործունեության զարգացման և պետական աջակցության ոլորտներում ԲՀԿ-ն առաջարկում է հետևյալ ռազմավարական մոտեցումները.

1. կրճատել փոքր և միջին ձեռնարկությունների ստուգումներով զբաղվող պետական մարմինների քանակը և հավասարակշռել ու պահպանել կազմակերպությունների և պետության շահերը,
2. հետևողական քաղաքականություն վարել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկի կրճատման ուղղությամբ և ձևավորել լիցենզավորման այնպիսի համակարգ, որը կլինի խիստ՝ պահանջների կիրարկման մասով, սակայն արագ հաղթահարելի՝ ընթացակարգերի մասով,
3. բարելավել բոլոր տեսակի ապրանքների և ծառայությունների արտադրության, ներմուծման և արտահանման գծով արտոնագրային մեկ միասնական մարմնի գործունեությունը, բացառել տվյալ ոլորտում գործառույթների կրկնության և նմանատիպ մյուս երևույթները, ինչպես նաև հնարավորինս պարզեցնել արտոնագրման ընթացակարգերը,
4. վարչական և քրեական օրենսդրությամբ հստակ ամրագրել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների և պաշտոնատար անձանց պատասխանատվության տեսակներն ու չափերն այն գործողությունների կամ անգործության համար, որոնց հետևանքով ձեռնարկատերերը կկրեն վնասներ,
5. յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում նախատեսել փոքր և միջին ձեռնարկատիրության համար պետական օժանդակության գումարներ (օգտագործելով այդպիսի օժանդակության բոլոր ձևերը), որոնք առաջիկայում չպետք է պակաս լինեն տվյալ տարվա բյուջետային ընդհանուր ծախսերի 1 տոկոսից,
6. հանրապետության տնտեսավարող սուբյեկտների և ընդհանուր առմամբ ամբողջ երկրի մրցունակության բարձրացման նպատակով վերանայել գործարարության պետական կարգավորման լծակների կիրառման առաջնահերթությունները՝ կարգավորման շեշտը դնելով սուբյեկտների արտադրողականության և արդյունավետության մակարդակների բարձրացման վրա,
7. ստեղծել լիզինգային հարաբերությունների աջակցության համակարգ՝ փոքր բիզնեսի համար անհրաժեշտ արտադրական սարքավորումները մատչելի դարձնելու նպատակով:

զ. Մարզերի համաչափ զարգացում

ԲՀԿ-ն տարածքային զարգացման բնագավառում առաջնային լուծման ենթակա հիմնական խնդիրներ է համարում՝

1. հանրապետության վարչատարածքային բաժանման համար հիմնավոր սկզբունքների և տարածքների ներդաշնակ զարգացումն ապահովող մոտեցումների մշակումը,
2. տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը,
3. համայնքների ֆինանսական հնարավորությունների մեծացումը և վարչատարածքային միավորների ֆինանսական կայուն բազայի ձևավորումը,
4. մարզերում զբաղվածության հիմնախնդիրների լուծման համար առավել ճկուն մեխանիզմների կիրառումը,
5. պետական իշխանության և տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հստակեցումը,
6. պետական կառավարման ապակենտրոնացման գործընթացի սահունության ապահովումը,

7. սահմանամերձ տարածաշրջանների, ինչպես նաև լեռնային և նախալեռնային գոտիներում գտնվող համայնքների ամրապնդման և զարգացման նպատակով արտոնությունների համակարգի մշակումը և կիրառումը,
8. աղետի գոտու լիարժեք վերականգնման և այն զարգացման գոտի դարձնելու նպատակով համապատասխան քաղաքականության իրականացումը:

է. Ստվերային տնտեսության կրճատում

- Ստվերային տնտեսության դեմ պայքարի համալիր ծրագրի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի համալրումն ու կատարելագործումը,
- պայքարի վարչարարական և տնտեսական մեթոդների զուգակցումը՝ առաջնություն տալով ստվերայնության տնտեսական խթանների վերացմանը,
- ստվերային տնտեսության դեմ պայքարի վարչարարության դիֆերենցումը՝ կիրառելով հասարակությանը հասցվող վնասին համարժեք պատասխանատվության միջոցներ և մեխանիզմներ,
- համապատասխան օրենսդրական, վարչարարական և կազմակերպական միջոցառումների շնորհիվ հարկման բազայի ընդլայնումը, չարաշահումների տեղիք տվող արտոնությունների վերացումը և ստվերային ոլորտում գործունեություն ծավալելու առումով գործարարների տնտեսական շահագրգռության նվազեցումը,
- հարկային և մաքսային վարչարարության պարզեցմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակումն ու իրականացումը,
- տնտեսվարող սուբյեկտների կամ քաղաքացիների կողմից կամավոր, իրենց նախաձեռնությամբ ստվերային դաշտից դուրս գալու դեպքում օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունից ազատումը,
- հարկային և մաքսային վարչարարության բնագավառում այլ (հատկապես՝ հիմնական առևտրային գործընկեր հանդիսացող) երկրների հետ փոխադարձ համագործակցության ակտիվացումը, մասնավորապես՝ հարկային և մաքսային տեղեկատվության փոխանակման, տնտեսական հանցագործությունների և կոռուպցիայի դեմ պայքարի հարցերում,
- ստվերային տնտեսության դեմ պայքարի բոլոր ուժերի կենտրոնացումը և տվյալների ամբողջական, ընդգրկուն տեղեկատվական բազայի ստեղծումը,
- հասարակության համար բացատրական և տեղեկատվական աշխատանքների իրականացումը, այդ թվում նաև բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար ներկայացումը,
- «փողերի լվացման» և կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության մշակումը և հետևողական իրականացումը:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիայի հաղթահարման բնագավառում կուսակցությունն անհրաժեշտ է համարում՝

1. բարձրացնել պետական վարչարարության արդյունավետությունը,
2. վերացնել պաշտոնատար անձանց և պետական ծառայողների կողմից կամայական որոշումներ ընդունելու հնարավորությունները, հասնել նրան, որ այդ անձինք կատարեն միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքով,
3. իրականացնել օրենքների և իրավական ակտերի համալիր փորձաքննություն՝ դրանց «կաշառատարության» իմաստով, հանել այդպիսի դրույթները և վերացնել օրենսդրությունում առկա հակասությունները և երկիմաստությունները,
4. կոռուպցիայի փաստերի հայտնաբերման դեպքում համապատասխան պաշտոնատար անձանց ենթարկել օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության՝ անկախ նրանց զբաղեցրած դիրքից և պաշտոնից,
5. կատարելագործել և խստացնել գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման մեխանիզմը,
6. հետևողական և համալիր պայքար մղել կոռուպցիայի հետ սերտաճած այնպիսի երևույթների դեմ, ինչպիսիք են դրամանենգությունը, ստվերային գործունեությունը, թրաֆիկինգը, կաշառակերությունը և այլն,
7. դատական բարեփոխումների շնորհիվ պարզեցնել պաշտոնատար անձանց և պետական ծառայողների գործողությունների դատական բողոքարկման ընթացակարգը,
8. ներդնել վարչական դատարանների ինստիտուտ և նպաստել դրանց կայացմանը,
9. մշակել և ընդունել հակակոռուպցիոն օրենսդրական փաթեթ:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

ԲՀԿ-ն ոլորտի զարգացման հիմնական խնդիրներն է համարում՝

- արդյունավետ և կայուն ագրոպարենային համալիրի ստեղծումը,
- երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը,
- գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների եկամուտների մակարդակի բարձրացումը,
- գյուղատնտեսական նշանակության հողերի և բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը,
- գյուղմթերքների և պարենային ապրանքների իրացման շուկաների ընդլայնումը,
- հակակարկտային կայանների վերականգնումը և վերագործարկումը,
- հողային հարաբերությունների կարգավորման համակարգի ստեղծումը և հողի շուկայի կայացումը:

Ոլորտի զարգացման նպատակով պետական քաղաքականության հիմնական ուղղություններ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը դիտարկում է՝

- գյուղատնտեսության զարգացման կազմակերպակառուցվածքային հիմքերի ձևավորումը,
- ագրարային ոլորտը կանոնակարգող օրենսդրության կատարելագործումը,
- ագրոպարենային շուկաների ֆինանսական ենթակառուցվածքների զարգացումը,
- ագրոպարենային արտադրանքի իրացման շուկաների ընդլայնմանն աջակցությունը,
- գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրումը,
- գյուղատնտեսական հումքը վերամշակող արդյունաբերության ծրագրային զարգացման ապահովումը:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Էներգետիկ անվտանգության ապահովման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությունը պետք է հիմնված լինի էներգետիկայի զարգացման ռազմավարական ծրագրի վրա և ուղղված լինի հետևյալ խնդիրների լուծմանը.

- էներգիայի բոլոր տեսակների գծով հումքի մատակարարման, արտադրության, բաշխման և փոխանցման փուլերում երկրին, հասարակությանը և տնտեսությանը սպառնացող վտանգների կանխատեսում, էներգետիկ կախվածության նվազեցում և ոլորտի ինքնաբավության մակարդակի հնարավորինս բարձրացում, այդ թվում՝ ներկրվող և տեղական էներգետիկ պաշարների դիվերսիֆիկացում և արտադրական հզորությունների առավելագույնս օգտագործում, ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր ատոմակայանի կառուցում,
- տեղական էներգետիկ պաշարների, էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործում և դրա ապահովման տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառում, արտաքին և ներքին տնտեսական, տեխնոգեն և բնապահպանական սպառնալիքների չեզոքացում, ինչպես նաև ապակայունացնող տարաբնույթ գործոնների բացասական հետևանքների մեղմում,
- էներգետիկ համակարգի կողմից ներքին և արտաքին պահանջարկի ընդունելի արժեքով և համապատասխան որակով բավարարում, էներգառեսուրսների արդյունավետ օգտագործում:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Տնտեսական վերափոխումների հաշվեկշռվածության, կայունության, ժողովրդավարացման գործընթացների անշրջելիության ապահովման, ինչպես նաև ժողովրդագրական իրավիճակի բարելավման, բնակչության արտագաղթի կանխման, ծնելիության մակարդակի բարձրացման և սոցիալական մի շարք այլ հիմնախնդիրների լուծման կարևորագույն պայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում նպատակային, հասցեական և արդյունավետ սոցիալական քաղաքականության իրականացումը:

ԲՀԿ համոզմամբ, սոցիալական քաղաքականության հիմնական նպատակներ պետք է հանդիսանան բնակչության կենսամակարդակի հետևողական բարձրացումը, սոցիալական անհավասարության կրճատումը, սոցիալական հիմնական բարիքների և ծառայությունների համընդհանուր մատչելիության ապահովումը:

ա. Աղքատության հաղթահարում

Երկրում իրականացվող սոցիալական քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան՝

- բնակչության դրամական եկամուտների աճի ապահովումը և դրանց բևեռացման նվազեցումը՝ աշխատավարձերի բարձրացման, համախառն ներքին արդյունքում աշխատավարձի բաժնի մեծացման, կենսաթոշակային ապահովության բարելավման և բնակչության սոցիալական աջակցության հասցեականության բարձրացման միջոցով,
- եկամտային և մարդկային աղքատության հաղթահարումը, քաղաքացիների սոցիալական անվտանգության ապահովումը,
- կարևորագույն սոցիալական բարիքների, առաջին հերթին՝ առողջապահության, սոցիալական սպասարկման և կրթության մատչելիության ապահովումը,
- փախստականների և բռնադատվածների հիմնախնդիրների լուծման պետական քաղաքականության կատարելագործումը և համապատասխան ծրագրերի մշակումն ու իրականացումը,
- մարդկային կապիտալում ներդրումների գերակայությունը, պետական այլ ծախսերի նկատմամբ սոցիալական զարգացմանն ուղղվող պետական ծախսերի առաջանցիկ աճի տեմպի ապահովումը,
- պետական աջակցության կարիք ունեցող և սոցիալական խնդիրներն ինքնուրույն լուծելու անընդունակ, սոցիալապես խոցելի խավերի արդյունավետ պաշտպանության իրականացումը,
- բնակչության սոցիալական պաշտպանության ապահովագրական սկզբունքների կիրառումը,
- երկրի աշխատունակ բնակչության համար տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, որը հնարավորություն կտա քաղաքացիներին սեփական միջոցների հաշվին բարձրացնել իրենց կենսամակարդակը,
- բնակչության արդյունավետ զբաղվածության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության ապահովումը, աշխատուժի մրցունակության բարձրացումը,
- գյուղական բնակավայրերի սոցիալական զարգացման ուղղությամբ միջոցառումների իրականացումը,
- բնակչության մահացության մակարդակի նվազեցման և ծնելիության ցուցանիշների բարելավման համար նախադրյալների ստեղծմամբ ժողովրդագրական իրավիճակի բարելավումը,
- սահմանամերձ գոտիների առաջանցիկ զարգացման միտումով տարաբնակեցման արդյունավետ սխեմաների մշակումը:

գ. Զբաղվածության ապահովում

ԲՀԿ համոզմամբ աշխատանքի շուկայում պետական քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է լինեն՝

- զբաղվածության ծրագրերի մշակումը, իրականացումը և դրանց արդյունավետության գնահատման ընթացակարգերի ներդրումը,
- գործազրկության նպաստների չափի էական բարձրացումը և այդ նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման կարգերի կատարելագործումը,
- կանանց, երիտասարդներին և հաշմանդամներին մասնագիտական ուսուցման, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման հարցում աջակցությունը,
- փոքր և միջին բիզնեսի ոլորտում ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման նպատակով վարկավորման ծավալների ընդլայնումը,
- սոցիալական պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիներին աշխատանքի տեղավորման ուղղությամբ հասցեական աջակցության ցուցաբերումը:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

ԲՀԿ դիտարկմամբ առողջապահության և բուժօգնության համակարգի զարգացման ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղություններն ու առաջնային խնդիրներն են՝

1. «Առողջապահության զարգացման ռազմավարական ծրագրի» մշակումն ու իրականացումը,
2. անվճար բուժծառայությունների որակական բարելավումը, բնակչությանը մատուցվող անվճար բուժծառայությունների մատուցման նպատակով պետական երաշխիքների ծավալի և պետության ֆինանսական հնարավորությունների հաշվեկշռվածության ապահովումը, ոլորտում ստվերային

շրջանառության ծավալների և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, բժշկական ապահովագրության համակարգի ներդրումը,

3. առողջապահության համակարգի կառավարելիության, կազմակերպման արդյունավետության և ֆինանսավորման կատարելագործումը, բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և դրա փոխհատուցման բազմաձևության (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն և այլն) կիրառումը,
4. բնակչությանը մատչելի և որակյալ բժշկական օգնության տրամադրումը, մոր և մանկան առողջության պահպանությունը,
5. հաշմանդամների հիմնահարցերի լուծման ուղղությամբ պետական հատուկ քաղաքականության իրականացումը, որը հաշմանդամների համար կստեղծի կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու պայմաններ և կապահովի նրանց իրավունքների իրականացումը և հաշմանդամների սոցիալական պաշտպանության համալիր ծրագրի ընդունումը,
6. բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց անվճար բժշկական օգնության ցուցաբերումը,
7. գյուղական համայնքներում առաջնային բուժօգնության համակարգի դերի ամրապնդումն ու դրա գործունեության բարելավումը,
8. դեղերի մատչելիության և անվտանգության մակարդակների բարձրացումը:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան՝

- բնակչության սոցիալական պաշտպանության հայեցակարգի մշակումը,
- աղքատության նվազեցումը և աղքատության բացասական հետևանքների մեղմումը, սոցիալական անհավասարության նվազեցումը և սոցիալական հնարավոր լարվածության կանխարգելումը,
- հասցեականության սկզբունքի հիման վրա սոցիալական նպաստների և աջակցության այլ ձևերի արդյունավետության բարձրացումը,
- հասարակության սոցիալական բևեռացման մակարդակի նվազեցումը և բնակչության կենսամակարդակի շարունակական բարձրացումը,
- կենսաթոշակառուների, հաշմանդամների, տարեցների, երեխաների և սոցիալական օգնության կարիք ունեցող բնակչության այլ խավերի համար պետական նպատակային ծրագրերի մշակումը և իրականացումը,
- կենսաթոշակների, կրթաթոշակների, նպաստների, աշխատանքի վարձատրության մակարդակների աճը, ինչպես նաև դրանցով պայմանավորված՝ բնակչության կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ պետական ծրագրերի իրականացումը,
- սեփականության իրավունքի նորմերի (ժառանգություն, նվիրատվություն և այլն) ապահովմամբ նախկին ԽՍՀՄ Խնայբանկում բնակչության ավանդադրած խնայողական ավանդների ինդեքսավորման չափանիշների և վերադարձման մեխանիզմների մշակումն ու ներդրումը, ինչպես նաև ավանդների ապահովագրության համակարգի կատարելագործումը:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կրթության բնագավառում պետական քաղաքականության ռազմավարական նպատակը պետք է հանդիսանա կրթության այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր քաղաքացուն հնարավորություն կտա ստանալու հասարակական պահանջարկ վայելող, որակյալ գիտելիքներ՝ երաշխավորելով հասարակությունում կրթված քաղաքացիների արժանապատիվ տեղը: Պետական համալիր և նպատակային ծրագրերի շրջանակներում անհրաժեշտ է բարձր որակավորում ունեցող, հայրենասեր, ազգային ոգով դաստիարակված, բազմակողմանի զարգացած և բարոյական արժեքներ դավանող սերունդ ունենալու գերխնդրի լուծումն ապահովող կրթական համակարգի ստեղծումը, մանկավարժների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի վարձատրության մակարդակի շարունակական բարձրացումը, կրթության որակի էական բարելավումը, անվճար դասագրքերով ապահովման սկզբունքին աստիճանաբար անցումը, կրթության ոլորտի օրենսդրության կատարելագործումը, կրթության կառավարման գործընթացին հասարակության մասնակցության և համալսարանական ինքնավարության իրական ապահովումը, կրթաթոշակների շարունակական բարձրացումը, կրթության բովանդակության նորացումը, պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտների իրավահավասարության, մասնավորապես՝ աշխատանքային իրավունքների իրական ապահովումը:

ը. Գիտության զարգացում

ԲՀԿ առաջնահերթ խնդիրներից մեկը գիտության և գիտատեխնիկական առաջընթացի համար համապատասխան պայմանների ապահովումն ու ենթակառուցվածքների զարգացումն է: Գիտության բնագավառի զարգացումը, բնականաբար, պահանջում է ոչ միայն պետության կողմից մրցունակ գիտական կազմակերպություններին հնարավոր բոլոր միջոցներով օժանդակության ապահովում, այլև դրանց գործունեությանն անմիջական ֆինանսական մասնակցություն: Այս կապակցությամբ ԲՀԿ-ն կարծում է, որ անհրաժեշտ է հասնել գիտության ոլորտին պետական բյուջեի ծախսային մասի առնվազն 3%-ի հատկացմանը, որը կապահովի ինչպես տնտեսական անվտանգության միջազգայնորեն ընդունված նվազագույն մակարդակը, այնպես էլ հնարավորություն կստեղծի առաջիկայում գիտության զարգացման տեմպերի արագացման համար:

թ. Մշակույթ

ԲՀԿ-ն առաջնահերթ է համարում «Մշակույթի զարգացման հայեցակարգի» մշակումը և բնակչության հոգևոր, կրթական ու բարոյական դաստիարակության բնագավառում պետական ծրագրային քաղաքականության իրականացումը, հոգևոր-մշակութային ժառանգության, ազգային ավանդույթների, համամարդկային արժեքների և նորմերի պահպանման, ինչպես նաև մշակութային կազմակերպությունների գործունեության և ստեղծագործ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, հայոց լեզվի և խոսքի ճիշտ գործածման դերի բարձրացումը, պատմամշակութային ժառանգության պահպանումը, միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ այլ պետությունների տարածքներում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանությունը, ինչպես նաև հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանն աջակցությունը, պետական ծրագրերի իրականացմամբ Հայաստանում բնակվող ազգային

փոքրամասնությունների ազգային, մշակութային և մյուս իրավունքների պաշտպանությունը, նրանց մայրենի լեզվի, կրոնի և մշակույթի պահպանմանն ու հետագա զարգացմանն աջակցությունը, այդ թվում՝ հեռուստատեսությամբ և ռադիոյով հաղորդակցման հնարավորությունների ընդլայնումը:

ժ. Սպորտ

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել բնակչության ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, հատկապես՝ օլիմպիական մարզաձևերի զարգացմանը, մարզադպրոցների ցանցի ընդլայնմանը, մարզական ակումբերի ստեղծմանը և ազգային մարզաձևերի վերականգնմանը: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման հիմնական խնդիր պետք է հանդիսանա ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու քաղաքացիների հնարավորությունների ընդլայնումը, առողջ ապրելակերպի քարոզչությունը, օլիմպիական շարժման խրախուսումը: Այս խնդիրների լուծումը ԲՀԿ-ն տեսնում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման պետական ծրագրերի մշակման և իրականացման, մասնագետների որակավորման բարձրացման և մասնագիտական պատրաստման ու վերապատրաստման մակարդակի բարելավման, ինչպես նաև բյուջետային և այլ միջոցների հաշվին ոլորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման մեջ:

ի. Այլ /պետություն-եկեղեցի փոխհարաբերություններ/

ԲՀԿ-ն համոզված է, որ հայ ժողովրդի հոգևոր կյանքում և ազգային մշակույթի զարգացման ու ազգային ինքնության պահպանման գործում բացառիկ դեր ունեցող Հայաստանյաց Առաքելական սուրբ եկեղեցու և պետության փոխհարաբերությունները պետք է կարգավորվեն օրենքով: Նա պետք է ունենա Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում քրիստոնեական արժեքները և ուսմունքն ազատորեն քարոզելու, ինչպես նաև վտանգավոր և ծայրահեղական աղանդների դեմ հակաքարոզչություն իրականացնելու, դպրոցներում եկեղեցու պատմության և բարձրագույն ուսումնական հաստատություններում կրոնագիտական առարկաների դասավանդմանն աջակցելու լիարժեք հնարավորություններ: Պաշտպանելով խղճի ազատությունը՝ պետությունը պետք է ամուր պատնեշ դնի քաղաքացիների կյանքին, առողջությանը և արժանապատվությանը սպառնացող, Հայաստանի Հանրապետության ազգային շահերի տեսանկյունից վտանգավոր գործունեություն ծավալող օտարերկրյա կրոնական և այլ կազմակերպությունների գործողությունների, կրոնական ծայրահեղականության, ինչպես նաև այլ աղանդների առջև:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ԲՀԿ-ն նախատեսում է իրականացնել քաղաքացիական հասարակության աջակցության և պաշտպանության քաղաքականություն: Կուսակցությունը համոզված է, որ ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված՝ քաղաքացիների ինքնակազմակերպման ձևերում է կուտակված հասարակության զարգացման հսկայական ներուժը: Պետությունը պետք է առավելագույնս օգտագործի այդ ներուժը՝ ապահովելով ստեղծագործական և մշակութային միությունների, հասարակական, իրավապաշտպան կազմակերպությունների, ինչպես նաև սեփականատերերի, սպառողների, գործատուների, աշխատողների, ազգային, կրոնական և այլ միավորումների գործունեությունը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Հասարակական կազմակերպությունների զարգացումը և այդ գործընթացի պետական աջակցությունը, որի ջատագովն է ԲՀԿ-ն, թույլ կտա լուծել այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են՝

1. մարդկային գործոնի էական ուժեղացումը, իշխանության ու հասարակության միջև երկխոսության և տարաբնույթ հարցերի վերաբերյալ հասարակական համաձայնության ձեռքբերման հնարավորությունների մեծացումը,
2. բարեփոխումների, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման գործընթացներին քաղաքացիների մասնակցության հնարավորությունների ընդլայնումը և այդ առումով մասնակցային գործընթացի խթանումը,
3. պետության սոցիալական գործառույթների մի մասը հասարակական կազմակերպություններին փոխանցելու և տնտեսության ոչ առևտրային հատվածում նոր աշխատատեղեր ստեղծելու հաշվին պետական զգալի միջոցների տնտեսումը, ոչ առևտրային ծառայությունների շուկայի զարգացումը և այլն:

Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է՝

1. պետական որոշումների մշակման, քննարկման և կատարման վերահսկողության գործընթացներում ստեղծել հասարակական կազմակերպությունների մասնակցության հնարավորություններ, մասնագիտացված հասարակական կազմակերպություններին ներգրավել սոցիալական և տնտեսական ծրագրերի մշակման գործընթացներին, ինչպես նաև նպաստել ծնողազուրկ երեխաների, տարեցների, հաշմանդամների, փախստականների հիմնախնդիրների լուծմանը,
2. ապահովել պետական բյուջեով նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացմանը հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Քաղաքացիական համաձայնության վրա հիմնված հասարակական-քաղաքական կայուն հարաբերությունների ձևավորման նպատակով ԲՀԿ-ն անհրաժեշտ է համարում՝

- ստեղծել պայմաններ Ազգային ժողովի ընտրությունների 100 տոկոսանոց համամասնական ընտրական համակարգին անցում կատարելու համար,
- նպաստել ընտրական հանձնաժողովների գործունեության թափանցիկության և դրանցում ներկայացված քաղաքական ուժերի պատասխանատվության մակարդակների բարձրացմանը,
- նպաստել հասարակական կազմակերպությունների գործունեության ազատության պահպանմանը,
- կարևորելով ժողովրդավարության զարգացման գործընթացում զանգվածային լրատվամիջոցների՝ որպես բազմակարծության արտահայտման և հասարակական կարծիքի ձևավորման կարևորագույն գործիքի դերը, բարելավել նրանց ազատ և անաչառ գործունեության պայմանները,
- օժանդակել քաղաքացիների խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացմանը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

ԲՀԿ հիմնական խնդիրներից մեկը Հայաստանում քաղաքացիական հասարակության, մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության և ժողովրդավարական ինստիտուտների վրա հիմնված իրավական պետության կառուցման գործին իր ջանքերի և հնարավորությունների ներդրումն է:

դ. Դատահիրավական համակարգի բարեփոխում

Հայաստանի Հանրապետության դատական համակարգի գործունեությունը պետք է հիմնված լինի արդարադատության հրապարակայնության և թափանցիկության ապահովման, անհատի իրավունքների պաշտպանության և ողջամիտ ժամկետում գործի արդարացի ու հրապարակային դատական քննության սկզբունքների վրա: Դատավորի կարգավիճակի հստակեցման, նրա անկախության և անկողմնակալության երաշխավորման նպատակով անհրաժեշտ է ստեղծել դատավորի անձեռնմխելիության ու անփոփոխելիության իրավական, սոցիալական և անհրաժեշտ այլ հիմքեր՝ դրանք հավասարակշռելով պատասխանատվության ապահովման գործուն մեխանիզմներով: Դատախազական համակարգի բարեփոխումների շրջանակում առաջնային լուծում պահանջող խնդիրներից ենք համարում պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համատեքստում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանն օրենքների կատարման նկատմամբ բարձրագույն հսկողություն իրականացնելու իրավունքի վերապահումը, ինչպես նաև դատախազության մարմինների կողմից իրենց վերապահված լիազորությունների պատշաճ կատարման ու անկողմնակալության ապահովումը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Ուղորտի հիմնական խնդիրներն են՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ապահովումը, արտաքին և ներքին սպառնալիքների կանխարգելման և վերացման ուղղությամբ ծրագրային և օպերատիվ միջոցառումների իրականացումը, տարածաշրջանային անվտանգության այնպիսի համակարգի ձևավորումը, որտեղ Հայաստանը կունենա լուրջ դերակատարություն և առավելագույնս ապահովված կլինի նրա անվտանգությունը,
2. երկրի պաշտպանության ամրապնդումը, ազգային անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների կանխատեսումը, բացահայտումը, կանխարգելումը, հակազդումը և չեզոքացումը,
3. այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության բարիդրացիական, հավասարակշռված, իրավահավասար և փոխշահավետ համագործակցությունը,
4. երկրի տնտեսության զարգացումը և սոցիալական ուղղվածություն ունեցող տնտեսական քաղաքականության իրականացումը, տնտեսական շահերի պաշտպանությունը, գիտատեխնիկական և տեխնոլոգիական կախվածության նվազեցումը, ժողովրդագրական գործընթացների կարգավորումը, երկրի բնապահպանական ու բնօգտագործման վիճակի բարելավումը,
5. Հայաստանի Հանրապետության տարածքում մարդու և քաղաքացու անվտանգության, նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովումը, պետական և տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործումը, օրինականության ու կարգուկանոնի ամրապնդումը և հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական կայունության ապահովումը, քաղաքացիների, պաշտոնատար անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կուսակցությունների, հասարակական միավորումների, կրոնական և այլ կազմակերպությունների կողմից օրենսդրության պահանջների անվերապահ կատարումը:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

ԲՀԿ-ն անհրաժեշտ է համարում արմատական քայլեր ձեռնարկել այնպիսի լուրջ հիմնախնդիրների լուծման ուղղությամբ, ինչպիսիք են՝

1. աղքատության բարձր մակարդակը և բնակչության դրամական եկամուտների խիստ բևեռացումը,
2. ծնելիության և կյանքի միջին տևողության անկմամբ պայմանավորված բնակչության ծերացումը և բնական աճի նվազումը, ինչպես նաև դրանց հետևանքով ստեղծված ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակը,
3. սոցիալական աջակցության և օժանդակության հասցեականության ցածր աստիճանը:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Բնական պաշարների ողջամիտ օգտագործման պետական քաղաքականության իրականացման առումով ԲՀԿ-ն ձգտելու է ակտիվ քաղաքականություն իրականացնել հետևյալ ուղղություններով.

1. հստակեցնել բնական պաշարների օգտագործման ոլորտի, այդ թվում՝ հողային, ջրային անտառային ու բնական այլ ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և պահպանության խնդիրները, ծրագրային հիմքերի վրա դնել օդային ավազանի պահպանման և դրա բարենպաստության մակարդակի բարձրացման հարցերը,
2. հատուկ ուշադրություն դարձնել Սևանա լճի՝ որպես Հայաստանի Հանրապետության բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, բնակլիմայական և ռեկրեացիոն արժեք ունեցող էկոհամակարգի հիմնախնդիրների լուծմանը, մշակել և իրականացնել Սևանա լճի բնական մակարդակի վերականգնման, նրա էկոհամակարգի բնական պաշարների վերարտադրության, պահպանման և դրանց օգտագործման համալիր, տարեկան և նպատակային ծրագրեր:

5. «ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Բաղրամյան փ., 2-րդ նրբանցք, տ.13
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 26-91-60, 26-66-93
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** info@dashink.am
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.dashink.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 10.11.2005թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 10.11.2005թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 30.12.2005թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 2000 անդամ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Առավոտ» օրաթերթ, 10.08.2005թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Գլխավոր խորհուրդ՝ 84 անդամ
- Քաղաքական խորհուրդ՝ 7 անդամ
- Կուսակցության ղեկավար՝ Սամվել Անդրանիկի Բաբայան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Դաշինք» կուսակցությունը կրողն է ազատական-ժողովրդավարական գաղափարախոսության, որի հիմնական արժեքներն են անհատի ազատությունն ու պատասխանատվությունը, իշխանական թևերի տարանջատումը, տեղական մարմինների ինքնակառավարման սկզբունքի հիման վրա իշխանության ապակենտրոնացումը, օրենքի գերակայությունը, իշխանությունների նկատմամբ հասարակական վերահսկողությունը, խոսքի և խղճի ազատությունը, սեփականության անձեռնմխելիությունը, տնտեսության ազատականացումը և քաղաքացիների իրավահավասարությունը: Կուսակցությունը վճռական է կառուցելու իրապես ժողովրդավարական, իրավական, սոցիալական ու ազգային հզոր պետություն:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Տարածաշրջանային համագործակցություն.
2. Եվրաինտեգրում.
3. Տարածաշրջանում ցանկացած օտարերկրյա ռազմակայանների բացառում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Եվրաինտեգրում

Եվրամիությանն անդամակցելը պետք է դառնա ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրներից մեկը:

բ. ԱՊՀ[5]

ԱՊՀ-ի շրջանակներում պետք է զարգացնել տնտեսական հարաբերությունները:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

ՀՀ-ն պետք է նպաստի տարածաշրջանի ապառազմականացմանը՝ այլ երկրների առումով:

դ. ՀԱՊԿ (NATO)

Հայաստան-NATO առնչություններում անհրաժեշտ է պահպանել հավասարակշռված և գործընկերային հարաբերություններ, որի արդյունքում, սակայն, մեզ մոտ չպետք է տեղակայվեն ռազմակայաններ:

ե. ԱՄՆ

ԱՄՆ-ի հետ անհրաժեշտ է խորացնել տնտեսական հարաբերությունները և այդ գործում պետք է ակտիվորեն ներգրավել սփյուռքին: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում համագործակցության խորացումն ԱՄՆ-ի հետ բոլոր ոլորտներում:

զ. Ռուսաստանի Դաշնություն

ՌԴ-ի հետ հարաբերությունները նույնպես հարկ է տեղափոխել առավելապես տնտեսական դաշտ: Պետք է համագործակցել ՌԴ-ի հետ բոլոր առումներով՝ բացառությամբ կովկասյան տարածաշրջանում ռազմաբազաների տեղակայման:

է. Թուրքիա

Ցեղասպանությունը փաստ է: Բայց ՀՀ-ն պետք է պատրաստ լինի հարաբերությունների կարգավորմանը՝ առանց նախապայմանների:

ը. Ադրբեջան[4]

Արցախի հարցի կարգավորման դեպքում հնարավոր է տնտեսական ինտեգրացիա Ադրբեջանի հետ:

թ. Իրան

Իրանի հետ անհրաժեշտ են բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում:

ժ. Վրաստան[5]

Անհրաժեշտ է իրականացնել տնտեսական ինտեգրացիա Վրաստանի հետ՝ մասնավորապես էներգետիկայի և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն[4]

Տարածաշրջանում կայուն և երկարատև խաղաղության հաստատումը կհանգեցնի տարանցիկ էներգետիկ և ճանապարհային ծրագրերի իրականացմանը:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Արցախի հիմնախնդրի լուծումը հնարավոր է հակամարտող կողմերի ժողովրդավարացման և փոխզիջման դեպքում: Կարգավորման հիմքում պետք է ընկած լինեն որևէ միջազգային հեղինակավոր կազմակերպության հովանու ներքո միջանկյալ ինքնիշխանության, փախստականների և ներքին տեղահանված անձանց կամավոր վերաբնակեցման, Արցախում տնտեսության զարգացման նախադրյալներ ստեղծելու և Արցախի կարգավիճակը նոր հանրաքվեի միջոցով որոշելու սկզբունքները:

խ. Ցեղասպանության ճանաչում[4]

Ցեղասպանության ճանաչումը չպետք է նախապայման հանդիսանա Թուրքիայի հետ հարաբերություններում, սակայն դրա ճանաչումն անվիճելի է:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում[5]

Սփյուռքի հետ հարաբերություններում հստակ քաղաքականություն պետք է որդեգրվի մշակույթի ոլորտում, իսկ տնտեսական առումով ազատականացումն ինքնըստինքյան կբերի սփյուռքահայության ներգրավվածությանը:

կ. Այլ

Արտաքին քաղաքականությունը պետք է նպաստի մեզանում գերտերությունների և այլ կառույցների տնտեսական հետաքրքրության աճին: Այս խնդրի լուծմանը կնպաստի տարածաշրջանի ապառազմականացումը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Ժողովրդավարական համակարգ և մրցակցային տնտեսություն.
2. Մարդու իրավունքների պաշտպանություն.
3. Դատաիրավական համակարգի կայացում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Անհրաժեշտ է օրենսդրական դաշտի հստակեցում, դատական համակարգի անկախություն և հակամենաշնորհային քաղաքականություն:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Դրամավարկային[5]

Անհրաժեշտ է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ կարճաժամկետում:

բ. Բյուջետային

Կուսակցությունը կարևոր է համարում ծրագրային բյուջետավորումը:

գ. Հարկային

Անհրաժեշտ է խթանող հարկային քաղաքականություն՝ երկարաժամկետում:

դ. Մաքսային

Մաքսային քաղաքականությունը պետք է ենթարկվի հարկման ներքին բազայի ընդլայման նպատակին:

ե. Ճյուղային

Անհրաժեշտ է հարկային և վարկային քաղաքականության օպտիմալացում, ազատ մրցակցության ապահովում:

զ. Տարածքային

Անհրաժեշտ է ենթակառուցվածքների զարգացում, մարզերի համաչափ աճ:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ[5]

Անհրաժեշտ է արտահանման խթանում, փոխարժեքային քաղաքականություն, «բրենդերի» արտահանում:

ը. Վճարային (առևտրային) հաշվեկշիռ[5]

Անհրաժեշտ է ներքին արտադրության աճ և ներմուծման փոխարինում, արտահանման աճ: Պետք է վճարային հաշվեկշռի բացասական սալդոյի նվազեցում:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Ներդրումների խթանում[5]

Անհրաժեշտ է օրենսդրական բազայի ձևավորում, սեփականության ինստիտուտի կայացում, դատական համակարգի կայացում:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Անհրաժեշտ է ստվերային տնտեսության կրճատում, անկանխիկ շրջանառության աճ, բաժնետիրական ընկերությունների կայացում:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Կուսակցությունը կարևորում է սեփականության ինստիտուտի պաշտպանվածությունը, հակամենաշնորհային քաղաքականությունը, իշխանության և բիզնեսի տարանջատումը:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում[5]

Անհրաժեշտ է տնտեսության «ոչ ֆինանսական» հատվածի և բանկային համակարգի ազատ ու մատչելի համագործակցություն:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում[5]

Պետք է օգտվել ԱՀԿ-ի տված հնարավորություններից՝ խթանելով արտահանումը:

զ. Մարզերի համաչափ զարգացում[5]

Անհրաժեշտ է դիֆերենցված հարկային և բյուջետային քաղաքականություն, մարզերի զարգացման պետական քաղաքականության մշակում:

է. Ստվերային տնտեսության կրճատում[5]

Անհրաժեշտ է հարկային համաներման հայտարարում, հավասար իրավունքների սահմանում:

ը. Կոռուպցիայի հաղթահարում[5]

Տնտեսական գործընթացներում պետության դերի սահմանափակում, դատական համակարգի կայացում և քաղաքական ժողովրդավարություն, օրենսդրական հստակություն և կատարելագործում:

թ. Արդյունաբերության զարգացում

Անհրաժեշտ է ազատ մրցակցային դաշտի ապահովում և հովանավորչության բացակայություն:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Անհրաժեշտ է վարկային քաղաքականություն և վարկի հասանելիություն:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Անհրաժեշտ է ջրային ռեսուրսների համընդհանուր կառավարում և այլընտրանքային էներգետիկ ռեսուրսների շահագործում:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Կուսակցությունը կարևորում է պետական հատուկ ենթակառուցվածքային քաղաքականությունը՝ մասնավորի ներգրավմամբ:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում[5]

Անհրաժեշտ է գիտակրթական համակարգի բարեփոխումներ, նոր մենեջմենթի և տեխնոլոգիաների ներդրման քաղաքականություն:

ծ. Կորպորատիվ կառավարման բարելավում[5]

Անհրաժեշտ է օրենսդրական բազայի ձևավորում, կորպորատիվ կառավարման կուլտուրայի ներդրում:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Աղքատության հաղթահարում

Անհրաժեշտ է ազատ մրցակցության ապահովում և սոցիալապես անապահով խավի աջակցություն:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում[4]

Անհրաժեշտ է սպառողական զամբյուղի և աշխատավարձի նվազագույն չափի հավասարեցում և ստվերային դաշտի կրճատում:

գ. Զբաղվածության ապահովում[5]

Կուսակցությունը կարևորում է բիզնեսի խթանումը՝ ազատ մրցակցության ապահովման միջոցով: Կուսակցությունը կարևոր է համարում ֆրիկցիոն գործազրկության կրճատումը:

դ. Արտագաղթի նվազեցում[5]

Անհրաժեշտ է տնտեսության զարգացում և օրինականության հաստատում, քաղաքական համակարգի փոփոխություն և ներքին ներդրումների խթանում:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Կուսակցությունը կարևորում է անվճար բուժսպասարկման խավերի առանձնացումը և ֆինանսական հատկացումը՝ հնարավորություն տալով ընտրել բուժհիմնարկը: Պետք է իրականացնել պրոֆիլակտիկ միջոցառումներ:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում[5]

Սոցիալական ապահովության կարելի է հասնել սոցիալական արդարության և օրենքով այն ամրագրելու քաղաքականության շնորհիվ:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Անհրաժեշտ է համակարգի ապակենտրոնացում, միջազգային չափանիշների ներդրում, ավանդույթների պահպանում, ինքնավարության հաստատում՝ մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից տնօրենների ընտրության համակարգի կիրառում:

ը. Գիտության զարգացում

Պետք է իրականացնել արմատական փոփոխություններ գիտության ֆինանսավորման, ճյուղերի կազմակերպման, ինչպես նաև օրենսդրական դաշտում:

թ. Մշակույթ

Անհրաժեշտ է օրենսդրական լուծումներ, պետական քաղաքականություն, ինչպես նաև մշակույթի արտահանման քաղաքականություն և մշակութային «Բրենդի» ձևավորում:

ժ. Սպորտ

Անհրաժեշտ է պետական աջակցություն, մանկապատանեկան սպորտային դպրոցների ստեղծում, ինչպես նաև պետք է հատուկ ուշադրություն դարձնել ֆուտբոլին: Անհրաժեշտ է սպորտի համայնքային խրախուսում:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

1. Ազատ մամուլի կայացում:
2. ՀԿ սեկտորի զարգացում:
3. Կուսակցական համակարգի կայացում:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Անհրաժեշտ է ազատ և անկախ ԶԼՄ-ի կայացում, ԶԼՄ-ի ֆինանսական անկախության ապահովում, ինչպես նաև օրենսդրական պաշտպանվածություն:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Անհրաժեշտ են դատահիրավական բարեփոխումներ և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի կայացում:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը կարևորում է դատավորների տնտեսական անկախացման ապահովումը և օրենսդրության հստակեցումը:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Անհրաժեշտ է 100% համամասնական համակարգի կայացում:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում[5]

Անհրաժեշտ է գաղափարական հենքի վրա կուսակցությունների միացում և խոշորացում:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում[5]

Քաղաքական պատասխանատվությունը որոշվում է ընտրությունների միջոցով, հետևաբար պետք է բարելավել ընտրական համակարգը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Ազգային անվտանգությանը սպառնացող հիմնական վտանգը չկայացած քաղաքական համակարգն է և սխալ արտաքին քաղաքականությունը: Պետք է վարել այնպիսի քաղաքականություն, որի պայմաններում գերտերությունները այստեղ կմրցակցեն տնտեսական առումով, իսկ դա իր հերթին կբերի տնտեսական վերելքին և քաղաքական համակարգի կայունացմանը:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Լուծման ուղիներից են՝

- տնտեսության զարգացումը,
- պետական ծրագրերը՝ կապված բնակչության բնական վերարտադրության հետ:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Հիմնախնդիրներից են՝

- կանաչ գոտիների նվազումը,
- Սևանի խնդիրը,
- տեխնիկական արտանետումները:

Լուծումները՝

- օրենսդրական աշխատանք,
- ՀԿ սեկտորի ներգրավում վերահսկողական աշխատանքներում,
- գործադիր իշխանության հստակ գործունեություն,
- բարձր տեխնոլոգիաների ներմուծման խթանում:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **2008թ. ընտրություններ՝** դժվարանում է պատասխանել

6. «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԺԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Մոսկովյան 31, բն. 76ա
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 53-69-13, 53-26-97
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** office@heritage.am
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.heritage.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 2002թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 30.05.2005թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 2005թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 5340 անդամ
- **Կուսակցության պաշտոնական մամուլը՝** «Ժառանգություն» պարբերականներ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** www.heritage.am, 21.07.2005թ.-ից

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Խորհուրդ՝ 41 անդամ
- Վարչություն՝ 9 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Ռաֆֆի Կ.Հովհաննիսյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գաղափարախոսությունը՝ Ազգային ազատականություն:

Գաղափարական սկզբունքները.

- Մարդու արժանապատվության, հոգևոր և նյութական ազատության, բարեկեցության, մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման, ինչպես նաև կառավարման համակարգի առողջ և արդյունավետ գործունեության երաշխիքը ժողովրդավարությունն է: Պետական և ազգային շահի կրողը ժողովուրդն է, որն ազատ ու արդար ընտրությունների միջոցով իշխանության ձևավորման միակ աղբյուրն է:
- Հայ ժողովուրդը առաջին հերթին պետք է ապավինի սեփական ուժերին:
- Ազգային իղձերի իրականացման նախապայմանն անկախ ու արդյունավետ պետությունն է և, հաշվի առնելով հայության աշխարհասփյուռ վիճակը, ազգի բոլոր հատվածների փոխգործակցությունն ապահովող համազգային կառույցների ձևավորումը:
- Տնտեսության զարգացման, անհատի ընդունակությունների առավելագույն դրսևորման աղբյուրն ազատականությունն է, ինչը պետությանը չի ազատում սոցիալական պարտավորություններից կարգավորիչ դերից:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Արտաքին քաղաքական քայլերում հավասարակշռվածությունը՝ որպես արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունք, ինչը կբացառի որևէ պետության կցորդ դառնալու վտանգը:
2. Սերտաճում եվրոպական կառույցներին (Եվրախորհուրդ, ԵԱՀԿ), եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերությունների հաստատում, Եվրամիությանը Հայաստանի անդամակցություն՝ որպես արտաքին և ներքին քաղաքականության հիմնական ուղղություն:
3. Համագործակցություն Ռուսաստանի, ԱՊՀ այլ երկրների, ԱՄՆ-ի, Արևելքի հարևան պետությունների, ինչպես նաև խոշոր երկրների (Չինաստան, Հնդկաստան, Ճապոնիա, Կանադա և այլն) հետ:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

1. Տարածքային բաղադրիչ, երբ Հայաստանն իր տարածքում կայանում է որպես ինքնիշխան, իրավական, ժողովրդավարական, ինքնաբավության նվազագույն աստիճանն ապահովելու ունակ պետություն:
2. Մրցակցային բաղադրիչ, որն ուղղված է արտաքին միջավայրին և ենթադրում է տարածաշրջանում Հայաստանի գործառական «դերի»՝ առաքելության հստակեցում ու «մասնագիտացում»: «Ժառանգությունը» Հայաստանի համար այդպիսի առաքելություն է դիտում ժողովրդավարության, կայունության կղզյակի ու առաջանցիկ զարգացման էպիկենտրոնի դերը:

ա. Եվրաինտեգրում

Հայաստանի համար ինտեգրումը վերջնանպատակ չէ. այն առավել բարեկեցության, բարգավաճման ու անվտանգության հասնելու միջոց է: Ինտեգրում ասելով՝ «Ժառանգություն» կուսակցությունը հասկանում է փոխշահավետ համագործակցություն, փոխըմբռնման ու փոխօգնության բարձր աստիճանի ձեռքբերում:

բ. ԱՊՀ

Բարիդրացիական հարաբերություններ նախկին խորհրդային հանրապետությունների հետ՝ փոխշահավետության սկզբունքով:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Կուսակցությունը գտնում է, որ քանի դեռ մենք Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ ենք, պետք է կատարենք պայմանագրային պարտավորությունները:

դ. ՀԱԴԿ (NATO)

Անկախ այն հեռանկարից՝ Հայաստանը կանդամակցի, թե չի անդամակցի ՆԱՏՕ-ին՝ ելնելով իր անվտանգության կարիքներից, այսօրվա հրամայականները հարկադրում են բանակի արդիականացում ՆԱՏՕ-ի չափանիշներով, որոնք ապացուցել են իրենց կենսունակությունը թե գլոբալ, թե պետության ներքին մարտահրավերներին դիմակայելու առումով:

ե. ԱՄՆ

Տնտեսական, սոցիալական, արտաքին քաղաքական մարտահրավերներին դիմակայելու, բանակի նյութական և ռազմատեխնիկական սպասարկման ծավալները մեծացնելու և որակը բարելավելու նպատակով անհրաժեշտ է պահպանել տնտեսական, քաղաքական և ռազմական համագործակցությունը ոչ միայն ավանդական դաշնակից

Ռուսաստանի, այլ նաև նոր գործընկերների՝ ԵՄ և ՆԱՏՕ-ի երկրների, հատկապես ժամանակակից գործընկեր ԱՄՆ-ի հետ:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Ավանդական դաշնակից Ռուսաստանի հետ անհրաժեշտ է պահպանել սերտ համագործակցությունը, սակայն վերակառուցելով այն և հիմնվելով փոխադարձ շահերի ըմբռնման և հարգանքի վրա: Այդ համագործակցության շրջանակներում «Գույք պարտքի դիմաց» ձևաչափը, ինչպես նաև՝ Հայաստանի տնտեսության ռազմավարական ոլորտների վաճառքը Ռուսաստանին, կամ ցանկացած այլ երկրի՝ անընդունելի է:

է. Թուրքիա

Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունները ենթադրում են բաց, անկեղծ երկխոսություն մշակույթի, տնտեսության, սոցիալական համագործակցության միջոցով: Երկու ժողովուրդները պետք է աստիճանաբար փոխակերպեն առայսօր իրենց կառավարող կարծրատիպերը, ընդունեն համամարդկային ու համաեվրոպական արժեքները, ճանաչեն սեփական պատմությունն ու լուծում տան Ցեղասպանության ու նրա ժառանգության հիմնախնդրին, համապարփակ ու համալիր ձևով կարգավորեն բաժանարար բոլոր հարցերն ու հարաբերությունները:

ը. Ադրբեջան

Արցախյան հակամարտության վերջնական կարգավորումից հետո Ադրբեջանի հետ անհրաժեշտ է կնքել համալիր խաղաղության եռակողմ պայմանագիր, որի երրորդ կողմը պետք է լինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

թ. Իրան

Հիմնվելով առկա բարիդրացիական հարաբերությունների վրա՝ զարգացնել Իրանի հետ տնտեսական համագործակցությունը՝ երկու երկրների տրանսպորտային, էներգետիկ և այլ տիպի անվտանգություններն ապահովելու նպատակով: Որպես առաջնայնություն դիտարկել Իրան-Հայաստան-ԵՄ լայն տրամաչափի գազատարի կառուցումը:

ժ. Վրաստան

Կուսակցությունը գտնում է, որ Վրաստանի հետ անհրաժեշտ է բարիդրացիական մթնոլորտի ստեղծում փոխվստահության հիմքի վրա, տնտեսական համագործակցության տեմպերի փոխանցում նաև քաղաքական ոլորտ: Դա հնարավոր է անել՝ հատկապես հաշվի առնելով մեր երկու երկրների արտաքին քաղաքական նույն գերակայությունները Եվրամիությանը անդամակցելու ուղղությամբ:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Գործուն և նախաձեռնող արտաքին քաղաքականության շնորհիվ անհրաժեշտ է հասնել Հայաստանի մասնակցությանը տարածաշրջանային տնտեսական և քաղաքական ծրագրերին՝ առանց ենթարկվելու այդ հարցում որևէ երրորդ երկրի ճնշմանը:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Հիմնախնդիրը պետք է լուծվի խաղաղ ճանապարհով և հասարակայնորեն ընդունելի տարբերակով, ԼՂՀ-ն պետք է դառնա բանակցությունների լիիրավ կողմ: «Ժառանգությունը» ընդունում է հարցի այնպիսի կարգավորում, որը բացառում է ԼՂՀ-ի վերադարձն Ադրբեջանի կազմ, չի խախտում ՀՀ ինքնիշխանությունը սեփական տարածքների նկատմամբ:

խ. Ցեղասպանության ճանաչում

Համաշխարհային փորձն ու պատմությունը ցույց են տալիս, որ խնդիրները լուծվում են, երբ երկուստեք ու հանդիպակաց քայլ է արվում: Երկու պետությունների համար էլ կարևորագույն քայլ է համամարդկային ու համաեվրոպական արժեքների ընդունումը, սեփական պատմության ճանաչումը, Ցեղասպանության ու նրա հիմնախնդրին լուծում տալը, բաժանարար բոլոր հարցերի ու հարաբերությունների կարգավորումը՝ համապարփակ ու համալիր ձևով:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

ՀՀ-ն պետք է օժանդակի Սփյուռքում հայապահպանությանը, նպաստի յուրաքանչյուր սփյուռքահայի՝ Հայաստանի և միմյանց հետ հաղորդակցման հնարավորությունների դյուրացմանը, պետք է դառնա սփյուռքահայ համայնքներին իրար կապող օղակը, շփման գլխավոր կենտրոնը: Սփյուռքն էլ իր հերթին պետք է Հայաստանի և աշխարհի միջև մշակութային, տնտեսական, քաղաքական կապի և համագործակցության լավագույն կամուրջը լինի: Այդ նպատակով անհրաժեշտ է ՀՀ կառավարության կազմում ստեղծել համապատասխան հանրապետական կառավարման մարմին:

կ. Այլ /Հայկական գործոնի կարևորումը/

Էական հորիզոն է նաև հայկական գործոնի կարևորումը բոլոր այն երկրներում, ուր բախտը նետել է մեր հայրենակիցներին: Հայկական գործոն՝ իր դրական ու փորձարկված հատկանիշներով, ինչը չեն ժխտում նաև օտարները՝ աչքի առաջ ունենալով հայ համայնքների նպաստամատույց ջանադրությունը:

4.3. Ներքին քաղաքականության առաջնահերթությունները

1. Իրավակարգի բարեփոխումներ:
2. Քաղաքացիական հասարակության կայացում:
3. Տնտեսական և սոցիալական քաղաքականություն:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Պետությունը պետք է առավել արդյունավետ իրականացնի տնտեսության մեջ իրեն վերապահված կարգավորիչ գործառույթները, այդ թվում՝ հակամենաշնորհային, ազատ մրցակցության ապահովման, արդարադատության և տնտեսական վեճերի հարթման:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

1. Տնտեսությունը պետք է զարգանա շուկայական ազատ հարաբերությունների սկզբունքով, որպեսզի առավելագույնս սերտաճի համաշխարհային տնտեսությանը, իր արժանի տեղը գտնի աշխատանքի համաշխարհային բաժանման մեջ:

2. Ինովացիոն տնտեսության զարգացման և բարձր արտադրաեղանակների միջոցով իրատեսական է հասնել աննախադեպ հաջողությունների:
3. Օտարերկրյա ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ է ստեղծել առավել թափանցիկ իրավական և տնտեսական դաշտ:

ա. Դրամավարկային

1. ՀՀ կենտրոնական դրամատան նկատմամբ ԱԺ վերահսկողության մեխանիզմների կատարելագործումը:
2. Ավանդների երաշխավորման գործուն համակարգի մշակումն ու ներդրումը, ինչը կարևոր քայլ է դրամատնային ողջ համակարգի հանդեպ հասարակության վստահության ամրապնդման ուղղությամբ:
3. Ապահովագրական և կենսաթոշակային մասնավոր և պետական հիմնադրամների և ընկերությունների ձևավորման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:
4. Հիպոթեքային վարկավորման խթանման նպատակով առավել ազատական դրամավարկային դաշտի ապահովում:
5. Դրամատների կողմից տնտեսության իրական հատվածի վարկավորման ծավալների ավելացումը՝ վարկերի օգտագործման նկատմամբ սահմանելով օպերատիվ վերահսկողություն:
6. Նախկին Հայխնայբանկում, ինչպես նաև՝ 90-ական թվականների առաջին տարիների ընթացքում սնանկացած կամ լուծարված 33 բանկա-վարկային կազմակերպություններում ավանդադրած գումարների վերադարձման իրատեսական ծրագրի իրագործումը՝ հետևյալ հիմնական սկզբունքների կիրառմամբ՝ բոլոր ավանդները պետք է ձևակերպվեն որպես պետության ներքին պարտք իր քաղաքացիներին, իսկ ավանդների վերադարձման միջոցների աղբյուր պետք է լինեն պետական գույքի սեփականաշնորհման միջոցները, անցած տարիներին պետական պաշտոնյաների կողմից հասարակությունից կողոպտված հարստության բռնագանձումից ստացվող գումարները, ինչպես նաև՝ որոշ տնտեսվարող սուբյեկտների կողմից մինչ այժմ պետությունից թաքցրած առավել խոշոր չափերի հասնող հարկերը:

բ. Բյուջետային

1. Բյուջետային գործընթացները պետք է դարձնել ավելի բաց և թափանցիկ:
2. Անցում կատարել դեպի զարգացման բյուջեները՝ հստակորեն սահմանազատելով ծախսերի այն մասը, որը նպատակաուղղվելու է զարգացման հեռանկարային ծրագրերի իրագործմանը:
3. Մեծացնել բյուջետային ծախսումների արդյունավետությունը, նվազեցնել պետական վարչակազմի պահպանման ծախսերը :
4. Հանրապետական և համայնքային բյուջեների ծախսերը ծրագրավորել և իրականացնել վերջնական արդյունքների վրա հիմնված ծրագրային բյուջետավորման հիման վրա:
5. Ապահովել բյուջեի դեֆիցիտը առավելագույնը 3%-ի շրջանակներում:

գ. Հարկային

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է ձևավորել արդարության և համահավասարության սկզբունքով գործող հարկային համակարգ, պայքարել ստվերային տնտեսության դեմ, ավելացնել ուղղակի հարկերից (շահութահարկ, եկամտահարկ) ստացվող մուտքերը, նվազեցնել հիմնական հարկատեսակների դրույքաչափերը, պայքարել տնտեսվարող սուբյեկտների կողմից կեղծ վնասներ ցույց տալու արատավոր երևույթի դեմ: Անհրաժեշտ է մշտապես կատարելագործել և բարձրացնել հարկային վարչարարության մակարդակը:

դ. Մաքսային

Մաքսային քաղաքականության միջոցով խրախուսել ներքին արտադրությունը և բարձր ավելացրած արժեք ունեցող արտադրատեսակների արտահանումը: Մաքսատներում ապահովել առավել թափանցիկ վարչարարություն, արմատախիլ անել այստեղ արմատացած կոռուպցիան, ապահովել հավասար իրավական պայմաններ բոլոր ներկրողների և արտահանողների համար: Հայրենական արտադրության խթանման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հովանավորչական մաքսային քաղաքականություն, ինչը ենթադրում է հայրենական արտահանելի արտադրանքի համար մեղմ մաքսային ռեժիմի և դրա համանման արտասահմանյան արտադրանքի ներմուծման նկատմամբ առավել խիստ մաքսային ռեժիմի իրականացում: Անհրաժեշտ է մշտապես կատարելագործել և բարձրացնել մաքսային վարչարարության մակարդակը:

ե. Ճյուղային

Պետության տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի տնտեսության առավել գիտատար, ինովացիոն ճյուղերի զարգացման խրախուսմանը, ինչպես նաև նկատի ունենա երկրի էներգետիկ, ռազմական, տնտեսական, տրանսպորտային, պարենային և բնապահպանական անվտանգությունը:

զ. Տարածքային

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է ապահովել համայնքների քաղաքական ու ֆինանսատնտեսական անկախությունը, այն է՝ բացառել ինչպես կառավարության, այնպես էլ ցանկացած այլ մարմնի կողմից համայնքի ղեկավարին և ավագանու անդամներին պաշտոնանկ անելու իրավունքը և հետևողականորեն իրականացնել ապակենտրոնացման գործընթացը, այսինքն՝ համայնքներին փոխանցել հիմնական լիազորությունները և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Ընդունել տեղական ինքնակառավարման մասին նոր օրենք, որով հնարավոր կլինի համայնքների բյուջե ուղղվող գումարները հասցնել պետական բյուջեի 25-35%-ին, դրանով իսկ աշխուժացնել գյուղական և քաղաքային համայնքների կյանքը:
Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումն ապահովելու նպատակով վերամշակել տեղական տուրքերի ու վճարների, ֆինանսական համահարթեցման մասին օրենքները:
Բարեփոխել տարածքային կառավարման համակարգը:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության ու ֆինանսական շուկայի փոքր ծավալը և թերի կայացվածությունը՝ արտաքին տնտեսական հարաբերությունների մեջ մշտապես հաշվի առնել տնտեսական և ֆինանսական կայունության և անվտանգության խնդիրները:

ը. Վճարային (առևտրային) հաշվեկշիռ

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է խթանել արտահանման աճը և ներկրումը փոխարինող արտադրությունների զարգացումը, որի միջոցով պետք է հասնել արտաքին առևտրային բացասական հաշվեկշռի աննախադեպ և անընդունելի չափերի նվազման:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Ներդրումների խթանում

Բարենպաստ ներդրումային մթնոլորտ ապահովելու համար կարևոր նշանակություն ունի ընդհանուր ներդրումային քաղաքական համատեքստում պետության, ձեռնարկությունների և առևտրային դրամատների աշխատանքների համատեղումը, որոնք ուղղակիորեն կապված են ներդրումների հետ: Պետության ներդրումային քաղաքականության կարևորագույն գործիքներն են կոռուպցիայի դեմ պայքարը, լրավճարային, հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականությունը, հակամենաշնորհային քաղաքականությունը, կառուցվածքային բարեփոխումները և այլն:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Ֆինանսական շուկայի զարգացումը պետք է սկսվի հասարակության ներսում նախ պետության և արդարադատության համակարգի, ապա ֆինանսական և տնտեսական ինստիտուտների հանդեպ վստահության ձևավորումից:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Կուսակցությունը կարևորում է սեփականության իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմների ստեղծումը անկախ սեփականության ձևից, ներքին շուկայում մենաշնորհային գործունեության սահմանափակումը, բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար հավասար պայմանների ապահովումը, կոռուպցիայի, հովանավորչության և որպես դրանց հետևանք՝ ստվերայնության կրճատման համար գործուն ու վճռական քայլերի իրագործումը, ընկերությունների գործունեության թափանցիկության ապահովումը:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

ԺԿ-ն կարևորում է մեր երկրում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված բարեփոխումների հետևողական իրականացման անհրաժեշտությունը: Մենք գտնում ենք, որ փոքր և միջին բիզնեսը հանդիսանում է Հայաստանում միջին խավի ձևավորման հիմքերից մեկը, որը զարգանալով՝ իր հերթին խթանում է տնտեսական աճը, նոր աշխատատեղերի ստեղծումը, տարածքային զարգացումը, աղքատության կրճատումը:

Ներկայումս փոքր և միջին բիզնեսի բաժինը Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ՀՆԱ-ում խիստ ցածր է և չի համապատասխանում նրա ներուժին: Այս իրավիճակը ստեղծվել է պետական կառավարման և արդարադատության համակարգերում համատարած կոռուպցիայի հետևանքով մի խումբ մարդկանց ձեռքերում տնտեսության մեծ մասի արհեստական գերկենտրոնացման, շուկաների մենաշնորհայնացման, ստվերային տնտեսության ծաղկման արդյունքում:

ՓՄՁ-ի ծավալների շեշտակի աճի հնարավոր է հասնել հետևյալ միջոցառումների իրագործման ճանապարհով.

- օրենսդրական և վարչարարական բարեփոխումների իրականացում,
- հարկային, մաքսային, ֆինանսավարկային և այլ ոլորտներում արդար մրցակցային դաշտի ապահովում,
- կոռուպցիայի դեմ պայքար,
- ինովացիոն քաղաքականության մշակում և իրականացում,
- ներդրումային քաղաքականության խթանում,
- տարածքային ենթակառուցվածքների զարգացում:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում

Առևտրի համաշխարհային կազմակերպության այն պահանջների մասով, որոնք կարող են վտանգել ՀՀ տնտեսության այս կամ այն ոլորտի անվտանգությունը և զարգացումը, Հայաստանի Հանրապետությունը պետք է բանակցի ԱՀԿ-ի հետ դրանք Հայաստանի հանդեպ չկիրառելու, կամ դրանց կիրառումը հետաձգելու հնարավորության շուրջ:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Տարածաշրջանային քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի Երևանին զուգահեռ տնտեսական, գիտակրթական և մշակութային այլընտրանքային տարածաշրջանային կենտրոնների ձևավորումը և դրանց կայուն զարգացումը: Անհրաժեշտ է խրախուսել մայրաքաղաքից մարդկային և ֆինանսական միջոցների ապակենտրոնացումը դեպի մարզեր, Երևանի տնտեսական, սոցիալական, ապագայում նաև քաղաքական բեռնաթափմանը, նպաստել հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային տարածաշրջանների ուժեղացմանը: Հարկ է պետական բյուջեի միջոցներով ապահովել մարզերի ենթակառույցների զարգացումը : Կուսակցությունը գտնում է, որ ինքնաբավ ու հարուստ համայնքը ուժեղ պետության հիմքն է :

է. Ստվերային տնտեսության կրճատում

Հայաստանի տնտեսության ստվերային մասը ներկայումս կազմում է 50-60%, որի վերացման համար անհրաժեշտ են ոչ այնքան բարդ իրավական մեխանիզմներ, որքան իշխանությունների տարրական քաղաքական կամք: «Ժառանգություն» կուսակցությունը մտադիր է տնտեսության ստվերի կրճատման և այն հարկման դաշտ բերելու շնորհիվ արդեն 2007թ.-ին բյուջե մուտքագրել հավելյալ 140 միլիարդ դրամ (շուրջ 400 միլիոն դոլար):

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կուսակցությունը գտնում է, որ կոռուպցիայի հաղթահարումը բացառապես ինստիտուցիոնալ միջոցներով անհնար է, քանի դեռ իշխանությունների մոտ չկա դրա քաղաքական կամքը: Լեգիտիմ, ժողովրդի կողմից ընտրված իշխանությունների ձևավորումից հետո անհրաժեշտ է հետամուտ լինել առավել բարձրաստիճան կոռուպցիոներների ձերբակալությանը և պատժին՝ օրենքի ողջ խստությամբ, նրանց կողմից հասցված ամբողջ վնասի փոխհատուցմամբ: Անհրաժեշտ է իրականացնել տնտեսական հանցագործությունների գնահատման և դրանց համաներման գործընթաց: Կոռուպցիայի դեմ պայքարի գործում կարևոր նշանակություն կարող է ունենալ հանրապետական մեկ անկախ ուժային կառույցի ձևավորումը, որի կառավարման գործում մեծ դեր պետք է հատկացնել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:

թ. Արդյունաբերության զարգացում

Կուսակցությունն առաջնային է համարում բարձր (այդ թվում՝ տեղեկատվական) տեխնոլոգիական ոլորտի ու վերամշակող արդյունաբերության զարգացման և դրանց արտադրանքի արտահանման խթանումը, արտադրատեսակների փակ ցիկլերի ձևավորման, ինչպես նաև՝ կլաստերների կազմակերպման խրախուսումը: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մրցունակ արտադրատեսականու ընդլայնմանը, ինչը հնարավոր է արտադրանքի որակը միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու պարագայում: Հարկ է մեծացնել արդյունաբերության դերը երկրի համախառն ներքին արդյունքի կազմավորման գործում:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ հարուստ ու կայուն գյուղը պետության ինքնիշխանության և անվտանգության լուրջ գրավականն է: Այդ իսկ առումով խիստ կարևորվում է.

- գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման օժանդակությունը,
- գյուղացիական տնտեսություններում ներդրումային և վարկավորման ծրագրերի իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Անհրաժեշտ է ոլորտում ներդնել վարկավորման արդյունավետ համակարգ՝ վարկային միջոցների տրամադրման ժամանակահատվածը և տոկոսադրույքները սահմանելիս հաշվի առնելով տվյալ ճյուղի առանձնահատկությունները՝ որպես գրավի առարկա ընդունելով հողը, ինչպես նաև՝ գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական միջոցները: Անհրաժեշտ է արտոնյալ վարկավորման պայմաններ կիրառել նաև բարձրլեռնային և սահմանամերձ գոտիներում գործող գյուղացիական տնտեսությունների համար,
- գյուղատնտեսության մեջ կամավորության սկզբունքով կոոպերացիայի տարբեր ձևերի կազմավորման համար նպաստավոր պայմանների ու մեխանիզմների ստեղծումը,
- գյուղատնտեսության ապահովագրական ճկուն համակարգի ստեղծումը և դրանում պետության փութաջան մասնակցությունը՝ առաջին հերթին ապահովագրական վճարների մի մասի փոխհատուցումն ստանձնելու ճանապարհով:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է էներգակիրների աղբյուրների դիվերսիֆիկացում, էներգաարտադրող հզորությունների մեծացում, իսկ հեռանկարում՝ Մեծամորի ԱԷԿ-ին փոխարինող համապատասխան հզորությունների նոր և ժամանակակից աղբյուրների պարագայում նաև այդ ԱԷԿ-ի փակում, վերականգնվող էներգետիկայի խրախուսում, տարածաշրջանային էներգետիկ ծրագրերում Հայաստանի առավել ակտիվ ներգրավում, Իրան-Հայաստան-ԵՄ գազատարի նախագծի իրականացմանն ուղղված ակտիվ քաղաքականություն: Իրան-Հայաստան գազատարի վաճառքը կամ որևէ ուրիշ ձևաչափով այլ երկրի հանձնելն անընդունելի է: Երկրի էներգետիկ անկախության ապահովման տեսակետից խիստ կարևորվում է էներգիայի այլընտրանքային բնական աղբյուրների (արեգակի էներգիա, լեռնային ավելի քան 150 գետերի ջուր, քամու ուժ, կոշտ թափոնների գազեր, գրավիտացիայի ուժ) օգտագործման շնորհիվ ապահովել երկրի էներգետիկ պահանջարկի հիմնական մասը:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Երկրի ռազմավարական ենթակառուցվածքների կենսագործունեությունն ու զարգացումը պետք է տեղի ունենա պետության աչալուրջ վերահսկողության, իսկ երկաթգծերն ու ավտոճանապարհները՝ բացառապես պետության սեփականության ներքո:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում

Հայաստանը կարող է դիմագրավել թե տարածաշրջանային, և թե համաշխարհային մասշտաբով ծավալվող բնական մրցակցության մարտահրավերներին՝ ձևավորելով ինովացիոն տնտեսություն, այսինքն տնտեսություն՝ հիմնված գիտելիքների և բարձր տեխնոլոգիաների վրա:

Այդ նպատակով «Ժառանգություն» կուսակցությունը պատրաստվում է հանդես գալ մի շարք օրենսդրական նախաձեռնություններով, որոնց միջոցով.

- տնտեսության բարձր, այդ թվում՝ ինֆորմացիոն և նանո-տեխնոլոգիաների ոլորտների համար՝ կապահովվի արտոնյալ հարկային պայմաններ,
- զգալիորեն ավելացնել ՀՀ-ում գիտության և կրթության ոլորտների ֆինանսավորումը,
- պետական բյուջեից ամենամյա դոտացիոն հատկացումների ձևով, մրցութային կարգով կֆինանսավորվի այս ոլորտների համար կադրեր պատրաստող պետական և մասնավոր ուսումնական հաստատությունների համապատասխան ամբիոնների տեխնիկական, տեխնոլոգիական հագեցումը, դասախոսական կազմի վերապատրաստումն արտասահմանյան լավագույն պրոֆիլային կրթօջախներում, լավագույն ուսանողների ուսումնական պրակտիկան արտասահմանյան լավագույն ուսումնական հաստատություններում,
- ՀՀ միջնակարգ և միջին մասնագիտական կրթական համակարգերի՝ հնարավորինս արդիական նյութատեխնիկական բազայով հագեցմանն անհրաժեշտ միջոցների հատկացում պետական բյուջեից՝ ներկայումս բյուջետային ծախսերում դրանց ունեցած մասնաբաժնի համեմատ հինգ անգամ ավելի: Հայաստանի բոլոր դպրոցների 100%-ոց համակարգչայնացում պետական միջոցների հաշվին, համապատասխան ուսուցիչների պատրաստության ապահովմանն ուղղված պետպատվերի հատկացում պետական և մասնավոր բուհերին:
- գիտնականների համար, անկախ բնագավառից, նվազագույն աշխատավարձի շեմը հասցնել երկրի նվազագույն աշխատավարձի հիսունապատիկին,
- պետական բյուջեի հաշվին 50%-ով դոտացնել այս ոլորտներում միջազգային ցուցահանդեսներին հայաստանյան համապատասխան ընկերությունների մասնակցության համար անհրաժեշտ ծախսերը, ինչպես նաև Հայաստանում համապատասխան միջազգային ցուցահանդեսների կազմակերպման ծախսերը:

ծ. Կորպորատիվ կառավարման բարելավում

Կորպորատիվ կառավարման բարելավման հիմքը կուսակցությունը տեսնում է ներհասարակական փոխվստահության, հասարակության և բիզնեսի մեջ ազնիվ գործընկերային հարաբերությունների, մշակույթի ձևավորման և արդարադատության համակարգի արդյունավետ կենսագործունեության և դրա հանդեպ հասարակական վստահության ձևավորման մեջ:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Աղքատության հաղթահարում

- Նվազագույն աշխատավարձի սահմանում կենսապահովման նվազագույն զամբյուղի արժեքի չափով,
- սոցիալական պաշտպանության մեխանիզմների և վարչարարության բարոյականացում, դրանց վերահսկում,
- նպաստների, կենսաթոշակների բարձրացում և դրանց սահմանում կենսապահովման նվազագույն զամբյուղի արժեքի չափով,
- առաջիկա 3 տարիների ընթացքում 150000 աշխատատեղերի ստեղծում կենսապահովման նվազագույն զամբյուղի արժեքը 40-50 տոկոսով գերազանցող միջին աշխատավարձով:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

- Գործազրկության կրճատում և զբաղվածության արդյունավետ քաղաքականություն:
- Բնակչության եկամուտների իրական աճ, սոցիալական պաշտպանության համակարգի ամրապնդում:

գ. Զբաղվածության ապահովում

Գործազրկության կրճատման և բնակչության զբաղվածության աստիճանի ավելացման համար անհրաժեշտ է.

- աշխատանքային նոր օրենսգրքի անհապաղ վերանայում,
- զբաղվածության ծառայությունների աշխուժացում աշխատատեղերի ստեղծման, վերամասնագիտական ծառայությունների մատուցման և ինքնազբաղվածության շուկայի ձևավորման նպատակով,
- գյուղական աշխատուժի հանդեպ քաղաքականության մշակում և կիրարկում, աշխատանքային գերշահագործման վերացում, գործատու-աշխատող հարաբերությունների օրենսդրական վերահսկում, ոչ ֆորմալ հարաբերությունների իրավական վավերացում,
- անապահով խավերի աշխատանքային իրավունքի իրական պաշտպանություն,
- ստվերային զբաղվածների օրինականացում, նրանց իրավունքների պաշտպանություն և սոցիալական երաշխիքների տրամադրում:

դ. Արտագաղթի նվազեցում

Արտագաղթն արդեն իսկ սպառնում է Հայաստանի Հանրապետությանը՝ որպես ինքնիշխան պետության գոյությանը, և «Ժառանգություն» կուսակցությունը գտնում է, որ արտագաղթի շեշտակի նվազմանը, արդեն արտագաղթածների հայրենադարձմանը և ներգաղթի ապահովմանը հնարավոր է հասնել միմիայն երկրում բարոյահոգեբանական վիճակի բարելավման, ապագայի հանդեպ հավատի վերականգնման, ներհասարակական սոցիալական բևեռացման կրճատման, արդարադատության արդյունավետ համակարգի կայացման, կոռուպցիայի դեմ լուրջ պայքարի արդյունքում դրա ծավալների կտրուկ կրճատման և իսպառ վերացման, տնտեսության մեջ կատարյալ մրցակցության ապահովման շնորհիվ: Կուսակցության պատկերացմամբ՝ այս ամենին պետք է միտված լինի նոր, լեգիտիմ իշխանությունների ձևավորումը:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Մատչելի և որակյալ առողջապահություն ապահովելու համար անհրաժեշտ է.

- ավելացնել ու նպատակային օգտագործել պետական բյուջեից առողջապահությանը տրամադրվող հատկացումները,
- Հայաստանի ողջ տարածքում առողջապահական ծառայությունները դարձնել ֆիզիկապես և ֆինանսապես մատչելի,
- կատարելագործել առողջապահական համակարգի կառավարումը, ներքին վարչարարությունը,
- իրականացնել մասնավոր հատվածում մատուցվող բժշկական օգնության և ծառայությունների գների պետական կարգավորման արդյունավետ մեխանիզմներ,
- որպես օգնություն Հայաստան առաքված բուժտեխնիկան և դեղորայքային միջոցներն օգտագործել նպատակային,
- բնակչության սոցիալապես անապահով խավերին մատուցել կայուն անվճար բուժօգնություն,
- վերանայել դեղերի ներկրման քաղաքականությունը, դեղորայքային շուկան հագեցնել արդյունավետ, անվտանգ և որակյալ դեղորայքով,
- լուրջ պայքար մղել կեղծ դեղերի կիրառման ուղղությամբ. այդ նպատակով ուժեղացնել մաքսային հսկողությունը, կրճատել և իսպառ վերացնել մաքսանենգ ճանապարհով դեղերի ներմուծումը,
- վերականգնել 2001 թ. հունվարից վերացված դեղերի շրջանառության վրա կիրառվող ավելացված արժեքի հարկի արտոնությունը,
- կտրուկ կրճատել և իսպառ վերացնել դեղերի ստվերային շրջանառությունը (ինչը գնահատվում է 70-75 տոկոսի սահմաններում),
- մշակել սոցիալապես անապահով խավերին դեղորայքով ապահովելու արդյունավետ քաղաքականություն:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Երկրի բնակչության սոցիալական սահմանադրական իրավունքներն ապահովելու նպատակով կուսակցությունը կարևորում է.

- պարտադիր բժշկական ապահովագրության անհապաղ ներդրումը,
- առողջության ապահովագրման խրախուսման նպատակով օրենքով թույլատրել ՀՀ տնտեսվարող սուբյեկտներին իրենց հաշվին իրենց աշխատողների առողջության ապահովագրման 30%-ը ֆինանսավորելու դեպքում այդ մասով նվազեցնել շահույթը՝ հաշվարկելով այն որպես ծախս,
- անցումը սոցիալական ապահովագրության կուտակային մեթոդներին,
- որակյալ բնակարանային, կոմունալ, որակյալ և անվտանգ տրանսպորտային ծառայությունների ապահովումը,
- ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանությունը,
- և այլն:

Հանուն Հայաստանի և Արցախի ազատության իրենց կյանքը կամ առողջությունը նվիրաբերածները, այդ թվում՝ այսօր դիրքերում կանգնածները, արժանի են պետական ամենաբարձր ուշադրության ու հոգատար վերաբերմունքի:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Բարձրագույն, միջնակարգ և միջին մասնագիտական կրթության ոլորտում նպատակային մասնագետներ պատրաստելու համար կազմել այս ոլորտների և դրանց առանձին ուղղությունների զարգացման երկարաժամկետ ու նպատակային ծրագրեր:

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է խստացնել բարձրագույն կրթությանը ներկայացվող պահանջները, ինչը կվերացնի կամ կմեղմի միջակության դրսևորումներն ու պարզապես բարձրագույն կրթության վկայական ունենալու մղումները:

Բարձրագույն և մասնագիտական կրթության ոլորտում պետք է կիրառել կրթական վարկերի տրամադրման մեխանիզմները:

Անհրաժեշտ է խստացնել մասնավոր ԲՈՒՀ-երի ատեստավորման չափանիշները, կարգավորել հանրապետության տնտեսության համար անհրաժեշտ կադրերի պատրաստման գործընթացը:

Պետք է խթանել միջին մասնագիտական կրթությունը՝ որպես հանրապետության տնտեսության զարգացման կարևոր գրավական:

Կուսակցությունը Հայաստանի համար առաջնահերթ խնդիր է համարում սահմանադրական մակարդակով միջնակարգ կրթությունը որպես քաղաքացու պարտականություն ամրագրելը, կրթության մասին օրենքով կրթությունից դուրս մնալն անօրինական դիտելը, հանրապետության բոլոր քաղաքներում և գյուղերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքն ապահովելը, հաշմանդամ և այլ անապահով ընտանիքների երեխաների կրթական ծախսերը հոգալը:

Անհրաժեշտ է կտրուկ պայքար մղել կրթության բոլոր մակարդակներում կոռուպցիոն երևույթներ և դրսևորումներ ծնող պատճառների դեմ:

ը. Գիտության զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ գիտության զարգացումը մեզանում ոչ միայն ազգային հպարտության խնդիր է, այլև տնտեսական զարգացման գրավական: Գիտական հաստատությունները ժամանակակից սարքավորումներով հագեցման և նյութատեխնիկական ապահովման, գիտական աշխատողների վարձատրության բարձրացման, գիտական թեմաների ֆինանսավորման ծավալների մեծացման նպատակով անհրաժեշտ է աստիճանաբար ավելացնել հատկացվող միջոցները՝ դրանք հասցնելով պետական բյուջեի ծախսային մասի 4-5%-ի, ինչպես նաև՝ գտնել դրանց ֆինանսավորման այլընտրանքային եղանակներ և աղբյուրներ:

Հատուկ ուշադրություն պետք է հատկացնել կիրառական գիտության զարգացմանը՝ որպես երկրի տնտեսության զարգացման կարևոր գրավական:

թ. Մշակույթ

Մշակույթն առաջնակարգ դեր ունի հայ ժողովրդի կյանքում՝ ոչ միայն ընդհանուր քաղաքակրթական մակարդակի, այլև ազգապահպանության առումով: Հետևաբար՝ պետության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի օրենսդրական համապատասխան դաշտի ձևավորման և գործնական քայլերի միջոցով ազգային մշակույթի զարգացման, ինչպես նաև՝ յուրաքանչյուր քաղաքացու մշակութային պահանջմունքների բավարարման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

ժ. Սպորտ

Սպորտը՝ որպես Հայաստանի քաղաքացիների ներուժի դրսևորման, բնակչության առողջության պահպանման ու երկրի մարտունակության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը, պետք է ախտազերծվի կոռուպցիայից: Անհրաժեշտ է մշակել սպորտի զարգացմանը միտված պետական համալիր քաղաքականություն: Սպորտի ֆինանսավորումը պետական բյուջեի ներկայիս 0,35 %-ից հասցնել 1%-ի:

ի. Այլ /Երիտասարդության հիմնախնդիրների լուծում/

Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության ապագան կախված է նոր սերնդից: Երիտասարդությունը պետք է դաստիարակվի մեր երազած պետության ու հասարակության ոգով: Անհրաժեշտ է Հայաստանի երիտասարդության հոգիներում սերմանել.

- ոգու արժեքի գերակայություն նյութապաշտության հանդեպ,
- ազատության արժեքի գերակայություն անազատության հանդեպ,
- իրավունքի արժեքի գերակայություն կամայականության հանդեպ,
- ժողովրդավարության արժեքի գերակայություն մենիշխանության հանդեպ:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Կուսակցությունը գտնում է, որ թղթի վրա Հայաստանում ձևավորված են բավարար հիմքեր՝ ժողովրդավարության ինստիտուտների կայացման և ամրապնդման համար: Սակայն դրա համար անհրաժեշտ է նախևառաջ իշխանությունների քաղաքական կամք և քաղաքացիական հասարակության գործուն մասնակցություն: Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդման տեսական հնարավորությունների գործնական կիրառումը լինելու է առաջիկա լեգիտիմ իշխանությունների առաջնայնություններից մեկը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

ՁԼՄ-ի մասին օրենքով ՁԼՄ-ի՝ գործելու ազատությունը ոչ թե պետք է սահմանափակվի, այլ կանոնակարգվի, իսկ կանոնակարգմամբ չեն կարող սահմանափակվել ՁԼՄ-ի, լրագրողի՝ տեղեկատվություն ստանալու ու տարածելու, խոսքի ազատության և այլ հիմնարար իրավունքները: Էլեկտրոնային կապուղիների տրամադրումը պետք է կատարվի առավելագույնս թափանցիկ:

Անհրաժեշտ է.

- մշակել ՁԼՄ-ի սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենք, որը կբացառի ինչպես պետության, այնպես էլ որևէ կուսակցության կողմից հեռուստաընկերությունների սեփականության իրավունքը,
- բարենպաստ պայմաններ ստեղծել մասնավոր ՁԼՄ-ի զարգացման համար, պարզեցնել արտոնագրման գործընթացը, հստակորեն սահմանել առաջադրվող պահանջները,
- բարձրացնել լրագրողի սոցիալական և իրավական պաշտպանվածության աստիճանը,

- Ազգային ժողովում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի մասնակցությամբ ձևավորել ՁԼՄ-ի գործունեությունը կանոնակարգող և վերահսկող անկախ հանձնաժողով:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքներից և ազատություններից օգտվելու հնարավորությունը պետք է ապահովված լինի բոլորի համար՝ առանց խտրականության ըստ սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, կրոնական դավանանքի, քաղաքական կամ այլ համոզմունքների, սոցիալական ծագման, ազգային պատկանելության, ունեցվածքային դիրքի, ծննդավայրի կամ այլ հատկանիշների:

Մարդու իրավունքների պաշտպանի դերի բարձրացում, նրա անկախ և անաչառ գործելու համար իրավական և գործառութային նորմալ պայմանների ստեղծում:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Դատաիրավական բարեփոխումների նպատակը պետք է լինի արդարադատության մատչելիությունը, անկախ ու անաչառ դատական իշխանության ստեղծումը, որն ի զորու է ապահովելու ժողովրդավարության կայացումն ու տնտեսական բարեփոխումները:

ե. Ընտրական համակարգի բարելավում

- Կուսակցական արհեստավարժ, հավասարակշռված ընտրական հանձնաժողովների ձև ավորումը,
- ընտրական միավորումների միջ և իրական հավասարություն ապահովող մեխանիզմների ամրագրումը,
- իշխանության կողմից ընտրությունների արդյունքների վրա ազդելու հնարավորության բացառումը,
- ընտրական հանձնաժողովների գործունեության նկատմամբ իրական հասարակական վերահսկողության սահմանումը, ընտրական գործընթացի լիակատար թափանցիկությունը,
- Ազգային ժողովի ընտրությունների 100%-անոց համամասնական ընտրակարգի աստիճանական ներդրումը,
- ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների համար ավելի խիստ պատժամիջոցների սահմանումը և կիրառումը,
- պետական ֆինանսավորմամբ ՁԼՄ-ում թեկնածուների միջև հավասար պայմանների ապահովումը,
- քաղաքացիների ընտրական մշակույթի զարգացման համապետական նպատակային ծրագրի ընդունումը և իրականացումը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է ապահովել ազատ, արդար ընտրություններ, որոնց շնորհիվ տեղի կունենան քաղաքական կուսակցությունների վերասերում ու խոշորացում: Ազգային ժողով անցած կուսակցություններին, կամ դրանց դաշինքներին հատկացնել պետական ֆինանսավորում՝ յուրաքանչյուրին տարեկան 100 միլիոն դրամի չափով, իսկ 3%-ոց շեմը հաղթահարած կուսակցություններին՝ 50 միլիոն դրամի չափով: Թույլատրել առևտրային բանկերին՝ գրավի դիմաց ֆինանսավորել կուսակցությունների նախընտրական արշավները:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում

Ազգային ժողովի ընտրություններն անցկացնել բացառապես համամասնական ընտրակարգով:

Մշակել ՀՀ ԱԺ պատգամավորների հետկանչի արդյունավետ մեխանիզմ:

ը. Այլ /Պետական արդյունավետ վարչակազմ/

Հայաստանի քաղաքականաստեղծ պետական մեքենան պետք է.

- հրաժարվի պետական վարչակազմն անհատի, խմբի շահերին ծառայեցնելու արատավոր փորձից,
- կողմնորոշվի դեպի ժողովրդաիշխանության ու ժողովրդավարության ուղի,
- որդեգրի հանրության շահով առաջնորդվելու և այդ շահն իրականացնելու կենսակերպ,
- գործի թափանցիկ ու հրապարակային՝ բաց բոլորի համար ու բոլորի տեսադաշտում՝ հաշվետու լինելով և հանրությանն իրազեկելով իր ձեռքբերումների ու բացթողումների, արածների, չարածների ու անելիքների մասին:

Պետական արդյունավետ վարչակազմն ու լավ կառավարումը հենվում են բանիմաց, իրավասու, արհեստավարժ, օրինական գործունեության ազատության ու պաշտպանվածության աստիճան ունեցող պետական ծառայողների վրա:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

ՀՀ ազգային անվտանգությունը պետության, քաղաքացիների համար ցանկացած տեսակի սպառնալիքներից ու վտանգներից զերծ երկրի ներքին ու արտաքին միջավայրերում լիարժեք գործելու ազատությունն է, որի ապահովման նպատակով անհրաժեշտ է ձևավորել անվտանգության գործուն ու ճկուն համակարգ: Ազգային անվտանգության խնդիրները պետք է համահունչ լինեն «պետությանը՝ լիարժեք ինքնիշխանություն, հասարակությանը և քաղաքացուն՝ ազատության բարձրագույն աստիճան ու իրավունքների ապահովվածություն» սկզբունքին:

Իր պետական կազմավորման տարածքից դուրս սփռված հայություն ունեցող ՀՀ ազգային անվտանգության ու հոգածության շրջանակներում են նաև մեր բոլոր հայրենակիցների վտանգազերծ կենսագործունեության խնդիրները: Նշվածների առումով կենսական են ազգային անվտանգության ապահովմանն առնչվող ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ՝ մասնագիտական նորմեր ներառող օրենսդրության ընդունումը, ազգային անվտանգության ռազմավարության անհապաղ արմատական լրամշակումը բոլոր բաղադրամասերով՝ ռազմական, արտաքին քաղաքական, տնտեսական, տեղեկատվական,պարենային, էներգետիկ, սոցիալական, բնապահպանական և այլն, ինչպես նաև՝ վերը թվարկված անվտանգության տեսակներին վերաբերող համապատասխան ՀՀ օրենքների ընդունումը:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Մոտ ապագայում պետությանը սպառնացող ժողովրդագրական մարտահրավերներին դիմակայելու նպատակով Հայաստանը կարիք ունի ծնելիության խթանմանը, այդ թվում՝ ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանության միջոցով: Անհրաժեշտ է.

- երիտասարդ ընտանիքների աշխատանքային իրավունքների իրականացման լրացուցիչ մեխանիզմների ձևավորում,

- պետական բնակարանաշինական ծրագրերով երիտասարդ ընտանիքներին ապահովել մատչելի բնակարաններով՝ կիրառելով հիփոթեկային համակարգը,
- մայրերին հատկացվող նպաստների չափի սահմանում երեխայի խնամքի անհրաժեշտ միջոցների չափով, հղիության պաշտպանություն, գործատու-հղի կին հարաբերությունների կարգավորում,
- ընտանիքում յուրաքանչյուր երկրորդ և հաջորդ ծնված երեխաների համար հատկացվող նպաստների շեշտակի ավելացում,
- ձեռնարկել համալիր այլ միջոցառումներ:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

- Շրջակա միջավայրի պահպանման լավագույն քաղաքականությունը սկզբից ևեթ լարվածության օջախներից հնարավորինս խուսափելն է, քան դրանց դեմ հետագայում պայքարելը.
- ՀՀ-ում օրենսդրորեն պետք է ձևավորվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք բնապահպանական միջոցառումների կիրառումը տնտեսապես շահութաբեր դարձնեն տնտեսվարող սուբյեկտների համար,
- Հարկային, ներդրումային, վարկային քաղաքականությունների ոլորտում պետությունը պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերի բնապահպանությանը նպաստող ձեռնարկությունների հանդեպ: Առաջարկվում է բնապահպանությանը նպաստող ապրանքների արտադրության, բնապահպանական տեսակետից մաքուր ապրանքների արտադրության մեջ մասնագիտացված ձեռնարկություններին տալ հարկային արտոնություններ՝ ի տարբերություն վնասակար արտադրություն ունեցող ձեռնարկությունների: Տարբերակված մոտեցում պետք է ցուցաբերել նաև բնօգտագործման վճարների գանձման ժամանակ:

4.12. Այլ /Ազգային բանակ/

Իր անվտանգության ապահովման գործում Հայաստանի Հանրապետությունը պետք է ապավինի սեփական ուժերին, նախևառաջ՝ սեփական զինված ուժերին, որի համար անհրաժեշտ է հասնել համընդհանուր զինվորական պատրաստությանը՝ անկախ սեռից:

Հայաստանի Հանրապետության կանոնավոր բանակը կոչված է արտաքին ոտնձգություններից պաշտպանելու երկրի սահմանները, բանակը երաշխավորն է պետության անկախության և տարածքային ամբողջականության: Անհրաժեշտության դեպքում, համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանողական-հարձակողական համադրույթի, բանակը Հայաստանի կենսական շահերի երաշխավորը կարող է լինել նաև պետության սահմաններից դուրս:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

7. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (Ժող Կուս)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Կոմիտաս 59
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 23-11-41
- **Հիմնադրման տարեթիվը՝** 15.02.1995թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 15.02.1995թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 28.02.1995թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 01.12.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 14520 անդամ

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 61 անդամ
- Նախագահ
- Կուսակցության նախագահ՝ Տիգրան Կարապետի Կարապետյան
- Քաղաքական խորհրդի ղեկավար՝ Պետրոս Միքայելի Քացախյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուսակցության խնդիրներն ու նպատակներն են՝ ազգային պետության ամրապնդումը, հասարակության և սեփականության բազմաձևության վրա հիմնված տնտեսության էվոլյուցիոն զարգացումը, ազգային դիմագծին համապատասխան ժողովրդական սկզբունքների հաստատումը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովումը:
2. Երկրի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղվումը:
3. Սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացումը, հայրենիքի ամբողջացումը, Ցեղասպանության միջազգային ճանաչումը:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Եվրաինտեգրում

Հայաստանը պետք է զարգացնի և խորացնի համագործակցությունը Եվրամիության հետ:

բ. ԱՊՀ

Կուսակցությունն առաջնային նշանակություն է տալիս ԱՊՀ-ի երկրների հետ տնտեսական, քաղաքական, տեղեկատվական ինտեգրացիոն գործընթացների զարգացմանն ու ամրապնդմանը:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)[5]

ՀՀ անդամ է ՀԱՊԿ-ին: Կուսակցությունը կարևորում է այդ, որպես անվտանգության երաշխիք:

դ. ՀԱԴԿ (NATO)[5]

Կուսակցությունը կարևորում է համատեղ ծրագրերի իրականացումը ու փոխշահավետ հարաբերությունների հաստատումը:

ե. ԱՄՆ

Հայաստանը պետք է զարգացնի և խորացնի համագործակցությունն ԱՄՆ-ի հետ:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանի Դաշնության հետ ռազմավարական դաշինքը, քաղաքական և տնտեսական հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը պետք է լինի Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը:

է. Թուրքիա[5]

Կուսակցությունը կողմնակից է Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների հաստատմանը:

թ. Իրան[5]

Կուսակցությունը գտնում է, որ Իրանը ՀՀ ռազմավարական գործընկերն է:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Հայաստանը պետք է բարիդրացիական և փոխշահավետ հարաբերություններ հաստատի, համատեղ ծրագրեր իրականացնի տարածաշրջանի երկրների հետ: Հայաստանն, օգտվելով իր աշխարհագրական և պատմական յուրահատկություններից, Սփյուռքի առկայությունից, պետք է կամուրջ հանդիսանա տարբեր քաղաքակրթությունների միջև՝ նպաստելով նրանց երկխոսությանն ու համագործակցությանը:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Կուսակցությունը գտնում է, որ ԼՂՀ միջազգային համընդհանուր նորմերին համապատասխան փաստել է իր կայացումը որպես պետություն: Կուսակցությունը գտնում է, որ Արցախյան հիմնահարցի լուծմանը անհրաժեշտ է հասնել միայն քաղաքական բանակցությունների միջոցով: Արցախը պետք է մասնակցի բանակցություններին՝ որպես լիարժեք կողմ և բոլոր որոշումները պետք է համաձայնեցվեն նրա հետ: ՀՀ պետք է երաշխավորի Արցախի անվտանգությունը:

խ. Ցեղասպանության ճանաչում

Հայաստանի և Սփյուռքի ջանքերը պետք է միավորվեն ազգային համապարփակ դոկտրինայի հիման վրա՝ հանուն հայրենիքի ամբողջացման, համազգային խնդիրների լուծման, Ցեղասպանության միջազգային ճանանչման:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Հայաստանն, օգտվելով իր աշխարհագրական և պատմական յուրահատկություններից, Սփյուռքի առկայությունից, պետք է կամուրջ հանդիսանա տարբեր քաղաքակրթությունների միջև՝ նպաստելով նրանց երկխոսությանն ու համագործակցությանը:

Կուսակցության ուշադրության կենտրոնում պետք է լինի Սփյուռքի հետ համակողմանի կապերի զարգացումը: Հայկական ընդարձակ, հարուստ, ուժեղ և կայուն Սփյուռքը պետք է մշտապես դիտարկվի որպես Հայաստանի մրցակցային առավելություններից մեկը: Հայաստանի և Սփյուռքի ջանքերը պետք է միավորվեն ազգային համապարփակ դոկտրինայի հիման վրա:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Կուսակցությունը կարևորում է պետական շինարարությունը: Ուշադրության կենտրոնում պետք է գտնվի քաղաքական համակարգի կայացումը՝ որպես Սահմանադրության կիրառման, ժողովրդավարության զարգացման երաշխիք: Քաղաքական համակարգը պետք է ապահովի ժողովրդի իշխանությունը երկրում, սահմանադրական նորմի անխափան կիրառումը: Պետական կառավարման համակարգի կայունությունը կուսակցությունը տեսնում է երկրում քաղաքացիական հասարակության մեխանիզմների կատարելագործման մեջ, որը մեծապես պայմանավորված է հանրային և պետական ծառայության օրենսդրական կարգավորմամբ, քաղաքական իշխանության ձևավորման մեխանիզմներով:
2. Դատական իշխանության անկախությունը, անձի իրավունքների պաշտպանությունը, արհմիությունների գործունեության խթանումը, զանգվածային լրատվության միջոցների ազատությունը անկախ հզոր պետականության կայացման նախապայմաններից են:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Կուսակցությունը կնպաստի պետության կողմից օրենսդրորեն կարգավորվող շուկայական տնտեսության սոցիալական ուղղվածությանը, ժողովրդի բարեկեցության ապահովմանն ու հասարակության բևեռացման մեղմացմանը:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Դրամավարկային

Ժողովրդական կուսակցությունն անհրաժեշտ է համարում վարկերի և այլ ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման և ծախսման թափանցիկությունը:

Ժողովրդական կուսակցությունը կաջակցի բանկային համակարգի և վարկավորման մեխանիզմների կատարելագործմանը:

գ. Հարկային

Կուսակցությունը կողմնակից է հարկային բազայի կատարելագործմանն ու պարզեցմանը:

դ. Մաքսային

Կուսակցությունն առաջնահերթ է համարում հարկային, ֆինանսական և մաքսային ճկուն քաղաքականության միջոցով հայրենական ապրանքարտադրողների գործունեության պաշտպանումը և խրախուսումը:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Կուսակցության տնտեսական ծրագրերի հիմնական խնդիրներն են գիտատեխնիկական ներուժի վերականգնումն ու զարգացումն, ազգային տնտեսական առաջնահերթությունների որոշումը և բարձր տեխնոլոգիաներով իրակա-նացվող արտադրության ճյուղերի զարգացումը, ինվեստիցիոն գործունեությանը նպաստումը:

Կուսակցությունը գտնում է, որ ռազմավարական արժեք ներկայացնող օբյեկտների և ոլորտների մասնավորեցումը պետք է իրագործվի միայն ազգային անվտանգության պահանջների հաշվառումով:

Կուսակցության ուշադրության կենտրոնում են սեփականաշնորհված ձեռնարկությունները, նրանց պարտավորությունները և գործարկման խնդիրները, պետական գույքի արդյունավետ կառավարումը և մենաշնորհի կարգավորումը:

Կուսակցությունը կողմնակից է արդյունավետ, ավանդական տնտեսական կապերի վերականգնմանը Ռուսաստանի Դաշնության, ԱՊՀ և տարածաշրջանի բոլոր երկրների հետ:

ա. Ներդրումների խթանում

Կուսակցության խնդիրն է նպաստել պետական ծրագրերի և իրավական ակտերի իրականացման կանխատեսելիությանը, որը կամրապնդի պետության նկատմամբ քաղաքացիների վստահությունը, կերաշխավորի ներդրումների հոսքը:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ նախկին խնայդրամարկղերում եղած բնակչության խնայողությունները ենթակա են ինդեքսավորման և վերադարձման, իսկ մասնավոր բանկերում պետության ուշացած միջամտության արդյունքում բնակչության կորցրած ավանդները՝ փոխհատուցման, ինչը կվերականգի վստահությունը բանկերի նկատմամբ:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Կուսակցությունն առաջնահերթ է համարում փոքր և միջին ձեռներեցության պետական աջակցությունը:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում

Համաշխարհային Առևտրական Կազմակերպության անդամակցությունը նպատակաուղղել Հայաստանում արտադրվող մրցունակ ապրանքների իրացման շուկաների ապահովմանը:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Կուսակցությունը կարևորում է բնակավայրերի սոցիալ-տնտեսական համաչափ զարգացումը:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Կուսակցությունը կարևորում է ստվերային տնտեսությանը նպաստող գործոնների սահմանափակումը և վերացումը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Կուսակցությունը հանդես է գալիս հօգուտ պետականորեն որդեգրված ագրարային ռազմավարության, որը պետք է ներգրավի.

- գյուղատնտեսության մեջ առկա նոր տեխնոլոգիաների և միջազգային առաջավոր փորձի ներդրումը,
- գյուղմթերքների արտադրության ապահովագրումը,
- վերջնական որակյալ արտադրանքի արտահանման խրախուսումը,
- սակագնային քաղաքականությունը,
- գյուղատնտեսության բնագավառում համաճարակների կանխմանը և բուժմանը ուղղված համալիր միջոցները,
- պարենային անվտանգությունը:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Կուսակցությունը ձգտում է աշխուժացնել արհմիութենական շարժումը, նպաստել բոլոր հնարավոր միջոցներով աշխատավորների պաշտպանվածությունը: Կուսակցությունը գտնում է, որ պետության կառույցների մշտական ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն Հայրենական պատերազմի և աշխատանքի վետերանների, արցախյան ազատամարտի մասնակիցների, զոհված ազատամարտիկների ընտանիքների, հաշմանդամների սոցիալական և բարոյական աջակցության խնդիրները:

ա. Աղքատության հաղթահարում

Կուսակցությունը գտնում է, որ աղքատությունը սպառնում է ազգային անվտանգությանը, խոչընդոտում է երկրի ժողովրդավարացմանը և արդյունավետ ինքնակազմակերպմանը: Այն վտանգում է ազգային, ավանդական, պահպանողական կառույցի՝ ընտանիքի կայունությունը, պարարտ հող է ստեղծում մեր հոգեկերտվածքին անհարիր օտար բարքերի տարածմանը, պատճառ է արտագաղթի: Աղքատության հաղթահարումը, ընտանիքի պահպանությունն առանցքային խնդիր է:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Կուսակցությունը նպաստելու է սահմանադրորեն ամրագրված սոցիալական պետության հաստատմանը:

գ. Զբաղվածության ապահովում

Կուսակցությունը կարևորում է աշխատանքի իրավունքի և զբաղվածության խնդիրները, գործատուների և վարձու աշխատողների հարաբերությունների, կենսաթոշակների և նպաստների օրենսդրական կարգավորումը, ձգտելու է դրանց չափը համապատասխանեցնել կենսապահովման նվազագույն զամբյուղի պահանջներին:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը գտնում է, որ կրթությունը և գիտությունը Հայաստանի Հանրապետության զարգացման գերակա ուղղությունն ու երաշխիքն են, ինչը պետք է բավարարի երկրի զարգացման ռազմավարական պահանջներին: Մտավոր ներուժը ազգի հիմնական ռեսուրսն է:

ը. Գիտության զարգացում

Կուսակցության տնտեսական ծրագրերի հիմնական խնդիրներն են գիտատեխնիկական ներուժի վերականգնումն ու զարգացումը, ազգային տնտեսական առաջնահերթությունների որոշումը և բարձր տեխնոլոգիաներով իրակա-նացվող արտադրության ճյուղերի զարգացումը, ինվեստիցիոն գործունեության նպաստումը:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Ժողովրդական կուսակցությունը հետևողականորեն ձգտելու է քաղաքացիական հասարակության կայացմանը, ժողովրդավարական մեխանիզմների կատարելագործմանը, իշխանության ու հասարակության միջև տեղեկատվական խոչընդոտների վերացմանը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Զանգվածային լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը ժողովրդավարական պետականության կայացման նախապայմաններից է:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցությունը հանդես է գալիս մարդու իրավունքների լիարժեք ապահովման, երկրի օրենսդրությունը միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին ու իրավական նորմերին համապատասխանեցնելու օգտին՝ հաշվի առնելով ազգային նկարագիրը:

Կուսակցությունը հետևողականորեն ձգտելու է քաղաքացիական հասարակության կայացմանը, ժողովրդավարական մեխանիզմների կատարելագործմանը, իշխանության ու հասարակության միջև մատչելի և անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման ապահովմանը:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը գտնում է, որ դատական իշխանության անկախությունը հզոր պետականության կայացման նախապայմաններից է:

ե. Ընտրական համակարգի բարելավում[5]

Կուսակցությունը կողմնակից է 100 տոկոսանոց համասնական ընտրակարգի:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը պահանջում է դաստիարակությունը հայոց բանակում վարել ազգային ոգով և ֆիզիկական առողջության կազդուրիչ մեթոդով: Հայաստանի բանակի զինվորը պետք է արժանանա պետության և հասարակության հոգատարությանն ու բարձր հարգանքին:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը կարևորում է բնապահպանության, շրջակա միջավայրի, ընդերքի և առաջին հերթին Սևանա լճի ջրային ռեսուրսների և էկոլոգիական հավասարակշռության վերականգնման խնդիրները:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1995թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 5
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 3
- **2003թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 18
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 1

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1996թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **1998թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

8. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, փ. Վաղարշ Վաղարշյան 12
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 27 53 09, (+37491) 47 28 66
- **Հիմնադրման տարեթիվը՝** 07.03.1998թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 07.03.1998թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 20.03.1998թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 04.09.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 4675 անդամ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Հայկական ժամանակ» օրաթերթ, 07.03.1998թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 19 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Պետրոս Ստեփանի Մակեյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ժողովրդավարական իրավական պետության հաստատում, որի կայացման գլխավոր պայմանը ժողովրդի ազատ կամքի արտահայտումն է: Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովում՝ պետական մարմինների և այլոց ոտնձգություններից ժամանակակից դատական և այլ իրավական մեխանիզմների ներդրման միջոցով: Այս նպատակի իրականացման միջոցը ընտրական համակարգի արմատական բարեփոխումն է: Պետք է Շարժման և Անկախության շրջանի իմաստավորված ճանապարհով ամբողջացնել և հասարակությանը ներկայացնել արդիական, իրատեսական, համակարգված քաղաքական այլընտրանք, որի շուրջը համախմբված հասարակությունը կկարողանա ունենալ անմիջական մասնակցությունը երկրի կառավարման գործընթացներում:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Հայաստանը պետք է մաս կազմի այնպիսի անվտանգության համակարգի, որը իսկապես կարող է ապահովել նրա անվտանգությունը և համապատասխանի նրա քաղաքական դիրքորոշումներին:
2. Անհրաժեշտ է վերացնել օտարերկրյա պետությունների, դրսից ուղղորդվող քաղաքական և այլ ուժերի ազդեցությունը Հայաստանի արտաքին քաղաքականության վրա:
3. Մշակել արտաքին քաղաքականության հեռանկարային հայեցակարգ:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Անհրաժեշտ է արտաքին քաղաքականության խնդիրներ դարձնել երկրի տնտեսության սպասարկումը, մասնավորապես կոմունիկացիաների, արտաքին շուկաների ապահովումը և պաշտպանությունը:

ա. Եվրաինտեգրում

Հայաստանը համարելով Եվրոպայի մաս և որդեգրելով համամարդկային արժեքների համակարգ՝ որպես ռազմավարական նպատակ արձանագրել անդամակցությունը Եվրամիությանը:

բ. ԱՊՀ

ԱՊՀ համագործակցության շրջանակներում պետք է խորացնել Հայաստանի ինտեգրացիոն գործընթացը միջազգային և տարածաշրջանային տնտեսական համակարգերում:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Անընդունելի է Հայաստանի մասնակցությունը ռազմաքաղաքական համակարգերի, որոնք գտնվում են տարբեր անվտանգության համակարգերի ջրբաժանում:

դ. ՀԱՊԿ (NATO)

Որպես Հայաստանի անվտանգությունը ապահովող համակարգ կարող է հանդես գալ NATO-ն կամ նրա հովանու տակ գտնվող այլ համակարգեր:

ե. ԱՄՆ

ԱՄՆ-ի հետ պետք է հետևողականորեն զարգացնել հարաբերությունները:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանի Դաշնությանն հետ անհրաժեշտ է հարաբերությունների բազմակողմանի խորացում, ծավալուն տնտեսական կապերի հաստատում և զարգացում:

է. Թուրքիա

Թուրքիայի և Ադրբեջանի հետ պետք է փոխշահավետ տնտեսական կապերի ձևավորում: Անհրաժեշտ է ստեղծել իրական նախադրյալներ՝ Թուրքիայի հետ բնականոն հարաբերություններ հաստատելու և սահմանները բացելու համար:

թ. Իրան

Խիստ անհրաժեշտ է խորացնել բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունները Վրաստանի և Իրանի հետ:

ժ. Վրաստան[5]

Հարաբերությունները Վրաստանի հետ պետք է խորացնել տնտեսական և այլ ոլորտներում՝ նպատակ ունենալով դրանք հասցնել ռազմավարական դաշնակցի հարաբերությունների:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Հնարավորինս արագ պետք է վերականգնել մեր մասնակցությունը տարածաշրջանային քաղաքական և տնտեսական համագործակցության կառույցներում, այդ նպատակով բնականոն հարաբերություններ ստեղծել հարևան պետությունների հետ, այդ թվում նաև Թուրքիայի և Ադրբեջանի հետ:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Ղարաբաղյան հակամարտության լուծման հարցում պետք է վերադառնալ ինքնորոշման սկզբունքի վրա հիմնված մոտեցումներին՝ ապացուցելով, որ տարածքային ամբողջականության մրցակցային սկզբունքը կիրառելի չէ Լեռնային Ղարաբաղի դեպքում:

խ. Ցեղասպանության ճանաչում

1915թ. Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված Հայ ժողովրդի ցեղասպանությունը, ինչպես մարդկության դեմ իրականացված յուրաքանչյուր ոճիր, պետք է դատապարտվի համաշխարհային հանրության կողմից:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Հայաստանի և Սփյուռքի ներկայացուցիչների մասնակցությամբ անհրաժեշտ է մշակել Հայաստան – Սփյուռք կապերի հարաբերությունների հայեցակարգ՝ շեշտը դնելով ընդհանուր ազգային նպատակների հստակեցման և կառուցվածքային գործուն մեխանիզմների ձևավորման վրա: Բոլոր հայերին պետք է միավորեն ոչ թե քաղաքական հայացքները կամ կուսակցությունները, այլ ազգային մշակույթը, Հայաստանի զարգացման շահը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Բարձրացնել գործադիր իշխանության մարմինների պատասխանատվությունը և աշխատանքի արդյունավետությունը՝ վերացնելով վարչական ավելորդ օղակները:
2. Ապահովել անձի իրավական պաշտպանվածությունը, քաղաքացիների գույքային իրավունքներն ու սեփականության անձեռնմխելիությունը:
3. Վերականգնել և զարգացնել ժողովրդավարական հաստատությունների կայացման գործընթացները:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Հայաստանի Հանրապետության տնտեսական ներկա վիճակի բնորոշիչներն են՝ մրցակցության բացակայությունը, մենաշնորհների հաստատումը, հովանավորչությունը, կոռուպցիան և պետական պաշտոնյաների կողմից տնտեսության դե ֆակտո կառավարումը: Հենց այս խնդիրների կարգավորմամբ է կարևորվում պետության դերը տնտեսության զարգացման գործում:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Ընդունելով, որ Հայաստանը բազմակացութաձև տնտեսական ասպարեզ է, տնտեսական ոլորտի կարգավորումը պետությունը պետք է իրականացնի խիստ՝ բացառապես հարկային, մաքսային և վարկային քաղաքականությամբ, որով պետք է ապահովվի ազատ մրցակցություն և հակամենաշնորհային շուկա:

ա. Դրամավարկային

Կարևոր նշանակություն ունի շուկայի հետ առընչություն չունեցող ֆինանսական հոսքերի բացառումը, արտարժույթի իրական փոխարժեքի ձևավորման շուկայական մեխանիզմի վերականգնումը՝ բացառելով առանձին տնտեսական խմբերի ազդեցությունը Կենտրոնական բանկի գործունեության վրա:

բ. Բյուջետային

Տնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունի պետական բյուջեի մուտքերի տեսակարար կշռում ուղղակի հարկերի մասնաբաժնի էական մեծացումը:

գ. Հարկային

Հարկային քաղաքականությունը պետք է ուղղորդել մի կողմից՝ արտադրության խթանմանը և ներդրումների խրախուսմանը, մյուս կողմից՝ բյուջեի մուտքերի կատարմանը: Անհրաժեշտ է էապես իջեցնել ավելացված արժեքի դրույքաչափը՝ վերացնելով դրա գանձումը սահմանային շրջաններում:

դ. Մաքսային

Անհրաժեշտ է նվազեցնել Հայաստանում չարտադրվող ապրանքատեսակների ներկրման մաքսատուրքերը:

զ. Տարածքային[5]

Համապատասխան դիֆերենցված հարկային քաղաքականության միջոցով մարզերի զարգացումը պետք է հասցնել մայրաքաղաքի և նրա հարակից շրջանների մակարդակին:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Խնդրի կարգավորմանը մեծապես կնպաստի տարածաշրջանային տնտեսական համակարգերի հետ ինտեգրումը:

ը. Այլ

Պետք է բացառել պետական մարմինների կողմից արտաբյուջետային ֆինանսական միջոցների ձևավորումն ու օգտագործումը:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է հստակեցնել տնտեսական ռազմավարության առաջնահերթությունները, քանի որ տնտեսական համակարգը շարունակում է սպառել 1990-98թթ. բարեփոխումների արդյունքները, ինչը արձանագրված է նաև միջազգային կազմակերպությունների գնահատականներում:

ա. Ներդրումների խթանում

Օտարերկրյա կապիտալի ներհոսքը Հայաստանի զարգացման և պետական անվտանգության առաջնային գրավականներից է, ուստի ներդրված վարկերի արդյունավետ օգտագործումը նպատակային զարգացման ծրագրերով՝ համընդհանուր հասարակական պատվեր է:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Շուկայական տնտեսական համակարգի կայացման համար անհրաժեշտ է մենաշնորհների վերացումն ու ազատ տնտեսական մրցակցության ապահովումը:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Փոքր և միջին բիզնեսի զարգացման համար անհրաժեշտ են պետական իրավական երաշխիքներ՝ հարկային դաշտի կատարելագործմամբ:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Ազատ տնտեսական գոտիների ստեղծման և պետական աջակցության միջոցով սահմանամերձ բնակավայրերի առաջանցիկ տնտեսական զարգացման ծրագրերի իրականացում:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Հայաստանում դասական իմաստով ստվերային տնտեսություն գոյություն չունի, քանի որ երկրում գործում են ստվերային հարկային համակարգ և ստվերային բյուջե:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիայի դեմ պայքարել «ձուկը գլխից են բռնում» սկզբունքով, խստագույնս կանոնակարգելով վերահսկողական կառույցների աշխատանքը օրենքի տառին և ոգուն համապատասխան, արմատախիլ անել կաշառակերությունը և անպատժելիության մթնոլորտը:

թ. Արդյունաբերության զարգացում

Պետք է ճշտել արդյունաբերության զարգացման առաջնահերթությունները և պետական երաշխիքների միջոցով աջակցել միջազգային շուկաներում մրցունակ ապրանքների արտադրությանը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Խիստ կարևոր է գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ոլորտում գոտիական հարկային քաղաքականության կիրառումը, գյուղատնտեսությանը տրված հարկային արտոնությունների պահպանումը:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Պետությունը պետք է վերահսկի ռազմավարական նշանակության ոլորտները՝ երաշխավորելով դրանց անվտանգությունը:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Կուսակցությունը կարևորում է բացառիկ նշանակության օբյեկտների օտարման օրինականության ուսումնասիրությունն ու դրա արդյունքների հանրայնացումը:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում

Գենետիկորեն ունենալով մտավոր ներուժ՝ պետք է իրականացնել ոչ թե իմիտացիոն, այլ իրական ինովացիոն ներդրումային քաղաքականություն, որով կկանխվի երիտասարդ կադրերի արտահոսքը զարգացած երկրներ:

ծ. Այլ

ԺՀԿ-ն գտնում է, որ քանի դեռ չի գործում շուկայական մեխանիզմը, այսինքն սպառողը հնարավորություն չունի պաշտպանվելու գների աճից, գնաճի սանձողի դերը պետք է ստանձնի Ազգային Ժողովը:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ԺՀԿ-ի սոցիալական քաղաքականության հիմնաքարը հնարավորինս արագ միջին խավի ձևավորումն է, հատկապես ընչազուրկ խավի հաշվին: Կենսաթոշակները պետք է սահմանվեն բյուջետային ոլորտի միջին աշխատավարձի 70 տոկոսի սահմաններում:

ա. Աղքատության հաղթահարում

Աշխատատեղերի ստեղծմանը զուգահեռ, անհրաժեշտ է աստիճանաբար հիմքեր ստեղծել ոչ պետական կենսաթոշակային համակարգի ձևավորման և զարգացման համար:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Պետական մակարդակով պետք է կանխվի ապօրինի հարստացումը՝ առավել վերահսկելի դարձնելով տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը:

գ. Զբաղվածության ապահովում

Անհրաժեշտ է մշակել բնակչության զբաղվածության համալիր ծրագիր: Պետական վարկերի և մասնավոր ներդրումների շնորհիվ ստեղծել նոր աշխատատեղեր:

դ. Արտագաղթի նվազեցում[5]

Արտագաղթի նվազեցման կարևոր նախապայմանը՝ ժողովրդավարության վերականգնումն է:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Պետությունը պետք է երաշխավորի բնակչության անապահով խավերի իրական անվճար բժշկական օգնությունը և սպասարկումը:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Պետությունը պետք է երաշխավորի մանուկների, ծերերի և հաշմանդամների բարեկեցիկ գոյությունը:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կրթական ազգային ծրագրի միջոցով դաստիարակել համամարդկային արժեքներին տիրապետող, ժամանակակից աշխարհում արագ կողմնորոշվող և արդյունավետ գործող հայ մարդ:

ը. Գիտության զարգացում

Գիտության բնագավառում անհրաժեշտ է հստակեցնել հեռանկարային ճյուղերի զարգացման առաջնահերթությունները՝ հաշվի առնելով անցյալի ժառանգությունն ու այսօրվա պահանջները:

թ. Մշակույթ

Պետությունը պետք է իր հովանու տակ առնի մշակույթի բնագավառն ու ազգային արժեք ներկայացնող հաստատությունները:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Կուսակցության ծրագրային կարևոր դրույթներից է ժողովրդական իրավական պետության հաստատումը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդավարության ամրապնդում գործում անհրաժեշտ է.
1. ազատ, արդար ընտրություններ ապահովող համակարգի ներդնում,
2. ընտրական գործընթացներում պետական, հատկապես ուժային կառույցների չեզոքության ապահովում:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Լրատվամիջոցների ազատության և իրական անկախության ապահովման նպատակով թեթևացնել նրանց հարկային բեռը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

ՀՀ քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության հուսալի և օրինական ձևը դատական իշխանությունն է, որն այսօր Հայաստանում չի գործում:

դ. Դատահրավական համակարգի բարեփոխում

Իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերից անկախ դատական համակարգի ստեղծում և միաժամանակ իրավապահ մարմինների աշխատակիցների սոցիալական պայմանների բարելավում:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Ժողովրդավարական պետության կայացման գլխավոր պայմանը, ժողովրդի ազատ կամքի արտահայտությամբ իշխանությունների ձևավորումն է: Այդ նպատակի իրականացման միջոցը ընտրական համակարգի արմատական բարեփոխումն է, որի համար անհրաժեշտ է.
1. փոխել ԱԺ ձևավորման տրամաբանությունը,
2. կենտրոնական ընտրական հանձնաժողովները ձևավորել պետության կողմից,
3. ձևափոխել ընտրական հանձնաժողովների համակարգը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Պետք է կարևորվի կուսակցությունների դերը պետական և հասարակական կյանքում: Պետությունը պետք է աջակցի կուսակցությունների կայացման գործընթացին, մասնավորապես՝ օրենքով սահմանի նրանց ֆինանսավորման մեխանիզմը և աղբյուրները:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում

Քաղաքացիական հասարակության կառույցների ձևավորման գործում պետք է ամրապնդվեն պառլամենտարիզմն ու բազմակուսակցական համակարգը:

ը. Այլ /Կառավարման համակարգ/

Պետք է էապես կրճատել կառավարման կառույցների թիվը՝ բացառելով կրկնվող գործառույթներով մարմինների գոյությունը, զուգահեռաբար կառավարման մարմիններից ետ վերցնելով գործունեության թույլտվություններ տրամադրելու լիազորությունները:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Բանակը երկրի արտաքին անվտանգության համակարգի բաղադրիչներից մեկն է միայն: Մյուս բաղադրիչներն են տարածաշրջանային և միջազգային անվտանգության համակարգերի մաս կազմելը, տարածաշրջանային և միջազգային տնտեսական ինտեգրացումը, հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Բնապահպանական հիմնախնդիրների կարգավորումը հնարավոր է միայն ոլորտի կարգավորմանն ուղղված ամբողջական և համակարգված քաղաքականության իրականացման դեպքում:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1999թ. ընտրություններ**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 39
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 14
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2007թ. ընտրություններ՝** մասնակկցում է դաշինքով

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1998թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել

5.3. Դաշինքի անդամները

«Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցություն, Պահպանողական Կուսակցություն, «Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնություն

5.4. Դաշինք կազմելու նպատակը և հիմքերը /գաղափարական և այլն/

1. Գաղափարական
2. Ժողովրդավարության վերականգնում

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ I Գումարում՝ 10

9. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ԺՈՒԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Պուշկինի 38
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 53-90-67, 53-91-6, ֆաքս՝ 53-96-69
- **Հիմնադրման տարեթիվը՝** 23.08.2005թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 23.08.2005թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 20.09.2005թ.
- **Կուսակցության անդամների թիվը** հարցաթերթիկի լրացման ժամանակ՝ 4700 անդամ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Առավոտ» օրաթերթ, «Իրավունք» թերթ, 08.11.2007թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 9 անդամ
- Վարչություն՝ 25 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Մանուկ Հովհաննեսի Գասպարյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուսակցության գլխավոր նպատակն է նպաստել Հայաստանում ժողովրդավարության լիակատար հաղթանակի հաստատման խթանմանն ու զարգացմանը, բազմակացութաձև հասարակարգի կառուցմանը, համամարդկային արժեքների, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների իրական երաշխիքների ապահովմանը:

Այդ նպատակը կարող է իրականացվել Հայաստանի քաղաքացիների միասնական ջանքերով՝ հայ ժողովրդի հազարամյա ավանդույթների և համաշխարհային փորձի օգտագործմամբ:

Կուսակցության հիմնական խնդիրներն են՝

- նպաստել և աջակցել հայրենիքի զարգացմանն ու հզորացմանը, ժողովրդի անվտանգության ապահովմանը,
- նպաստել ՀՀ-ում քաղաքացիական և իրավական հասարակության ձևավորմանը, ժողովրդավարության և մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար սկզբունքների արմատավորմանը,
- նպաստել երկրի գիտակրթական, արդյունաբերական, գյուղատնտեսական և մշակութային պոտենցիալի հզորացմանը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ամրապնդմանն ու զարգացմանը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

4. ՀՀ արտաքին քաղաքականության գերխնդիրը Հայաստանի պետականության ամրապնդումն է, նրա միջազգային հեղինակության բարձրացումը հանուն համայն հայության ազգային շահերի պաշտպանության:
5. Արցախյան հարցի լուծումն իր բոլոր ուղղություններով համարվում է կարևորագույնը ՀՀ արտաքին քաղաքականության գործունեության ոլորտում՝ առաջնային բոլոր այլ խնդիրների նկատմամբ:
6. Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններից է սփյուռքահայության հետ կապերի առավել սերտացման հարցը:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Եվրահինտեգրում

Ելնելով ժամանակակից աշխարհում Եվրոպայի և ԱՄՆ-ի ունեցած դիրքից, հիմնվելով արդեն կուտակված փորձի և ԱՄՆ-ի ու եվրոպական պետությունների, առաջին հերթին Ֆրանսիայի կողմից համագործակցության նոր առաջարկների վրա՝ անհրաժեշտ է մշակել և կենսագործել կոնկրետ նախագծեր այդ պետությունների հետ կապերի ամրապնդման ու արդյունավետության բարձրացման համար, որը կբերի եվրոպական երկրների հետ ինտեգրմանը, և Հայաստանը կդառնա միացյալ Եվրոպայի լիիրավ անդամ:

բ. ԱՊՀ

Անհրաժեշտ է ԱՊՀ երկրների հետ տնտեսական և մշակութային փլուզված կապերի վերականգնում, ինտեգրացիոն ամբողջացման գործընթացների աճ, արևմտաեվրոպական տիպի արդյունավետ գործող ամբողջացման կառույցների ստեղծում:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)[5]

ԱՊԿ-ի հետ անհրաժեշտ է շարունակել ակտիվ համագործակցությունը:

դ. ՀԱԴԿ (NATO)[5]

Անհրաժեշտ է ակտիվ համագործակցություն անհատական գործընկերության համագործակցման շրջանակներում:

ե. ԱՄՆ[5]

ԱՄՆ-ի հետ անհրաժեշտ է երկկողմ համագործակցություն, այդ թվում ռազմական ոլորտում և հազարամյակի մարտահրավերների ծրագրի շրջանակներում:

զ. Ռուսաստանի Դաշնություն[5]

Ռուսաստանի հետ պետք է հավասար գործընկերային հարաբերությունների հաստատում և էներգետիկայի ոլորտում ՀՀ մասնաբաժնի վերահսկման վերականգնում:

է. Թուրքիա[5]

Անհրաժեշտ է Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների հաստատում, այդ թվում դիվանագիտական, սահմանի բացում և Գյումրի-Ղարս երկաթգծի վերաբացում:

ը. Ադրբեջան[5]

Անհրաժեշտ է ԼՂՀ հարցի արդարացի լուծում՝ ազգերի ինքնորոշման միջազգային սկզբունքի շրջանակներում:

թ. Իրան

Հիմնվելով Իրանի և Արաբական երկրների հետ ավանդական բարիդրացիական հարաբերությունների և մշակութային ամուր փոխկապակցության վրա՝ անհրաժեշտ է ապահովել որակական առաջընթաց և բոլոր ուղղություններով համագործակցության ուժեղացում: Խորացնելով համագործակցությունը և տնտեսական կապերը՝ անհրաժեշտ է Ռուսաստանից բացի այդ երկրների հետ ունենալ այլընտրանքային վառելիքաէներգետիկ մատակարարման և վերամշակման, նաև երկրի տարածքում համատեղ ձեռնարկությունների հիմնման ռեալ հնարավորություններ: Իրան-Հայաստան գազամուղի առաջին հերթի շահագործումից հետո անհրաժեշտ է ձեռնամուխ լինել գազամուղի երկրորդ հերթի առավել տարողունակ գազատարի շինարարությանը՝ ՀՀ-ն դարձնելով տարանցիկ երկիր, միաժամանակ բանակցելով նավթամուղի կառուցման շուրջ՝ ստեղծելով հնարավորություն երկրում նավթավերամշակման արդյունաբերության զարգացման ուղղությամբ, ապահովելով Հայաստանի տարածաշրջանային շրջափակումից դուրս գալը:

ժ. Վրաստան[5]

Վրաստանի հետ անհրաժեշտ է բազմակողմանի համագործակցություն և բարիդրացիական հարաբերությունների համակողմանի խորացում, այդ թվում ռազմավարական ոլորտում:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն[5]

Անհրաժեշտ է դիվանագիտական խողովակներով ջանքեր գործադրել տարածաշրջանային ծրագրերում ՀՀ-ի ինտեգրման և նոր ծրագրերում՝ Արևելք-Արևմուտք մասնակցության խորացման համար:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ արցախյան հարցը երկար ժամանակ կլինի որոշիչ: Ընդունելով նրա լուծման համար արտաքին ուժերի հետ համագործակցության անհրաժեշտությունը՝ հարկ է առավելություն տալ այն որոշումներին, որոնց վերահսկումը և ապահովումը հնարավոր է ապահովել սեփական միջոցներով: Անհրաժեշտ է բոլոր ձևերով նպաստել ռազմաճակատում ձեռք բերած զինադադարի պահպանմանը, ստեղծված դեֆակտո իրավիճակի ամրագրմանը:

խ. Ցեղասպանության ճանաչում

Հայ դատը պետք է լինի արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասերից մեկը: Կուսակցությունը վճռականորեն պայքարելու է այն արտաքին և ներքին ուժերի դեմ, որոնք Հայ դատի գաղափարն օգտագործում են իրենց հետին նպատակների համար: Հայ դատը պետք է հետապնդվի այնպես, որ նրա լուծումը լինի առավել իրատեսական և չվնասի Հայաստանի պետականության ամրապնդմանը:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Նախևառաջ պետք է վերանայել Սփյուռքի ներուժի նկատմամբ վերաբերմունքը: Քաղաքականությունը ոչ թե նվիրատվությունների և օգնությունների հավաքում է, այլ խնդիրների մշակում, որոնց լուծման շուրջ կարող է միավորվել հայությունը: Այդպիսին պետք է դառնա ցեղասպանության միջազգային ճանաչումը և մեր հայրենակիցների՝ Արևմտյան Հայաստանից գաղթածների իրավունքների պաշտպանումը:

կ. Այլ /Երկքաղաքացիություն/

Կուսակցությունը երկքաղաքացիության ընդունումը դիտարկում է որպես կոնկրետ գործողությունների իրականացում: Քաղաքացիության շնորհումը կուսակցությունը ենթադրում է երկու տարբերակով.

1. Դիմումատուն ձեռք է բերում քաղաքացիություն ընտրելու իրավունքով, եթե ՀՀ բյուջե է փոխանցում իր ստացած եկամուտների 1%-ը.
2. Դիմումատուն ձեռք է բերում քաղաքացիություն առանց ընտրելու իրավունքի:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

1. Օրենքի գերակայություն.
2. Մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանություն.
3. Կաշառակերության, կոռուպցիայի և ստվերային ոլորտի իսպառ վերացում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Անհրաժեշտ է բարձրացնել պետության դերը ռազմավարական նշանակություն ունեցող եկամտաբեր ձեռնարկություններում և կենսապահովման ոլորտներում՝ էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, ջեռուցում, արտաքին և ներքին փոխադրամիջոցներ, կապ, վառելիքաէներգետիկ համակարգ:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Տնտեսական զարգացվածությունը կարող է ապահովվել սեփականության բոլոր ձևերի առկայությամբ և նրանց միջև ազատ շուկայական հարաբերություններով ու մրցունակությամբ՝ բացառությամբ երկրի համար կենսական ու ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների:

Տնտեսական բնագավառում կուսակցությունն անհրաժեշտ է համարում.

- նոր տեխնոլոգիական և ինովացիոն հիմքերի վրա վերականգնել քայքայված տնտեսությունը,
- դադարեցնել սեփականաշնորհման գործընթացը,
- ակտիվացնել արհմիութենական շարժումը:

ա. Դրամավարկային

Կուսակցությունը համարում է, որ տնտեսության արդիականացման ֆինանսավորման աղբյուր կարող են լինել բանկային միջոցները (վարկերը), քանզի բանկային համակարգի և ֆոնդային շուկայի շնորհիվ է իրականանում բնակչության խնայողությունների և ձեռնարկությունների միջոցով տրանսֆորմացիոն ներդրումների կայուն զարգացումն ու աճը: Բայց կուսակցությունը համարում է, որ բանկային համակարգ, որպես այդպիսին, Հայաստանում գոյություն չունի: Այդ մասին է վկայում այն փաստը, որ ՀՀ բանկային համակարգը գործնականում մրցակցություն չունի երկրի տնտեսական կյանքում կամ մասնակցում է շատ աննշան չափով:

բ. Բյուջետային

Պետության բյուջեն գտնվում է մշտական դեֆիցիտի իրավիճակի մեջ, ինչն էլ թույլ չի տալիս լուծել ոչ միայն ներդրումային, այլ նույնիսկ սոցիալական բնույթի խնդիրները:

գ. Հարկային

Անհրաժեշտ է ներդնել ոլորտների հարկավորման տարբերակված համակարգ: Հարկային համակարգի գլխավոր սկզբունքն այն է, որ ոչ մի հարկավորում չպետք է խեղդի արտադրողին և ձեռնարկատերերին: Կուսակցությունն իր խնդիրն է համարում ապահովել հարկային բեռի տրամաբանական նվազեցում և հարկային քաղաքականության պարզեցում:

դ. Մաքսային

Պետք է բացառել մաքսային ծառայությունների կողմից մաքսատուրքի դրույքային ինքնակամ ձևակերպման որոշումների կայացումը:

ե. Ճյուղային

Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող շարժերն ու փոփոխությունները թելադրում են հետևյալ ճյուղերի զարգացման անհրաժեշտությունը՝ ինֆորմացիոն, համակարգչային և բարձր տեխնոլոգիաներ, բիոտեխնոլոգիա, նոր նյութերի արտադրություն և դեղագործություն, ինչպես նաև էլեկտրոնիկա, սարքաշինություն, ճշգրիտ մեքենաշինություն և այլն:

զ. Տարածքային[5]

Անհրաժեշտ է արդյունավետ տարածքային քաղաքականության մշակում:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Վերականգնելով քայքայված տնտեսությունը՝ անհրաժեշտ է լուծել շուկայի հարցը, ընդ որում, կողմնորոշվելով դեպի Եվրամիություն, ռուսական և ԱՊՀ մյուս երկրների շուկաներ՝ նկատի ունենալով նրանց համեմատական մոտիկությունը, ավանդական բնույթը և հայկական արտադրանքի մրցունակությունը միջազգային ասպարեզում:

ը. Վճարային (առևտրային) հաշվեկշիռ[5]

Առևտրային և վճարային հաշվեկշռի բարձր դեֆիցիտի կրճատումը պահանջում է առաջին հերթին մշակել ժամանակակից արտահանման և ներկրման քաղաքականություն:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Պետության մասնակցությունը պարտադիր է երկիրը դիզելային վառելիքով, բենզինով ու հացահատիկով ապահովելու գործում: Այդ պատճառով պետությունը մասնավոր բիզնեսի հետ միասին պետք է ստեղծի այնպիսի կառուցվածքային միավոր, որտեղ պետության բաժինը կկազմի կամ 51% (բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթ), կամ 25.1% (բաժնետոմսերի սահմանափակող փաթեթ):

ա. Ներդրումների խթանում

Ներդրումային քաղաքականությունը պետք է այնպես մշակվի, որ ուղիղ, պորտֆելային և այլ ներդրումների տրամաբանությունն ուղղված լինի տնտեսության որակյալ և ժամանակակից կառուցվածք ձևավորելուն:

Հայաստանը, զուրկ լինելով տրանսպորտային հեռահաղորդակցման ուղիներից, պետք է արտոնյալ պայմաններ ստեղծի յուրաքանչյուր լուրջ արտասահմանյան ներդրողի համար:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Կուսակցությունը նպատակադրվում է իրականում վերականգնել վիժեցված արժեթղթերի շուկան:

գ. Մրցակցային դաշտի բարելավում[5]

Անհրաժեշտ է կլանային տնտեսության վերանայում և անցում ձևական հակամենաշնորհային քաղաքականությունից իրական քաղաքականության:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում[5]

Անհրաժեշտ է իրական տնտեսական խթանների համակարգի ստեղծում:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում[5]

Անհրաժեշտ է կատարել և բավարարել ԱՀԿ-ի բոլոր պահանջները՝ պաշտպանելով ազգային արտադրողի շահերը:

զ. Մարզերի համաչափ զարգացում[5]

Անհրաժեշտ է արդյունավետ տարածքային քաղաքականության մշակում:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Ստվերային տնտեսության կրճատման դժվարագույն խնդրի լուծմանը կարելի է հասնել երեք համակցված ճանապարհով.

1. վարչարարության ուժեղացման շնորհիվ,
2. տնտեսական միջոցներով, որոնց շնորհիվ ստվերում աշխատելը դառնում է ոչ ձեռնտու, և տնտեսվարող սուբյեկտների համար շահավետ է դառնում մտնել հարկային դաշտ,
3. հարկային և գույքային համաներում:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կուսակցությունը պարտավորվում է վարել անհաշտ, անողոք և հետևողական պայքար կոռուպցիայի, կաշառակերության և հովանավորչության դեմ, որի դրական ու շոշափելի արդյունքները կերևան բոլոր բնագավառներում արդեն 2007-2008թ:

թ. Արդյունաբերության զարգացում

Հայաստանը նախկին ԽՍՀՄ-ի այն քիչ երկրներից էր, որտեղ զարգացած էին արդյունաբերության բարձր տեխնոլոգիական ճյուղերը, մասնավորապես՝ հզոր համակարգիչների, էլեկտրական սարքավորումների մշակումն ու արտադրությունը և այլն: Այսինքն ինֆորմացիոն տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիական արտադրությունների զարգացման համար երկրում դեռ մնացել է անհրաժեշտ գիտատեխնիկական և կադրային ներուժ: Ուղղակի պետք է այլ երկրների օրինակով մշակել և ներդնել տնտեսական խթանման քաղաքականություն, որն իր մեջ կներառի հարկային և ներդրումային արտոնությունների համակարգը:

Հայաստանի արդյունաբերության զարգացման գերակայությունների ընտրությունն անհրաժեշտ է ժամանակակից արդյունաբերական քաղաքականության մշակման և այն «լոկոմոտիվային» ճյուղերի որոշման համար, որոնք իրենց հետևից կտանեն ամբողջ տնտեսությունը՝ ապահովելով նրա ճեղքումը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Հայաստանում գյուղատնտեսության զարգացման և գյուղական բնակչության արտահոսքի կանխարգելման նպատակով անհրաժեշտ է մեծացնել պետական աջակցությունը գյուղատնտեսության արտադրողների հանդեպ, պայմաններ ստեղծել հողի արդյունավետ և լիարժեք օգտագործման համար, ուժեղացնել պետության դերը գյուղատնտեսության այն ճյուղերում, որոնք ապահովում են երկրի ռազմավարական պահանջները, հատկապես պարենային անվտանգությունը:

Գյուղացիական տնտեսությանն աջակցելու համար պետությունը պետք է կիրառի հետևյալ միջոցները.

- քանի որ գյուղացիական տնտեսությունների մեծ մասը զուրկ է սերմերի գնման, հողային տարածքների ոռոգման վճարման համար անհրաժեշտ միջոցներից, ապա այս գործընթացները պետք է ձևավորել որպես ապրանքային վարկեր,
- պետությունը պետք է ներդնի գյուղատնտեսության վարկավորման պարզեցված և արտոնյալ համակարգ,
- պետությունը պետք է աջակցի ոչ միայն գյուղացիական տնտեսություններին, այլ նաև գյուղատնտեսության ենթակառուցվածքի այնպիսի տարրերի ստեղծմանը, ինչպիսիք են ագրոքիմիական, գնման, զոոտեխնիկական և այլ ծառայությունները,
- պետք է ստեղծել գյուղացիական տնտեսությունների գործունեության ապահովագրման արդյունավետ համակարգ:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Ինչ վերաբերում է էներգետիկ անվտանգությանն ու անկախությանը, կուսակցությունը համարում է, որ դրանց մակարդակը կարելի է բարձրացնել հիմնականում այնպիսի էլեկտրաէներգետիկայի զարգացման շնորհիվ, որը կախված չէ կամ քիչ է կախված էներգակիրների ներմուծումից: Հայաստանի էլեկտրաէներգիայի զարգացումը պետք է ունենա երկու հիմնական ուղղություն՝ առաջինը՝ հիդրոէներգետիկա, երկրորդը՝ ատոմային էներգետիկա:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում[5]

Անհրաժեշտ է մշակել արտադրական ենթակառուցվածքների զարգացման համալիր ծրագրեր:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում

Հայաստանի անցումը դեպի ինովացիոն տնտեսություն ամենևին էլ չի նշանակում, որ ՀՀ-ն չի կարող կիրառել զարգացման մյուս մոդելների տարրերը: Հայաստանի տնտեսության անցումը դեպի գիտելիքների վրա հիմնված ինովացիոն տնտեսություն, կարող է ապահովել երկարատև, կայուն և որակյալ տնտեսական աճ, առավել ևս հաշվի առնելով այն փաստը, որ երկրում գրեթե ամբողջովին սպառվել են վերականգնողական և իմպորտափոխարինման զարգացման մոդելների ռեսուրսները: Ազգային ինովացիոն տնտեսության ստեղծումը ենթադրում է վենչուրային և ինովացիոն հիմնադրամների համակարգի ձևավորում, ինչը պահանջում է մասնավոր և պետական գործընկերության կիրառումը:

ծ. Կորպորատիվ կառավարման բարելավում

Անհրաժեշտ է ժամանակակից կորպորատիվ կառավարման սկզբունքների և մեթոդների ներդրում հայկական ձեռնարկություններում:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է սոցիալական առաջնահերթ պահանջների բավարարում, սոցիալական հուսալի երաշխիքների համակարգի ստեղծում ազգային եկամուտի արդարացի բաշխման ուղիով, որպեսզի մարդը զգա իրեն իր պետության գործունյա և լիիրավ քաղաքացի:

ա. Աղքատության հաղթահարում

Քաղաքացիների կյանքի իրավունքի փաստացի ապահովման նպատակով անհրաժեշտ է պետական և բոլոր այլ համակարգերի աշխատավարձը, կենսաթոշակները, նպաստները և այլ վճարումները համապատասխանեցնել ֆիզիկական գոյատևման համար անհրաժեշտ նվազագույն մակարդակին:

Կուսակցությունը համարում է, որ աղքատության դեմ պայքարը պետք է տանել ոչ թե հարուստ և հաջողակ գործարարներին ստիպելով բարձր հարկեր վճարել և այնուհետև բաշխել այդ հարկերը աղքատների օգտին, այլ պետք է ստեղծել այնպիսի պայմաններ և հնարավորություններ, որոնց շնորհիվ հենց աղքատները կկարողանան հաղթահարել իրենց աղքատությունը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Եկամտի նվազագույն մակարդակը պետք է ապահովեն ոչ թե ձեռնարկություններն ու կազմակերպությունները, այլ անմիջապես պետությունը: Անհրաժեշտ է ընդունել քաղաքացիների առջև պետության պատասխանատվության մասին օրենք: Յուրաքանչյուրը պետք է իրավունք ունենա պետությանը հայց ներկայացնելու և հասնելու վնասի փոխհատուցման:

գ. Զբաղվածության ապահովում

Սոցիալական քաղաքականության հիմնական բաղադրիչը, որից կախված է բոլոր այլ ուղղությունների իրականացումը, քաղաքացու ազատ աշխատանքի իրավունքն է, որն ապահովում է նրա տնտեսական, հետևաբար նաև քաղաքական ինքնությունը, ընձեռում է հնարավորություն ստեղծագործաբար ինքնիրացվել կյանքում:

դ. Արտագաղթի նվազեցում

Կուսակցությունը գտնում է, որ աշխատանքի շնորհիվ իր կենսագոյությունն ապահովելու անհնարինությունը հարկադրում է ՀՀ քաղաքացիներին զանգվածային արտագաղթի:

ե. Առողջապահական համակարգի բարելավում[5]

Անհրաժեշտ է պետպատվերի ընդլայնում և ծառայությունների շրջանակի ավելացում:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում[5]

Անհրաժեշտ է պետական թոշակային բաշխիչ համակարգից անցնել մասնավոր կուտակման հիմնադրամներին:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կրթության բնագավառում գլխավոր սկզբունքը պետք է լինի միջնակարգ և բարձրագույն կրթության մատչելիությունը բոլոր նրանց համար, ովքեր ցանկություն և ընդունակություն ունեն սովորելու, ընդ որում,

միջնակարգ կրթությունը պետք է պարտադիր լինի ՀՀ բոլոր քաղաքացիների համար: Բարձրագույն կրթության մեջ պետք է զուգակցել ուսումը (պետական պատվեր) և վճարովի ուսուցումը պետական և մասնավոր բուհերում: Պետությունն ամեն ինչ պետք է անի, որպեսզի չունևոր ընտանիքների ընդունակ երեխաները կարողանան իրենց ուսումը շարունակել պետական և մասնավոր բուհերում:

ը. Գիտության զարգացում

Հայաստանի ավանդական բարձր գիտական և կրթական մակարդակի պահպանումն ու զարգացումը պետական իշխանության կարևորագույն խնդիրներից է: Պետությունը պետք է ունենա գիտության զարգացման հստակ հայեցակետ, որտեղ նշված կլինեն գիտության զարգացման առաջնահերթությունները: Դրանց մեջ կարևոր տեղ պետք է հատկացվի տեսական այնպիսի ճյուղերի, որոնք խոր արմատներ ունեն Հայաստանում՝ աստղագիտություն, մաթեմատիկա, ֆիզիկայի որոշ ճյուղեր, քիմիա, կենսաբանություն և այլն: Հիմնարար գիտությունների զարգացումն անհնար է առանց պետական հովանավորչության:

թ. Մշակույթ

Պետությունը պետք է ունենա հստակ մշակութային քաղաքականություն: Դրա նպատակը պետք է լինի հայկական արվեստի ազգային առանձնահատկությունների պահպանումն ու զարգացումը: Մշակութային քաղաքականության կարևոր կետերից մեկը պետք է լինի ամենալայն կապերն աշխարհի երկրների հետ՝ առանց զոհաբերելու մշակույթի ազգային դեմքը:

ժ. Սպորտ[5]

Սպորտը համարվում է բնակչության առողջության կարևորագույն գործոններից մեկը: Այս բնագավառում անհրաժեշտ է սպորտային և առողջացման համալիրների մատչելիության ապահովում:

ի. Այլ /Եկեղեցի/

Անհրաժեշտ է հաղթահարել արհեստական բաժանումը գիտության (նախևառաջ հումանիտար) և եկեղեցու միջև՝ վերականգնելով ազգային եկեղեցական աստվածաբանությունը՝ որպես ինքնուրույն պահպանման գործոն: Հարգելով ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, միաժամանակ գիտակցելով Հայ առաքելական եկեղեցու դարավոր և բացառիկ դերը, նվիրաբերած ավանդը մայրենի լեզվի, մշակութային ու հոգևոր արժեքների և հայապահպանման սրբազան գործում՝ կուսակցությունը, արժանին մատուցելով եկեղեցու առաքելությանը, պատվիրակված լիազորություններով նրան է փոխանցում քաղաքացիական ակտերի գրանցման ծառայությունը՝ դրանով իսկ նպաստելով ժողովրդի կապին եկեղեցու հետ:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Այսօր Հայաստանում գոյություն չունի քաղաքացիական հասարակություն երկու վճռորոշ պատճառներով՝ նախ, պետական իշխանությունն արհամարում է օրենքը, երկրորդ՝ այն օտարված է ժողովրդից: Կուսակցությունը համոզված է, որ քաղաքացիական հասարակության կառուցման գործում առաջին հերթին պետք է լուծվի երկրի բարոյական մթնոլորտի, արդարության, մարդկայնության և հոգևոր արժեքների գերակայության հարցը: Առանց այդպիսի կտրուկ տեղաշարժի ոչ մի քաղաքական ու տնտեսական հարց չի լուծվի:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Կուսակցությունը պատրաստ է աջակցել հանրապետության քաղաքական տարբեր ուժերի մշակած այլընտրանքային նախագծերին, ուր իրոք կապահովվի իշխանության տարբեր ճյուղերի հավասարակշռությունը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցությունը նպատակադրվում է պաշտպանել լրատվամիջոցների լիակատար ազատությունը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Ազատությունը կուսակցությունը դիտում է առաջին հերթին որպես անձի ազատություն, երբ յուրաքանչյուր քաղաքացի հասարակական կյանքի ցանկացած ոլորտում ունի ընտրության և ինքնորոշման իրավունք: Անձի ազատության իրականացումը կապված է ժողվրդավարության և սոցիալական արդարության հետ:

դ. Դատահիրավական համակարգի բարեփոխում[5]

Անհրաժեշտ է դատահիրավական համակարգի լիիրավ անկախություն, իշխանական թևերի հավասարակշռում և տարանջատում:

ե. Ընտրական համակարգի բարելավում[5]

Պետք է ժողովրդավարական չափանիշներով ընտրական համակարգի ստեղծում և անցկացում ու քաղաքական կամքի դրսևորում:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Պետության կայացման գործում կուսակցությունը կարևորում է ազատ ու արդար ընտրությունների անցկացումը և հետամուտ է լինելու դրա իրականացմանը:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում[5]

Անհրաժեշտ է ազգաբնակչության մեջ սերմանել հստակ գաղափարախոսություն, որ քաղաքական կուսակցությունները սոցիալական հարցեր լուծող կառույցներ չեն և կուսակցական հիմնադրամները բարեգործության համար չեն կարող ծառայել:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Ազգային անվտանգության հայեցակարգը մշակելիս անհրաժեշտ է առանձնահատուկ տեղ հատկացնել զինված ուժերին, դրանց կառուցվածքին, մարտունակությանը, սպառազինության որակին, զինված ուժերի ռազմա-հայրենասիրական և բարոյահոգեբանական դաստիարակության հարցերին: Ազգային բանակը պետք է կազմավորված լինի պրոֆեսիոնալ սկզբունքով և գրավի իր արժանի տեղը հասարակության մեջ: Միաժամանակ դպրոցների բարձր դասարաններում և առավել խորացված ուսումնական այլ հաստատություններում որպես պարտադիր ուսումնական ծրագիր անհրաժեշտ է դասավանդել «Ռազմագիտություն» առարկան՝ առանց սեռական խտրականության:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները[5]

Անհրաժեշտ է աջակցություն երիտասարդ և նորաստեղծ ընտանիքներին, յուրաքանչյուր ընտանիքի 3-րդ և ավելի երեխաների նպաստների ապահովում՝ մինչև նրանց չափահաս դառնալը:

10. «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՅԴ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Հանրապետության 30
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 52-15-02
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** gmarf@arminco.com
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.arf.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 1890թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 1892թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 02. 07.1991թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 28.11.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 7000 անդամ
- **Կուսակցության պաշտոնական մամուլը՝** «Երկիր» շաբաթաթերթ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** Ծրագիր՝ փետրվար, 1998թ. բրոշյուր, ՀՅԴ կանոնագիր Հայաստան կազմակերպություն ապրիլ, 2006թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

- Գերագույն մարմին՝ 21անդամ
- Մարզային կոմիտե՝ 5 կամ 7 անդամ
- Կուսակցության ղեկավար՝ Արմեն Եզնակի Ռուստամյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը նպատակադրում է ազատ, անկախ և միացյալ Հայաստանի կերտում: Հայ Հեղափոխական Դաշնակցությունն իր էությամբ, աշխարհայացքով և ավանդույթներով ազգային, սոցիալիստական, ժողովրդավարական և հեղափոխական կուսակցություն է: Հայ Յեղափոխական Դաշնակցությունն իր բոլոր ուժերով պայքարում է հանուն հայ ազգի տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային բովանդակ շահերի պաշտպանության: Հայ Յեղափոխական Դաշնակցությունը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը հիմնավորում է իր գաղափարախոսությամբ: Կուսակցությունն առաջադրում է անհատի ազատության, ազգային ինքնորոշման, անկախ պետականության, հասարակական համերաշխության և բարօրության ճանապարհով հայ մարդու և հայ ազգի անկաշկանդ բազմակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովումը:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը ձգտում է Հայ դատի լուծմանը և ամբողջական հայությամբ ամբողջական հայրենիքի կերտմանը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Թուրքիայի կողմից հայության դեմ գործադրված և մինչև այժմ անպատիժ մնացած ցեղասպանության ոճրի միջազգային դատապարտում, բռնագրավված հողերի վերադարձ և վնասի արդար հատուցում հայ ազգին:
2. Արցախյան պայքարի հաղթական ելքի ապահովում՝ իբրև Հայ դատի լուծման առաջնահերթ հանգրվան:
3. Սփյուռքի ազգային ինքնության ամրապնդում և քաղաքական դերակատարության կազմակերպում՝ դրա հնարավորություններն ուղղելու համար դեպի Հայաստանի պետականության հզորացում և Հայ դատի հետապնդում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը գտնում է, որ արտաքին քաղաքական հարաբերություններում անհրաժեշտ է առաջնորդվել բացառապես ազգային շահերով՝ առանց տուրք տալու այս կամ այն կուսակցության, սոցիալական դասի կամ պետական-քաղաքական գործիչի մղումներին:[5]

ա. Եվրահնտեգրում

Նպատակադրումը՝ Հայաստանի անդամակցությունը Եվրամիությանը:

բ. ԱՊՀ

ԱՊՀ շրջանակներում համագործակցությունը պետք է կառուցվի ընդհանուր շահերի շուրջ:

դ. ՀԱՊԿ (NATO)

Անհրաժեշտ է համագործակցություն ռեգիոնալ անվտանգության ապահովման համար:

ե. ԱՄՆ

Անհրաժեշտ է համագործակցություն քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Անհրաժեշտ է համագործակցություն քաղաքական, տնտեսական և այլ ոլորտներում:

է. Թուրքիա[5]

Թուրքիայի հետ հարաբերությունները մնում են չկարգավորված, քանի որ այս պետությունը շարունակում է Հայաստանի նկատմամբ իր թշնամական քաղաքականությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ու հայ-թուրքական սահմանը բացելու դիմաց նախապայմաններ է ներկայացնում: Երկկողմ հարաբերություններ կառուցելու նման ոճն անընդունելի է Հայաստանի համար:

ը. Ադրբեջան[5]

Ադրբեջանի հետ արտաքին փոխհարաբերությունների առանցքը կազմում է ԼՂՀ-ի հիմնախնդիրը: ՀՅԴ-ն կողմնակից է եռակողմ (ՀՀ, ԼՂՀ, Ադրբեջան) բանակցության գործելաոճին, որտեղ ԼՂՀ-ն հակամարտության գլխավոր կողմն է, իսկ ՀՀ-ն՝ ԼՂՀ-ի անկախության և անվտանգության երաշխավորը:

թ. Իրան[5]

Իրանը տարածաշրջանում հանդիսանում է մեր ռազմավարական գործընկերը: Մեր խնդիրը նրա հետ բարիդրացիական սերտ կապերի հաստատումն ու փոխհամագործակցության ընդլայնումն է:

ժ. Վրաստան[5]

Վրաստանի հետ փոխհարաբերությունները սերտ կապված են Ջավախքի և վիրահայության հիմնախնդիրների հետ: ՀՅԴ-ն կողմ է Վրաստանի տարածքային ամբողջականությանը և նրանում ուժեղ, սեփական ճակատագրի տնօրինման անմիջական դերակատարում ունեցող Ջավախքի գոյությանը: Սա երկուստեք կնպաստի հայ-վրացական հարաբերությունների մերձեցմանը:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Տարածաշրջանային և համաշխարհային տնտեսության մեջ համակարկումը (ինտեգրացումը) պետք է իրականացվի այնպես, որ չվնասվեն ազգային շահերը, հայ ժողովրդի մշակութային նկարագիրն ու ինքնատիպությունը:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Արցախյան պահանջատիրությունը 1988-ից հետո ստացավ աննախընթաց թափ ոչ միայն Արցախում, այլև ամբողջ հայության շրջանում: Այն, փաստորեն, վերածվեց ազգային ազատագրական պայքարի, որին հայ Յեղափոխական Դաշնակցությունը մասնակցեց և շարունակելու է մասնակցել իր բոլոր միջոցներով՝ այդ պայքարին հաղորդելով գաղափարական հստակեցում: Ազգերի ինքնորոշման իրավունքը, որը Միացյալ Ազգերի Կանոնագրի մաս է կազմում, տրամաբանորեն և իրավաբանորեն պետք է կիրառվի նաև հայ ազգի նկատմամբ:

խ. Ցեղասպանության ճանաչում

Հայ ժողովրդի դեմ Թուրքիայի իրագործած ցեղասպանությունը դեռևս հատուցված չէ: Ցեղասպանությունն այսօր էլ շարունակվում է, որովհետև Սփյուռքի հայությունը՝ զրկված լինելով իր սեփական հայրենիքում ապրելու հնարավորությունից, գտնվում է ձուլման սպառնալիքի տակ: Հայ Դատի լուծումը ոչ միայն արդարության, ցեղասպանության դատապարտման ու պատժման գործնական արտահայտություն է, այլև միջազգային իրավունքի հարց՝ ազգերի ինքնորոշման, անկապտելի սկզբունքի հիման վրա:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Կուսակցության կարևոր նպատակներից է Սփյուռքի տարեգիր հայության համախմբումը իր հայրենի հողերի վրա: ՀՅԴ-ն հետամուտ է սփյուռքի ազգային ինքնության ամրապնդմանը և քաղաքական դերակատարության կազմակերպմանը՝ նրա հնարավորություններն ուղղելու համար դեպի Հայաստանի պետականության հզորացում և Հայ դատի հետապնդում:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Հայաստանի պետականության հզորացում, ժողովրդավարության և իրավական պետության նվիրագործում, ժողովրդի բարօրության ապահովում և սոցիալական արդարության հաստատում:
2. Յուրաքանչյուր հայ անհատի՝ Հայաստանի քաղաքացի դառնալու իրավունքի ապահովում:
3. Ելնելով իր գաղափարաբանությունից և ընդհանրապես Հայաստանի, Արցախի ու հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական առաջադիմությունն ապահովելու նպատակից, ինչպես նաև նկատի առնելով համաշխարհային տնտեսական զարգացումների ուղղությունները ՀՅ Դաշնակցությունը առաջադրում է վարել սոցիալական լիարժեք արդարության ձգտող և միաժամանակ, Հայաստանի տնտեսական հզորացումն ապահովող սոցիալ-տնտեսական քաղաքականություն:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Պետք է քաջալերել պետության հովանավորությունը և հսկողությունը՝ ի խնդիր ռազմավարական նշանակություն ունեցող արտադրական ճյուղերի զարգացման, բնության և կենսոլորտի պահպանման, աշխատանքի ապահովման, ինչպես նաև ժամանակակից չափանիշներով բնակչության անհրաժեշտ կարիքների բավարարման:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ձևավորել արդյունավետ, մրցունակ, սոցիալական արդարությամբ և պետական կարգավորումներով հավասարակշռված տնտեսական համակարգ, որը պետք է հիմնված լինի երկրի և ժողովրդի նյութական, մասնագիտական, մշակութային և մտավոր ներուժի առանձնահատկությունների վրա:

ա. Դրամավարկային

Դրամավարկային քաղաքականությունը պետք է դառնա տնտեսական քաղաքականության առանցքային և որոշիչ լծակներից մեկը:

բ. Բյուջետային[5]

Տարեկան բյուջեների մշակումը պետք է իրականացնել սոցիալ-տնտեսական զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի հիման վրա՝ ապահովելով բյուջետային միջոցների ծախսման խստիվ կանոնակարգումը և այդ բնագավառում ֆինանսական կարգապահության բարձրացումը:

գ. Հարկային[5]

Անհրաժեշտ է էապես պարզեցնել հարկային համակարգը, խստացնել հարկային վարչարարությունը, ինչպես նաև հարկման ծանրությունն անուղղակի հարկերից աստիճանաբար տեղափոխել ուղղակի հարկերի վրա:

դ. Մաքսային[5]

Պետք է հնարավորինս պարզեցնել արտահանման մաքսային ընթացակարգերը և վերացնել բյուրոկրատական խոչընդոտները:

զ. Տարածքային[5]

Տարածքային քաղաքականության ոլորտում պետք է ապահովել պետության արդյունավետ վարչարարությունը և մարզերի ներդաշնակ զարգացումը, ընդլայնել մարզի խորհրդի լիազորությունների շրջանակը, հստակեցնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Պետք է մասնակցել միջազգային տնտեսության այն գործընթացներին, որոնք առնչվում են Հայաստանի տնտեսական զարգացման խնդիրներին:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Տնտեսության արդյունավետ ճյուղային կառուցվածքը երկարաժամկետ և հաստատուն տնտեսական աճի նախադրյալներից է: Այս առումով կուսակցությունը կարևորում է արդյունաբերության առաջանցիկ զարգացումը և արդյունաբերական երկրի կարգավիճակի ձեռքբերումը:[5]

ա. Ներդրումների խթանում

Հայաստանի տնտեսության բարգավաճումը և ազգային ինքնուրույն զարգացումն ապահովելու համար կարևոր երաշխիք է աշխարհասփյուռ հայ ժողովրդի ներուժի լիարժեք օգտագործումը:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում[5]

Կուսակցությունը հանդես է գալիս կայուն, կարգավորված և մատչելի ֆինանսական շուկայի կայացման դիրքերից, որտեղ ներդրողների իրավունքներն ու օրինական շահերը կլինեն պաշտպանված, իսկ ֆինանսական ռեսուրսներ փնտրող անձինք կունենան այլընտրանքային մեխանիզմներ և նախընտրելի պայմաններով դրանք ձեռք բերելու հնարավորություն:

գ. Մրցակցային դաշտի բարելավում[5]

Տնտեսվարող սուբյեկտների համար պետք է ապահովվեն մրցակցային հավասար պայմաններ: Պետք է կարգավորվի մենաշնորհների (նաև բնական) գործունեությունը, կատարելագործվի հակամենաշնորհային օրենսդրությունը:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Անհրաժեշտ է փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրագրերի մշակում և իրականացում:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Պետք է բարեկարգել հին ճանապարհները և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տեղամասերում կառուցել նորերը, նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը, վարել արտոնյալ հարկային և վարկային քաղաքականություն: Աղետի գոտում պետք է բարելավել բնակարանային և ենթակառուցվածքային պայմանները:

է. Ստվերային տնտեսության կրճատում[5]

Դաշնակցությունը կարևորագույն խնդիր է դիտում պայքարը ստվերային տնտեսության դեմ, որի արդյունքում.

- հարկային մուտքերի ծավալն առաջիկա 5 տարվա ընթացքում կհասնի ՀՆԱ-ի 25 տոկոսին,
- հարկային բեռը հավասարաչափ կբաշխվի հարկատուների միջև:

ը. Կոռուպցիայի հաղթահարում[5]

Կոռուպցիայի հաղթահարումը կուսակցության առաջնային նպատակներից մեկն է, ինչին ՀՅԴ-ն հետամուտ է համալիր ծրագրերի մշակմամբ և իրականցմամբ:

թ. Արդյունաբերության զարգացում[5]

Արդյունաբերությունը կազմակերպվում է աշխատավոր ընդհանրության բաժնեկեցության և արտադրության կառավարման մեջ ազատ ու լիարժեք մասնակցության սկզբունքով, նաև՝ ինքնակառավարմամբ, տնտեսվարման ապակենտրոնացմամբ և արհմիությունների ազատ գործունեությամբ:

ժ. Գյուղատնտեսության զարգացում[5]

Գյուղատնտեսությունը կազմակերպվում է աշխատավոր ընդհանրության բաժնեկեցության և արտադրության կառավարման մեջ ազատ ու լիարժեք մասնակցության սկզբունքով, նաև՝ ինքնակառավարմամբ, տնտեսվարման ապակենտրոնացմամբ և արհմիությունների ազատ գործունեությամբ:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում[5]

Պետք է՝

- ձեռնարկել և իրականացնել միջոցառումներ՝ ուղղված երկրի էներգետիկական անվտանգության մակարդակի բարձրացմանը,
- ապահովել ՀԱԷԿ-ի պահպանումը և անվտանգությունը, իսկ շահագործման դադարեցումը պայմանավորել նոր՝ անվտանգության ժամանակակակից չափանիշներին համապատասխանող համարժեք հզորության ԱԷԿ-ի կառուցմամբ:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Կուսակցությունը կարևորում է ճանապարհային տնտեսությունում նոր, անվտանգ և ապահով ճանապարհների կառուցումը, գործողների վերակառուցումը, դրանց թողունակության և անվտանգության մակարդակի բարձրացումը և ճանապարհային երթևեկության կանոնակարգումը: Անհրաժեշտ է ապահովել այլ երկրներից էներգառեսուրսների մատակարարման անընդհատությունն ու տարատեսականացումը:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում[5]

Անհրաժեշտ է մշակել և իրագործել արտահանման կողմնորոշում ունեցող արդյունաբերական քաղաքականություն, որը ենթադրում է բարձրացնել պետության պատասխանատվությունն արդյունաբերության նոր, տեխնոլոգիական առումով առաջատար սեկտորների վերականգնման կամ ստեղծման գործընթացներում:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Առաջադրված տնտեսական համակարգը պետք է հատկանշվի արդարությամբ և կասեցնի սոցիալական բևեռացումը:

ա. Աղքատության հաղթահարում

Պետության սոցիալական քաղաքականության նպատակադրումներից մեկը պետք է հանդիսանա աղքատության հաղթահարումը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում[4]

Սոցիալական արդարության տնտեսական անհրաժեշտ հատկանիշներն են՝ անհատի աշխատանքի իրավունքի երաշխավորումը և եկամուտների արդար բաշխումը՝ միշտ նկատի ունենալով հավաքականության տնտեսական բնականոն զարգացումը:

գ. Զբաղվածության ապահովում

Անհրաժեշտ է մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրում, երկարաժամկետ գործազուրկներին աշխատանքով ապահովելու և վերապատրաստելու նպատակով գործատուներին որոշակի արտոնությունների տրամադրում: Աշխատաշուկայի լարված իրավիճակը կարելի է էապես մեղմել, եթե զբաղվածության ոլորտում ներկայիս պասիվ քաղաքականությունից անցում կատարվի ակտիվ քաղաքականությանը:

դ. Արտագաղթի նվազեցում[5]

Անհրաժեշտ է վարել հավասարակշռված սոցիալ-տնտեսական այնպիսի քաղաքականություն, որն ուղղված է լինելու արտագաղթի կասեցմանը և ներգաղթի խրախուսմանը:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Կուսակցությունը կարևորում է առողջապահության ոլորտի բարեփոխումների շարունակումը, բժշկական ապահովագրության պարտադիր և կամավոր համակարգերի ներդրումը՝ բնակչության առանձին խմբերի համար կիրառելով տարբերակված մոտեցումներ:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում[5]

Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնվում է սոցիալական աջակցության, սոցիալական և կենսաթոշակային ապահովագրության, ինչպես նաև այլ համալիր միջոցառումների վրա: Անհրաժեշտ է՝

- բարձրացնել երեխայի ծննդյան միանվագ ներակայումս գործող նպաստի չափը (35000 դրամ) և ներդնել երեխաների ծննդյան հաջորդականությամբ պայմանավորված խրախուսման ամբողջական համակարգ,
- բարեփոխել ընտանեկան նպաստների համակարգը՝ օժանդակելով կայուն ընտանիքների ձևավորմանը, այն վերածելով կենսապահովման նվազագույն զամբյուղի ապահովման կարևոր գործիքի:

է. Կրթական համակարգի բարեփոխում[5]

Գիտության ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակները պետք է լինեն հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը, գիտելիքի վրա հիմնված տնտեսության ստեղծումը:

ը. Գիտության զարգացում

Գիտության ոլորտի ֆինանսավորման բարեփոխման, գիտական հետազոտությունների կազմակերպման կատարելագործման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է մշակել և իրականացնել համապատասխան ծրագրեր:

թ. Մշակույթ

Հայկական մշակութային ժառանգության պահպանումը, նոր արժեքների ստեղծումը, մշակութային կյանքի խթանումը և հայ հասարակության համակարգային բարեփոխման հաջողությունն ապահովող ազգային մշակույթի հենքի ձևավորումը պետք է լինեն պետության ուշադրության կենտրոնում:

ժ. Սպորտ[5]

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական քաղաքականության նպատակները պետք է լինեն բնակչության առողջական մակարդակի բարձրացումը, առողջ երիտասարդ սերնդի դաստիարակությունը և պրոֆեսիոնալ սպորտի զարգացումը:

ի. Այլ /Եկեղեցի, ընտանիք/

Պետք է կարևորել Հայ Եկեղեցու և հայ ընտանիքի դերակատարությունն ազգային դիմագծի պահպանման գործում:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Կուսակցության ընկերվարական իդեալն այնպիսի հասարակության կերտումն է, ուր մարդն ազատագրված կլինի ռասայական, կրոնական-դավանական, ազգային, քաղաքական, սոցիալական և տնտեսական ամեն կարգի խտրականությունից, կաշկանդումից, բռնությունից և շահագործումից:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Հայ Յեղափոխական Դաշնակցության համոզմամբ ընկերվարության ճանապարհով է, որ մարդկության քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումն օժտվում է արդար և համերաշխ հարաբերություններով:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

ՀՅԴ քաղաքական առաջադրանքներից է մտքի, խոսքի, ստեղծագործության, մամուլի, հրատարակության և արտահայտության այլ միջոցների, խղճի, քաղաքական և այլ կազմակերպությունների գործունեության, հավաքների և տեղափոխության ազատությունը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցությունը նպատակադրվում է ապահովել բոլոր քաղաքացիների հավասարությունը օրենքի առաջ: Պետությունը պետք է ապահովի անձի, բնակարանի, սեփականության և հաղորդակցության միջոցների անձեռնմխելիությունը:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում[5]

Անհրաժեշտ է անկախ և իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա գործող դատական համակարգի կայացում:

ե. Ընտրական համակարգի բարելավում[5]

Անհրաժեշտ է համամասնական ընտրակարգի հիման վրա միջազգային չափանիշներով ձևավորված ընտրական համակարգի ամրապնդում:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում[5]

Պետք է բազմակարծության, գաղափարա-քաղաքական մրցակցության և քաղաքացիական հասարակության ձևավորման գործում կուսակցությունների դերի բարձրացում:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում[5]

Անհրաժեշտ է քաղաքական գործիչների և կուսակցությունների կայացվածության գնահատման միջազգային չափորոշիչների կիրառում:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Ազգային անվտանգության հայեցակարգի ամբողջացում և համապատասխան համակարգի ձևավորում:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները[5]

Ժողովրդագրական բացասական միտումներն առաջացրել են բնական աճը բնական նվազման վերածվելու միանգամայն առարկայական վտանգ: Ժողովրդագրական իրադրության բարելավման ինքնակարգավորման հնարավորություններն իրատեսական չեն: Դրան հասնելու միակ ուղին ակտիվ, նպատակային ու հետևողական պետական քաղաքականությունն է:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Բնապահապանական քաղաքականությունն անհրաժեշտ է կառուցել՝ մշտապես ելնելով մարդու և շրջակա միջավայրի ներդաշնակ փոխհարաբերության սկզբունքից:

4.12. Այլ /Ազգային փոքրամասնություններ/

Անհրաժեշտ է ստեղծել պայմաններ ազգային փոքրամասնությունների ավանդույթների և նրանց էթնիկական, լեզվական, մշակութային և կրոնական ինքնության պահպանման ու զարգացման համար:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1995թ. ընտրություններ՝**
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 1
- **1999թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 70
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 70
- **2003թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 101

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1991թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1996թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1998թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2003թ. ընտրություններ՝** մասնակցել է

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ I Գումարում՝ 14
- ԱԺ II Գումարում՝ 1
- ԱԺ III Գումարում՝ 11

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԱԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Մ. Մաշտոցի 3
- **Իրավաբանական հասցեն՝** ք Երևան,Գ. Նժդեհի 12, 23
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 53-35-76, 53-15-05
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** progress2001@mail.ru
- **Հիմնադրման տարեթիվը՝** դեկտեմբեր, 1999թ
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** օգոստոս, 2000թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 08.01.2001թ.
- **Պետական. վերագրանցման ամսաթիվը՝** 12.12.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 7500 անդամ

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար՝ 491 պատվիրակ
- Վարչություն՝ 19 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Տիգրան Խաչատուրի Ուրիխանյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուսակցության կանոնադրական նպատակների և ծրագրային դրույթների հիմքում ցենտրիստական գաղափարախոսությունն է, որը խարսխված է ծայրահեղականության և ռեֆորմիզմի հակասությունների վրա: Կուսակցության նպատակներն ու խնդիրներն են.

- նպաստել Հայաստանի հանրապետության, որպես սոցիալական պետության զարգացմանը և ազգաբնակչության բարեկեցիկ կյանքի ապահովմանը,
- հետևելով նոր առաջադիմական գաղափարներին՝ միավորել հասարակության ջանքերը՝ օժանդակելու բարենպաստ սոցիալական ծրագրերի իրականացմանը, համընդհանուր ճգնաժամի հաղթահարմանը, ինչպես նաև ժողովրդավարական և իրավական պետության կայացմանը,
- հայության մշակութային կյանքի ակտիվացման նպատակով կազմակերպել և անցկացնել միջոցառումներ, մրցույթներ և փառատոներ,
- պայմաններ ստեղծել՝ համընդհանուր ստեղծարար աշխատանքով զբաղվելու և հայ ժողովրդի բարի ավանդույթների վերականգնման, ինչպես նաև կրթությունը, գիտությունը և անվճար բուժսպասարկումը ժողովրդավարական լայն զանգվածներին հասանելի դարձնելու համար,
- նպաստել հասարակության սոցիալական պաշտպանվածությանը և հայ ժողովրդի ազգային առաջադեմ սովորույթների քաղաքակիրթ զարգացմանը,
- ջանք չխնայել Հայաստանը տնտեսապես և ռազմականապես հզորացնելու, երկրի միջազգային հեղինակությունը բարձրացնելու և նրա անվտանգությունն ապահովելու համար:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

1. Փոխլրացման քաղաքականություն:
2. Պաշտոնական քաղաքականության զանգվածային թելադրանք և հիմնավորում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝[5]

ա. Եվրահինտեգրում

Կուսակցությունը դրական է համարում Եվրահինտեգրման գործընթացները:

բ. ԱՊՀ

Անհրաժեշտ է ԱՊՀ-ի հետ շարունակել համագործակցությունը:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Հայաստանը պետք է մնա ՀԱՊԿ անդամ:

դ. ՀԱՊԿ (NATO)

Հայաստանը պետք է համագործակցի NATO-ի և նրա ենթակա կառույցների հետ:

ե. ԱՄՆ

ԱՄՆ-ի հետ Հայաստանը պետք է հաստատի բարիդրացիական հարաբերություններ, որը և կհանգեցնի փոխշահավետ համագործակցության:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Հայաստանը տարածաշրջանում Ռուսաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող միակ երկիրն է: Ռուսաստանի հետ նույնպես պետք է վարել փոխշահավետ քաղաքականություն:

է. Թուրքիա

Թուրքիայի հետ պետք է դիվանագիտական հարաբերություններ հաստատել:

ը. Ադրբեջան

Ադրբեջանի հետ պետք է շարունակել բանակցային գործընթացը:

թ. Իրան

Իրանի հետ պետք է խորացնել փոխշահավետ համագործակցությունը:

ժ. Վրաստան

Անհրաժեշտ է ամրապնդել փոխշահավետ համագործակցությունը Վրաստանի հետ:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

ՀԱԿ-ը կարծում է, որ Հայաստանը պետք է ակտիվ մասնակցի տարածաշրջանային ծրագրերին:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Հիմնախնդրի լուծման ճանապարհը երկրի զարգացումն է, հմուտ դիվանագիտությունը և Սփյուռքի ակտիվացումը:

խ. Ցեղասպանության ճանաչում

Անհրաժեշտ է ուժեղացնել դիվանագիտական գործընթացների և հանրային կամքի ազդեցությունը:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

ՀԱԿ-ը կարևոր է համարում Հայաստան-Սփյուռք կապերի խորացումը և համագործակցության արդյունավետության բարձրացումը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

1. Հանրային կարևորության խնդիրների վերաբերյալ հասարակության համախմբում:
2. Անկախ և հզոր ժողովրդավարական պետության լիարժեք կառուցում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Պետությունը պետք է իրականացնի այլընտրանքային վերահսկիչ գործառույթներ:[5]
Կուսակցությունը պետության դերը տեսնում է բոլոր ձևերի գործունեությունը կարգավորող և խթանող իրական դաշտի մշակման և մասնավոր ոլորտում հակամենաշնորհային տնտեսական քաղաքականության ապահովման մեջ:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունը ձգտում է տնտեսական հարաբերությունները կառուցել կարգավորվող շուկայական հարաբերությունների հիմքի վրա՝ աստիճանաբար անցում կատարելով լիարժեք շուկայական հարաբերությունների՝ սեփականության բոլոր ձևերի համար ստեղծելով ազատ և ինքնուրույն գործելու հավասար պայմաններ:
Պետք է գործեն միջին և մանր գործարարության, ինչպես նաև սոցիալական հավասարակշռության սկզբունքները:[5]

ա. Դրամավարկային[5]

Պետական կարգավորման միջոցով՝ վարկերի մատչելիության ապահովում:

բ. Բյուջետային[5]

Բյուջետային քաղաքականությունը պետք է ապահովի տնտեսական աճ, ինչպես նաև ստվերային դաշտի վերացում և հակակոռուպցիոն պայքար:

գ. Հարկային[5]

Հարկային քաղաքականությունը պետք է նպաստի ստվերային դաշտի վերացմանը և հակակոռուպցիոն պայքարին:

դ. Մաքսային[5]

Մաքսային քաղաքականությունը պետք է նպաստի ստվերային դաշտի վերացմանը, հակակոռուպցիոն պայքարին, ինչպես նաև տուրքերի իջեցմանը և այլն:

ե. Ճյուղային[5]

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ճյուղային զարգացումը:

զ. Տարածքային[5]

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում տարածքային զարգացումը:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ[5]

Արտաքին տնտեսական հարաբերությունները պետք է լինեն ակտիվ:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Կուսակցությունն իր տնտեսական քաղաքականության նպատակն է համարում այնպիսի հզոր տնտեսական համակարգի և տնտեսական կառուցվածքների փոխկապակցված ամբողջության ստեղծումը, որոնցում իշխողը Հայաստանի և հայ ժողովրդի շահն է:

ա. Ներդրումների խթանում[5]

Կուսակցությունը կարևոր է համարում ներդրումների խթանումը:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում[5]

Ֆինանսական շուկաների զարգացումն անհրաժեշտ է:

գ. Մրցակցային դաշտի բարելավում[5]

Անհրաժեշտ է բարելավել մրցակցային դաշտը:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում[5]

Փոքր և միջին բիզնեսի զարգացումը պարտադիր է:

զ. Մարզերի համաչափ զարգացում[5]

Մարզերի համաչափ զարգացումը պարտադիր է:

է. Ստվերային տնտեսության կրճատում[5]

Ստվերային տնտեսության կրճատումն օրվա հրամայականն է:

ը. Կոռուպցիայի հաղթահարում[5]

Պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկել կոռուպցիան հաղթահարելու համար:

թ. Արդյունաբերության զարգացում

Արդյունաբերության զարգացման և արտահանման աճի, գյուղատնտեսության, ինչպես նաև արդյունաբերության առաջխաղացման և հարկային քաղաքականության տարբերակվածության ու ճկունության միջոցով է կուսակցությունը պատկերացնում տնտեսության կայունացմանն ուղղված քայլերի կատարումը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում[5]

Գյուղատնտեսության զարգացումն անհրաժեշտ է:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում[5]

Կուսակցությունը պարտադիր է համարում էներգետիկ անվտանգության ապահովումը:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում[5]

Տնտեսության առաջընթացի առումով կարևոր նշանակություն ունի արտադրական ենթակառուցվածքների զարգացումը:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում[5]

Կուսակցությունը դրական է վերաբերվում տնտեսության ինովացիոն զարգացմանը:

ծ. Կորպորատիվ կառավարման բարելավում[5]

Կորպորատիվ կառավարումը պարտադիր է:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ՀԱԿ-ը գտնում է, որ սոցիալական արդարության համակարգի ձևավորումը, առողջապահության և սոցիալական պաշտպանության համակարգերը համապետական հոգածության բնագավառներն են: Որևէ իրավիճակ պետությանը չի ազատում բնակչության նկատմամբ սոցիալական պարտականությունների կատարումից:

գ. Զբաղվածության ապահովում

Մարդու աշխատանքի լիակատար ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել օրենսդրական համապատասխան հիմք, որը կերաշխավորի մարդու և իր ընտանիքի կենսագործունեությանն արժանավայել վարձատրություն: Աշխատատեղերի ստեղծման և պետության կողմից ազգային եկամտի արդարացի բաշխման շնորհիվ քաղաքացին կունենա բարեկեցիկ կյանք:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կրթական համակարգում պետք է ծավալել աշակերտների և ուսանողների իրական մասնագիտական կողմնորոշում և առանձնահատուկ ուշադրության կենտրոնում պահել աշխատանքային դաստիարակության դասերը:

ը. Գիտության զարգացում

Կուսակցությունը, որպես տնտեսական կառուցվածքի վերափոխման հիմնական տարր և արտադրողական ուժ, անհրաժեշտ է համարում մշակել ՀՀ գիտական համակարգի վերականգնման ու զարգացման համալիր ծրագիր, որը կներառի գիտատեխնիկական առաջընթացի հիմնական պայմանները, կապահովի կապը հիմնարար և կիրառական գիտությունների, գիտության և արտադրության միջև, կնպաստի հեղինակության և նյութական վիճակի վերականգնմանը, այդ բնագավառում պետական ֆինանսական և ներդրումային քաղաքականության հատկացմանը, գիտական նվաճումների գնահատմանն ու խրախուսմանը և ազգային կրթական համակարգի բարելավմանը:

թ. Մշակույթ

Պետությունը հայրենիքում և Սփյուռքում բոլոր միջոցներով պետք է սատարի հայկական մշակույթի զարգացմանը և ազգին զերծ պահի օտար մշակութային ու գաղափարական ոտնձգություններից:

ժ. Սպորտ

Կուսակցությունը բացառապես դրական մոտեցում ունի սպորտի զարգացմանը:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Անհրաժեշտ է ապահովել ժողովրդի անմիջական մասնակցությունը կառավարման ներկայացուցչական մարմինների և ժողովրդավարական կառույցների ձևավորմանը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում[5]

Հայաստանի Հանրապետության մեջ գերագույն իշխանությունը ժողովրդի ազատ արտահայտված կամքն է, որն արտահայտվում է ազատ ընտրություններով ստեղծված ժողովրդի ներկայացուցչական մարմինների գործունեությամբ: Պետությունը պետք է երաշխավորի Հայաստանի քաղաքացու, հայ մարդու անվտանգությունը, արժանապատվությունն ու ազատությունները և նպաստի անհատի լիարժեք դրսևորմանը:

դ. Դատահիրավական համակարգի բարեփոխում

Սահմանադրության դրույթները, օրենսդրությունը, օրենքներն ու նորմատիվ ակտերը՝ անկախ ժամկետից, անձեռնմխելի են և պետք է հուսալիորեն պաշտպանվեն և ապահովեն Հայաստանի Հանրապետության քաղաքական, տնտեսական և հոգևոր անկախությունը:

ը. Այլ /Տեղական ինքնակառավարման մարմիններ/

Անհրաժեշտ է հնարավորին չափ ապակենտրոնացնել վարչական համակարգը և առավելագույն իշխանությամբ օժտել տեղական իշխանության մարմիններին:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԴԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Մաշտոցի 21/3
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 53-90-24
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** arm_democracy@yahoo.com
- **Հիմնադրման տարեթիվը՝** 18.09.1991թ
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 18.09.1991թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 25.10.1991թ.
- **Պետական. վերագրանցման ամսաթիվը՝** 26.11.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը վերջին համագումարի ժամանակ՝** 5700 անդամ
- **Կուսակցության պաշտոնական մամուլը՝** «Ազդարար» թերթ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Ազդարար» թերթ, 1992թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Հանրապետական խորհուրդ՝ 41 անդամ
- Նախագահություն
- Կուսակցության նախագահ՝ Արամ Գասպարի Սարգսյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Դեմոկրատական Կուսակցությունը (ՀԴԿ), ընդունելով «Դեմոկրատական սոցիալիզմի հայկական մոդելի ծրագիրը», նպատակ ունի տնտեսության ազատականացման քողի տակ ստեղծված բիրտ, կլանային ռեժիմը փոխարինել դեմոկրատական սոցիալիզմի համակարգով: Անզուսպ գլոբալացումը սպառնում է հիմնովին խաթարել հայ ժողովրդի ազգային նկարագիրը, ստիպել մոռացության տալ Հայ դատը, ազգային արժեքներն ու ինքնությունը, մտավորական, մեծ ներուժ ունեցող, աշխատասեր ու արարող ազգից վերածվել մանր առևտրականի ու օտարների սպասավորի: Այս և նման երևույթները պահանջում են երկրի կյանքում արագ և արմատական համակարգային փոփոխություններ: ՀԴԿ-ն վճռական է այդ փոփոխություններն իրականացնելու գործում: ՀԴԿ-ն համոզված է, որ Հայաստանի փրկության միակ միջոցը ներկա համակարգի փոխարինումն է դեմոկրատական սոցիալիզմի համակարգով: Այն ճանաչում է բոլոր ազգերի և ժողովուրդների իրավահավասարությունը, ազգերի ինքնորոշման իրավունքն իրենց պատմական տարածքներում, կտրականապես դեմ է ազգային-ազատագրական շարժումներն ուժով ճնշելու քաղաքականությանը, կամ դրանք որպես ահաբեկչություն որակելուն:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Մշակել Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգ, որից պետք է բխի երկրի արտաքին քաղաքականության դոկտրինը՝ հիմքում դնելով ազգային շահերը:
2. Արտաքին քաղաքականության դոկտրինում պահպանել հայ-ռուսական հարաբերություններում ռազմավարական գործընկերություն:
3. Հենվելով միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների վրա՝ հետամուտ լինել Հայ դատի և նրա անբաժան մասը հանդիսացող Արցախի հիմնհարցի արդարացի լուծմանը:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Արտաքին քաղաքականության մեջ առաջնահերթություններ որոշելիս դեմոկրատական սոցիալիզմի պետությունն առանձնահատուկ նշանակություն է տալիս այն երկրներին, որոնց հետ հարաբերությունների խորացումը բխում է հայ ժողովրդի ազգային շահերից (Եվրամիություն, ԱՄՆ, Չինաստան, Իրան և այլն):

ա. Եվրահնտեգրում[5]

Կուսակցությունը կողմնակից է Եվրահնտեգրմանը:

բ. ԱՊՀ[5]

Կուսակցությունը կողմնակից է ԱՊՀ-ին:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)[5]

Կուսակցությունը կողմ է և անհրաժեշտ է համարում Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին:

դ. ՀԱՊԿ (NATO)

NATO-ի ընդլայնումը դեպի Արևելք նպատակ չունի ձևավորելու գլոբալ անվտանգության համակարգ, քանի որ շրջանցում է Ռուսաստանը և դրանով իսկ Հայաստանին դնում երկընտրանքի առջև՝ կամ NATO, կամ Ռուսաստան: ՀԴԿ-ն մերժում է իրավիճակի նման զարգացումը և կողմ է միջբլոկային համագործակցությանը:

ե. ԱՄՆ[5]

Պետք է զարգացնել հարաբերություններն ԱՄՆ-ի հետ:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանի հետ պետք է խորացվի ռազմավարական համագործակցությունը:

է. Թուրքիա

Թուրքիայի հետ հարաբերությունները չեն կարող ձևավորվել մեր օրինական պահանջատիրությունից հրաժարվելու գնով:

ը. Ադրբեջան[5]

Կուսակցությունը կողմնակից է հակամարտության խաղաղ կարգավորմանը:

թ. Իրան[5]

Իրանի հետ պետք է հաստատել բարեկամական հարաբերություններ:

ժ. Վրաստան[5]

Վրաստանի հետ պետք է խորացնել բարիդրացիական հարաբերությունները:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն[5]

Ելնելով քաղաքական և տնտեսական շահերից՝ տարածաշրջանային ծրագրերում պետք է ապահովել Հայաստանի մասնակցությունը:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի գործընթացում ՀԴԿ-ն հիմք է ընդունում Արցախի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի միջոցով Ադրբեջանի կազմից իրավական և օրինական ճանապարհով դուրս գալու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ձևավորման ու ժողովրդավարական ուղիով զարգանալու անհերքելի փաստերն ու անդառնալի իրողությունը: Հիմնահարցի փոխզիջումային տարբերակի հիմքում կարող է դրվել մեկ սկզբունք՝ հակամարտության վերջնական լուծմանը տանող համարժեք զիջումներ, որոնք պետք է տեղ գտնեն Մեծ պայմանագրի համապարփակ փաթեթում, իսկ համաձայնեցված բոլոր կետերի իրականացումը կարող է գործողության մեջ դրվել հաստատված ժամանակացույցով: Կուսակցությունը հիմնահարցը կհամարի լուծված, երբ համաժողովրդական հանրաքվեի արդյունքում Լեռնային Ղարաբաղը կմիավորվի Մայր Հայրենիքի հետ:

խ. Ցեղասպանության ճանաչում

Երախտագիտություն հայտնելով այն պետություններին, որոնք ճանաչել են հայոց ցեղասպանության փաստը՝ ՀԴԿ-ն ընդգծում է, որ մեզ անհրաժեշտ է այդ փաստի այնպիսի ճանաչում, որն ընդունում է հայ ժողովրդի պահանջատիրության օրինականությունը, ցեղասպանության հետևանքների դիմաց փոխհատուցում ստանալու, ամենից առաջ տարագրված հայության հայրենիք վերադառնալու իրավունքը:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Հայաստանը, լինելով տարածքով փոքր երկիր, կարող է մեր աշխարհասփյուռ ժողովրդի մտավոր ծանրակշիռ ներուժն ի սպաս դնել աշխարհում իր իրական ու արժանապատիվ տեղն ու դերը գտնելու համար:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

1. Շուկայական հարաբերություններ այնքանով, որքանով հնարավոր է:
2. Պետական կարգավորում՝ որքան անհրաժեշտ է:
3. Արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը պետական օժանդակություն:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Տնտեսական հարաբերություններում պետությունը պետք է ապահովի իր վերահսկող և կարգավորող դերը: Պետական սեփականությունը պետք է արտահայտվի կամ զուտ սեփականության, կամ էլ բաժնետիրական ընկերությունների ձևով, որտեղ պետությունը պետք է իր ձեռքում պահի վերահսկող ծրարը, այսինքն բաժնետոմսերի կեսից ավելին՝ առնվազն 51%-ը:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Դրամավարկային

Վարկերն անհրաժեշտ է օգտագործել տնտեսական զարգացման, ընդլայնված վերարտադրության կազմակերպման, ինչպես նաև ռազմավարական ու տնտեսական առաջնային անհրաժեշտության ձեռնարկությունների վերագործարկման կամ այդպիսիք ստեղծելու կոնկրետ ծրագրերի համար:

բ. Բյուջետային

Անհրաժեշտ է կրճատել բյուջեի ծախսերը, սակայն ոչ թե ի հաշիվ սոցիալականի, այլ ուռճացված պետական ապարատի, ստվերային տնտեսության դեմ հետևողական պայքարի, իսկ ամենակարևորը՝ տնտեսությունը գործող և եկամտաբեր դարձնելու շնորհիվ:

գ. Հարկային

Արմատապես պետք է վերանայվի և վերակառուցվի հարկային համակարգը: Պրոգրեսիվ հարկումը պետք է դառնա դեմոկրատական սոցիալիզմի սկզբունքներից մեկը:

դ. Մաքսային

Պետության հարկային և մաքսային քաղաքականությունը պետք է ունենա ռազմավարական և մարտավարական ուղղվածություն, որն առավելապես կնպաստի երկրի տնտեսության կայունացմանը և նրա հետագա զարգացմանը:

ե. Ճյուղային[5]

Պետք է զարգացնել արդյունաբերության գիտատար ճյուղերը:

զ. Տարածքային[5]

Պետք է ապահովել տնտեսութան տարածքային զարգացումը՝ առավել ուշադրություն դարձնելով սահմանամերձ գոտիներին:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Արտահանման շնորհիվ պետք է բարելավել տնտեսական սալդոն:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Դեմոկրատական սոցիալիզմը ենթադրում է հասարակական, ազգային և պետական կառույցների մասնակցությունը տնտեսության կարգավորմանը և արտադրական գործունեությունից ստացվող շահույթի վերաբաշխման հսկողության իրականացմանը:

ա. Ներդրումների խթանում

Դեմոկրատական սոցիալիզմի տնտեսակարգը պետք է խրախուսի օտարերկրյա կապիտալ ներդրումները՝ գերապատվությունը տալով Սփյուռքի գործարարներին:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Անհրաժեշտ է մենաշնորհային արտոնությունների վերացում և տնտեսվարման հավասար պայմանների ստեղծում:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Դեմոկրատական սոցիալիզմի համակարգի պայմաններում պետությունն առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ու խրախուսմանը՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ և հատուկ օրենսդրություն:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում[5]

Անհրաժեշտ է ԱՀԿ-ի պահանջների կատարում՝ համաձայն ստանձնած պարտավորությունների:

զ. Մարզերի համաչափ զարգացում[5]

Պետք է ապահովել մարզերի սոցիալ-տնտեսական համաչափ զարգացումը՝ դրա վրա սևեռելով պետության ուշադրությունը:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Ներկա 50 - 70% ստվերային տնտեսության պայմաններում անհնար է խոսել երկրի բյուջեի կտրուկ ավելացման մասին: Ստվերային տնտեսությունը կրճատելու և վերացնելու գլխավոր պայմաններն են հարկային քաղաքականության պարզեցումը, հովանավորչության բացառումը, մենաշնորհային դիրքեր գրավելու անհնարինությունը և օրենքի առջև բոլորի պատասխանատվության հավասարությունը:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիան ու կաշառակերությունը, դրամաշորթությունը հասարակական չարիք են, որոնք բացարձակապես անհարիր են դեմոկրատական սոցիալիզմի բարոյականությանը և պետք է անողոքաբար պաժվեն օրենքով:

թ. Արդյունաբերության զարգացում

Հայաստանը պետք է լինի արդյունաբերական բարձր զարգացած, և ոչ թե սպասարկող երկիր: Սեփականաշնորհման հայկական տեսակը համարելով աղետալի գործընթաց՝ ՀԴԿ-ն առաջնային խնդիր է համարում երկրի ամբողջ ունեցվածքի գույքագրումն ու դասակարգումը: Արդյունաբերության զարգացման համար դեմոկրատական սոցիալիզմի պետությունը հնարավոր ամեն ինչ պետք է անի՝ ապահովելու արտաքին շուկան, եթե ձեռնարկվելիք միջոցառումները չեն վնասում պետության ինքնիշխանությանը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Ագրարային հարաբերություններում դեմոկրատական սոցիալիզմի ազգային մոդելի առանձնահատկություններից մեկը հողի պետական սեփականությունն է: Հողը պետության սեփականություն դարձնելով և լոկ վարձակալությամբ օգտագործելով՝ կպահպանվի ազգային ամենամեծ հարստության՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքը, մասնավոր հողատիրության հանդեպ կապահովվեն մի շարք առավելություններ, ինչը պետությանը թույլ կտա.

- մանևրել հողօգտագործման ընթացիկ և հեռանկարային խնդիրները լուծելիս,
- հողն օգտագործել առավելաբար գյուղատնտեսական նպատակներով,
- բացառել հողի օտարումն օտարերկրյա քաղաքացիներին,
- շրջանառության մեջ դնել չսեփականաշնորհված հողատարածությունները, մինչև իսկ դժվար մշակելի հողահանդակները, քարքարոտ լանջերը և այլն,
- շրջանառության մեջ դնել սեփականաշնորհված հողերի այն մասը, որը գյուղացիները վերադարձնելու են պետությանը՝ մշակել չկարողանալու հետևանքով,
- բյուջե բերել լրացուցիչ գումարներ,
- ազատ մրցակցություն ապահովել վարձակալված և սեփականաշնորհված հողերում կազմակերպած արտադրությունների միջև,
- աշխատատեղեր ստեղծել նաև քաղաքային բնակչության մի մասի համար, որոնք գերադասելու են հող վարձակալել և զբաղվել գյուղատնտեսական արտադրությամբ:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Էներգետիկան համարելով տնտեսության անկախության ու զարգացման հիմնասյուներից մեկը՝ կուսակցությունը նախատեսում է առաջիկա տասը տարում մշակել և իրագործել հիդրոռեսուրսների արդյունավետ օգտագործման ազգային ծրագիր: Ծրագրի կարևորագույն կետերից պետք է լինի Դեբեդ գետի կասկադի շինարարությունը, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաներով, սեյսմիկ անվտանգ, ստորգետնյա ջրահոսքերը չաղտոտող տարածքում նոր ատոմակայանի կառուցումը:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Սեփականության պետական հատվածը պետք է լինի ուժեղ և ընդգրկի ռազմավարական նշանակություն ունեցող շահութաբեր ձեռնարկությունները՝ կապը, ջուրը, էներգետիկան, երկաթուղային և օդային տրանսպորտը, բնակարանային շինարարության պետական հատվածը:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում

ՀԴԿ-ն անհրաժեշտ է համարում գիտություն-արտադրություն կապի խթանումը, մասնավորապես՝ ֆինանսական միջոցների ներգրավումով տեխնոպարկերի տիպի ենթակառույցների ձևավորումը, գիտական և տեխնոլոգիական հեռանկարային ուղղությունների զարգացումը խթանող 15-20 տարվա հեռանկարով համալիր ծրագրի մշակումը:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ՀԴԿ գլխավոր նպատակն է լինելու իրական սոցիալական պետության կառուցումը, ուր չեն լինի աղքատներ և սոցիալապես անապահովներ, ուր ամեն ոք կկարողանա օգտվել առողջապահական ծառայություններից և կստանա իրեն անհրաժեշտ կրթություն, ուր պետությունը, վերջապես, կստանձնի պարտավորություն քաղաքացու սոցիալական վիճակի համար:

ա. Աղքատության հաղթահարում[5]

Ստվերային տնտեսությունը վերացնելու միջոցով՝ մեկ շնչին ընկնող եկամուտը հասցնել սպառողական զամբյուղի չափին:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում[5]

Պրոգրեսիվ հարկման կիրառման շնորհիվ և անապահով խավերին սոցիալական էական օժանդակություն ցուցաբերելով՝ հնարավոր է նվազեցնել հասարակության շերտերի բևեռացումը:

գ. Զբաղվածության ապահովում[5]

Անհրաժեշտ է երկրում օրենքների գերակայության ապահովմամբ և պետական ներդրումներով նոր աշխատատեղերի ստեղծում:

դ. Արտագաղթի նվազեցում

Կուսակցությունը գտնում է, որ դեմոկրատական սոցիալիզմի համակարգը թույլ է տալու արագ վերականգնել Հայաստանի արտադրական ու գիտատեխնիկական ներուժը, առողջացնել բարոյա-հոգեբանական ու իրավական մթնոլորտը, նպաստել հայրենիքից հեռացածների տունդարձին:

ե. Առողջապահական համակարգի բարելավում[5]

Անհրաժեշտ է պետական ստացիոնար և ամբուլատոր բուժհիմնարկների ցանցի վերականգնում, պետպատվերով բուժվողներիթվի ավելացում:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում[5]

Պետք է թոշակները հասցնել սպառողական զամբյուղի չափին և երիտասարդ ընտանիքներին պետական հոգածություն ցուցաբերել:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կրթական համակարգի բարեփոխումը պետք է դառնա երկրի զարգացման հեռանկարային ռազմավարական ծրագրի (15-20 տարի) օրգանական մասը: Դա նշանակում է պետության կողմից համակարգված մոտեցում.

- բարձրակարգ մանկավարժական կադրերի պատրաստմանը, նրանց հեղինակության և հասարակական դերի բարձրացմանը, պատշաճ վարձատրության և սոցիալական արտոնությունների սահմանմանը,
- պետպատվերի շրջանակներում երկրի ռազմավարական ծրագրի պահանջներից բխող անհրաժեշտ քանակի և որակի մասնագետների պատրաստմանը,
- բարձր դասարանի աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը,
- տնտեսության առաջնային ոլորտների զարգացում ապահովող կիրառական գիտությունների գծով մասնագետ գիտնականների պատրաստմանը:

ը. Գիտության զարգացում

Գիտությանը պահանջվող աջակցությունը պետք է լինի պետության առաջնային հոգածության առարկա: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում.

- պետական գիտատեխնիկական քաղաքականության առաջնահերթությունների և գիտության զարգացման գերակա ուղղությունների սահմանում,
- դեռևս պահպանված գիտական ներուժի, հատկապես ավանդական դպրոցների հիման վրա գիտության կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում,
- գիտական աշխատողների վարձատրության բարձրացման և սոցիալական արտոնությունների տրամադրման նպատակով հատկացվող միջոցների աստիճանական ավելացում,
- գիտության և կրթության կապի ամրապնդում,
- գիտության մեջ թարմ ուժերի ներհոս ապահովելու համար տաղանդավոր երիտասարդ գիտնականների պետական աջակցության համակարգի ձևավորում, ճանաչված գիտական կենտրոններում մասնագետների որակավորման և փորձարարական աշխատանքի համար միջոցների տրամադրում:

թ. Մշակույթ[5]

Անհրաժեշտ է մշակույթին արվող ֆինանսավորումների ավելացում և այս ոլորտում մնացորդային ֆինանսավորումից հրաժարում:

ժ. Սպորտ[5]

Ֆիզկուլտուրան և սպորտն անհրաժեշտ է մատչելի դարձնել հասարակության լայն խավերին, հատկապես երիտասարդությանը:

ի. Այլ /Եկեղեցի/

Հաշվի առնելով մեր ազգային առանձնահատկությունները՝ կուսակցությունը գերապատվությունը տալիս է Հայ Առաքելական եկեղեցուն և տարբեր հարցերի շուրջ համագործակցում ու խորհրդակցում է Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կաթողիկոսության հետ: Կուսակցությունը դեմ է քրիստոնեական և ոչ քրիստոնեական այն աղանդներին, որոնք քարոզում են բռնություն, նսեմացնում ազգային արժեքները, սպառնալիք են երկրի անվտանգությանն ու պաշտպանունակությանը:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդավարությունը պետության կողմից տրված շնորհ չէ, այլ ժողովրդի գերիշխող ապրելաձև կյանքի բոլոր ոլորտներում: Քաղաքական համակարգում այն պետք է արտահայտվի ազգի համախմբման, բարգավաճող պետության կերտման, մարդու իրավունքների և հիմնական ազատությունների ապահովման ձևով:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում[5]

Պետք է մամուլի պատասխանատվության բարձրացում և պետական մարմինների կողմից բարձրացված հարցերին պատասխանում:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Խորհրդարանական համակարգով ապահովվելու են մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ամենից առաջ՝ ապրելու, աշխատանք ունենալու իրավունքը, խոսքի, մամուլի, ժողովների, հանրահավաքների, երթերի ու ցույցերի ազատությունը:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Խորհրդարանական արդար, առանց կեղծումների և թափանցիկ ընտրությունները սկզբունքային ու վճռական նշանակություն ունեն: Երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը պետք է կազմված լինի պրոֆեսիոնալ, հասարակության լավագույն ներկայացուցիչներից: Նման խորհրդարան ունենալու համար անհրաժեշտ է փոխել ընտրական օրենսդրությունը, ըստ որի ընտրությունները տեղի են ունենում բացառապես համամասնական

սկզբունքով՝ կուսակցական ցուցակներով: Սահմանադրական դրույթ պետք է դառնա ընտրողների պահանջով խորհրդարանական կուսակցությունների կողմից այս կամ այն պատգամավորի ետ կանչելը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում[5]

Անհրաժեշտ է հանրապետությունում ձևավորված բոլոր կուսակցությունների համար հավասար պայմանների ստեղծում:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում

Սահմանադրական դրույթ պետք է դառնա ընտրողների պահանջով խորհրդարանական կուսակցությունների կողմից այս կամ այն պատգամավորի ետ կանչելը: Երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը պետք է կազմված լինի արհեստավարժ, հասարակության լավագույն ներկայացուցիչներից:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Հաշվի առնելով պետական անվտանգության սպառնալիքները՝ անհրաժեշտ է մշակել նորանոր ազգային անվտանգության հայեցակարգեր, որոնցից պետք է բխի երկրի արտաքին քաղաքականությունը՝ հիմքում ունենալով ազգային շահերը:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցության գլխավոր նպատակն է երիտասարդ ընտանիքների ամրապնդման միջոցով լուծել ժողովրդագրական խնդիրը:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Դեմոկրատական սոցիալիզմի համակարգում մարդը դիտվում է որպես բնության անբաժան մաս և չպետք է հակադրվի նրան, առավել ևս իր գիտատեխնիկական և արդյունաբերական գործունեությամբ շահադիտորեն կործանի այն:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1995թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 70
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 9
- **1999թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 90
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 15
- **2003թ. ընտրություններ՝** մասնակցել է «Արդարություն» դաշինքի կազմում

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1991թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **1996թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1998թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2003թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ III Գումարում՝ 1

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԵԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Մաշտոցի 1
- **Իրավաբանական հասցեն՝** ք. Երևան, Երզնկյան 1,բն.1
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 56-02-99, 56-02-98
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** hekarmenia@mail.ru
- **Հիմնադրման տարեթիվը՝** 18.05.1997թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 20.06.1997թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 20.06.1997թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 05.12.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 7960 անդամ
- **Կուսակցության պաշտոնական մամուլը՝** «Սկիզբ» թերթ, «Հայեցակարգ» թերթ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** կանոնադրությունը՝ «Հայեցակարգ» թերթ, 05.03.2003թ., ծրագիրը՝ «Հայեցակարգ» թերթ, 14.02.2003թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Կենտրոնական խորհուրդ՝ 27 անդամ
- Կուսակցության ղեկավար՝ Սարգիս Ասատրյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Երիտասարդական Կուսակցությունն իրական ժողովրդավարական, առաջադիմական երիտասարդությանը միավորող հասարակական-քաղաքական միավորում է: Կուսակցությունը բաց է բոլոր օրինապաշտ և Հայաստանի Հանրապետության ամրապնդմանն ու բարգավաճմանը սատարող ՀՀ քաղաքացիների և ընտրական իրավունք ունեցող մարդկանց համար:

Կուսակցությունը կողմ է հասարակության, կյանքի բոլոր կողմերի նորացմանը և առաջընթացի, արարող ներուժի, պատմականորեն ձևավորված ավանդույթների և կուտակված փորձի փոխանցմանն ածող սերնդին:

Կուսակցությունը կողմ է սոցիալական ուղղվածություն ունեցող շուկայական տնտեսության անշրջելիությանը և քաղաքական խնդիրները լուծելու միայն քաղաքակիրթ միջոցներին:

Կուսակցությունը հետամուտ է երիտասարդության համար պետության և հասարակության կողմից հասցեագրված և նպատակային ծրագրերի իրականացմանը:

Կուսակցությունը քաղաքացիական հասարակության ձևավորման կողմնակից է և արտահայտում է քաղաքացիների շահերը:

Հայաստանի Երիտասարդական Կուսակցության կազմավորման, նրա միջոցների օգտագործման հիմքում դրվում է միայն ու միայն ազգային շահը՝ նպատակ ունենալով երիտասարդության կյանքի առաջընթացը մասնավորապես, և մեր երկրի քաղաքացիների կյանքի առաջընթացն ընդհանրապես:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

Հայաստան-Ռուսաստան միության ստեղծման անհրաժեշտությունից ելնելով՝ մշակել և իրականացնել միության ստեղծման համար անհրաժեշտ դրույթներ:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Սկզբունքային, բարոյական և արդարամիտ մասնակցությունը համաշխարհային բոլոր հիմնախնդիրների լուծմանը կբարձրացնի Հայաստանի հեղինակությունը:

ա. Եվրահնտեգրում[5]

Անհրաժեշտ է համագործակցել և բարիդրացիական հարաբերություններ հաստատել միջազգային բոլոր հեղինակավոր կառույցների հետ:

բ. ԱՊՀ[5]

Անհրաժեշտ է համագործակցել և բարիդրացիական հարաբերություններ հաստատել միջազգային բոլոր հեղինակավոր կառույցների հետ:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)[5]

Կուսակցությունը կարևորում է Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին:

ե. ԱՄՆ[5]

Կուսակցությունը կարևորում է սերտ համագործակցությունն ԱՄՆ-ի հետ:

զ. Ռուսաստանի Դաշնություն[5]

Կուսակցությունը կարևորում է սերտ համագործակցությունը Ռուսաստանի հետ:

է. Թուրքիա

Հայաստանին վերաբերող տարածաշրջանային հիմնախնդիրների զգալի մասը վերաբերում են հայ-թուրքական հարաբերություններին: Դրա գլխավոր պատճառը Հայաստան հայրենիքի զգալի մասը բռնագրավված լինելն է թուրքական երկու պետությունների կողմից, ինչպես նաև նման սպառնալիքի առկայությունը Հայաստանի մնացած շրջանների նկատմամբ ուղղակի և անուղղակի իմաստներով: Տարածաշրջանային կայունությունը մեծամասամբ պայմանավորված է այս հիմնախնդրի ձևով:

Հայ-թուրքական հարաբերություններով են մեծամասամբ պայմանավորված Հայաստանի հարաբերությունները հարևանների, տարածաշրջանային և համաշխարհային տերությունների հետ:

ը. Ադրբեջան[5]

ԼՂՀ անկախությունն Ադրբեջանի կողմից ճանաչելու պարագայում Հայաստանը կվերսկսի իր բարիդրացիական հարաբերություններն Ադրբեջանի հետ:

թ. Իրան[5]

Կուսակցությունը կարևորում է Իրանի հետ ռազմավարական գործընկերությունը:

ժ. Վրաստան[5]

Կուսակցությունը կողմնակից է Վրաստանի հետ սերտ և բարեկամական տնտեսական ու մշակութային հարաբերությունների հաստատմանը:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Տարածաշրջանային տարասկզբունք բաժանումներից յուրաքանչյուրում Հայստանը բանալիի դեր է կատարում: Մեր տարածաշրջանն էթնոսների, կրոնների, քաղաքակրթությունների, արևելքի և արևմուտքի մի խառնարան է, որտեղ գրեթե անհիրականանալի են միավորման գործընթացները, փոխարենը առկա են պատմական խորն արմատներ ունեցող և լուծման կարոտ հակամարտություններ:

Հայստանի անվտանգությունը և զարգացումը անհնար է պատկերացնել առանց դեռևս չձևավորված տարածաշրջանային անվտանգության համակարգի և տարածաշրջանային ընդհանուր զարգացման: Հայաստանը պարտավոր է անմիջական մասնակցություն ունենալ տարածաշրջանը կազմակերպող և կայունացնող բոլոր գործընթացներին:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Արցախյան ազատամարտից հետո հայկական ժողովրդականությունն այդպես էլ չծնեց մի գաղափար, ազգային մի որոշում, որով կկարողանար առաջնորդվել հայ ժողովուրդը:

խ. Ցեղասպանության ճանաչում[5]

Կուսակցությունը համարում է, որ Հայ դատի հիմնախնդիրը վերանայման կարիք ունի:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Սփյուռքը հայ ազգի բաղկացուցիչ մասն է, և յուրաքանչյուր գաղթօջախ իր ազգային ինքնագիտակցությանը համեմատ մասնակից է ազգային հավաքականությանը: Սփյուռքը հայկական է այնքանով, որքանով այն ձգտում է վերադառնալ և տեր կանգնել իր Հայրենիքին: Սփյուռքի ինքնակազմակերպման ձևերը հայության ազգային պետական ընդհանուր կազմակերպության մի մասն են: ՀՀ- ի հետ գործակցությունը և ներքին բարելավումը հայ հավաքականության միասնությունն ամրապնդող հանգամանքներ են:

4.3. Ներքին քաղաքականության առաջնահերթությունները[5]

1. Կոռուպցիայի վերացման վերաբերյալ լայնածավալ ծրագրերի իրականացում.
2. ՀՀ քրեա-դատավարական օրենսգրքում որոշ հանցատեսակների նկատմամբ պատժամիջոցների խստացում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Շուկայական տնտեսությունում պետությունը պետք է հանդես գա կարգավորիչ գործառույթներով:

Հակամենաշնորհային քաղաքականությունը, գների կարգավորման և հավասար պայմանների ապահովման արդյունավետ մեխանիզմների կիրառումը պետք է հստակորեն ամրագրված լինեն իրականացվող պետական քաղաքականության մեջ:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Դրամավարկային

Կուսակցությունը կարևորում է հիպոտեկային ծրագրերի արդյունավետ իրականացումը:

բ. Բյուջետային[5]

Կուսակցության ծրագրով ՀՀ պետական բյուջեն 2012-2014թթ. կգերազանցի 3.5 մլրդ ԱՄՆ դոլարը:

գ. Հարկային

Կուսակցությունը կարևորում է պրոգրեսիվ հարկերի հաստատումն ու հարկերի լիարժեք հավաքագրումը:

գ. Մաքսային[5]

Կուսակցությունը ՀՀ ֆիսկալ մարմինների վերամիավորման կողմնակից է:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Ներդրումների խթանում

Կուսակցությունը կարևոր է համարում եկամուտների այնպիսի վերաբաշխումը, որը հնարավորություն կտա ժողովրդի մեծամասնությանը փոքրիկ ներդրումներով մասնակցել արտադրության և մյուս կարևոր ճյուղերի ֆինանսավորմանը:

Ներդրողներին արտոնյալ պայմանների տրամադրումն էապես կնպաստի արտաքին ներդրումների աշխուժացմանը:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար անհրաժեշտ է ապահովել գործունեության հավասար պայմաններ:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Փոքր ու միջին բիզնեսը պետք է լինի պետության ուշադրության կենտրոնում: Ոլորտի զարգացումը պետք է խթանել համապատասխան արտոնությունների խթանմամբ:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում[5]

Անհրաժեշտ է շատ զգույշ մոտենալ ԱՀԿ-ի պահանջներին:

զ. Մարզերի համաչափ զարգացում[5]

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում մարզերի համաչափ զարգացումը, այդ թվում նոր քաղաքների ստեղծումը:

է. Ստվերային տնտեսության կրճատում[5]

Անհրաժեշտ է ստվերային տնտեսության կրճատում կոռուպցիայի դեմ պայքարի կոնտեքստում:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կուսակցությունը համարում է, որ անհրաժեշտ է վերացնել անպատժելիության մթնոլորտը:

թ. Արդյունաբերության զարգացում[5]

Պետությունը պետք է սուբսիդավորի արդյունաբերական մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղեր:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Ոլորտի առաջխաղացման համատեքստում անհրաժեշտ է մշակել անասնաբուծության և մրգային կուլտուրաների զարգացման ծրագիր:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում[5]

Կուսակցությունը նոր ԱԷԿ-ի կառուցման կողմնակից է:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Պետք է այլընտրանքային ենթակառուցվածքների համալիր ծրագիր մշակել:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում[5]

Կուսակցությունը կողմ է Հայաստանի ինովացիոն գործակալության ստեղծմանը:

ծ. Կորպորատիվ կառավարման բարելավում[5]

Անհրաժեշտ են համապատասխան փոփոխություններ կորպորատիվ կառավարման մասին օրենքում:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Աղքատության հաղթահարում

Աղքատության հաղթահարումը պետք է հանդիսանա պետական քաղաքականության գերխնդիրներից մեկը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում[5]

Հասարակության շերտերի բևեռացման նվազեցումը հնարավոր է միայն կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի միջոցով:

գ. Զբաղվածության ապահովում

Անհրաժեշտ է արագացնել նոր աշխատատեղերի ստեղծման գործընթացը՝ նկատի ունենալով երիտասարդության զբաղվածության խնդիրների կարգավորման առաջնահերթությունները:

դ. Արտագաղթի նվազեցում[5]

Կուսակցությունը մշակել է նոր միգրացիոն համալիր ծրագիր:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Անհրաժեշտ է պետական պատվերների ավելացում և առողջապահական ապահովագրման իրականացում:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կրթության կարևոր խնդիրը կրթական գործընթացում երիտասարդների ավելի մեծ ներգրավվածության ապահովումն է, ինչը պայմանավորված է ազգային ավելի մեծ ներուժի կուտակման և բացահայտման, մտագործունեության և ազգային մշակույթի որակը բարձրացնելու հետ: Կրթության այս խնդիրները չեն կարող լուծվել կենտրոնաձիգ կառավարմամբ, ստանդարտների ու վկայականների կանոնակարգմամբ: Ճիշտ հակառակը, պետության հետ հավասար, կրթության պատվիրատու է ամբողջ հասարակությունը՝ ընտանիքից մինչև միություններ: Ուսուցչությունը կոչում է, այն չպետք է կապվի նյութական շահագրգռվածության հետ, սակայն պետք է ունենա բավարար ապահովվածություն, իսկ կրթություն ստանալու անհատական նպատակը պետք է լինի գիտելիքների ձեռքբերումը, այլ ոչ թե դիպլոմ ստանալը:

ը. Գիտության զարգացում

Կուսակցությունը համարում է, որ ճշգրիտ և ֆունդամենտալ գիտությունների բնագավառը պետք է ունենա պետական ֆինանսավորում:

թ. Մշակույթ

Մշակույթն ազգային կենսակերպ է, որի միջոցով ազգերն արարում են և իրագործում իրենց նախասահմանված առաքելությունը: Մշակույթը մեր ինքնատիպությունն է, մեր մտածելու և գործելու տեսակը: Ազգային մշակույթը ճանաչելու խնդիրն այսօր առկա է առաջին հերթին օտար ազդեցությունների մեծածավալության և փաստացի կատարված հետքայլի պատճառով:

Հայտնվելով օտար մշակութային ազդեցությունների տակ՝ մենք մասամբ կորցրել ենք ազգային իմաստության ակունքները, լեզվամտածողության որակը և ավանդական կենսակերպը, որի հետևանքով հայ մշակն ու արհեստավորը, արվեստագետն ու գիտնականը կորցրել են իրենց ավանդական աշխատասիրությունն ու որակը: Ազգային մշակույթով ապրելու խնդիրը բնական անհրաժեշտություն է, սակայն այսօր այն պայմանավորված է մեր ստեղծագործական կարողությունների նվազմամբ: Անհրաժեշտ է աշխարհով մեկ ներկայացնել հայ ազգային մշակույթը:

ժ. Սպորտ[5]

Կուսակցությունը սպորտի և ֆիզիկական կուլտուրայի սուբսիդավորման կողմնակից է:

ի. Այլ /Ընտանիքի դերը հասարակության մեջ/

Հասարակության բնական կառույցի հիմքը կազմում են ընտանիքները և համայնքները: Ընտանիքն ավանդաբար եղել և մնում է հասարակության հիմքը: Ընտանիքը քայքայող գլխավոր գործոնն անհատապաշտությունն է, որը դրված է նույնիսկ օրենսդրության հիմքում: Պետությունը նախընտրում է հարաբերություններ ունենալ ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի հետ առանձնաբար, այլ ոչ թե ընտանիքի հետ՝ որպես ամբողջական միավորի: Անորակ ընտանիքներում ապրող քաղաքացիները չեն կարող կառուցել որակյալ հասարակական հարաբերություններ՝ հիմնված ազգային ինքնագիտակցության և համազգային համագործակցության վրա:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Երբ կենտրոնոնաձիգ պետությունն իր կառույցներով չի համապատասխանում ազգի բնական կազմակերպմանը, դադարում է ծառայել այդ ազգին ու գործիք է դառնում օտար և ներքին հատվածական ուժերի ձեռքին: Կուսակցությունը կարևորում է ուժեղ իշխանության և ուժեղ ընդդիմության առկայության անհրաժեշտությունը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդավարությունը պետք է առավելագույնս համապատասխանի ազգի բնական ինքնակազմակերպմանը և ապահովի հասարակության գործուն ու պատասխանատու ուժերի ներդաշնակ համագործակցությունը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Հայաստանի պաշտպանունակությունն ամրապնդելու և նյութական միջոցների սակավությունը փոխհատուցելու կարևոր բաղկացուցիչը պետք է լինի ազգային ոգու ամրապնդումը և կազմակերպվածությունը: Ազգ-բանակ կառուցվածքն ու մտածելակերպն է, որ կարող է դա ապահովել: Բանակային հայտնի կարծրատիպերը, որոնք միգուցե հաջողությամբ գործում են այլ երկրներում, կարող են բոլորովին անպիտան լինել Հայաստանում: Արհեստավարժ կամ պարտադիր զորակոչային այլընտրանքները հավասարապես չեն բավարարում մեր բանակի առջև ծառացած խնդիրներին: Սպառազինության առջև սահմանափակվածությունը, տարաբնույթ պատերազմների հավանականությունը, ինչպես նաև մեծ թվով բանակ ունենալու անհրաժեշտությունը պահանջում են բանակային կառույցի և ռազմական հայեցակարգի մեծ ճկունություն, ռազմական և հայրենասիրական դաստիարակության, ինչպես նաև բանակային խնդիրների քննարկման՝ ժողովրդի ավելի լայն և պատասխանատու մասնակցությամբ մշտական գործող համակարգեր:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1999թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 16
- **2003թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 1
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 5

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1998թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԺԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Ղազար Փարպեցի 7
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 53-15-01, 53-65-01, 53-77-01
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** nap_Armenia@yahoo.com
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.ppa.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 23.05.1998թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 28.02.1999թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 15.05.1998թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 02.06.2001թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 30300 անդամ

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Վարչություն՝ 105 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Ստեփան Կարենի Դեմիրճյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) ժողովրդավարական, ժողովրդական սոցիալիզմի գաղափարներ կրող, ՀՀ Սահմանադրության և օրենքների սահմաններում գործող, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավորության սկզբունքով միավորված հասարակական-քաղաքական կազմակերպություն (կուսակցություն) է:

ՀԺԿ գաղափարախոսությունը հասարակության զարգացման մասին ժամանակակից, առաջավոր գաղափարների ու հայացքների համակարգ է, որի հիմքում ընկած են ազգային ու համամարդկային արժեքների զուգորդումը, ժողովրդի հայրենասիրական իղձերն ու զգացմունքները, սոցիալական արդարության նկատմամբ նրա ավանդական հակվածությունը:

ՀԺԿ-ի հիմնական արժեքներն են ազգային գաղափարախոսությունը, անհատի ազատությունը, ժողովրդավարությունը, արդարությունն ու համերաշխությունը:

ՀԺԿ-ի նպատակը Հայաստանում քաղաքացիական հասարակության ու ժողովրդի իրական իշխանության արմատավորման հիման վրա ժողովրդավարական և իրավական պետության կերտումն է, այնպիսի պետության, որի ուշադրության կենտրոնում կլինի հասարակության յուրաքանչյուր անդամ, որը կծառայի ժողովրդի շահերին:

ՀԺԿ-ն իր պրակտիկ գործունեությունը նպատակամղում է սոցիալական արդարության, արժանապատվության, օրինականության և բարոյականության համամարդկային արժեքներին հարիր հասարակության կայացմանը՝ այն դիտելով որպես ժողովրդի բարօրության և ազգային միասնության հուսալի երաշխիք:

ՀԺԿ-ն իր առջև խնդիր է դնում նպաստել Հայստանի պետականության ամրապնդմանը, տնտեսական և հոգևոր ներուժի զորացմանը, ժողովրդի սոցիալական պաշտպանվածության ապահովմանը, նրա համակողմանի և ներդաշնակ զարգացմանն ու բարգավաճմանը:

ՀԺԿ-ի հիմնական նպատակներն ու խնդիրներն ամրագրված են նրա ծրագրում:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. ՀԺԿ-ն Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակայություններից առաջնայինը համարում է հայաստանաբնակ ժողովրդի և արցախահայության անվտանգության, ազատ զարգացման ու բարգավաճման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
2. Եվրահինտեգրումը ՀԺԿ-ն համարում է արտաքին քաղքականության գերակա ուղղություն.
3. Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերությունը պետք է լինի Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

ՀԺԿ-ն գտնում է, որ ազգային շահերի պաշտպանությունը միջազգային ասպարեզում պետք է իրականացվի արտաքին քաղաքական համապարփակ հայեցակարգի հիման վրա:

ա. Եվրահինտեգրում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ինտեգրումը Եվրոպական կառույցներին (Եվրոպայի խորհուրդ, ԵԱՀԿ): Պետք է խորացնել երկկողմանի հարաբերությունները եվրոպական երկրների հետ՝ դիտարկելով Հայաստանի անդամակցությունը Եվրամիությանը՝ որպես արտաքին և ներքին քաղաքականության նպատակ:

բ. ԱՊՀ

ՀԺԿ-ն հանդես է գալիս ԱՊՀ շրջանակներում փոխշահավետ համագործակցության օգտին:

ե. ԱՄՆ

Հայաստանը պետք է բարիդրացիական հարաբերություններ հաստատի տարածաշրջանի բոլոր երկրների հետ, ինչպես նաև փոխշահավետության հիմքի վրա զարգացնի և խորացնի համագործակցությունն ԱՄՆ-ի, եվրոպական և աշխարհի այլ երկրների հետ:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերությունը պետք է լինի Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը: Պետք է կարգավորվեն ավանդական տնտեսական կապերը Ռուսաստանի Դաշնության հետ:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Հայաստանը պետք է բարիդրացիական հարաբերություններ հաստատի տարածաշրջանի բոլոր երկրների հետ:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Կուսակցությունը գտնում է, որ Արցախյան հիմնախնդրի արդար լուծմանն անհրաժեշտ է հասնել խաղաղ ճանապարհով, քաղաքական բանակցությունների միջոցով: Այդ բանակցություններում լիիրավ կողմ պետք է հանդիսանա ԼՂՀ-ն:

ԼՂՀ-ի հակամարտության կարգավորման հիմքում պետք է դրվի միջազգայնորեն ճանաչված ինքնորոշման իրավունքի սկզբունքը:

խ. Ցեղասպանության ճանաչում

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ մայր հայրենիքի և Սփյուռքի ջանքերի միավորումը մշտապես կգտնվի ՀԺԿ-ի ուշադրության կենտրոնում:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Սփյուռքի հետ համակողմանի կապերի ամրապնդումն ու զարգացումը, համազգային խնդիրների լուծման, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ մայր հայրենիքի և Սփյուռքի ջանքերի միավորումը մշտապես կգտնվի ՀԺԿ ուշադրության կենտրոնում:

Ընդունելով երկքաղաքացիության սկզբունքը՝ ՀԺԿ-ն կարևորում է դրա իրականացման իրավական և գործնական մեխանիզմների մշակումը:

Հայաստան-Սփյուռք հարաբերությունները որակապես նոր մակարդակի հասցնելու համար նպատակահարմար է ստեղծել համապատասխան պետական կառույց:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Կուսակցությունը գտնում է, որ պետք է պետականորեն աջակցել Հայաստանի ամեն մի քաղաքացուն, վերջին տարիներին երկրից մեկնած յուրաքանչյուր հայրենակցին, յուրաքանչյուր սփյուռքահային՝ մեր հանրապետության տարածքում իր սեփական գործը նախաձեռնելու ցանկության դեպքում, պետք է հուսալիորեն պաշտպանել նրանց իշխանությունների կամայականություններից, բյուրոկրատական խոչընդոտներից, կլանային և այլ ոտնձգություններից: Պետության գործունեության արդյունավետությունը դիտելով իբրև տնտեսական և սոցիալական կայուն զարգացման երաշխիք՝ պետք է բարձրացնել պետության կարգավորիչ դերը: Պետությունը պետք է լինի ազատական շուկայական համակարգի պայմաններում ինքնուրույն գործող բոլոր տնտեսական սուբյեկտների գործընկերն ու օգնականը, սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման երաշխավորը: Օրենսդրական դաշտի հստակությամբ և կանխատեսելիությամբ, ընդունված օրենքների կատարմամբ պետք է ամրապնդել պետության նկատմամբ քաղաքացիների վստահությունն՝ ապահովելով արտասահմանյան ներդրումների հոսքը:

Կուսակցությունը գտնում է, որ պետք է բացառվի անձի և նրա սեփականության նկատմամբ ոտնձգության, կամայականության և բռնության որևէ դրսևորում: Քաղաքացին պետք է համոզված լինի, որ պետությունը կպաշտպանի իր արժանապատվությունն ու ունեցվածքը:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունը գտնում է, որ պետք է ձեռնարկել տնտեսական, սոցիալական համակողմանի միջոցառումներ գյուղական բնակչության՝ սպառնալից չափերի հասնող արտահոսքի կանխման, սահմանամերձ բնակավայրերի կայունացման նպատակով:

ա. Դրամավարկային

Պետք է աջակցել բանկային համակարգի կատարելագործմանը, ֆինանսավորման տոկոսային դրույքաչափերի նվազեցմանը, վարկավորման մեխանիզմների առավելագույն պարզեցմանը:

բ. Բյուջետային

Կուսակցությունը կարևորում է բյուջետային ծախսերի և պետական գնումների արդյունավետության ապահովումը:

գ. Հարկային և մաքսային

Պետք է կատարելագործել և պարզեցնել հարկային համակարգը: Հարկերը պետք է լինեն հիմնավորված և պարտադիր. վարկային և հարկային քաղաքականության մեջ առավելագույնս պետք է հաշվի առնել գյուղմթերքներ արտադրողների աշխատանքի սեզոնային բնույթը, ոռոգելի ջրով, վառելանյութով, տեխնիկայով, պարարտանյութով, սերմացուով պահանջված ժամկետներում և մատչելի գներով նրանց ապահովելու անհրաժեշտությունը: Պետք է հարկային, ֆինանսավարկային և մաքսային ճկուն քաղաքականության միջոցով աշխուժացնել հայրենական ապրանքարտադրողների գործունեությունը, նպաստել փոքր և միջին ձեռներեցության զարգացմանը:

ե. Ճյուղային

Պետք է ցուցաբերել գյուղին և գյուղմթերքներ արտադրողներին պետական համակողմանի աջակցություն: Պետք է խրախուսել և աջակցել գյուղատնտեսական արտադրության մեջ ապահովագրական մեխանիզմների լայն համակարգի ձևավորմանը և գործադրմանը: Պետք է վերականգնել գյուղատնտեսական մթերքների արտադրության պետպատվերների աշխարհում ընդունված պրակտիկան, գործադրել կոնկրետ միջոցներ ինչպես գյուղատնտեսական մթերքներ արտադրողի, այնպես էլ վերամշակողի և սպառողի շահերը պաշտպանող համակարգի ներդրման ուղղությամբ: Պարենային անվտանգության ապահովման խնդիրը մշտապես կլինի կուսակցության ծրագրային նպատակների գերակայությունների թվում:

թ. Այլ

Պետք է ստեղծել կյանքի այնպիսի պայմաններ, որ բանվորը, գյուղացին, ուսուցիչը, բժիշկը, գիտնականն, արվեստի և մշակույթի գործիչը, մարզիկը վերագտնեն իրենց կարևոր դերը հասարակության մեջ: Կինը պետք է վերստին իրեն զգա բոլորի կողմից հարգված, վստահ իր երեխաների ապագայի նկատմամբ՝ վերագտնի ընտանիքի հպարտ պահապանի իր անփոխարինելի դերը: Պետք է փախստականին վերջնականապես ազատել անլիարժեքության զգացումից՝ տալով նրան իրավական կարգավիճակ և մշտական կացարան: Պետք է վերականգնել արհմիությունների իրավունքները, ապահովել աշխատավորական կոլեկտիվների և աշխատավորների իրավական պաշտպանվածությունը: Պետք է ամեն կերպ աջակցել երիտասարդ տաղանդների բացահայտմանը, մասնագիտական բարձր որակավորում ձեռք բերելու համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Պետք է մշակել և իրագործել ձեռնարկություններում երիտասարդության համար աշխատատեղեր

ստեղծելու հատուկ ծրագրեր: Պետք է բարձրացնել ծառայության վարկն ազգային բանակում: Հայաստանի բանակի զինվորը պետք է արժանանա պետության և հասարակության հոգատարությանն ու բարձր հարգանքին: Յուրաքանչյուր օտարերկրյա ներդրողի մոտ պետք է ստեղծել համոզվածություն, որ հուսալիորեն կպաշտպանվեն նրա ներդրումներն ու շահերը, կապահովվեն գործող օրենսդրության պահանջները և անհրաժեշտ քայլեր կձեռնարկվեն դրանք կատարելագործելու ուղղությամբ:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ՀԺԿ-ն կնպաստի քաղաքակիրթ շուկայական հարաբերությունների կայացմանը: Տնտեսական համակարգում անհրաժեշտ է ազատ շուկան լավագույնս զուգորդել պետական կարգավորման հետ, առավելագույնս օգտագործել ազատ ձեռներեցության և պետության կողմից արտադրողներին աջակցություն ցուցաբերելու հնարավորությունները: Տնտեսության պետական կարգավորումը պետք է նպաստի համազգային նպատակների իրականացմանը, կրի ժողովրդավարական բնույթ: Այն պետք է ուղղված լինի շուկայական մեխանիզմների կատարելագործմանը և մրցակցության բացասական դրսևորումների չեզոքացմանը:

ա. Ներդրումների խթանում

Կուսակցությունը կողմնակից է արդյունավետ այն միջոցների իրականացմանը, որոնք կդյուրինացնեն ձեռնարկություններին տրվելիք երկարժամկետ վարկերի միջոցով կապիտալ ներդրումների իրականացումը՝բարձրացնելով ներդրողների շահագրգռվածությունը:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Ֆինանսական և բանկային համակարգի բարելավումը ՀԺԿ-ն համարում է իր տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը: Ի տարբերություն ժամանակակից լիբերալ արմատականների վարկային և դրամաֆինանսական բացառիկ կոշտ մոտեցումների, կուսակցությունն առաջարկում է համալիր միջոցառումներ, որոնք, չսահմանափակվելով դրամային ոլորտով, ներառում են նաև արտադրության և արտադրանքի սպառման ծավալների ընդլայնման ուղղությամբ անհրաժեշտ ձեռնարկումներ՝

- հարկային համակարգի բարեփոխում,
- տնտեսության մրցունակ մասնավոր հատվածի ձևավորում,
- հայրենական արտադրողի շահերի պաշտպանություն ու մրցունակության բարձրացում,
- սոցիալական ապահովագրման համակարգի բարեփոխում,
- բյուջետային ծախսերի և պետական գնումների արդյունավետության ապահովում,
- ներդրումային գործունեության աշխուժացում,
- ժամանակակից իրավական և տնտեսական համակարգի ստեղծում,
- պայմանագրային կարգապահության և ձեռնարկատիրական գործունեության պատասխանատվության ապահովում:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Այս ոլորտի զարգացման գործում կուսակցությունը գտնում է, որ պետությունը պետք է նպաստի ձեռնարկատիրության կայացմանն ու զարգացմանը, տնտեսական մրցակցության համար ապահովի հավասար պայմաններ:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

ՀԺԿ-ն կարևորում է փոքր ու միջին ձեռնարկատերերին համակողմանի սատարումը, ինչը նախատեսում է ապահովել նրանց պետական և այլ պատվերներով, վարկային և հարկային արտոնություններով:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Կուսակցությունը գտնում է, որ այս ոլորտում պետք է գործուն քայլեր ձեռնարկել աննախադեպ չափերի հասնող կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կուսակցությունը գտնում է, որ պետք է նպաստել կառավարման այնպիսի համակարգերի ստեղծմանը, որոնք կխթանեն իշխանության, պաշտոնատար անձանց լավագույն և առավել ճկուն աշխատանքը՝ պատնեշելով կամայականության դրսևորումները, կաշառակերության երևույթները: Անհրաժեշտ է մշակել և ընդունել հակակոռուպցիոն օրենսդրական փաթեթ:

թ. Արդյունաբերության զարգացում

ՀԺԿ-ի նպատակն է Հայաստանը դարձնել զարգացած արդյունաբերական երկիր, ապահովել ժամանակակից, բարձր տեխնոլոգիաներով, գիտատար և արտահանմանն ուղղված արտադրությունների առաջնահերթ զարգացումը, խրախուսել մտավոր գործունեությունը:

Պետք է խելամտորեն օգտագործել հանրապետության հանքահումքային ռեսուրսները, առկա կադրային ներուժը, ինչպես նաև ժամանակակից բարձրորակ մասնագետների պատրաստման հնարավորությունները:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Ագրարային քաղաքականության բնագավառում ՀԺԿ-ն հանդես է գալիս բարեփոխումների արդյունավետության ապահովման, գյուղատնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների և առաջավոր փորձի՝ պետական մակարդակով տարածման անհրաժեշտության օգտին:

Ագրարային բարեփոխումների փորձը, որը հիմնված էր հողակտորների մասնատման և սեփականացման վրա, ինքնըստինքյան չէր կարող ապահովել գյուղատնտեսության արդյունավետությունը, քանզի գյուղում սեփականատիրական հարաբերությունների ձևավորումն իրականացվեց հանպատրաստից և հապճեպ: Հողերի մասնատումը հանգեցրեց գյուղատնտեսական աշխատանքների արտադրողականության նվազեցմանը, արտադրության կազմալուծմանն ու ծախսերի մեծացմանը, ինչպես նաև գյուղատնտեսական տեղական ապրանքների մրցունակության շեշտակի անկմանը: Տնտեսության ագրարային հատվածում գոյություն ունեցող բացասական միտումների հաղթահարման նպատակով ՀԺԿ-ն առաջարկում է՝

- ստեղծել ճյուղային բանկերի արդյունավետ գործող ցանց՝ գյուղատնտեսական արտադրության անհրաժեշտ վարկավորման համար,
- լայնորեն կիրառել վարկերի հատկացում գալիք բերքի դիմաց,
- զարգացնել երկարաժամկետ կոոպերացիոն կապերը՝ կիրառելով ապրանքների գնման նախնական վճարման մեխանիզմ,

- ձևավորել գյուղմթերքի գնման, վերամշակման և պատրաստի արտադրանքը սպառողին հասցնելու ամբողջական համակարգ,
- ստեղծել գործուն ապահովագրական համակարգ՝ գյուղատնտեսությունը բնական աղետներից և արհավիրքներից պաշտպանելու համար,
- մշակել հատուկ ծրագրեր ոռոգման համակարգերի վերականգնման և զարգացման համար,
- անհարժեշտ պայմաններ ապահովել սերմնաբուծության և տոհմային անասնապահության զարգացման ուղղությամբ,
- համալիր միջոցներ գործադրել համաճարակների, հիվանդությունների կանխարգելման և բուժման, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարի ուղղությամբ,
- ստեղծել գյուղում ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման նոր արդյունավետ կառույցներ,
- ներդնել աշխարհում ընդունված գյուղմթերքների գնման պետական պատվերների պրակտիկան:

Կուսակցությունը գտնում է, որ ներքին շուկան արտասահմանյան մրցակցության բացասական դրսևորումներից զերծ պահելու համար անհրաժեշտ է գործուն միջոցներ կիրառել ներմուծվող մթերքների որակի վերահսկողության ուղղությամբ:

Հողօգտագործման ձևերի ընտրության խնդրում ՀԺԿ-ն մերժում է գաղափարայնացված քարացած մոտեցումները: Ելնելով ազգային ավանդույթներից, աշխարհագրական և բնակլիմայական յուրահատկություններից, տեղաբաշխվող արտադրության բնույթից՝ կարող են կիրառվել հողօգտագործման մասնավոր, խառը, կոլեկտիվ ձևեր: Այս կամ այն ձևի ընտրությունը որոշվում է ոչ թե քաղաքական-գաղափարական նախասիրությամբ, այլ բարձր արտադրողական աշխատանքի, հողի արդյունավետ օգտագործման երաշխիքով:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Աղքատության հաղթահարում

Այս ոլորտում ՀԺԿ-ն առանձնապես կարևորում է սոցիալական ապահովվածության հիմնահարցը: Կուսակցությունը կարևորում է նաև այն փաստը, որ աղքատության հաղթահարման ծրագրերը պետք է զուգորդվեն կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարի իրականացման հետ:

գ. Զբաղվածության ապահովում

Այս ոլորտում ներկա ժամանակաշրջանի կարևոր անելիքներից մեկը ՀԺԿ-ն համարում է աշխատանքի և զբաղվածության իրավունքի պաշտպանությունը: Պետությունը պետք է նպաստի զարգացման հեռանկար ունեցող ժամանակակից ճյուղերում նոր աշխատատեղեր ստեղծելուն:

դ. Արտագաղթի նվազեցում

Պետք է ձեռնարկել տնտեսական, սոցիալական համակողմանի միջոցառումներ գյուղական բնակչության սպառնալից հասնող արտահոսքի կանխման, սահմանամերձ բնակավայրերի կայունացման նպատակով:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Առողջապահության բնագավառում ՀԺԿ-ն պաշտպանում է յուրաքանչյուր քաղաքացու, անկախ անձնական եկամուտներից, անհրաժեշտ բուժօգնություն ստանալու օրենսդրորեն ամրագրված իրավունքը: Անվճար բժշկական ծառայությունը կապահովվի առողջապահության պետական համակարգի միջոցով: Բնակչության առողջության, կյանքի միջին տևողության ցուցանիշները պետք է հիմք հանդիսանան իշխանության գործունեության գնահատման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների ընտրության համար:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում սոցիալական ապահովագրման համակարգի բարեփոխումը:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կրթության բնագավառում ՀԺԿ-ն պաշտպանում է հնարավորությունների հավասարության սկզբունքը, որի կիրառմամբ յուրաքանչյուր դպրոցական, ուսանող, անկախ ընտանիքի նյութական հնարավորություններից, աշխատասիրության և ունակություններին համապատասխան կստանա անվճար կրթություն:

ՀԺԿ-ն կողմ է համընդհանուր միջնակարգ անվճար կրթությանը, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար կրթությանը՝ չբացառելով վճարովի կրթության հնարավորությունը:

Պետական կրթական հաստատությունների աշխատանքների որակի բարձրացմանը զուգընթաց անհրաժշտ է պայմաններ ստեղծել նաև ոչ պետական վճարովի ուսումնական հաստատությունների զարգացման համար՝ սահմանելով խիստ հսկողություն պետական պահանջներին և չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերի բարձր մակարդակն ապահովելու ուղղությամբ:

Կրթական ծրագրերի և կրթական հաստատությունների ձևերի բազմազանությունը ոչ միայն չպետք է բացառի, այլ պետք է նպաստի կրթական չափանիշների պահպանմանը: Կրթական համակարգը պետք է նպատակամղել բարձրակ կադրերով համալրմանը, մատաղ սերնդի հայեցի դաստիարակությանը:

ը. Գիտության զարգացում

ՀԺԿ-ն առաջնահերթ խնդիր է համարում գիտության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Կուսակցությունը ցուցաբերում է շահագրգռվածություն գիտության նվաճումներն արտադրության մեջ ներդնելու, բուհ-գիտություն կապն ամրապնդելու տեսական և հայագիտական ճյուղերի զարգացումը պետության հովանավորչությամբ ապահովելու նկատմամբ:

թ. Մշակույթ

Սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է հոգևոր կյանքի և մշակույթի վերածննդի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Այսօրվա գլոբալացվող աշխարհում ՀԺԿ-ն առանձնահատուկ կարևորություն է տալիս ազգային ինքնության պահպանմանը, պետական մակարդակով ազգային մշակույթի հովանավորչությանն ու զարգացմանը, մշակութային ժառանգության պահպանմանը:

Ողջունելով տարբեր երկրների հետ մշակութային փոխադարձ կապերը՝ ՀԺԿ-ն հանդես է գալիս հանուն մշակույթի համամարդկային, մնայուն արժեքների և ընդդեմ մեր ժողովրդի ազգային արժանապատվությունը վիրավորող կեղծ մշակույթի տարածման:

ՀԺԿ-ն ելնում է այն պարզ ճշմարտությունից, որ միայն պետականորեն խթանվող գործընթացի շնորհիվ է հնարավոր բազմապատկել համաշխարհային քաղաքակրթության գանձարանին հայ մշակույթի և գիտության ներդրումը:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Կուսակցությունը գտնում է, որ ժողովրդավարական ընտրությունների միջոցով իշխանության ձևավորումը ժողովրդավարական հասարակարգի անկյունաքարն է: Ցանկացած ոտնձգություն քաղաքացու ընտրական իրավունքի դեմ հանցագործություն է ժողովրդի և պետության հանդեպ: Ընտրական օրենսդրությունը խախտողները և ընտրությունների արդյունքները խեղաթյուրողները պետք է անխուսափելիորեն պատժվեն օրենքով սահմանված կարգով:

ՀԺԿ-ն երկրի ժողովրդավարացման կարևորագույն պայման է համարում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման և միմյանց հակակշռելու սկզբունքի իրականացումը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցությունը գտնում է, որ պետությունը պետք է լինի յուրաքանչյուր քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորն ու պաշտպանը: Կուսակցությունը բոլոր օրինական միջոցներով պայքարում է միջազգային փաստաթղթերով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

ՀԺԿ-ն գտնում է, որ պետք է բացառվի աշխատանքի պայմանների թելադրման, ձեռնարկատիրական գործունեության, մրցակցության և ազատ շուկայի վրա ճնշում գործադրելու ամեն մի ոտնձգություն: Այդ նպատակով կուսակցությունը կարևորում է գործող ընտրական և քաղաքացիական օրենսդրության կատարելագործումը, դատական համակարգի բարեփոխումը:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Ժողովրդավարական ընտրությունների միջոցով իշխանության ձևավորումը ժողովրդավարական հասարակարգի անկյունաքարն է: Ցանկացած ոտնձգություն քաղաքացու ընտրական իրավունքի դեմ՝ հանցագործություն է ժողովրդի և պետության հանդեպ: Ընտրական օրենսդրությունը խախտողները և ընտրությունների արդյունքները խեղաթյուրողները պետք է անխուսափելիորեն պատժվեն օրենքով սահմանված կարգով:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

ՀԺԿ-ն հանդես է գալիս Ազգային Ժողովի ընտրություններում 100% համամասնական ընտրակարգի օգտին և գտնում է, որ այն կնպաստի քաղաքական համակարգի կայացմանը: ՀԺԿ-ն հետևողականորեն զորակցում է գաղափարական հիմքի վրա քաղաքական դաշտի ձևավորմանը՝ հակադրվելով քաղաքականացված քրեական խմբավորումների ու հանցավոր կլանների ստեղծմանը:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում

Կուսակցությունը գտնում է, որ պետք է նպաստել կառավարման այնպիսի համակարգերի ստեղծմանը, որոնք կխթանեն իշխանության, պաշտոնատար անձանց արդյունավետ աշխատանքը՝ բացառելով կամայականության դրսևորումները:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը գտնում է, որ ՀՀ-ում ժողովրդագրական տագնապահարույց իրավիճակը հաղթահարելու նպատակով պետք է մշակել և իրականացնել ծնելիության աճի խթանմանը և ներգաղթի խրախուսմանն ուղղված պետական համալիր ծրագրեր՝ առաջնահատուկ աջակցություն ցուցաբերելով երիտասարդ և բազմազավակ ընտանիքներին:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Անհրաժեշտ է մշակել և իրականացնել բնական պաշարների ռացիոնալ օգտագործման պետական ծրագրեր, գործուն միջոցներ ձեռնարկել Սևանա լճի ջրային և բնապահպանական հավասարակշռության վերականգնման ուղղությամբ, արգելել Երևան քաղաքի և այլ բնակավայրերի կանաչ տարածքների ոչնչացումը և ձեռնամուխ լինել կորցրածը վերականգնելուն:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1999թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 145
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 16
- **2003թ. ընտրություններ**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 64
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 6

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1998թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2003թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ II Գումարում՝ 23
- ԱԺ III Գումարում՝ 5

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԿԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Զաքյան 10
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 54-19-17
- **Հիմնադրման տարեթիվը՝** 1991թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 30.11.1997թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 24.11.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 20000 անդամ
- **Կուսակցության պաշտոնական մամուլը՝** «Հայաստանի կոմունիստ» և «Правда Армении» պարբերականներ

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- ԿԿ պլենում՝ 81 անդամ
- ԿԿ բյուրո՝ 14 անդամ
- Կենտկոմի առաջին քարտուղար՝ Ռուբեն Գրիգորի Թովմասյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԿԿ-ն հասարակական քաղաքական միավորում է, որը ստեղծագործաբար իրականացնելով մարքսիզմ-լենինիզմի տեսության դրույթները՝ կամավոր հիմունքներով միավորում է հանրապետության քաղաքացիներին հանուն իր նպատակների կենսագործման: Կուսակցությունը պաշտպանում է բանվորների, գյուղացիների, մտավորականության և բոլոր աշխատավոր մարդկանց շահերը, պայքարում երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր ճգնաժամի լիակատար հաղթահարման, իրական ժողովրդավարության վերահաստատման և սոցիալիստական համակարգի վերականգնման համար՝ հանուն ՀՀ տնտեսական, քաղաքական և հոգևոր վերածննդի ու զարգացման, ժողովուրդների բարեկամության և սերտ համագործակցության գաղափարի վերածնման, մարդու սոցիալական ու քաղաքական բոլոր իրավունքների պաշտպանության:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Եվրաինտեգրում[5]

Կուսակցությունը դեմ է Եվրաինտեգրմանը:

բ. ԱՊՀ

Կուսակցությունը գտնում է, որ պետք է խորացնել ԱՊՀ-ի հետ հարաբերությունները:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)[5]

Կուսակցությունը գտնում է, որ ելնելով Հայաստանի շահերից պետք է համագործակցել ՀԱՊԿ-ի հետ:

դ. ՀԱԴԿ (NATO)[5]

Կուսակցությունը դեմ է ՀԱԴԿ-ի հետ ցանկացած տիպի համագործակցությանը:

ե. ԱՄՆ[5]

Կուսակցությունը կրկնակի դեմ է ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացման ցանկացած դրսևորմանը:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Կուսակցությունը կարևոր է համարում դարավոր պատմություն ունեցող ընկերական, տնտեսական և քաղաքական կապերի ամրապնդումը Ռուսաստանի հետ:

է. Թուրքիա[5]

Կուսակցությունը միանշանակ դեմ է Թուրքիայի հետ ցանկացած հարաբերությունների հաստատմանը:

ը. Ադրբեջան[5]

Կուսակցությունը գտնում է, որ Ադրբեջանի հետ հարաբերությունները հնարավոր են միայն հայանպաստ բանակցությունների դեպքում:

թ. Իրան[5]

Կուսակցությունը գտնում է, որ Իրանի հետ պետք է պահպանել և զարգացնել բարիդրացիական հարաբերությունները:

ժ. Վրաստան[5]

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում Վրաստանի հետ պահպանել և զարգացնել բարիդրացիական հարաբերությունները:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանը պետք է ընդգրկված լինի տարածաշրջանային ծրագրերում:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Ղարաբաղյան հիմնահարցը պետք է լուծվի ազգերի ինքնորոշման սկզբունքների պահանջագրով:

խ. Ցեղասպանության ճանաչում[4]

Կուսակցությունը գտնում է, որ աշխարհը պետք է ճանաչի հայերի ցեղասպանությունը: 21.01.05թ. ՀԿԿ-ի նախաձեռնությամբ ԱՊՀ երկրների կոմունիստական կուսակցությունները ճանաչել են հայոց ցեղասպանությունը:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Պետք է օգտագործել սփյուռքի ներուժը համահայկական խնդիրների լուծման և Հայաստանի զարգացման գործում:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Սոցիալական արդարություն:
2. Ժողովրդին վերադարձնել իշխանությունը և ապահովել արդար ընտրություններ:
3. Արտագաղթի կանխում և նոր աշխատատեղերի ստեղծում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Կուսակցությունը գտնում է, որ պետք է պետության ձեռքում կենտրոնացնել գերշահույթ բերող ճյուղերը և վերանայել սեփականաշնորհված ձեռնարկությունների իրական արժեքը: Կուսակցությունը կարևոր է համարում պետության տնտեսական դերի վերականգնումն ու ամրապնդումը գների և արտադրության կարգավորման, արտադրանքի և շահույթների բաշխման հարցերում:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունը պարտադիր է համարում ամբողջ տնտեսական համակարգի և իրականացվող տնտեսական ռազմավարության վերանայումը:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Պետք է ձևավորել այնպիսի արտաքին տնտեսական հարաբերություններ, որոնք կնպաստեն հայրենական արտադրության խթանմանը և տնտեսական համակարգի կայացմանը:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Ներդրումների խթանում

Անհրաժեշտ է նպաստել ներդրումների ծավալների մեծացմանը՝ պետության ձեռքում պահելով դրանց գլխավոր փաթեթը:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Կուսակցությունը հանրապետությունը տնտեսական ճգնաժամից դուրս բերելու և տնտեսության արդյունավետ զարգացման հիմնական պայմանը համարում է ԱՊՀ երկրների միասնական ֆինանսական համակարգի ստեղծումը ռուսական ռուբլու հիման վրա:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Պետության կարևոր խնդիրներից է ապահովել մրցակցային հավասար պայմաններ տնտեսվարող բոլոր սուբյեկտների համար:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Ոլորտի կարգավորման շրջանակում պետք է ստեղծվեն համատեղ ձեռնարկություններ՝ նպաստելով փոքր և միջին բիզնեսի զարգացմանը:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում[5]

Հայաստանը պետք է դուրս գա Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունից:

զ. Մարզերի համաչափ զարգացում[5]

Որպես պետական նշանակության խնդիր՝ կուսակցությունը կարևոր է համարում մարզերի համաչափ և հավասարակշռված զարգացումը:

է. Ստվերային տնտեսության կրճատում[5]

Անհրաժեշտ է վճռականորեն պայքարել ստվերային տնտեսության կրճատման համար:

ը. Կոռուպցիայի հաղթահարում[5]

Կոռուպցիայի հաղթահարման վճռական պայքարը պետք է տարածվի անխտիր բոլորի վրա:

թ. Արդյունաբերության զարգացում

Անհրաժեշտ է վերականգնել նախկին արդյունաբերական հզորությունները՝ շարունակելով ոլորտի ամբողջական զարգացումը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Պետք է նպաստել գյուղատնտեսության զարգացմանը: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում բարձրացնել մեխանիզացիայի և ագրոտեխնոլոգիայի մակարդակը:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Պետությունը պետք է ապահովի երկրի էներգետիկ անվտանգությունը:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Պետության ենթակայության տակ պետք է գտնվեն էլեկտրակայանները, քաղաքային և միջքաղաքային, երկաթգծային և օդային տրանսպորտը, պետության հիմքը հանդիսացող գործարանները, գիտա-արտադրական միավորումները, ինչպես նաև բոլոր գիտական, բժշկական և կրթական ձեռնարկությունները:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Աղքատության հաղթահարում

Աղքատության հաղթահարումը պետք է լինի սոցիալական քաղաքականության գերնպատակը: Կուսակցությունը պայքարելու է կենսաթոշակների, կրթաթոշակների և այլ սոցիալական օգնության ձևերի զգալի բարձրացման համար:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Կտրուկ քայլերով պետք է կրճատել և վերացնել հասարակության խավերի եկամուտների ներկայիս տարբերությունը:

գ. Զբաղվածության ապահովում

Զբաղվածության ապահովումը Հայաստանի համար ունի ռազմավարական նշանակություն, որի իրագործմանը պետք է ուղղված լինի պետական հստակ քաղաքականությունը:

դ. Արտագաղթի նվազեցում

Պետք է բոլոր ջանքերով վերացնել արտագաղթը:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Կուսակցությունն իր առաջնային խնդիրներից է համարում անվճար բուժսպասարկման համակարգի վերականգնումը և զարգացումը, որը պետք է ընդգրկի բնակչության բոլոր շերտերը:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը գտնում է, որ կրթությունը Հայաստանում պետք է լինի անվճար: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում վերականգնել բոլորի համար հասանելի անվճար բարձրագույն և միջին մասնագիտական կրթության համակարգը:

Կուսակցությունն ազգային դպրոցի զարգացումն ու կատարելագործումը աճող սերնդի դաստիարակման կարևոր պայման է համարում: Ուսուցչի հեղինակության բարձրացումն ու սոցիալական վիճակի բարելավումը կրթության համակարգի բարեփոխումների կարևոր գործոններն են:

ը. Գիտության զարգացում

Հայաստանին անհրաժեշտ է գիտության շեշտակի զարգացում: Գիտությունը պետք է լինի պետության հոգածության առարկա: Կուսակցությունը կարևոր պետական խնդիր է համարում հիմնարար, կիրառական և հումանիտար գիտությունների զարգացումը:

թ. Մշակույթ

Հայաստանին անհրաժեշտ է մշակույթի շեշտակի զարգացում: Մշակույթը պետք է լինի պետության հոգածության առարկա: Պաշտպանելով հայ ժողովրդի՝ դարերի ընթացքում ձևավորված ավանդույթները, մշակույթի զարգացումը համարելով առաջնային խնդիր՝ կուսակցությունն անհրաժեշտ է համարում այդ կարևոր ոլորտի ֆինանսավորումը պետական միջոցներից:

ժ. Սպորտ[5]

Հայաստանին անհրաժեշտ է սպորտի շեշտակի զարգացում: Սպորտը պետք է լինի պետության հոգածության առարկա:

ի. Այլ/եկեղեցի/

Կուսակցությունը մեծ նշանակություն է տալիս Հայ Առաքելական եկեղեցու գործունեությանը, որն ուղղված է ազգի պահպանմանը, ամբողջ աշխարհում հայ ազգի միասնության ամրապնդմանը:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է իշխանությունը փոխանցել ժողովրդին:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Պետք է ապահովվի խոսքի և տեղեկատվության ազատությունը՝ ձևական մոտեցումների փոխարեն կոնկրետ քայլերի իրականացմամբ:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Պետությունը պետք է լինի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորողը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը կարևորում է սոցիալական հասարակության և ժողովրդավարության վերականգնման հիման վրա անհրաժեշտ պայմանների ստեղծումը հայ ազգի ազգային անվտանգության ապահովման համար:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1995թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1999թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2003թ. ընտրություններ**

համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 26

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1991թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1996թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1998թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2003թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Մելիք-Ադամյան 2
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 56-21-51
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** hhk@hhk.am
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.hhk.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 02.04.1990թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 02.04.1990թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 14.05.1991թ.
- **Պետական. վերագրանցման ամսաթիվը՝** 17.02.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 55000 անդամ
- **Կուսակցության պաշտոնական մամուլը՝** «Հանրապետական» հանդես
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** www.hhk.am, 2003թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Խորհուրդ՝ 70 անդամ
- Գործադիր մարմին՝ 9 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Անդրանիկ Մարգարյան
- Խորհրդի նախագահ՝ Սերժ Սարգսյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀԿ-ն իր գործունեության նպատակներն ու խնդիրներն է համարում՝

- հայոց ազգային անկախ պետականության ամրապնդումը և զարգացումը,
- ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կերտումը,
- ՀՀ Սահմանադրության և օրենքների շրջանակներում՝ իշխանությունների կազմավորման գործընթացին, պետության կառավարմանը մասնակցելը,
- ՀՀ քաղաքական համակարգի կայունացմանն ու ամրապնդմանը նպաստելը,
- քաղաքացիական հասարակության կառուցմանն օժանդակելը:

Հայոց գերագույն նպատակը, որ իմաստավորումն է իր աստվածաստեղծ գոյության, հարատևումն է Հայրենիքում, հաստատումն իր կենսական ուժի, ստեղծագործ հանճարի ու ազատ կամքի: Այդ նպատակի իրագործման գրավականը Հայ ազգային գաղափարախոսությունն է, որում, ՀՀԿ-ի համոզումով, էական տեղ ունի Գարեգին Նժդեհի ուսմունքը: Հայ ազգային գաղափարախոսությունը կառուցվում է հայոց արժեհամակարգի ու պատմամշակութային փորձի զուգակցումով՝ ազգային և համամարդկային արժեքների համադրմամբ: Այն պետք է ամրապնդի հայության հավատը սեփական ուժերի ու ապագայի նկատմամբ և իբրև գաղափարախոսական համակարգ՝ մշտապես զարգացում ապրի:

Կուսակցությունը՝ գործելով ժողովրդավարության և նախաձեռնությունների ազատ դրսևորման սկզբունքներով, ձգտում է ժողովրդավարական ընտրությունների միջոցով ապահովել իր ներկայացուցչությունը ՀՀ Ազգային ժողովում և տեղական ինքնակառավարման մարմիններում. այդ ճանապարհով մասնակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանն ու պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններն են՝

1. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի կարգավորումը.
2. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը.
3. Եվրոպական ընտանիքին Հայաստանի լիարժեք ինտեգրումը և ռազմավարական գործընկերների հետ հարաբերությունների պահպանումն ու խորացումը:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Արտաքին քաղաքականության ոլորտում պետության գործունեությունը պետք է ուղղված լինի հարևան երկրների հետ բարիդրացիական և կայուն հարաբերությունների հաստատմանն ու պահպանմանը, միջազգային հանրությանը բնականոն ինտեգրմանը, նրանում Հայաստանի դերի մեծացմանը, աշխարհի բոլոր երկրների հետ փոխշահավետ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ կապերի զարգացմանը:

ա. Եվրաինտեգրում[5]

Եվրոպական Միության անդամ երկրների հետ փոխշահավետ համագործակցությամբ և եվրաընտանիքին լիարժեքորեն ինտեգրվելու նպատակային քաղաքականությամբ՝ նպաստել պետության համակողմանի զարգացմանը: Հարկավոր է առավել մեծ ուշադրություն դարձնել Եվրոպայի հարևանության քաղաքականության, Նոր հարևաններ ծրագրի իրականացմանը:

բ. ԱՊՀ[5]

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ԱՊՀ-ն զգալի դեր կատարեց նախկին խորհրդային հանրապետությունների միջև ձևավորված տնտեսական և ռազմաքաղաքական կապերի լիակատար փլուզումը կանխելու գործում: ՀՀԿ-ն կողմ է ԱՊՀ երկրների միջև եղած հարաբերությունների ամրապնդմանն ու հետագա խորացմանը՝ միևնույն ժամանակ արձանագրելով, որ կա ԱՊՀ-ի դերի վերաիմաստավորման անհրաժեշտություն:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)[5]

ՀՀԿ-ն կարևորում է և երկրի ակտիվ մասնակցությունն ԱՊՀ շրջանակներում ընթացող գործընթացներին և առաջնությունը տալիս է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը՝ որպես Հայաստանի անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրատարրերից մեկի:

դ. ՀԱՊԿ (NATO)[5]

ՀՀԿ-ն գտնում է, որ ՆԱՏՕ-ի հետ համագործակցության որակական զարգացումն անմիջականորեն բխում է մեր ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտությունից, և անհրաժեշտ է համարում շարունակել այդ

կազմակերպության հետ ՀՀ-ի համատեղ ծրագրերի իրականացումը: Հատկապես վերջին տարիներին Հայաստան–ՆԱՏՕ համագործակցությունն առարկայական պատկեր է ստանում՝ բարձրանալով լիովին նոր մակարդակի: Դա պայմանավորված է ոչ միայն Հայաստանի ցանկությամբ, այլև ՆԱՏՕ-ի կողմից նոր քաղաքականության որդեգրմամբ, Հարավային Կովկասն իր ռազմավարական շահերի շրջանակում ներառելու և գործընկերների հետ անհատական հարաբերություններ զարգացնելու որոշումներով:

ե. ԱՄՆ[5]

Անհրաժեշտ է զարգացնել ԱՄՆ-ի հետ հարաբերությունները՝ ձևավորելով փոխադարձ վստահության և համագործակցության առողջ մթնոլորտ:

զ. Ռուսաստանի Դաշնություն[5]

Անհրաժեշտ է պահպանել և խորացնել ձեռքբերված ռազմաքաղաքական, տնտեսական կայուն և փոխշահավետ դաշնակցային հարաբերությունները՝ առաջնորդվելով անվտանգության ապահովման առաջնահերթություններով:

է. Թուրքիա[5]

Հայ-թուրքական հարաբերությունները բնորոշվում են հետևյալ խնդիրներով.

- հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի շուրջ ստեղծված իրավիճակով,
- Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը հօգուտ Ադրբեջանի կարգավորելու Թուրքիայի ձգտումով:

Տվյալ սպառնալիքների չեզոքացումը հնարավոր է Թուրքիայի կողմից Հայաստանի նկատմամբ ոչ թշնամական վերաբերմունքի ձևավորման դեպքում:

ՀՀԿ-ն դեմ չէ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցմանը, քանի որ դա կստիպի առավել կանխատեսելի և վերահսկելի դարձնել այդ երկիրը, ժողովրդավարացնել այն և փոխել այդ երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները:

ը. Ադրբեջան[5]

Ադրբեջանի հետ Հայաստանի դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հետ: ՀՀԿ-ն կողմ է արտահայտվում բոլոր հարևանների հետ մեր երկրի բարիդրացիական, տնտեսական, կոմունիկացիոն հարաբերությունների ստեղծմանը, սակայն սա կախված չէ միայն Հայաստանից:

թ. Իրան[5]

ՀՀԿ-ն կողմ է Հայաստանի և Իրանի միջև հավասարակշռված հարաբերությունների պահպանմանը: Իրանի հետ ռազմաքաղաքական համագործակցությունը մեր երկրի քաղաքականության այն կարևորագույն մասն է, որը նպատակաուղղված է նաև իսլամական աշխարհում Հայաստանի նկատմամբ բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը:

ժ. Վրաստան[5]

ՀՀԿ-ն հայ-վրացական հարաբերությունները գնահատում է որպես Հարավային Կովկասում կայունության պահպանման կարևոր գործոն: Վրաստանի հետ մեր պետության հարաբերությունները բխում են երկու երկրների ռազմավարական շահերից և նպատակաուղղված են տարածաշրջանային ու եվրոպական ինտեգրմանը, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, ռազմական ոլորտներում կայուն և շարունակական համագործակցության զարգացմանը, այդ ոլորտները կարգավորող օրենսդրական դաշտի բարեփոխմանը:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն[5]

Կարևորելով տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցությունը, տարածաշրջանի երկրների հետ մշակութային, տնտեսական և քաղաքական կապերի ապահովումը՝ որպես տարածաշրջանի կայուն զարգացման երաշխիք՝ մեզ համար անընդունելի է այս ծրագրերում երկրի մասնակցության համար մեր որոշ հարևանների կողմից ներկայացվող նախապայմանները:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր[5]

- Պետք է միջազգայնորեն ճանաչվի ԼՂՀ-ի ժողովրդի ինքնորոշման իրավունքը,
- ԼՂՀ-ն չպետք է լինի Ադրբեջանի ենթակայության ներքո,
- պետք է ապահովվի ԼՂՀ-ի բնակչության և սահմանների անվտանգությունը,
- ՀՀ-ն և ԼՂՀ-ն պետք է ունենան ընդհանուր սահման,
- ԼՂՀ-ի հարցի կարգավորումը չպետք է տեղի ունենա ՀՀ սահմանների փոփոխման հաշվին,
- հարցի խաղաղ կարգավորման գործընթացում ԼՂՀ-ն պետք է հանդես գա որպես բանակցային կողմ:

խ. Ցեղասպանության ճանաչում[5]

Հայոց ցեղասպանության ճանաչումը կուսակցությունը դիտարկում է պատմական արդարության վերականգնման, Թուրքիայի կողմից իր անցյալի վերաարժեվորման, դրանով իսկ նոր ոտնձգությունների բացառման համատեքստում:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Պետությունը պետք է բարենպաստ պայմաններ ստեղծի սփյուռքահայության ներուժի համախմբման համար՝ ի նպաստ Հայոց պետության հզորացման և Սփյուռքի արժանապատիվ գոյատևման՝ հիմնական նպատակ ունենալով սփյուռքահայության վերադարձը Հայրենիք:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

Հայ իրականության մեջ գործող բոլոր հասարակական, քաղաքական ուժերի, անհատների հետ Հայաստանի Հանրապետական կուսակցությունն իր հարաբերությունները կառուցում է ազգային և պետական շահերի առաջնայնության սկզբունքով, որոնք բարձր է դասում անձնական և հատվածական շահերից:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում[5]

Պետությունը պետք է հանդես գա որպես խաղի կանոններ սահմանող և միևնույն ժամանակ որպես գործընկեր՝ տնտեսվարող սուբյեկտների հետ փոխհարաբերություններում:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝[5]

Հայոց պետության տնտեսական քաղաքականությունը պետք է հիմնված լինի համաշխարհային փորձի վրա՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները: Պետությունը պետք է ապահովի տնտեսության պետական և

մասնավոր հատվածների արդյունավետ համագործակցության համար նպաստավոր պայմաններ՝ հանդես գալով որպես սեփականության բազմաձևության և ազատական տնտեսական համակարգի զարգացման երաշխավոր:

ա. Դրամավարկային

Անհրաժեշտ է Կենտրոնական բանկի հիմնական խնդրի՝ գների կայունության ապահովման առավել հուսալի մեխանիզմների կիրառում: Տնտեսության զարգացման համար անհրաժեշտ երկարատև ներդրումային ռեսուրսների կուտակում, տնտեսության իրական հատվածում բանկային համակարգի մասնակցության զգալի մեծացում: Հարկավոր է կատարելագործել բանկային ավանդների երաշխավորման համակարգը, նվազեցնել վարկային տոկոսադրույքները, մեծացնել հիպոթեկային վարկավորման մատչելիությունը, կատարելագործել արժութային շուկայի վերահսկողության մեխանիզմները:

Պետք է իրականացնել կանխիկ դրամաշրջանառության զգալի նվազեցման ծրագիր:

բ. Բյուջետային

Պետական բյուջեի կանոնավոր կատարման ապահովումը և բյուջեի հանդեպ հարկային պարտավորությունները չկատարելու հարցում անհանդուրժողականությունը պետք է հանդիսանան բյուջետային քաղաքականության բնագավառում պետության գործունեության հիմնական բնութագրիչները: Առանց հարկային բեռի մեծացման՝ լիարժեքորեն պետք է օգտագործվեն բյուջեի եկամուտների ընդլայնման և ծախսերի արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

գ. Հարկային և մաքսային

Պետությունը պետք է ապահովի հարկման բեռի արդարացի և համամասնական բաշխումը, հարկային և մաքսային օրենսդրության անվերապահ կիրառումը բոլոր հարկատուների նկատմամբ: Կոշտ վերահսկողություն պետք է սահմանվի հարկային պարտավորությունների չկատարման, հակաօրինական գործունեության, ստվերային տնտեսական գործարքների նկատմամբ՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ:

Կարևորելով հարկային բեռի աստիճանական թեթևացումը՝ պետությունը, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմամբ և հարկային ու մաքսային ծառայությունների որակի բարելավմամբ, պետք է միջոցներ ձեռնարկի հարկման բազայի ընդլայնման համար:

Հարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի բյուջետային մուտքերի մեջ ուղղակի հարկերի տեսակարար կշիռն էականորեն մեծացնելուն: Երաշխավորելով տնտեսվարող սուբյեկտների իրավունքները՝ պետությունը իր հարկային քաղաքականությամբ պետք է տարբերակված մեխանիզմներ ստեղծի արտադրական փոքր և միջին ձեռնարկությունների հարկման համար:

ե. Ճյուղային

Շարունակելով պահպանել տնտեսության ներկայիս գերակա ճյուղերի առաջընթացը՝ հարկավոր է զարգացնել նաև տնտեսության մյուս ճյուղերը: Կարևորելով ժամանակակից բարձր տեխնոլոգիաների դերը տնտեսության զարգացման գործում՝ պետությունը պետք է խթանի վերջիններիս կիրառումը տնտեսության ավելի թույլ տեմպերով զարգացող ոլորտներում:

զ. Տարածքային

Անհրաժեշտ է հստակ սահմանազատել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորություններն ու պատասխանատվությունը: Պետությունը պետք է ապահովի տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունն ու պաշտպանվածությունը՝ ընդլայնելով վերջիններիս լիազորությունները: Հարկավոր է բարելավել համայնքային բյուջեներին տրվող պետական օժանդակության մեխանիզմները, կատարելագործել ֆինանսական համահարթեցման մեխանիզմները՝ ըստ եկամուտների կամ ծախսերի ցուցանիշների տարբերակելով համայնքներին ցուցաբերվող օժանդակությունը:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Անհրաժեշտ է պահպանել ավանդական շուկաները և քայլեր ձեռնարկել մեր երկրում արտադրվող ապրանքների սպառման նոր շուկաներ ապահովելու ուղղությամբ:

ը. Վճարային (առևտրային) հաշվեկշիռ

Երկրի կայուն տնտեսական զարգացումն ապահովելու նպատակով՝ խելամիտ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության միջոցով, հարկավոր է պահպանել հավասարակշռված առևտրային հաշվեկշիռ: Ըստ երկրի տնտեսության զարգացման ուղղության ապահովել արտաքին առևտրային հաշվեկշռի համապատասխան սալդո:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝[5]

Տնտեսական քաղաքականության գերակա նպատակ համարելով տնտեսական կայուն աճի տեմպերի պահպանումը՝ տնտեսական քաղաքականության հիմքում որպես միջնաժամկետ խնդիր, անհրաժեշտ է ապահովել ամենամյա տնտեսական աճ: Տնտեսական աճը պետք է ուղեկցվի բնակչության զբաղվածության ավելացմամբ և ուղղվի աղքատության կրճատմանը:

ա. Ներդրումների խթանում

Պետությունն առավելապես մեծ ուշադրություն պետք է դարձնի արտաքին ներդրումների ներգրավմանը՝ շեշտը դնելով նախևառաջ սփյուռքահայ ներդրողների վրա, ինչպես նաև ներքին խնայողությունները և ներդրումները խրախուսելու հարցերին՝ ապահովելով բարենպաստ տնտեսական միջավայր: Ներդրումների ֆինանսավորման հնարավորություններն անհրաժեշտ է դիտարկել ինչպես բանկային համակարգի, այնպես էլ կապիտալի շուկայի զարգացման տեսանկյունից:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Առողջ մրցակցային դաշտ ձևավորելու նպատակով՝ պետությունը պետք է վճռական քայլեր ձեռնարկի շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող ընկերությունների կողմից շուկայում զբաղեցրած դիրքը չարաշահելու հնարավորությունները սահմանափակելու ուղղությամբ:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Գիտակցելով հասարակությունում միջին խավի կարևորությունը պետության կայուն զարգացման ապահովման գործում՝ պետությունը պետք է առավելապես օժանդակի փոքր և միջին բիզնեսի վերջնական կայացմանը: Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ է կատարելագործել այս ոլորտի աջակցության

համար ստեղծված հիմնադրամների գործունեության մեխանիզմները՝ ապահովելով տնտեսվարող համապատասխան սուբյեկտներին մատուցվող ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Պետությունը պետք է վարի այնպիսի քաղաքականություն, որը կապահովի հանրապետության բոլոր մարզերի համաչափ զարգացումը: Այս առումով առավելապես կարևորվում է հազարամյակի մարտահրավերներ կորպոռացիայի միջոցով իրականացվելիք ծրագրերի արդյունավետությունը:
Երկրի և տնտեսության ներդաշնակ զարգացման նպատակով պետք է խրախուսել արտադրական ձեռնարկությունների հիմնումը մայրաքաղաքից դուրս:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Պետությունը պետք է շարունակի ստվերային տնտեսության կրճատելուն ուղղված համակարգված քաղաքականությունը, ինչը կապահովի երկրի բյուջեի մուտքային մասի ավելացումը՝ ապահովելով բնակչության սոցիալական վիճակի բարելավումը և աղքատության կրճատմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիայի հաղթահարմանն ուղղված առաջնահերթ ծրագրերը պետք է բացահայտեն այն ծնող և դրա տարածումը խթանող պատճառներն ու պայմանները: Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի ցանկացած օրենքում կամ իրավական ակտում կոռուպցիոն տարրերի բացառումը: Պետության կողմից իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականությունը պետք է ուղղված լինի հանրապետությունում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը, որն էլ իր հերթին կնպաստի ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության և իրավական պետության հիմնավոր հաստատմանը, ազատ տնտեսական մրցակցությանը, տնտեսական զարգացմանն ու աղքատության նվազեցմանը:

թ. Արդյունաբերության զարգացում

Հարկավոր է քայլեր ձեռնարկել համախառն ներքին արդյունքում արդյունաբերության տեսակարար կշիռը մեծացնելու ուղղությամբ: Այս նպատակով՝ անհրաժեշտ է ապահովել գործարարության համաչափ զարգացումն ամբողջ հանրապետության տարածքում, խրախուսել ներմուծվող ապրանքների փոխարինումը որակյալ տեղական արտադրանքով, խթանել ներդրումները գիտատար արտադրություններում:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Գյուղատնտեսության և վերամշակող արտադրության զարգացումը պետք է առավելապես ուղղված լինի բնակչությանը հայրենական արտադրության սննդամթերքով ապահովելուն: Հայկական ապրանքանիշը պետք է լինի բարձր որակի անվերապահ երաշխիք:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Երկրի էներգետիկ անվտանգության համար անհրաժեշտ է էներգիայի ներկրման աղբյուրների բազմազանության ապահովում: Էներգիայի եղած աղբյուրները հարկավոր է համալրել էներգիայի այլընտրանքային աղբյուրներով:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Անհրաժեշտ է ընդլայնել տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված տարածաշրջանային նախաձեռնություններին Հայաստանի մասնակցությունը: Հայաստանի երկաթուղիների կառավարումը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին՝ երկաթուղային գործունեությունը շահութաբեր դարձնելու նպատակով: Ավարտին հասցնել Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտի բարեփոխումները և ընդլայնել այլ երկրների հետ Հայաստանի օդային կապը: Իրականացնել միջպետական և միջմարզային ավտոճանապարհների պահպանման և ներմարզային ճանապարհների վերականգնման և կառուցման ծրագրեր: Մեծացնել էներգետիկ հզորությունները, խթանել էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործման՝ հիդրոկայաններից և քամուց ստացվող էլեկտրաէներգիայի արտադրությունների զարգացումը: Հիմնանորոգել ջրամբարները, լիարժեքորեն գործարկել և զարգացնել ոռոգման համակարգերը՝ գյուղատնտեսության պահանջների լիակատար բավարարման նպատակով: Անհրաժեշտ է շարունակաբար բարելավել ջրային տնտեսության կառավարման ու ջրամատակարարման արդյունավետությունը, աջակցել փոքր հզորության, տեղային ջրամատակարարման համակարգերի ներդրմանը:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում

Հաշվի առնելով գիտական մեծ ներուժի առկայությունը՝ պետությունն առանձնակի պետք է կարևորի ինովացիոն ձեռնարկատիրության զարգացումը՝ բացառիկ հնարավորություններ ընձեռելով գիտատեխնիկական ստեղծագործական ներուժի և նախաձեռնությունների առավելագույն դրսևորմանը:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Հայոց պետության գլխավոր հարստությունն ազգի և պետության հանդեպ պատասխանատվության գիտակցում ունեցող մարդն է՝ իր ֆիզիկական, մտավոր և բարոյական ներուժով: Պետությունը պետք է ապահովի իր քաղաքացիների անվտանգությունը, պաշտպանի նրանց արժանապատվությունը, երաշխավորի անհատի իրավունքների և ազատությունների զարգացումը, կարողությունների լիարժեք իրացումը:[5]

ա. Աղքատության հաղթահարում[5]

Պետության բնականոն զարգացման, ինչպես նաև սպառնացող վտանգները կանխարգելելու և բնակչության մեծամասնության կենսապահովման ու սոցիալական պայմանների բարելավման նպատակով՝ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի աղքատության հաղթահարման համար, որպեսզի այն դադարի երկրի տնտեսական, սոցիալական ու մարդկային առաջադիմությունը արգելակող և հասարակությունը կազմալուծող գործոն լինելուց: Աղքատության հաղթահարման արդյունավետ համակարգի ստեղծումը կապահովի հասարակության բևեռացման նվազեցումը:

գ. Զբաղվածության ապահովում[5]

Աշխատանքի և զբաղվածության բնագավառում պետությունը պետք է հավասար պայմաններ ստեղծի աշխատունակ և աշխատել ցանկացող մարդկանց ներուժը լիովին օգտագործելու նպատակով: Պետությունը, պետք է կարգավորի պետություն-գործատու-աշխատող եռակողմ հարաբերություններն այնպես, որ աշխատող անհատի եկամուտները երաշխավորեն նրա արժանապատիվ կյանքը և վստահությունն ապագայի նկատմամբ:

դ. Արտագաղթի նվազեցում[5]

Երկրից արտագաղթի տեմպերը նվազեցնելու համար, հարկավոր է շարունակել պահպանել տնտեսական աճի բարձր տեմպերը, շարունակաբար ավելացնել բյուջեից սոցիալական ոլորտներին ուղղվող միջոցները: Կարևոր է նաև երկրում բարոյահոգեբանական այնպիսի մթնոլորտի ձևավորումը, որի պայմաններում Հայ մարդն իր և իր երեխաների ապագան կտեսնի Հայրենիքում:

ե. Առողջապահական համակարգի բարելավում[5]

Անհրաժեշտ է մշակել և իրականացնել հիվանդությունների կանխարգելման համալիր ծրագիր՝ որպես առողջապահական խնդիրների լուծման կարևոր գործոն: Սոցիալապես անապահով անձանց բժշկական օգնությունն ու սպասարկումը պետք է իրականացնել բացառապես պետական պատվերի շրջանակներում: Հարկավոր է լիարժեք պայմաններ ստեղծել գյուղական բնակավայրերի առաջնային բուժօգնության ապահովման համար: Անհրաժեշտ է բուժական հաստատությունների միջև պետական պատվերի տեղաբաշխման և պետական պատվերի հատկացման կոնկրետ սկզբունքներ սահմանել: Զգալիորեն մեծացնել առողջապահության ոլորտում կատարվող բուջետային ծախսերի արդյունավետությունը՝ բժշկական օգնության նախատեսվող ծավալների, կառուցվածքի և ֆինանսական միջոցների փոխկապակցվածությունն ապահովող կոնկրետ սկզբունքների կիրառման հիման վրա:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում[5]

Պետությունը պետք է ապահովի եկամուտների արդարացի և համաչափ բաշխում քաղաքացիների ու սերունդների միջև: Տարեցները պետք է ունենան ապահովված ծերություն, երիտասարդները՝ աջակցություն, կյանք մտնելիս, աշխատող մարդը՝ իր եկամուտներով արժանապատիվ ապրելու հնարավորություն: Հարկավոր է իրականացնել երրորդ և ավելի երեխաների ծնունդը խրախուսելուն և կենսապայմանների բարելավմանն ուղղված ծրագրեր: Անհրաժեշտ է մշակել և իրագործել ազատամարտիկների և պատերազմի վետերանների, նրանց ընտանիքների կենսապայմանների բարելավման հատուկ ծրագրեր:

Ապահովել պետական բյուջեի սոցիալական ուղղվածության շարունակական խորացում:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կրթությունը պետք է անհատին տա խոր և բազմակողմանի գիտելիքներ՝ միաժամանակ ապահովելով այն բանի գիտակցումը, որ դրանք պետք է ծառայեն ինչպես անձնական բարօրությանը, այնպես էլ Ազգի և Հայրենիքի հզորացմանը: Կրթության համակարգը պետք է ձևավորի մարդկային և ազգային բարձր արժեքներ դավանող սերունդ՝ հաղորդակից մարդկայնորեն վեհ հայոց հոգևոր, գաղափարական և բարոյական արժեքներին, նախնիների մեծագործություններին ու կորուստներին՝ պարզաբանելով մարդկության զարգացման այն օրինաչափությունը, թե մեծագործությունները պայմանավորված են ժողովուրդների ոգու, որով և գաղափարի ազնվությամբ ու զորությամբ, իսկ կորուստները՝ դրանց թուլությամբ: Պետությունը պետք է անվճար միջնակարգ ուսման հնարավորություն ապահովի բոլորի համար և հովանավորի առավել օժտվածների բարձրագույն կրթությունը:

ը. Գիտության զարգացում

Գիտությունն ու մշակույթը պետք է ծառայեն ազգի հոգևոր և նյութական արժեքների վերականգնմանը, պահպանմանն ու զարգացմանը, բացահայտեն հայի տոհմիկ կերպարը, աշխարհընկալումը և կենսակերպը: Մշակույթն ու գիտությունը պետք է իրականացնեն ազգային ավանդույթների ու գիտատեխնիկական առաջընթացի զուգակցումը՝ մեր երկրի համար աշխարհում ապահովելով բարոյահոգեբանական, մտավոր և տեխնոլոգիական առաջնակարգ դիրքեր:

Կրթությունը, գիտությունը և մշակույթը պետք է լինեն պետական հոգածության հիմնական առարկա:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Պետք է իրականացնել հասարակական միավորումների ու կառույցների գործունեությունը խրախուսող ծրագրեր՝ քաղաքացիական հասարակության ամրապնդման և զարգացման համար նպաստավոր պայմաններ ապահովելու նպատակով: [5]

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում[5]

Անհրաժեշտ է երկրի օրենսդրությունում և քաղաքական համակարգում արմատավորել իշխանության թևերի միջև հակակշիռների ու զսպումների լիարժեք համակարգ ձևավորելու սահմանադրական երաշխիքները: Հարկավոր է ընդլայնել պետական կառավարման համակարգի նկատմամբ քաղաքացիական հասարակության ինստիտուտների վերահսկողական գործառույթները:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում[5]

Հարկավոր է իրական քայլեր ձեռնարկել Միջազգային կոնվենցիաներով և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված խոսքի և տեղեկատվության ազատության մասին հիմնարար դրույթները քաղաքական և հասարակական հարաբերություններում կիրարկելու ուղղությամբ:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում[5]

Պետությունը պետք է ապահովի մեր սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը: Այս նպատակով կարևորվում է Օմբուդսմենի ինստիտուտի, Սահմանադրական դատարանի և դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում[5]

Լիովին անկախ և անաչառ դատական համակարգի ձևավորումը պետական կառավարման համակարգի զարգացման հիմնախնդիրներից մեկն է և իրավունքի գերակայության ապահովման հիմքը՝ որպես պետության նկատմամբ հասարակության վստահության կարևոր երաշխիք:

Դատական համակարգի բարեփոխումների վճռորոշ փուլի իրականացման հիմնական նախադրյալներն են սահմանադրական փոփոխությունների ստեղծած հնարավորությունները:

ե. Ընտրական համակարգի բարելավում[5]

Կարևորելով ընտրությունների դերը ժողովրդավարության զարգացման և ամրապնդման գործում՝ պետությունը պետք է բավարար պայմաններ ստեղծի ընտրական գործընթացներում ընտրական օրենսգրքի դրույթների անխափան կիրարկման համար:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Պետությունը պետք է աջակցի իրական քաղաքական մրցակցություն ապահովող լիարժեք բազմակուսակցական համակարգի կայացմանը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի և հասարակության վստահության ապահովման գլխավոր նախապայման:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները[5]

Պետական, քաղաքական և հասարակական բոլոր կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ՝ պետք է իրականացնել ազգային անվտանգության ռազմավարության շրջանակներում նշված արտաքին և ներքին սպառնալիքների չեզոքացմանն ուղղված համալիր ծրագրեր:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Պետությունը պետք է արդյունավետ միջոցառումներ իրականացնի իր քաղաքացիների կենսապահովման պայմանների բավարարման համար անհրաժեշտ միջավայր ստեղծելու ուղղությամբ, ըստ արժանվույն գնահատի նրանց վաստակը Հայրենիքի առջև:

Հայ հասարակության հիմքն ավանդական ընտանիքն է: Ամուր և առողջ ընտանիքների ձևավորումը, ընտանիքում ազգային-ավանդական արժեքների պահպանումն ու զարգացումը պետք է լինեն պետության կարևորագույն խնդիրներից մեկը:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները[5]

Բնապահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել բնական պաշարների ուսումնասիրության, պահպանության, վերարտադրության և օգտագործման ամբողջական և համակարգված պետական քաղաքականություն: Պետության կողմից պետք է մշակվեն՝ բնական պաշարների օգտագործման արտոնագրման ու վճարովի տրամադրման, բնությանը պատճառած վնասի փոխհատուցման համակարգերի զարգացումն ու կատարելագործումը, հանրապետությունում էռոզիոն գործընթացների աճի դադարեցմանը, սողանքային գործընթացների նվազեցմանն ու հողերի վերականգնմանն ուղղված ծրագրերը: Անհրաժեշտ է հստակ միջոցներ ձեռնարկել անտառապատման և անտառավերականգնման ծավալների աճի ապահովման նպատակով: Հաշվի առնելով Սևանա լճի բացառիկ դերը երկրի բնապահպանական և գյուղատնտեսական բնագավառներում՝ Սևանի մակարդակի նվազմանը սպառնացող վտանգի վերացումից հետո անհրաժեշտ է մշակել և իրագործել Սևանի ավազանի բնապահպանական համալիր խնդրի լուծմանն ուղղված ծրագիր:

4.12. Այլ /Եկեղեցի/

Բարձր գնահատելով Հայ Առաքելական եկեղեցու դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, հայոց լեզվի ու մշակույթի, դրանով իսկ՝ հայության միասնության պահպանման գործում, ՀՀԿ-ն այն համարում է հայ ինքնության անբաժան մաս և ազգային աշխարհասփյուռ կառույց, որն իր դավանաբանությամբ, նվիրապետությամբ կոչված է ծառայելու Աստծուն և Ազգին:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1995թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 4
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 4
- **1999թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 63
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 38
- **2003թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 120
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 21

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1991թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1996թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1998թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2003թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ I Գումարում՝ 5
- ԱԺ II Գումարում՝ 30
- ԱԺ III Գումարում՝ 44

17. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ» (ՀՄԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Ավան, 12 Պոլիկլինիկա
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 62-37-30, 62-05-79
- **Հիմնադրման տարեթիվը՝** 20.08.1899թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 29.06.1997թ
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 12.09.1997թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝**15.11.2004թ
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման պահին՝** 7500 անդամ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Առավոտ» օրաթերթ, «Հայկական ժամանակ» օրաթերթ (ծրագիրը), 1997թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Պլենում՝ 50
- Կենտրոնական բյուրո՝ 7
- Կուսակցության նախագահ՝ Դավիթ Հակոբյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ[1]

Հայաստանի Մարքսիստական Կուսակցությունը Գ.Վ. Պլեխանովի մարքսիստական խմբակների հետնորդն է: Այս կուսակցությունը պատկանում է դասական կուսակցությունների շարքին: Հիմնադրվել է 1899թ. օգոստոսի 20-ին Ջալալօղլիում՝ Ստեփանավանում: Պլեխանովյան մարքսիզմը Բոլշևիկյան մարքսիզմից տարբերվում է նրանով, որ կողմնակից է հասարակարգերի էվոլուցիոն կոնվերգենցիայի՝ փոխակերպմանը, այլ ոչ թե լենինյան թռիչքաձև զարգացմանը: Սա Մարքսիզմի սոցիալ-ռեֆորմիզմի բանակն է: Եթե Բոլշևիկյան մարքսիզմն արտադրաեղանակի հիմքում տեսնում է միայն պետական սեփականությունը, ապա Պլեխանովյան մարքսիզմն արտադրաեղանակը ձևավորում է սեփականության բոլոր ձևերի ներդաշնակ համագործակցության հիման վրա: Փաստորեն կուսակցության հիմքը հանդիսանում է 1883թ-ին Ժենևում Պլեխանովի ստեղծած առաջին մարքսիստական խմբակը: Կանոնադրության խնդիրն է լայն ժողովրդական զանգվածներին ծանոթացնել մարքսիզմի սկզբունքներին՝ որպես քաղաքական պայքարի հզոր գաղափարական զենք, արտադրական ուժերի զարգացման՝ որպես հասարակագիտական ուսմունք, որն անընդհատ գտնվում է ստեղծագործական դինամիզմի մեջ: Ըստ կանոնադրության, անդամակցությունը կատարվում է ոչ թե սոցիալական պարտադրանքի մեթոդներով, այլ բացառապես հիմնված է կամավոր սկզբունքների վրա: Այն իր մեջ միավորում է ամենագիտակից մասսաներին: Այդ կապակցությամբ սա Հայաստանում միակ գիտական, էլիտար տիպի կուսակցությունն է:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[1]

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Դիվանագիտական ճկուն և բանիմաց ուղեղների նախապատրաստում (մեծ տեղ տալ կին դիվանագետներին):
2. Վարել սկզբունքորեն անկախ, ոչ բևեռացված, արտաքին շահերից թելադրվող արտաքին քաղաքականություն:
3. Միշտ արտաքին քաղաքականություն ձևավորել իմպերիալիստական երկրների քաղաքական հակասությունների վրա: Այդ հակասությունները ծառայեցնել ազգային շահերին:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Եվրահինտեգրում

Եվրոպական քաղաքական արժեքային համակարգն անհրաժեշտ է օգտագործել ազգային հայեցակարգի ճարտարապետության համար, որպես շինանյութ իր այն արժեքային համակարգով, որը չի հակասում ազգային շահերին:

բ. ԱՊՀ

ԱՊՀ երկրների ինտեգրացիա էվոլուցիոն նոր սկզբունքներով, նոր գերքաղաքական համաստեղության ստեղծում, ի հակակշիռ Եվրամիության պանամերիկյան հեգեմոնիզմի:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Կուսակցությունը գտնում է, որ հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը պարտադիր է: Այդ կազմակերպությունը պատմական անհրաժեշտություն է ֆիզիկական և կենսաբանական անվտանգության առումով:

դ. ՀԱԴԿ (NATO)

NATO-ն մեր ազգային շահերի հետ ոչինչ չունի: NATO-ի հետ կեղծ քաղաքական ռևերանսներ ՀՄԿ-ն չի ընդունում:

ե. ԱՄՆ

Կուսակցությունն ԱՄՆ-ն դիտում է, որպես ժամանակի արևմտյան Բաբելոն, համաշխարհային ժանդարմ, որը պատրաստ է իր տնտեսական անվտանգության համար լոկալ պատերազմներից մինչև համաշխարհային պատերազմը սանձազերծելը, պետություններ և ժողովուրդներ կործանել հանուն ամերիկյան կապիտալի շահերի: Դեմոկրատների իշխանության գալը Հիլարի Քլինթոնի ղեկավարությամբ պատմական անհրաժեշտություն է Ամերիկյան ագրեսիվ և ռեգրեսիվ քաղաքականությունը սանձելու համար:

զ. Ռուսաստանի Դաշնություն

ՌԴ-ն այսօր կարելի է բնորոշել հետևյալ կերպ՝
Ռուսաստանի զինանշանի երկգլխանի արծիվ, որը հպարտ նայում է դեպի արևելք և արևմուտք՝ առանց հանրապետությունների, առանց թևերի. հանրապետություններն առանց Ռուսաստանի, առանց արծվի գլխի:

է. Թուրքիա

Թուրքիայի հետ արտաքին քաղաքականությունը պետք է լինի կոշտ: Չեղյալ հայտարարել 1921թ-ին պատմական Հայաստանը մասնատող թուրք-բոլշևիկյան երեք անեքսիոն պայմանագրերը, որպեսզի Արցախյան հիմնահարցը

դիտվի, որպես ապագա խնդրո առարկա, իսկ Թուրքիան եղեռնի առումով կրի տարազգային նյութական պահանջատիրության պատասխանատվություն:

ը. Ադրբեջան

Հայաստանի դիրքորոշումը պետք է լինի կոշտ. Ամեն ինչ կամ ոչինչ սկզբունքով, այսինքն՝ տալ ազատագրված 7 գավառները, ամերիկյան քաղաքական թելադրանքով, կնշանակի տալ Սովետական Ղարաբաղը: ՀՄԿ-ն պահանջում է պատմական Արցախի պատմաաշխարհագրական միջավայրի տարածքային ամբողջականությունը: Չկան մեծ իմպերիաները, կորչեն փոքր իմպերիաները:

թ. Իրան

ՀՄԿ-ն վստահ է, որ Իրանի հետ Հայաստանի հարաբերությունները պետք է լինեն ջերմ, լոյալ, ճկուն, որպես աշխարհի հետ կապող կարևոր միակ նավիգացիոն տրանզիտ երկիր:

ժ. Վրաստան

Վրաստանի հանդեպ պետք է վարել կոշտ քաղաքականություն, հատկապես անզիջում լինել Ջավախքի հարցում: Պլանավորել Ռուս-Իրանական ցամաքային և Կասպյան նոր նավիգացիոն ենթակառույց՝ Վրաստանը շրջանցելու և Ռուսաստանի հետ կապվելու համար:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Այդպիսի հասկացողություն կուսակցությունը չի ընդունում:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

ՀՄԿ-ն Արցախյան հիմնահարցը դիտում է, որպես Բրեստլիտովսկյան չորրորդ կետի անմիջական շարունակությունը կազմող 1921թ-ին Հայաստանը մասնատող թուրք-բոլշևիկյան երեք անեքսիոն պայմանագրերի հետևանքով առաջացած ապագաղութացման խնդրո առարկա, որպես Արցախահայության ֆիզիկական և կենսաբանական անվտանգության ապահովման համար երկրորդ հայկական անկախ պետության ստեղծման անհրաժեշտություն, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: Արցախյան պատերազմը ՀՄԿ-ն դիտում է, որպես ազատագրական, հայրենական արդարացի պատերազմ:

խ. Ցեղասպանության ճանաչում

Ցեղասպանությունը ճանաչել ոչ թե բարոյական փոխհատուցման կեցվածքով, այլ նյութական և տարածքային պահանջատիրությամբ:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Սկզբունքորեն պետք է լինի նոր տիպի քաղաքացիության սահմանում սփյուռքահայության նկատմամբ և այդ քաղաքացիության համար պետք է սահմանել անդամավճար կենսաբանական անվտանգության հիմնադրամին:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Պետք է ապահովել ազգային գենոֆոնդի ա. կենսաբանական անվտանգությունը, բ. ռեպրոդուկցիոն անվտանգությունը, մինչև 2020թ-ը ազգաբնակչության քանակը հասցնել մինչև 55 մլն-ի՝ խթանելով գենոֆոնդի ռեպրոդուկցիոն գործընթացները, գ. սննդային և պարենային անվտանգությունը, դ. էկոլոգիական անվտանգությունը:
2. Անհրաժեշտ է ապահովել ազգաբնակչության ֆիզիկական անվտանգությունը:
3. Պետք է ապահովագրել ազգային աշխատուժը արտաքին թափառող կապիտալի էքսպանսիայից, չկորցնել երկրի տնտեսական անկախությունը:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում պետք է լինի առաջնահերթային /կարդինալ/, կուսակցությունը չի ընդունում տնտեսական ավտոմատիզմի լիբերալիզմը:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Դրամավարկային

Կտրականապես չօգտվել Համաշխարհային Բանկի, Արժույթային Միջազգային Հիմնադրամի և միջազգային այլ վարկատու ծառայություններից, որոնք նպատակաուղղված չեն երկրի արտադրողական ուժերի զարգացմանն, այլ իբր հետապնդում են սոցիալական խնդիրներ: Այդպիսի վարկերը հանդիսանում են կերակուր ներքին գործամոլական կապիտալի համար:

բ. Բյուջետային

Բյուջեն պետք է ձևավորել հարկահանությամբ՝ ոչ ավել քան 40%, 60% ազգային արտադրողական ուժերի հաշվին: Բյուջեն չպետք է լինի 6 մլրդ-ից պակաս:

գ. Հարկային

Պետք է վարել ճկուն դիֆերենցված և պարզեցված հարկային քաղաքականություն:

դ. Մաքսային

Պետք է վարել ճկուն դիֆերենցված մաքսային քաղաքականություն: Կտրուկ պակասեցնել մաքսերը ներկրվող կենսաբանական անհրաժեշտ պրոդուկտների վրա:

ե. Ճյուղային

Պետք է վարել պրիորիտետային տնտեսական քաղաքականություն:

զ. Տարածքային

Տնտեսական օբյեկտների և սուբյեկտների բաշխում հանրապետության տարածքում հավասարապես, ազգաբնակչությունը տարածքներում ֆիքսելու համար:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Պետությունն իր ձեռքը պետք է վերցնի պետական առևտուրը՝ զուգահեռ մասնավոր առևտրին: Շուկաների հայթայթումը պետք է լինի բացարձակապես պետական հեգեմոնիա:

ը. Վճարային (առևտրային) հաշվեկշիռ

ՀՄԿ-ն կարծում է, որ պետք է ապահովել դրական սալդո:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Ներդրումների խթանում

Ներդրումային քաղաքականությունը պետք է լինի կենտրոնացված, կոնցենտրացված, առաջնահերթ: Չընդունել սփռված ներդրողական քաղաքականությունը:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

ՀՄԿ-ն կարծում է, որ ֆինանսական շուկաների զարգացումն առայժմ երկրորդական պլանի վրա է:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

ՀՄԿ-ն ներքին շուկայի ձևավորումը տեսնում է երեք սեփականության ձևերի ներդաշնակ համագործակցության մեջ և ոչ թե միայն մասնավոր սեփականության տարբեր սուբյեկտների ձևով: Պետական, կորպորատիվ, մասնավոր:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Կուսակցությունը ընդունում է, որպես օժանդակ կառույցներ, այլ ոչ թե հիմնական արտադրողական ուժեր: Սեփականության հիմնական ձևը կորպորատիվ սեփականության ձևն է:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում

Առևտրի Համաշխարհային Կազմակերպության ոչ մի պահանջ չկատարել, հրաժարվել նրանց վարկերից ու պահանջներից:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Մարզերի համաչափ զարգացումը պարտադիր անհրաժեշտություն է:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Անհրաժեշտ է նոր հարկային քաղաքականություն մշակել՝ պետական սեկտորի ընդգրկմամբ:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիայի հաղթահարումը պետք է լինի ոչ թե դեկորատիվ, այլ սկզբունքորեն նոր պետական մեքենայի ձևավորում՝ դիտելով կոռուպցիան, որպես պետական մեքենայի ապառատ: Անհրաժեշտ է ստեղծել արտակարգ կոմիտե՝ բացահայտելու տնտեսական հանցագործությունները:

թ. Արդյունաբերության զարգացում

Արտաքին թափառող կապիտալի և պետության հետ պետք է ստեղծել կորպորատիվ արտադրողական օբյեկտներ, որտեղ պետության բաժնեմասը 55-ից չպետք է իջնի: Տոտալ սեփականաշնորհումները հակադրել մասնակի սեփական քաղաքականությամբ:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

1. Անհրաժեշտ է իրականացնել նոր հողային բարեփոխում:
2. Ի հակադրություն փոշիացված մանր ֆերմերային տնտեսության, պետք է ստեղծել խոշոր հողատիրության վրա հիմնված ֆերմերային տնտեսություն, քանի որ խոշոր հողատիրության մեջ ագրոմեխանիկայի, ագրոքիմիայի, ագրոմելիորացիայի, բիոինժեներիայի մուտքը ամենաներկայացուցչականն է ազատականացված տնտեսության բոլոր ձևերի համար: Միասնական շուկայի ձևավորմամբ՝ անհրաժեշտ է գյուղհումք արդյունահանող և գյուղհումք վերամշակող արդյունաբերությունների միացում, ընդհուպ միասնական շուկայի ձևավորմամբ:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Էներգետիկ համակարգին պետական առաջնահերթությունից պետք է տրվի բացարձակ պետական հեգեմոնիայի կարգավիճակ:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Կապը պետք է լինի բացարձակապես պետական հեգեմոնիա:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում

Անհրաժեշտ է կաֆեդրալ գիտությունից կատարել անցում ակադեմիական ինստիտուցիոնալ գիտության՝ նորագույն տեխնոլոգիաների մշակման բազա ստեղծելու նպատակով: Պետք է հասնել տեխնոլոգիաների տեսական մտքի և պրակտիկ կիրառության ներդաշնակության:

ծ. Կորպորատիվ կառավարման բարելավում

Կորպորատիվ կառավարման բարելավումը առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից է:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Աղքատության հաղթահարում

Արևմտյան այդ հասկացողությունը պետք է համարել կեղծ, պիղծ խաբեբայական: Որովհետև. «ասա ինչպիսի արտադրողական ուժեր ունես, ասեմ ինչպիսի սոցիալական հիմնախնդիրներ ունես»: «Ձուկ տալու փոխարեն, ձուկ բռնել սովորեցրու» -ահա արևմուտքին տված մեր պատասխանը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Հասարակության բևեռացումը և շերտավորումը պետք է վերացնել, շտկել նյութական բարիքների բաշխման նոր սկզբունքների կիրառմամբ, որտեղ պետությունն աշխատուժի շահագործման նկատմամբ հակաէքսպանսիոն համակարգ է ձևավորում: Դրանով իսկ արգելակում է գերշահույթների թալանչիական քաղաքականությունը:

գ. Զբաղվածության ապահովում

ՀՄԿ-ն զբաղվածություն հասկացությունը չի ընդունում, որպես կեղծ կատեգորիա: Մենք հաշվարկում ենք, թե տարեկան որքան արտադրական օբյեկտներ և սուբյեկտներ են շահագործման հանձնվում: Ըստ այդմ անհրաժեշտ է ներքին թափառող կապիտալն ուղղել սպասարկման ոլորտից դեպի արտադրական կապիտալի ոլորտ:

դ. Արտագաղթի նվազեցում

Կարդինալ ֆակտորն ուղիղ համեմատական է արտադրողական ուժերի զարգացմանը:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Ոլորտի բարելավումը հնարավոր է միայն պետական առողջապահական համակարգի հեգեմոնիայով՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Խիստ անհրաժեշտ է զարգացնել սոցիալական ապահովագրական համակարգը:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը կարևոր է համարում.

1. էքստենսիվ կրթական համակարգից անցում ինտենսիվ կրթական համակարգի,
2. անվճար կրթական համակարգի (պետությունը որպես գլխավոր ներդրող) առկայությունը,
3. գիտամանկավարժական նոր մեթոդոլոգիաների համակարգի ձևավորում, որը կապահովի մատուցվող նյութերի բարձր ծավալներն ու մատչելիությունը,
4. կրթական համակարգի ապահովումը նյութատեխնիկական անհրաժեշտ բազայով:

ը. Գիտության զարգացում

Կաֆեդրալ գիտական համակարգը պետք է փոխարինվի ակադեմիական ինստիտուցիոնալ գիտական համակարգով՝ պետական հովանավորչությամբ և պետական ներդրումներով:

թ. Մշակույթ

Անհրաժեշտ է ապահովել ազգային մշակույթի բացառիկ ինքնատիպությունն ու անաղարտությունը՝ համաշխարհային մշակույթի հետ հարաբերություններում զերծ պահելով այն, սերտաճումից և ինքնաոչնչացումից:

ժ. Սպորտ

Սպորտը պետք է դիտել, որպես մրցակցային և բիզնես կատեգորիա: Մեզ համար ամենակարևորը ֆիզիկական պատրաստվածությունն է:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Քաղաքացիական հասարակության հասկացողություն գոյություն չունի:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդավարական առաջին ինստիտուտը պետական մեքենան է՝ մնացածները նրա ածանցյալներն են:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Խոսքի և տեղեկատվության ազատությունը պետք է ապահովվի պետական մեքենայի կողմից:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների առաջին պաշտպանը պետական մեքենան է:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Դատաիրավական համակարգը պետք է դիտարկվի, որպես պետական համակարգի ածանցյալ:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Համակարգի բարելավման հարցում կուսակցությունը կարևորում է հետևյալ դրույթների իրականացումը.

1. բացարձակ ցենզային ընտրական իրավունքից անցումը համընդհանուր ընտրական իրավունքի.
2. պետությունը իր վրա է վերցնում ընտրական ծախսերը՝ վերացնելով ընտրագրավ հանցագործ հասկացությունը, ինչը ենթարկում է սոցիալական և քաղաքական խտրականության, կյանքի կոչելով «ընտրությունը հարուստներինն է» սկզբունքը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Հայաստանում պետք է գործեն երեք գաղափարական հոսանքների վրա հիմնված երեք քաղաքական կուսակցություններ: Անհրաժեշտ է մշակել կուսակցությունների մասին նոր օրենք:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում

Պետք է անցում կատարել նյութական ցենզային ընտրական իրավունքից՝ ինտելեկտուալ ցենզի: Անհրաժեշտ է ձևավորել սկզբունքորեն նոր պառլամենտարիզմի ինստիտուտ, որի հիմքը լինելու է քաղաքական ինտելեկտուալ ցենզը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Պետք է սկզբունքների ազգային անվտանգության հայեցակարգի ձևավորում: Կուսակցությունն անհրաժեշտ է համարում նոր ազգային անվտանգության հայեցակարգի մշակում:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

1. Պետք է վերացնել դեմոգրաֆիկ դիսբալանսը:
2. Պետք է խթանել ծնելիությունը, կենսաբանական հատուկ հիմնադրամի միջոցով՝ երբ պետությունը առաջին բարուրի վրա դնում է 5000 ԱՄՆ դոլար, երկրորդ բարուրի ՝ 10000 ԱՄՆ դոլար: Մինչև 2020 ազգաբնակչության թիվը հասցնել 5մլն-ի:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

էներգառեսուրսների գնագոյացման գործընթացների վերահսկողությունը և կանոնավորումը կփրկի անտառահատման միջոցով մասսայական անապատացումից և զերծ կպահի էկոլոգիական աղետից: Հանրապետության նախագահը պետք է իջեցնի գազի և էլեկտրաէներգիայի սակագները, որպեսզի փրկվենք էկոլոգիական աղետից

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1995թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **1999թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1991թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **1996թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **1998թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

18. «ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀՇ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Սարյան 38
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 53-52-35, 53-50-34
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** anm@xter.net
- **Հիմնադրման տարեթիվը՝** 1988թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 05.11.1989թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 15.07.1991թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 20.05.2005թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 7300 անդամ
- **Կուսակցության պաշտոնական մամուլը՝** «ՀԱՅՔ» պաշտոնաթերթ

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ[1]

- Համագումար
- Հանրապետական խորհուրդ՝ 52 անդամ
- Վարչություն՝ 25 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Արարատ Անուշավանի Ջուրաբյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ[1]

Կուսակցության նպատակն է ազատական, ժողովրդավարական սկզբունքների հիման վրա ապահովել ՀՀ քաղաքական, տնտեսական և հոգևոր զարգացումը: Կուսակցությունը գործում է օրինականության, կամավորության, իրավահավասարության, ինքնակառավարման և հրապարակայնության սկզբունքներով: Կուսակցությունն իր ծրագիրն իրականացնելու նպատակով ընտրությունների միջոցով մասնակցում է ՀՀ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորմանը և դրանց գործունեությանը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[1]

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. ՀՀ արտաքին քաղաքականության իրականացում՝ միջազգային իրավունքի նորմերի համապատասխան:
2. Ինտեգրում միջազգային՝ հատկապես եվրոպական կառույցներին:
3. Նորմալ միջպետական հարաբերություններ բոլոր հարևանների հետ:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է մերժել երրորդ ուժին ապավինելու և քաղաքական «կողմնորոշման» սկզբունքը, խնդիրները ձևակերպել սեփական ուժերի և հնարավորությունների համապատասխան:

ա. Եվրաինտեգրում

ՀՀ անդամակցությունը Եվրամիությանը կուսակցության հիմնական նպատակներից է:

բ. ԱՊՀ

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է մասնակցել ԱՊՀ կառույցների նախաձեռնություններին՝ ելնելով ՀՀ իրական շահերից:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Նախընտրելի է բոլոր հարևանների հետ ընդգրկվել միևնույն անվտանգության համակարգում:

դ. ՀԱՊԿ (NATO)

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է սերտացնել հարաբերություններն՝ ընդհուպ մոտենալով անդամակցության հնարավորության աստիճանին:

ե. ԱՄՆ

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է հաստատել նորմալ միջպետական և հավասարազոր գործընկերային հարաբերություններ:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Անհրաժեշտ է դուրս գալ վասալային վիճակից, վերականգնել հավասարազոր գործընկերային միջպետական հարաբերությունները:

է. Թուրքիա

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է իրականացնել գործողություններ՝ միտված հայ-թուրքական սահմանի բացմանը և նպաստել Թուրքիայի՝ Եվրամիության անդամ դառնալուն:

ը. Ադրբեջան

Անհրաժեշտ է վերականգնել իրական բանակցություններ ԼՂՀ հիմնահարցի շուրջ:

թ. Իրան

Կուսակցությունը գտնում է, որ Իրանի հետ անհրաժեշտ է բարիդրացիական հարաբերությունների ամրապնդում:

ժ. Վրաստան

Կուսակցությունը գտնում է, որ Վրաստանի հետ անհրաժեշտ է բարիդրացիական հարաբերությունների ամրապնդում:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է տարածաշրջանային ինտեգրացման բարձր աստիճան, որը կապահովի Հայաստանի տնտեսական հզորությունը և կերաշխավորի նրա անվտանգությունը:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Կուսակցությունը գտնում է, որ խնդրի կարգավորման միակ իրատեսական տարբերակը փուլային է: Պատերազմը պետք է բացառվի, ուստի և Ղարաբաղյան հարցը պետք է լուծվի միայն խաղաղ և փոխզիջումային բանակցությունների միջոցով:

խ. Ցեղասպանության ճանաչում

Ցեղասպանության ճանաչման հարցը գաղափարախոսական հարթությունից պետք է տեղափոխվի քաղաքական հարթություն, և խնդիրը պետք է քննարկել Թուրքիայի հետ երկկողմ բանակցությունների ընթացքում: Ցեղասպանության ճանաչումը չի կարող լինել ՀՀ արտաքին քաղաքականության գերակա խնդիր:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում քաղաքական հարցերում Սփյուռքի միջամտության բացառումը, միմյանց կարգավիճակի գիտակցումը, ճանաչումը և հարգումը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

Կուսակցությունը կարևորում է պետականության ամրապնդումը, այնպիսի հասարակարգի ստեղծումը, որը երաշխավորում և ապահովում է մարդու կյանքի և սեփականության անձեռնմխելիությունը, յուրաքանչյուր անձի՝ խոսքի, խղճի, մտքի, դավանանքի ազատությունը, օրենքի գերակայությունն ու նրա առջև բոլորի հավասարությունը, իշխանությունների տարանջատումն ու հասարակության կողմից վերահսկելիությունը, դատարանի անաչառությունը:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Պետությունը հնարավորինս պետք է ազատվի տնտեսական գործառույթներից, նվազագույն միջամտություն ունենա տնտեսվարողների գործունեությանը և առավելագույնս նպաստի անհատական նախաձեռնությանն ու մասնավոր ձեռներեցությանը:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

ՀՀ տնտեսական համակարգի հիմքը պետք է լինի ազատականությունը, որը ենթադրում է մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը և լիակատար իրավական պաշտպանվածությունը:

ա. Դրամավարկային

Անհրաժեշտ է ապահովել երկարաժամկետ վարկերի տրամադրումը:

բ. Բյուջետային

Անհրաժեշտ է ապահովել պետական բյուջեի՝ որպես ՀՀ օրենքի կատարողականի հրապարակայնությունը՝ կտրուկ նվազեցնելով պետական կառավարման մարմինների ծախսերը:

գ. Հարկային

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է հարկային բեռի կտրուկ թեթևացում, որը հնարավորություն կտա ընդլայնել հարկային բազան: Անհրաժեշտ է առավելագույնս պարզեցնել հարկային օրենսդրությունը:

դ. Մաքսային

Անհրաժեշտ է մաքսա-սակագնային քաղաքականության փոփոխություն՝ նպատակ ունենալով բարձրացնել արտահանողի և ներկրողի պաշտպանվածությունը:

ե. Ճյուղային

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է նախապատվությունը տալ գիտատար և նոր տեխնոլոգիաների հիման վրա զարգացող արդյունաբերության ճյուղերին:

զ. Տարածքային

Տնտեսության, արդյունաբերության, կրթության, մշակույթի, սոցիալական և այլ բնագավառներում անհրաժեշտ է իրականացնել ապակենտրոնացման քաղաքականություն:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

ԼՂՀ խնդրի կարգավորումը, արժանապատիվ խաղաղությունն արտաքին ներդրումների կարևորագույն երաշխիքն է, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի խթանել արտաքին տնտեսական հարաբերությունները:

ը. Վճարային (առևտրային) հաշվեկշիռ

Մրցունակ տնտեսության և արտահանման բարեհաջող պայմանների միջոցով անհրաժեշտ է հասնել առևտրային հաշվեկշռի դրական ցուցանիշի:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ԼՂՀ խնդրի կարգավորումը, արժանապատիվ խաղաղությունը, դրամավարկային, հարկաբյուջետային ճշգրիտ և հաշվարկված քաղաքականությունը խթան կհանդիսանան տնտեսական զարգացման հիմնախնդիրների լուծմանը:

ա. Ներդրումների խթանում

Ներդրումային ոլորտի բարելավման, արտաքին ներդրումների խթանման, մրցակցային դաշտի բարելավման, գործազրկության նվազեցման և աղետի գոտու զարգացման համար անհրաժեշտ է տնտեսական աճի ապահովում:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Անհրաժեշտ է բանկային համակարգի ազատականացում և դրամի լողացող փոխարժեքի քաղաքականության իրականացում:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Անհրաժեշտ է տնտեսական մենաշնորհների վերացում և ազատ մրցակցության ապահովում:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Անհրաժեշտ է հարկային և վարկային խրախուսման զարգացում փոքր և միջին բիզնեսի զարգացման համար:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում

ՀՀ-ն Առևտրի Համաշխարհային կազմակերպության լիարժեք անդամ է, ինչը նշանակում է, որ Հայաստանը հետևողականորեն պետք է իրականացնի այդ հեղինակավոր միջազգային կազմակերպության պահանջները:

զ. Մարզերի համաչափ զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ լիարժեք խաղաղությունը, որը հնարավորություն կտա իրականացնել տնտեսական թռիչք, կխթանի մարզերի համաչափ զարգացմանը:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Քաղաքական մրցակցությունը, որը կնպաստի օրինական իշխանության ձևավորմանը, կբարձրացնի քաղաքական միավորների դերը և պատասխանատվությունը, հնարավորություն կընձեռի նվազագույնի հասցնել ստվերային տնտեսությունը:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիայի նվազեցումը հնարավոր է օրինականության ամրապնդման և հասարակության միջին կենսամակարդակի բարձրացման միջոցով: Հնչեղ միջոցառումները ժամանակավոր արդյունք կարող են տալ կամ նման տպավորություն ստեղծել:

թ. Արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացում

Անհրաժեշտ է ապահովել տնտեսության ազատականացման անդարձելիությունը, բոլոր բնագավառներում վերացնել մենաշնորհները և խրախուսել ազնիվ մրցակցությունը, վերակենդանացնել արդյունաբերության և գյուղատնտեսության մրցունակ ճյուղերը, վերազինել դրանք գիտատեխնիկական առաջատար տեխնոլոգիաներով:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Հպատակի և տիրոջ հարաբերությունները, որոնք ձևավորվել են Ռուսաստանի հետ 1998թ.-ից ի վեր, ամբողջովին վտանգում են ՀՀ էներգետիկ անվտանգությունը:

ծ. Կորպորատիվ կառավարման բարելավում

Տնտեսության իրական զարգացումը կխթանի նաև կորպորատիվ կառավարմանը:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է բնակչության ծանր սոցիալական քաղաքականության ամբողջական համակարգի ձևավորում, որի բաղկացուցիչ մասն են կազմում բնակչության զբաղվածության, կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանության հիմնահարցերը:

ա. Աղքատության հաղթահարում

Աղքատության հաղթահարման միակ և արդյունավետ միջոցը վերջնական խաղաղության հաստատումն է:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Պետք է ստվերային տնտեսության վերացման հաշվին նվազեցնել հասարակության շերտերի բևեռացումը:

գ. Զբաղվածության ապահովում

Զբաղվածության ապահովման համար անհրաժեշտ է տնտեսական կտրուկ աճ:

դ. Արտագաղթի նվազեցում

Հանրապետական և տարածքային ծրագրերի միջոցով անհրաժեշտ է ապահովել բարեկեցիկ կյանքով ապրելու յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը, որն էլ կհանգեցնի արտագաղթի նվազեցմանը:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Պետությունը պետք է ֆինանսավորի միայն համաճարակային, մանկական և մի քանի տարածված ու վտանգավոր հիվանդությունների կանխարգելումն ու բուժումը:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Պետք է անպայման գործի այլընտրանքային ապահովագրական և զեղչերի ճկուն համակարգ:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Հանրակրթությունը պետք է լինի պետական մենաշնորհ, զերծ լինի կուսակցական գաղափարախոսություններից, իրականացվի միայն հայերենով՝ օտար լեզուների լիարժեք ուսուցում ապահովելով: Մասնավոր ԲՈՒՀ-երը պետք է դառնան լուրջ մրցակիցներ պետական սեկտորի նկատմամբ:

ը. Գիտության զարգացում

Գիտության ներուժի պահպանությունը պետք է լինի ռազմավարական խնդիր: Գիտության հումանիտար ճյուղերը պետք է օգտվեն պետական հոգածությունից: Տեխնիկական և կիրառական ճյուղերի մեջ անհրաժեշտ ներդրումների ներգրավումը հնարավոր է ներքին և արտաքին համապատասխան քաղաքականության միջոցով:

թ. Մշակույթ

Մշակույթը պետք է զերծ լինի որևէ գաղափարախոսությունից: Այն պետք է մասնակիորեն հովանավորվի պետության կողմից: Մշակույթը պետք է միտված լինի դեպի համամարդկային արժեքներին ինտեգրվելը՝ զուգահեռաբար պահպանելով և զարգացնելով ազգային արժեքներն ու մշակույթը:

ժ. Սպորտ

Պետք է մասսայական ֆիզկուլտուրայի և պրոֆեսիոնալ սպորտի տարանջատում, մասսայական ֆիզկուլտուրայի պետական հոգածություն:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Ընտրական համակարգի բարեփոխումը, քաղաքական կուսակցությունների դերի բարձրացումը և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությանն աջակցությունը կարևորագույն խթան կհանդիսանան քաղաքացիական հասարակության ձևավորման համար:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Անհրաժեշտ է նպաստել պետականորեն ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը, օժանդակել կուսակցությունների կազմակերպմանն ու ինքնադրսևորմանը, երաշխավորել խոսքի, մամուլի, խղճի իրական ազատությունները և արմատավորել ժողովրդավարության հանրաճանաչ նորմերը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Յուրաքանչյուր մարդ պետք է ունենա խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Ցանկացած մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները պետք է ամրագրվեն Սահմանադրությամբ, որոնք սպառիչ չեն և չեն կարող մեկնաբանվել որպես մարդու և քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների և ազատությունների բացառում:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Անհրաժեշտ է իրականացնել իրական օրենսդրական բարեփոխումներ, որոնք կնպաստեն դատաիրավական համակարգի տարանջատմանը գործադիր իշխանությունից:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է նոր ընտրական համակարգի ձևավորում, որը կնպաստի քաղաքական մրցակցության կայացմանը Հայաստանում:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Անհրաժեշտ է նոր ընտրական համակարգի ձևավորում, որը հնարավորություն կտա լիարժեք իրագործել քաղաքական մրցակցության սկզբունքը, կխթանի քաղաքական կուսակցությունների գործունեությունը:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում

Երբ Հայաստանում իրականություն կդառնա քաղաքական մրցակցության սկզբունքը, երբ քաղաքական կազմակերպությունները լիարժեք հնարավորություն կունենան ընտրությունների միջոցով իրականացնել պետական կառավարում, կստեղծվի իրավիճակ, երբ քաղաքական գործիչներն ավելի պատասխանատու կլինեն իրենց գործունեության համար:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է տարածաշրջանային և միջազգային ինտեգրացիա: Պետք է ներգրավվել անվտանգության առավել արդյունավետ համակարգերում, մերձեցնել NATO-ի հետ հարաբերությունները՝ ընդհուպ մոտենալով անդամակցության հնարավորության աստիճանին:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Անհրաժեշտ է պետական քաղաքականության իրականացում նորաստեղծ ընտանիքների կազմավորման և ծնելիության բարձրացման համար:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Բնապահպանությունը պետք է կարգավորվի խիստ օրենսդրական դաշտով: Այս գործում շատ կարևոր է ներգրավել շահագրգիռ բազմաթիվ հասարակական կազմակերպություններ:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1995թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 222
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 75
- **1999թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 42
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 10
- **2003թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 40
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 16

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1991թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1996թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1998թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ I Գումարում՝ 64
- ԱԺ III Գումարում՝ 1

19. «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Մաշտոցի 37/30
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 53-86-34, 53-86-35
- **Հիմնադրման տարեթիվը՝** 27.02.2001թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 27.02.2001թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 27.03.2001թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 02.12.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 5500 անդամ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** 2001թ-ին մասնակիորեն տպագրվել է «Առավոտ» և «Հայկական ժամանակ» օրաթերթերում

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 11 անդամ
- Կուսակցության ղեկավար՝ Արամ Զավենի Սարգսյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Հանրապետություն» կուսակցությունը գերակա է համարում մարդու իրավունքներն ու ազատությունները, ՀՀ-ի ամրապնդումն ու զարգացումը: Կուսակցությունն առաջնահերթ է համարում երկրում սահմանադրական կարգի վերականգնումը և համակարգային բարեփոխումների իրականացումը:

«Հանրապետություն» կուսակցության որդեգրած սկզբունքները՝ Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը, ժողովրդավարությունը և խոսքի ազատությունը, ինչպես նաև մարդու ազատությունները և սեփականության իրավունքը, մեր ժողովրդին միավորող հիմնարար գաղափարներն են:

Կուսակցության նպատակն է ՀՀ ամրապնդումն ու հզորացումը, ՀՀ քաղաքացիների բարեկեցիկ և ազգային խնդիրների շուրջ հայ ժողովրդի համախմբումը:

Այդ նպատակին հասնելու համար կուսակցությունն անհրաժեշտ է համարում.

1. պահպանողական գաղափարների և աշխարհայացքի վրա խարսխված քաղաքական արժեքային նոր համակարգի ստեղծումը,
2. ժողովրդի քաղաքական կամքի ազատ ձևավորման և արտահայտման ապահովումը, Հայաստանում ժողովրդավարության հաստատումն ու քաղաքացիական հասարակության ստեղծումը,
3. ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի գերակայության ապահովումն ու իրավական պետության կայացումը,
4. տնտեսական գործընթացներում պետության կարգավորիչ դերի հստակեցումն ու ուժեղացումը, ինչպես նաև տնտեսական հարաբերությունները կազմավորող իրավական դաշտի բարելավումը՝ երեշխավորելով ազատ մրցակցության և գործարար ակտիվության զարգացումը, ինչպես նաև ներդրումների համար բարենպաստ պայմանների ապահովումը և սոցիալական շուկայական տնտեսության ձևավորումը,
5. ՀՀ-ում համամարդկային և ազգային արժեքների ներդաշնակումը, մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանությունը,
6. պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշիռ, տարանջատ և անկախ գործունեության ապահովումը,
7. տարածաշրջանային և միջազգային ինտեգրացիոն գործընթացներին ՀՀ ակտիվ մասնակցությունը, այլ երկրների հետ փոխշահավետ քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների հաստատումն ու զարգացումը,
8. ազգային անվտանգության համալիր ծրագրի մշակումն ու իրագործումը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. ԼՂ-ի խնդրի արագ և խաղաղ կարգավորում.[5]
2. Հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների հաստատում.[5]
3. ՀՀ-ի ինտեգրում տարածաշրջանային համագործակցության:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Եվրահինտեգրում[5]

Կուսակցությունն առաջնահերթ է համարում ՀՀ-ի Եվրահինտեգրումը:

բ. ԱՊՀ[5]

ԱՊՀ-ն ոչ արդյունավետ և ժամանակավրեպ կառույց է:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)[5]

Կուսակցությունն արդյունավետ չի համարում ՀՀ-ի մասնակցությունը ՀԱՊԿ-ին:

դ. ՀԱԴԿ (NATO)[5]

Կուսակցությունը կարևորում է ՀՀ-ի մասնակցությունը NATO-ին:

ե. ԱՄՆ[5]

Կուսակցությունը կարևորում է ՀՀ-ԱՄՆ ռազմավարական գործընկերության զարգացումը:

զ. Ռուսաստանի Դաշնություն[5]

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում հայ-ռուսական վասալային հարաբերությունների վերացումը՝ դրանք գործընկերային դարձնելու նպատակով:

է. Թուրքիա[5]

Կուսակցությունը կարևոր է համարում հայ-թուրքական դիվանագիտական կապերի հաստատումը:

ը. Ադրբեջան[5]

Կուսակցությունը կարևորում է ԼՂ-ի խնդրի արագ լուծումը, այդ համատեքստում՝ հայ-ադրբեջանական հարաբերությունների վերականգնումը:

թ. Իրան[5]

Կուսակցությունը կարևորում է հայ-իրանական հարաբերությունները՝ վստահություն հայտնելով, որ Իրանի շուրջ միջազգային լարվածությունը խաղաղ հանգուցալուծում կստանա:

ժ. Վրաստան[5]

Վրաստանը ՀՀ-ի ռազմավարական դաշնակիցն է:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն[4]

ՀՀ-ն պետք է տարածաշրջանային համագործակցության և տարածաշրջանային անվտանգության միասնական համակարգի սուբյեկտ լինի:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր[5]

Կուսակցությունը ԼՂ-ի խնդիրը տեսնում է ռեգիոնալ համագործակցության, ժողովրդավարական ինստիտուտների կայացման ու զարգացման համատեքստում:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Պետությունը պետք է բարենպաստ պայմաններ ստեղծի հայ ժողովրդի համախմբման համար՝ Հայաստանի հզորացման և Սփյուռքի հայապահպանության խնդիրները լուծելու համար:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

1. Ընտրական ինստիտուտների վերականգնում:
2. Օլիգարխիկ համակարգի վերացում:
3. Ժամանակակից ժողովրդավարության հաստատում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Պետությունը պետք է ունենա սոսկ կարգավորիչ գործառույթ՝ խթանելով ազատ շուկայի զարգացումը:
Կուսակցությունն անհրաժեշտ է համարում օլիգարխիկ համակարգի վերացումը, ազատ շուկայական տնտեսության մեխանիզմների ստեղծումն ու զարգացումն, ինչպես նաև ինովացիոն տնտեսության ստեղծումն և ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը:[4]
Կուսակցությունը կարևորում է կոռուպցիայի դեմ պայքարը՝ իշխանությունների վարչական կամքի դրսևորման և պետական ավելորդ ֆունկցիաների կրճատման ճանապարհով:[5]

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

գ. Հարկային

Կուսակցությունը կարևորում է հարկային համակարգի պարզեցումն ու հարկատեսակների կրճատումը, ինչպես նաև գործարարության նկատմամբ միջամտությունների բացառումը, ստուգումների և վերահսկողության մեխանիզմների կանոնակարգումը և թափանցիկությունը:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Սահմանափակ ներքին շուկայի պայմաններում Հայաստանի արդյունաբերությունը պետք է կողմնորոշվի դեպի արտաքին շուկաներ:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝[5]

Կուսակցությունը կարևորում է «Աղքատության վերացման» համազգային ծրագրի մշակումը, որի հիմքում դրված պետք է լինի տնտեսության զարգացման հայեցակարգը:

ա. Ներդրումների խթանում

Կուսակցությունը գտնում է, որ երկրի տնտեսության զարգացման համար էական նշանակություն ունի ապապետականացման հայեցակարգի մշակումը: Ապապետականացումը պետք է ուղղված լինի տնտեսության զարգացումն ապահովող արդյունավետ ներդրումային ծրագրերի իրականացմանը՝ ներգրավելու համար ներքին և արտաքին ներդրողներին:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Կարևորելով զարգացած արդյունաբերական երկիր ունենալու հեռանկարը՝ կուսակցության գործունեությունն ուղղված է լինելու տնտեսության զարգացման խոչընդոտների վերացմանը և ազատ մրցակցության ապահովմանը:

թ. Արդյունաբերության զարգացում

Արդյունաբերության՝ պետական, մասնավորեցված և նորաստեղծ ձեռնարկությունների զարգացումը պետք է դառնա տնտեսական քաղաքականության հիմնական նպատակը, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գլխավոր գործոնը: Սահմանափակ ներքին շուկայի պայմաններում Հայաստանի արդյունաբերությունը պետք է կողմնորոշվի դեպի արտաքին շուկաներ:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Գյուղատնտեսության բնագավառում բարեփոխումների քաղաքականության հիմքում պետք է դրվի հողի լիարժեք և արդյունավետ օգտագործման գաղափարը: Ագրարային ոլորտի բարեփոխումները պետք է նպատակաուղղվեն գյուղացիների բարեկեցության աճին, գյուղական բնակչության արտահոսքի կանխարգելմանն ու սահմանամերձ բնակավայրերի ամրացմանը:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Տնտեսության զարգացման կարևոր նախապայման է էներգետիկ անվտանգությունը և այլընտրանքային էներգակիրների ապահովումը:
Այս առումով, հատկապես, կուսակցությունը կարևորում է հայ-ռուսական միակողմանի՝ ՀՀ-ի ինքնիշխանությունը սահմանափակող հարաբերությունների վերացումը:[5]

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝[4]

ա. Աղքատության հաղթահարում

Ժողովրդավարությունը չի կարող լիարժեք լինել, եթե պետության քաղաքացիները չեն ապրում բարեկեցիկ կյանքով: Աղքատությունը ծնում է ժողովրդավարությանն անհարիր երևույթներ՝ կասկածի տակ դնելով քաղաքացիների ինքնուրույնությունն ու ազատությունները, օրինական իշխանություններ ձևավորելու կարողությունը:

Կուսակցությունը կարևորում է «Աղքատության դեմ պայքարի համազգային ծրագրի» մշակումն ու իրականացումը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Կուսակցությունն առաջնային խնդիր է համարում ժամանակակից պետության և հասարակության հիմքը կազմող միջին խավի կայացումը:

գ. Զբաղվածության ապահովում

Տնտեսական քաղաքականության գլխավոր նպատակը երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն է, որն աշխատատեղերի էական աճի ու բնակչության իրական եկամուտների բարձրացման հիմնական միջոցն է:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Կուսակցությունը հետամուտ է լինելու առողջապահության ոլորտում բարեփոխումների իրականացմանը:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը հետամուտ է լինելու կրթության և կենսաթոշակային համակարգի ոլորտներում բարեփոխումների իրականացմանը:

թ. Մշակույթ

Սոցիալական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է հոգևոր կյանքի և մշակույթի վերածննդի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Կուսակցությունն առաջնային է համարում երկրում Սահմանադրական կարգի վերականգնումը, ընտրական ինստիտուտների գործունեությունն, իրական ժողովրդավարության հաստատումը, ինչպես նաև հաշվետու գործադիր իշխանության ձևավորումը, անկախ դատական ինստիտուտի կայացումը, ոստիկանության և ԱԱԾ-ի, այդ թվում նաև բանակի գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ստեղծումը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդավարությունը կոչված է ապահովելու քաղաքացիների համագործակցությունը, երաշխավորելու նրանց արժանապատիվ և բարեկեցիկ կյանքն, անվտանգությունը, մամուլի, խոսքի և քաղաքական ազատությունները, ինչպես նաև սեփականության անձեռնմխելիությունը և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը: Բացառապես այս սկզբունքների որդեգրումը կարող է հանգեցնել ընտրական ինստիտուտների և քաղաքական դաշտի կայացմանը, ինչպես նաև պառլամենտարիզմի զարգացմանը և սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայի ձևավորմանը:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում[4]

Կուսակցության որդեգրած սկզբունքներից է խոսքի ու տեղեկատվության ազատությունը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցության համար հիմնարար արժեքներ են՝ Հայաստանի անկախությունն ու տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև ժողովրդավարությունը, քաղաքացիական հասարակությունը, և մարդու իրավունքներն ու ազատությունները:

դ. Դատահիրավական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը կարևորում է իրավական ոլորտի բարեփոխումները և տնտեսավարման ապաբյուրոկրատացումն ու ազատականացումը, դատարանների իրական անկախության ապահովումը, ինչպես նաև ՆԳՆ-ի և ԱԱՆ-ի գործառույթների կանոնակարգումն ու խորհրդարանական վերահսկողության մեխանիզմների ուժեղացումը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը հետամուտ է լինելու ՀՀ ազգային անվտանգության նոր հայեցակարգի մշակմանը՝ ՀՀ-ի զարգացման և եվրաատլանտյան կառույցներին ՀՀ-ի ինտեգրման հեռանկարի շեշտադրմամբ:[5]

Հայաստանի անվտանգությունը և հարևանների հետ խաղաղ գոյակցությունը հնարավոր են միայն՝ մեր երկրում, օրինական իշխանության ձևավորման, հանրապետության քաղաքացիների շահերից բխող, սթափ և հավասարակշռված արտաքին քաղաքականության իրականացման, ինչպես նաև՝ տարածաշրջանային համագործակցության համատեքստում:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **2003թ. ընտրություններ**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 35
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 8

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **2003թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ II Գումարում՝ 3
- ԱԺ III Գումարում՝ 2

20. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՄԱԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Գյուլբենկյան 33
- **Իրավաբանական հասցեն՝** ք. Երևան, Գյուլբենկյան 29, բն. 18-19
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 26-58-28, 22-02-66, 22-67-03
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** info@ulp.am
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.ulp.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 21.09.2002թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 05.11.2002թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 15.11.2002թ
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 28.11.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 17 000 անդամ

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 25 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Գուրգեն Բաբկենի Արսենյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուսակցության գործունեության կանոնադրական նպատակներն ու խնդիրներն են.

- Հայաստանի Հանրապետությունում ազատականության և ժողովրդավարության խորացմանը նպաստելը, իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացումն ու ազգային նպատակների իրականացումը,
- կուսակցության անդամների և բնակչության գաղափարական ու քաղաքական մակարդակի բարձրացմանը նպաստելը,
- հանրապետության քաղաքական կյանքին բնակչության մասնակցությանն աջակցելը՝ կուսակցության որդեգրած ծրագրերի և սկզբունքների համաձայն,
- իր որդեգրած գաղափարների իրականացման նպատակով, օրինական բոլոր միջոցներով, Ազգային Ժողովի և Կառավարության գործունեության վրա պետական քաղաքականության ձևավորմանը ներազդելը,
- իշխանության հանրապետական և տեղական մարմիններում իր ներկայության ապահովմանը ձգտելը՝ ընտրություններում առաջադրելով կուսակցության թեկնածուներ,
- ընտրողների քաղաքական կամքի ազատ արտահայտմանը նպաստելը:

Կուսակցության նպատակն է պաշտպանել ՀՀ սահմանադրական կարգը, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, նպաստել իրավական, ժողովրդավարական և սոցիալական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորմանը, տարածել իր գաղափարախոսությունն ու ծրագրերը, օրինական միջոցներով հասնել իշխանության և ներգործել իշխանությունների քաղաքականության ձևավորման վրա:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Նկատի ունենալով Հանրապետության տեղն ու դերը Կովկասյան և շրջակա երկրների դաշտում, ինչպես նաև ելնելով մեր ժողովրդի առաջնահերթ նկատառումներից՝ կուսակցությունը վստահ է, որ արտաքին քաղաքական հարաբերությունների հիմքում պետք է լինի մարդու իրավունքների պաշտպանությունն ու ազգերի ինքնորոշման իրավունքը:
2. Կուսակցությունը գտնում է, որ պետք է բացառել որևէ կտրուկ փոփոխություն արտաքին քաղաքականության մեջ՝ վարելով ակտիվ և հետևողական դիվանագիտություն, հավատարիմ մնալով միջազգային մեր պարտավորություններին:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ստեղծել դիվանագիտական, իրատեսական, խոհեմ քաղաքականությամբ հիմնավորված բազմակողմանի տնտեսական և քաղաքական հարաբերություններ հարևան երկրների հետ, հաստատել մեր պետության տեղն ու դերը քաղաքակիրթ պետությունների ընտանիքում՝ ընտրելով ազգային հիմնախնդիրների, այդ թվում Ղարաբաղի հարցի օրինական և արդար լուծման ուղին:

ա. Եվրահինտեգրում

Կուսակցությունը համոզված է, որ բազմակողմանի տնտեսական և քաղաքական հարաբերություններ է հարկավոր զարգացնել նախևառաջ հարևան երկրների հետ, դիվանագիտական, իրատեսական և ճկուն քաղաքականությամբ հաստատել մեր պետության տեղը և դերը եվրոպական պետությունների շարքում:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանը պետք է անցնի ուրույն դիվանագիտական ճանապարհ՝ Ռուսաստանի հետ բարելավելով և խորացնելով փոխհարաբերությունները: Անհրաժեշտ է հաշվի առնել ռուսերեն լեզվի և ռուսական մշակույթի դարավոր ներգործությունը հայ ժողովրդի կենսագործունեության մեջ:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Կուսակցությունը համոզված է, որ Հայաստանը, հավասարի իրավունքով մուտք գործելով ազգերի համաշխարհային ընտանիք, պաշտպան կկանգնի խաղաղասիրական ամեն մի նախաձեռնության և կհամագործակցի խաղաղապաշտպան ուժերի հետ:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Կուսակցությունը կարևորում է Ղարաբաղի հարցի օրինական և արդար լուծման ուղին:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

Կուսակցությունը գտնում է, որ ներքաղաքական ասպարեզում կարևորն իրավական պետության կառուցումն է, այն է՝ մարդու իրավունքների գերակայությունը, ժողովրդավարությունը, օրենքի գերիշխանությունը, սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը, քաղաքացիական հասարակության կայացումը, պետական կառույցների

գործառույթների տարանջատումը, սոցիալական և արտադրական ենթակառույցների զարգացումը, աշխատանքի, կրթության ապահովումը և օժանդակումը:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Կուսակցությունը գտնում է, որ պետության դերը՝ բոլորի համար հավասար իրավական պայմանների ստեղծումն է և տնտեսությունը երկրի սոցիալական խնդիրների լուծմանը ծառայեցնելը:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունը տնտեսական քաղաքականության բնագավառում առաջնահերթ է համարում անկախ, ինքնուրույն և ճկուն տնտեսական կառույցների ձևավորումը, որոնք Հայաստանի քաղաքական անկախության ամրապնդման կարևորագույն պայմաններն են:

ա. Դրամավարկային

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ստեղծել ազատ շուկայական հարաբերություններին համապատասխան ֆինանսավարկային համակարգ:

բ. Բյուջետային

Կուսակցությունը գտնում է, որ պետք է պատասխանատու բյուջետային քաղաքականություն վարել՝ ՀՀ զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերն ապահովելու համար:

գ. Հարկային

Պետք է խթանել մասնավոր ձեռներեցության զարգացումը՝ ստեղծելով հարկային բարենպաստ պայմաններ:

դ. Մաքսային

Պետք է ձևավորել բարենպաստ հարկային և մաքսային քաղաքականություն՝ մրցունակ հայկական արտադրանքը միջազգային շուկա արտահանողների համար:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Արտաքին առևտրի ոլորտում կուսակցությունն անհրաժեշտ է համարում ապահովել առավելագույն ազատականացում, աջակցել համաշխարհային շուկայում մրցունակ արտադրանք ապահովող ձեռնարկություններին:

ը. Վճարային (առևտրային) հաշվեկշիռ

Կուսակցությունը գտնում է, որ պետական քաղաքականությունն անհրաժեշտ է ուղղել արտահանման խրախուսմանը, վարչական սահմանափակումների վերացմանը նպաստող օրենսդրական դաշտի ստեղծմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ պետության ներսում զբաղվածության մակարդակի էական իջեցման վտանգ կա:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Ներդրումների խթանում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ֆինանսական ներդրումների բնագավառում իրականացնել կառուցվածքային փոփոխություններ՝ ի հաշիվ մասնավոր ներդրումների աճի և կայուն, կանխատեսելի պայմանների ստեղծման:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Պետք է ստեղծել ազատ շուկայական հարաբերություններին համապատասխան ֆինանսավարկային համակարգ:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Կուսակցությունը ձգտում է այնպիսի հասարակության, որում կգործեն անձի ազատության, մասնավոր սեփականության անձեռնմխելիության և ազատ մրցակցության վրա հիմնված շուկայական հարաբերությունների և պետական նվազագույն միջամտության սկզբունքները, որում կկենսագործվի «բարեկեցիկ հասարակության» իդեալը:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Կուսակցությունը կաջակցի շուկայական տնտեսությանը ճկունություն և դինամիզմ հաղորդող փոքր և միջին բիզնեսին, կխրախուսի այդ ոլորտում ֆինանսական ներդրումներ և վարկեր տրամադրող կառույցների գործունեությանը:

ը. Կոռուպցիայի հաղթահարում

Կուսակցությունը հետևողականորեն հետամուտ կլինի իրավապահ համակարգի արմատական վերափոխման խնդրին, որի արդյունքում կապահովվի օրինազանցությունների, հանցագործությունների և կոռուպցիայի դեմ ակտիվ պայքարի հնարավորությունը:

թ. Արդյունաբերության զարգացում

Կուսակցությունն առաջնային է համարում արդյունաբերության այն ճյուղերը, որոնց զարգացումն ինքնին կնպաստի մյուս ճյուղերի և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Կուսակցությունը գտնում է, որ գյուղի աշխատավորների համար անհրաժեշտ է ապահովել լիարժեք սեփականատեր լինելու իրավունքը, պետական օժանդակությամբ արագացնել վարկավորման համակարգերի ձևավորումը:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Կուսակցությունը գտնում է, որ հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման կարևորագույն առանցքն էներգետիկ կայուն համակարգն է:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Կուսակցության կարծիքով առանձին դիտարկման է արժանի տրանսպորտի զարգացումը՝ ինչպես օդային, երկաթուղային, այնպես էլ ճանապարհային: Հայաստանը լուրջ հեռանկարներ չի կարող ունենալ առանց զարգացած օդանավակայանների, առանց կազմակերպված բեռնափոխադրումների, զարգացած ուղևորատար

տրանսպորտի, բարեկարգ ճանապարհների: Կուսակցությունն էներգետիկայի բնագավառում անհրաժեշտ է համարում իրավական դաշտի ապահովումը՝ էլեկտրաէներգիայի հատկացման և սպառման աշխատանքներում կամայականությունները և օրինազանցությունները բացառելու համար:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Սոցիալական համակարգի ստեղծման հիմքը շուկայական հարաբերություններն են: Քաղաքացիների սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նախաձեռնությունները չպետք է հակասեն շուկայական օրենքներին:

ա. Աղքատության հաղթահարում

Կուսակցությունը գտնում է, որ սոցիալական քաղաքականությունը պետք է ուղղված լինի բնակչության մեծամասնության սոցիալական վիճակի բարելավմանը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Կուսակցությունը գտնում է, որ պետք է պետական հետևողական քաղաքականություն վարել՝ ուղղված Հայաստանում միջին խավի ձևավորմանը և ամրապնդմանը: Միջին խավի լայն շերտի առաջացումն ասպարեզ կբերի այն ընդգծված սոցիալ-տնտեսական շահերը, որոնք կարող են ազատականությունը և ժողովրդավարությունն առաջ մղել քաղաքական իրականությունում:

գ. Զբաղվածության ապահովում

Կուսակցությունը գտնում է, որ տնտեսության աճը նախևառաջ պետք է ուղղել զբաղվածության աճին: Հայաստանում տնտեսության աճի առաջին խնդիրը պետք է լինի աշխատատեղերի ստեղծումը:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Սոցիալական քաղաքականության կարևորագույն գործոններից է առողջապահությունը, որի բարձրորակությունն ու մատչելիությունը կուսակցությունը ելակետային է համարում: Կուսակցությունը կնպաստի և հետամուտ կլինի, որ բուժման հավասար պայմաններ ապահովվեն հասարակության բոլոր անդամների համար, կազմվեն արդյունաբերության զարգացման հեռանկարային ռազմավարական համալիր ծրագրեր, որոնց իրականացման հնարավորությունը կուսակցությունը տեսնում է ոչ միայն պետական ֆինանսավորման միջոցով, այլև պարտադիր և կամավոր ապահովագրական հիմանդրամների հաշվին:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը համոզված է, որ սոցիալական ապահովության համակարգի բարելավումը տնտեսական նոր համակարգի կայացման ամենաէական պայմանն է:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը կնպաստի գիտատեխնիկական ներուժի նպատակային օգտագործմանը՝ գիտության և կրթության ոլորտներում հետազոտությունների արդյունքների նախագծման, նոր տեխնոլոգիաների մշակման, մասնագետների պատրաստման, որակավորման և համաշխարհային շուկա ներկայացնելու հարցում:

ը. Գիտության զարգացում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում մշակել գիտության զարգացման հեռանկարային ծրագրեր, այդ թվում՝ մասնագետների վերապատրաստում արտասահմանյան ժամանակակից գիտական կենտրոններում, գիտական մտքի արտահոսքի կանխում, ԲՈՒՀ-ական գիտական մտքի զարգացում:

թ. Մշակույթ

Կուսակցությունը գտնում է, որ տնտեսական բարեփոխումների բուն նպատակներից մեկն էլ գիտության և մշակույթի ոլորտի ֆինանսավորման ապահովման հարցն է: Գիտության բարձր մակարդակը, հասարակության մշակութային զարգացվածությունը, ինտելեկտուալ և հոգևոր ներուժը պետք է լինեն մեր երկրի հիմնական միջոցներն ու առավելությունները 21-րդ դարում համաշխարհային քաղաքակրթության մեջ մեր արժանի տեղն ու դերն ապահովելու համար:

ժ. Սպորտ

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում նաև հոգ տանել նոր սերնդի ձևավորման մասին՝ որպես նորանկախ ազատ երկրի քաղաքացու: Այս առումով կուսակցությունը նպաստելու է, որպեսզի ֆիզիկապես կոփված լինելը դառնա հանրամատչելի արժեք՝ «առողջ սերունդ՝ առողջ հասարակություն» կարգախոսով: Կուսակցությունը հետամուտ է լինելու, որ Հայաստանում սպորտի զարգացման ուղղությամբ մշակվի և իրականացվի պետական հատուկ քաղաքականություն:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Կուսակցությունը գտնում է, որ անցումային փուլում պետությունը չի կարող անտարբեր և չեզոք դիրք գրավել քաղաքացիական հասարակության նկատմամբ: Այն լուրջ խնդիրներ ունի՝ ստեղծելու այնպիսի մթնոլորտ, որում քաղաքացիական հասարակության կառույցները կգործեն նրանց անդամակցող քաղաքացիների անմիջական վերահսկողությամբ:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Կուսակցությունը հետամուտ է լինելու ՀՀ-ում հենց այնպիսի Ժողովրդավարության կայացմանը, որը կվերացնի ստեղծված անվստահության մթնոլորտը, հակակրանքը, թշնամանքը և այն ամենը, ինչը հանրապետությունը տանում է դեպի ճահճացում՝ վտանգելով ժողովրդավարության փխրուն հիմքերը:;

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցությունը գտնում է, որ ազատությունը կենսագործունեության այս կամ այն ոլորտում մարդու իրական ընտրություն կատարելու հնարավորությունն է, որը չպետք է սահմանափակված կամ պայմանավորված լինի այլ հանգամանքներով:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Կուսակցությունը գտնում է, որ ժողովրդական պետության հիմքը ժողովրդի միասնական կամքն է, նպատակը՝ իր քաղաքացիների սոցիալական ապահովության, մտավոր և հոգևոր զարգացման նախադրյալների ստեղծումը: Ժողովրդավարությունը ոչ միայն մեծամասնության կամքի արտահայտումն է, այլև իրավունքների պաշտպանությունը:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը համոզված է, որ առանց անկախ դատական համակարգի հնարավոր չէ զարգացնել շուկայական տնտեսությունը, երաշխավորել մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, պայմաններ ստեղծել ազատ և արդար մրցակցության համար, երաշխավորել մարդկանց իրավունքներն ու ազատությունները :

ե. Ընտրական համակարգի բարելավում

Կուսակցությունը գտնում է, որ ազատականության պայմանն է՝ ընտրական իրավունքների երաշխավորումը, ընդդիմության իրավունքների ընդլայնումը: Անցումը դեպի նոր համակարգ պետք է երաշխավորի քաղաքական բանավեճի իրավունքի փոխանցումը ողջ ժողովրդին:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ապահովել ժողովրդավարությունը բազմակուսակցական հիմունքներով գործող խորհրդարանում, երաշխավորել բազմակուսակցական համակարգի ազատ գործունեությունը հանրապետության տարածքում և հավասար պայմաններ ստեղծել բոլոր կուսակցությունների գործունեության և ընդդիմության ձևավորման համար:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Պետության բնապահպանական քաղաքականության հիմնական խնդիրները կուսակցությունը համարում է ոչ միայն բնությանը հասցված վնասի հատուցումը, այլև տնտեսական, սոցիալական և ուրիշ այն անհրաժեշտ պայմանների ստեղծումը, որոնք ապագայում կհատուցեն տարիների վնասը:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **2003թ. ընտրություններ**

  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 41

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **2003թ. ընտրություններ՝** մասնակցել է

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ III Գումարում՝ 6

21. ՄԻԱՑՅԱԼ ԱԶԱՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՄԻԱԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Վարդանանց 11
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 52-94-46
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** info@miak.am
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.miak.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 18.02.2007թ..
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 18.02.2007թ..
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 26.02.2007թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 1000 անդամ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Հայկական ժամանակ» 17.01.2007թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Խորհուրդ՝ 15 անդամ
- Քարտուղարություն՝ 5 անդամ
- Կուսակցության գլխավոր քարտուղար՝ Լևոն Մարտիրոսյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուսակցության գլխավոր նպատակն է՝ կարճաժամկետ հեռանկարում Հայաստանը հասցնել աշխարհի ամենազարգացած երկրների բարեկեցության և տնտեսական զարգացման մակարդակին:
Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- Հայաստանում լիարժեք ժողովրդավարության հաստատում,
- իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացում և զարգացում,
- տնտեսության և հասարակական կյանքի ազատականացում,
- Արցախի հիմնահարցի հայանպաստ լուծում:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Հայաստանի բոլոր հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատում ու զարգացում:
2. Եվրոպական երկրների հետ անհատական հարաբերությունների զարգացում՝ առաջին հերթին խորացնելով ավանդական հարաբերությունները Ֆրանսիայի հետ և լրջորեն զարգացնելով համագործակցությունը Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իտալիայի, ինչպես նաև Եվրամիության անդամ այլ երկրների հետ:
3. Բազմաբնույթ հարաբերություններ հայկական սփյուռք ունեցող բոլոր երկրների հետ:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունը գտնում է, որ ՀՀ-ն պետք է ունենա արտաքին քաղաքականության երկարաժամկետ այնպիսի հայեցակարգ, որը թույլ կտա վարել ճկուն և պրոակտիվ արտաքին քաղաքականություն:
Հայաստանի պետական շահերի պաշտպանությունն անխախտելի հիմնադրույթ է բոլոր երկրների և կազմակերպությունների հետ մեր հարաբերություններում:

ա. Եվրաինտեգրում

Կուսակցության համար կարևոր է ոչ այնքան Եվրամիությանն անդամակցության փաստը, որքան եվրոպական արժեքների լիարժեք հաղթանակը Հայաստանում, վերջինիս կողմից Եվրոպական Միության անդամության թեկնածուներին առաջադրվող հիմնական պահանջների բավարարումը կարճաժամկետ հեռանկարում և փաստացի անդամագրման միջնաժամկետ հեռանկարով:

ե. ԱՄՆ

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում փոխշահավետ համագործակցությունը և հարաբերությունների խորացումն ԱՄՆ-ի հետ:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Պետք է հարաբերությունների հետագա զարգացում ավանդական դաշնակից Ռուսաստանի հետ քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային և այլ բնագավառներում:

է. Թուրքիա և Ադրբեջան

Հայաստանը պետք է փորձի հնարավորինս ակտիվացնել պաշտոնական և ոչպաշտոնական շփումներն Ադրբեջանի և Թուրքիայի հետ՝ խրախուսելով հատկապես ժողովրդական դիվանագիտության խողովակները:

թ. Իրան

Անհրաժեշտ է հարևան Իրանի հետ բարեկամական հարաբերությունների պահպանում ու զարգացում:

ժ. Վրաստան

Վրաստանի հետ Հայաստանը պետք է ձգտի հաստատել դաշնակցայինին մոտ հարաբերություններ, ինչը հնարավորություն կտա լավագույնս պաշտպանել մեր ազգային շահերն ինչպես տարածաշրջանային գործերում, այնպես էլ Ջավախքի հայապահպանության խնդրի առումով:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

ՀՀ-ն պետք է ոչ միայն արձագանքի տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացներին, այլև պարբերաբար հանդես գա մեր ազգային շահերից բխող արտաքին քաղաքական նախաձեռնություններով իր անմիջական հարևանների և տարածաշրջանային տերությունների հետ հարաբերություններում:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում Արցախի հարցի հայանպաստ լուծումը՝ հիմնված ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա: Արցախյան խնդրի կարգավորումը պետք է բացառի ԼՂՀ-ի ենթակայությունն

Ադրբեջանին, ապահովի հուսալի ցամաքային կապը Հայաստանի և Արցախի միջև և որևէ պարագայում չպետք է խախտի ՀՀ ինքնիշխանությունն իր սեփական տարածքների նկատմամբ: Հայաստանում և Արցախում ժողովրդավարության անշրջելի հաղթանակն Արցախի հարցի հայանպաստ լուծման կարևորագույն տարրերից է:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Գլոբալ շուկայում Սփյուռքը հանդիսանում է Հայաստանի հիմնական մրցակցային առավելությունը, որը ենթադրում է ունեցած ներուժի առավելագույն արդյունավետ օգտագործում: Այնուամենայնիվ հարկավոր է գիտակցել, որ Սփյուռքի հիմնական ներուժը կենտրոնացած է ոչ թե ներդրումների ոլորտում (կապիտալը ազգություն չի ճանաչում), այլ մարդկային կապիտալի ոլորտում:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Տնտեսության ազատականացում:
2. Հասարակական կյանքի ազատականացում:
3. Ժողովրդավարացում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Կուսակցությունն առաջարկում է պետության դերի առավելագույն սահմանափակում և պետության գործառույթների կենտրոնացում քաղաքականության, հասարակական կյանքի և տնտեսության այն ոլորտներում միայն, որտեղ հնարավոր է հասնել թեկուզև նվազագույն արդյունավետության:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

ա. Դրամավարկային

Դրամավարկային քաղաքականության իրականացումը ենթադրում է ինստիտուցիոնալ համակարգի բավարար զարգացում, որը Հայաստանում ներկայումս գտնվում է սաղմնային վիճակում:

բ. Բյուջետային

Հարկավոր է արմատապես վերանայել բյուջետային քաղաքականությունը: Բյուջեի ծախսերը պետք է կախված լինեն ոչ թե գանձվող պետական եկամուտներից, այլ այն նպատակներից և արդյունքներից, որոնց պետությունը ձգտում է հասնել: Ելնելով դրանից՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման տարբեր մեխանիզմների օգտագործումը (արտաքին և ներքին ոխառություններ) պետք է ուղղված լինի դրված խնդիրների իրականացմանը և ոչ թե դրված խնդիրները պետք է կախվածության մեջ լինեն ֆինանսավորման առկայությունից:

գ. Հարկային

Հայաստանի ներկա պայմաններում հենց հարկային քաղաքականությունն է հանդիսանում համակարգի ձևախեղման հիմնական տարրը և պահանջում է կտրուկ բարեփոխումների իրականացում: Հարկային համակարգի ֆիսկալ դերը պետք է փոխարինվի ծառայություն մատուցողի դերով, որն իր հերթին կապահովի ֆորմալ ինստիտուտի՝ օրենքի պահանջների կատարումը:
Անհրաժեշտ է ապահովել հարկային համակարգի առավելագույն պարզությունը և հավասարազորությունը բոլոր սուբյեկտների նկատմամբ:

դ. Մաքսային

Հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը, ինչպես նաև ներքին շուկայի ծավալները՝ կուսակցությունն առաջարկում է լիովին հրաժարվել ցանկացած տիպի մաքսային տուրքերից՝ որպես մաքսային քաղաքականության իրականացման գործիք: Հարկավոր է առավելագույնս պարզեցնել մաքսային վարչարարության մնացած բոլոր գործառույթները, ինչպես նաև ապահովել թափանցիկությունը՝ դրանց դեֆորմացիոն դերը կտրուկ նվազեցնելու համար:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Ներդրումների խթանում

Սեփականության իրավունքի պաշտպանության ապահովումը հանդիսանում է այն հիմնարար ինստիտուտը, որի արդյունավետությամբ է պայմանավորված ներքին և արտաքին ներդրումների անհրաժեշտ ծավալների ու մակարդակի ապահովումը:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում

Հայաստանի տնտեսության ծավալները ենթադրում են նրա օբյեկտիվ կախվածությունը գլոբալ ֆինանսական համակարգից:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Գործող համակարգի բարեփոխման հիմնական մոտեցումը հավասար իրավունքների (մրցակցության) պաշտպանության դերի վերաիմաստավորորմն է՝որպես պետության կարևորգույն գործառույթ:

է. Ստվերային տնտեսության կրճատում և կոռուպցիայի հաղթահարում

Կոռուպցիայի և ստվերային տնտեսության խնդիրները ֆորմալ ինստիտուտների անարդյունավետության հետևանքներ են: Ելնելով դրանից՝ այս խնդրի միակ լուծումն է հանդիսանում ինստիտուցիոնալ համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը: Կուսակցությունը համոզված է, որ հետևանքի, այլ ոչ պատճառի դեմ պայքարի փորձերը ձախողման են դատապարտված, իսկ Հայաստանի դեպքում՝ դրանք ոչ թե պայքար են, այլ պայքարի նմանակում:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Աղքատության հաղթահարում

Հայաստանի ողջ տնտեսության զարգացման և կայուն տնտեսական աճի ապահովման վրա բացասական ներգործություն է ունենում և լուրջ խնդիրներից է ոչ այնքան հասարակության աղքատության մակարդակը, որքան հասարակության ներսում օրեցօր աճող անհավասարությունը, որն արդյունքում հանգեցնում է հավասար մեկնարկային հնարավորությունների սկզբունքի խախտմանը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Այս հիմնախնդրի լուծմանը պետք է նպատակաուղղված լինի առաջնահերթ սոցիալական արդյունավետ քաղաքականության իրականացումը: Ինստիտուցիոնալ թույլ պետության առկայության պայմաններում նման

քաղաքականության իրականացումը պետական մեխանիզմների միջոցով կլինի քիչ արդյունավետ, եթե ոչ՝ անարդյունավետ: Դեռ ավելին, նման պայմաններում նշված մեխանիզմի կիրառումը, չնպաստելով այս խնդրի լուծմանը, կհանգեցնի նաև ողջ ինստիտուցիոնալ համակարգի նկատելի և լրացուցիչ ձևախեղման:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Առողջապահությունը հանդիսանում է Հայաստանի տնտեսության կայուն աճի ապահովման այն կարևորագույն գործոններից մեկը, որում շուկայական մեխանիզմների հնարավորինս լայն և համալիր ներդրումը մեծագույն չափով կնպաստի ոլորտի արդյունավետ գործունեության ապահովմանը:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կրթության ոլորտում մրցակցային պայմաններում անցումն ըստ արդյունքի ֆինանսավորմանը, բոլոր (անկախ սեփականության ձևից) կրթական հիմնարկների մուտքը դեպի պետական աղբյուրներ, պետպատվերի տեղաբաշխումը մրցակցային աճուրդների (տենդերների) միջոցով կամ սպառողներին, այլ ոչ ծառայություն մատուցողներին, պետական գրանտներ հատկացնելու միջոցով, կբերի ինչպես կրթության որակի շեշտակի աճի, այնպես էլ միջոցների ծախսման առավելագույն արդյունավետության:

Պետության կողմից ֆինանսավորվող և անվճար համարվող ուսուցումից վճարովիին անցնելը կդառնա կրթական համակարգի հիմնական բարեփոխումը:

ը. Գիտության զարգացում

Առողջ մրցակցային միջավայրի ձևավորումը գիտության ոլորտում ի վիճակի է բարձրացնել գիտական հիմնարկների գլոբալ մրցունակությունը, որը հանդիսանում է կայուն զարգացման կարևորագույն գործոն: Տվյալ ոլորտում բարեփոխումների իրականացման հիմնական մոտեցումը պետք է լինի հրաժարվելն իներցիոն ֆինանսավորման մնացորդային եղանակից պետպատվերի մեխանիզմերի միջոցով հոգուտ սպառողների, այլ ոչ թե ծառայություն մատուցողների ֆինանսավորման:

թ. Մշակույթ

Մշակույթի ոլորտում տարվելիք քաղաքականության առումով առաջնահերթ խնդիրներից է օրենսդրական համապատասխան դաշտի ձևավորման և գործնական քայլերի միջոցով ազգային մշակույթի զարգացման նպաստավոր պայմանների ստեղծումը: Սակայն մշակույթի ոլորտում նույնպես պետությունը պետք է կենտրոնանա միայն այն խնդիրների լուծման վրա, որոնք այլ մեխանիզմներով դեռևս անհնարին է իրականացնել:

ի. Այլ /Բանակ/

Երկրի պաշտպանության ապահովումը հանդիսանում է պետության բացառիկ մենաշնորհը և չի կարող իրականացվել այլ մեխանիզմների միջոցով: Ելնելով դրանից՝ պաշտպանության արդյունավետ և պրոֆեսիոնալ համակարգի ստեղծումը, որն ի վիճակի է լուծել Հայաստանի առջև ծառացած խնդիրները, հանդիսանում է զարգացման ժամանակակից փուլի կարևորագույն խնդիրը:

Անհրաժեշտ է իրականացնել ռազմական բարեփոխում: Պայմանագրային ծառայությունն ավարտած զինծառայողները պետք է ունենան առավելություն առողջապահության, սոցիալական սպասարկման, կրթության և այլ բնագավառներում պետական ֆինանսավորում ստանալու համար:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Կուսակցությունը գտնում է, որ ՀՀ-ն պետք է ունենա նոր Սահմանադրություն, որը վստահության քվե կստանա ժողովրդի մեծամասնության կողմից: Նոր Սահմանադրությունը պետք է մասնավորապես ապահովի անմիջական ժողովրդավարության ինստիտուտի ընդլայնումն ազգային և տեղական նշանակության կարևորագույն խնդիրների վերաբերյալ հանրաքվեների անցկացման միջոցով:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Պետք է ԶԼՄ-ի, հասարակական միավորումների և արհեստակցական միությունների պետական գրանցման վերացում: Այս կառույցներն իրենք են հայտարարում իրենց հիմնադրման, գործունեության և լուծարման մասին: Պետությունը կարող է միջամտել նրանց գործունեությանը միայն նրանց կողմից քրեական օրենսդրության խախտման պարագայում:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Նոր Սահմանադրությունը պետք է ապահովի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա խարսխված ժողովրդավարական հասարակարգի կայացումը, պետական կառավարման արդյունավետ համակարգի ստեղծումը և քաղաքացիական հասարակության զարգացման համար անհրաժեշտ բոլոր նախապայմանները:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Նոր Սահմանադրությունը պետք է ապահովի անկախ, անաչառ և պրոֆեսիոնալ դատական իշխանության ստեղծումը, որն ի զորու է ապահովել ժողովրդավարությունն ու տնտեսության ազատությունը, դատական իշխանության համակարգից դատախազության դուրսբերումը, իսկ դատախազությունից քննչական գործառույթի դուրսբերումը՝ առանձին քննչական հետախուզական ծառայության ստեղծումով:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում

Որոշումների ընդունման ընթացակարգի առավելագույն պարզեցումը, շահերի անհրաժեշտ հավասարակշռման ձևավորումը, և կրկնօրինակումը բացառելու նպատակով գոյություն ունեցող գործառույթների վերանայումը՝ գործառույթների և պատասխանատվության հստակ տարանջատումով, կբարձրացնեն պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետությունը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

ՀՀ ազգային անվտանգությունը պետության և քաղաքացիների համար ցանկացած տեսակի սպառնալիքներից ու վտանգներից զերծ երկրի ներքին ու արտաքին միջավայրերում լիարժեք գործելու ազատությունն է, որի ապահովման նպատակով անհրաժեշտ է ձևավորել անվտանգության գործուն ու ճկուն համակարգ:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

22. «ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՆԺԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք.Երևան, Մամիկոնյանց 58
- **Իրավաբանական հասցեն՝** ք.Երևան, Դավթաշեն 1թաղ., 26շ., բն. 64
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 23-25-05, 23-13-00
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** nor_jamanakner@yahoo.com
- **Հիմնադրման տարեթիվը՝** 02.12.2003թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 02.12.2003թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 08.01.2004թ.
- **Պետական. վերագրանցման ամսաթիվը՝** 18.07.2005 թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 24077 անդամ
- **Կուսակցության պաշտոնական մամուլը՝** «Նոր ժամանակներ» պաշտոնաթերթ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Իրավունք» շաբաթաթերթ, 2003թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Վարչություն՝ 7 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Արամ Ռաֆիկի Կարապետյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուսակցության հիմնադիրները մեր երկիրը տարածաշրջանային ուժեղ պետություն դարձնելու բաղձալի հեռանկարով տոգորված, հենվելով պետական մտածողության և հայաստանակենտրոնության հիմնարար սկզբունքների վրա՝ նպատակադրվում են առաջիկայում իրենց շուրջը համախմբել հասարակական ու քաղաքական դաշտում առկա առողջ ուժերին և առաջնորդել նրանց, ինչը կլինի մեր կուսակցության արդյունավետ գործունեության գրավականը:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակին՝ կուսակցությունը գտնում է, որ այսօր արդեն չպետք է բավարարվել միայն այն բնութագրող հիմնական գործոնների թվարկումով, այլ նաև պետք է ներկայացնել այն ուղղությունները, որոնք կնպաստեն երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգերի օրեցօր զարգացմանը: Առաջիկա ծրագրում նշվելու է, թե ինչ և ինչպես ենք ցանկանում բարեփոխել կամ առհասարակ փոխել, ինչ ճանապարհներով ենք հասնելու այդ փոփոխություններին, որքանով են իրատեսական մեր մոտեցումները և ինչ չափով այդ բարեփոխումները կարող են նպաստել իրավիճակի այնպիսի բարելավմանը, որ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի իր վրա զգա կատարված բարեփոխումների բարենպաստ ազդեցությունը:

Կուսակցությունը առաջնորդվում է ժողովրդավարության և ազատական տնտեսության, մասնագիտական փորձառության և սոցիալական արդարության, օրենքի գերակայության և ամուր պետական իշխանության, արժանապատվության և պատասխանատվության, պետականամետության (պետական մտածողության) և Հզոր Հայաստանի, Պանարմենիզմի (հայաստանակենտրոնության) և Հոգևոր Միասնության (ներազգային հանդուրժողականության), տարածաշրջանային գործակցության և քաղաքակրթական խաչմերուկի հիմնարար սկզբունքներով:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

Արտաքին աշխարհի հետ Հայաստանի ազգային շահերի առավել նպատակային և համակարգված իրագործման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ, դրանցից են՝ մշակել Հայաստանի և Սփյուռքի համակարգված մարտավարություն՝ համազգային նշանակություն ունեցող խնդիրների լուծման ուղղությամբ, որոնք են՝

1. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի իրավական լուծումը,
2. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը,
3. տարածաշրջանում առավել ծանրակշիռ դերակատարության ստանձնումը:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունը գտնում է, որ արտաքին քաղաքականությունը պետք է պայմանավորված լինի միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության պետական շահերի իրագործման գերակայությամբ: Ունենալով խիստ պրագմատիկ հենք՝ ՀՀ արտաքին քաղաքականության իրագործումը պետք է տեղավորվի միջազգային օրենքների և նորմերի շրջանակում և նպատակաուղղված լինի մեր ազգային շահերի ապահովմանը ցանկացած քաղաքական իրավիճակում:

ա. Եվրաինտեգրում

Եվրոպայի հետ հարաբերություններում կուսակցությունն առաջնորդվելու է հետևյալ սկզբունքներով՝ սկզբունքային խոչընդոտներ չկան Հայաստանը եվրոպական կառույցներին ինտեգրելու համար, Եվրախորհրդի հետ հարաբերություններում անհրաժեշտ է ձգտել նրան, որ արհեստականորեն չարագացվի հայկական ատոմակայանի փակման գործընթացը:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)

Անկախ պետությունների համագործակցության կոլեկտիվ անվտանգության դաշինքն անհրաժեշտ է պատերազմի կանխման ու խաղաղության ապահովման համար: Կուսակցությունը հանդես է գալիս իր դաշինքի գործընկեր պետությունների հետ լայն ու սերտ համագործակցության օգտին: Անվտանգության ընդհանուր քաղաքականությունը պահանջում է համագործակցություն ռազմական ոլորտից դուրս: Դաշինքի իմաստը կուսակցությունը տեսնում է մեր երկրի նկատմամբ ուժի կիրառումը կամ ուժի կիրառման սպառնալիքը կանխելու մեջ:

դ. ՀԱՊԿ (NATO)

Կուսակցությունը գտնում է, որ Հայաստան-ՆԱՏՕ հարաբերություններում պետք է առաջնորդվել բացառապես այդ հարաբերություններից օգուտ ստանալու հրամայականով՝ միաժամանակ բացառելով այդ հարաբերությունների արդյունքում Հայաստանի տարածքում երրորդ երկրների դեմ ուղղված պլացդարմի ստեղծումը:

ե. ԱՄՆ

Հաշվի առնելով Հայաստանի՝ տարածաշրջանային հզոր պետություն դառնալու գերակայությունը՝ կուսակցությունը գտնում է, որ ԱՄՆ-ն ավելի կզարգացնի հայ-ամերիկյան քաղաքական-տնտեսական հարաբերությունները՝ դրանց հաղորդելով ավելի բարձր կարգավիճակ:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Կուսակցությունը գտնում է, որ Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության կարևորագույն տարածաշրջանային դաշնակիցն է, և նրա հետ հարաբերությունները կառուցվելու են հետևյալ սկզբունքներով՝

- անցում դեկլարատիվ բնույթ կրող հարաբերություններից պրագմատիկ հիմքի վրա կառուցված պայմանագրային հարաբերությունների,
- ռուսական ռազմահենակետի և ռուսական սահմանապահ զորքերի ներկայության պահպանում՝ որպես ՀՀ ազգային անվտանգության երաշխիքներից մեկը,
- երկկողմ բանակցությունների միջոցով հասնել դիվանագիտական այնպիսի հարթության, որ ղարաբաղյան հիմնահարցում Ռուսաստանը հանդես գա հայանպաստ քաղաքականությամբ:

է. Թուրքիա

Թուրքիայի հետ հարաբերություններում կուսակցությունը հաշվի է առնում այն փաստը, որ Թուրքիան հեռու է բարեկամական երկիր լինելուց, և միաժամանակ անհրաժեշտ է բացառել այդ երկրի հետ թշնամական հարաբերությունները: Ելնելով դրանից՝

- հայ-թուրքական հարաբերություններում հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և դրա հետևանքների վերացման խնդիրը պետք է դրվի դիվանագիտական այնպիսի հիմքի վրա, որպեսզի դրանից չտուժեն երկկողմ բարիդրացիական հարաբերությունները,
- հայ-թուրքական հարաբերությունների կառուցման գործընթացում անընդունելի համարել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին վերաբերող Թուրքիայի ներկայիս պահանջները:

ը. Ադրբեջան

Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունները կառուցելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մեր երկրները պաշտոնապես պատերազմական հարաբերություններ չեն ունեցել: Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծումից հետո պետք է երկկողմ բանակցությունների միջոցով հասնել Հայաստանի շրջափակման վերացմանը:

թ. Իրան

Կուսակցությունը գտնում է, որ հայ-իրանական հարաբերությունները կառուցվելու են Ռուսաստան-Հայաստան-Իրան-Արաբական աշխարհ ռազմավարական առանցքի ձևավորման հայեցակարգից ելնելով: Իսկ առաջնահերթ խնդիրներն են՝

- հայ-իրանական տրանզիտային պայմանագրի կնքում, որը Հայաստանին կապահովի ապրանքների ներմուծման ու արտահանման հնարավորություն Մերձավոր Արևելքի տարածաշրջանում,
- Իրան-Հայաաստան գազատարի և նավթատարի կառուցում, դրա հիման վրա ՀՀ տարածքում նավթավերամշակման գործարանի ստեղծում:

ժ. Վրաստան

Հայ-վրացական հարաբերությունների կառուցման սկզբունքները հետևյալն են՝

- Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն նպաստում է Վրաստանում հայկական համայնքի էթնիկ, ազգապահպան քաղաքականությանը,
- հայ-վրացական բանակցությունների միջոցով տրանզիտային պայմանագրի կնքում, որը կապահովի բարենպաստ պայմաններով Հայաստանի ելքը դեպի Ռուսաստան և Վրաստանի ելքը դեպի Իրան,
- հնարավորության դեպքում հեռանկարում ընդհանուր մաքսային տարածքի վերաբերյալ երկկողմանի պայմանագրի կնքում:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Կուսակցությունը տոգորված է Հայաստանը տարածաշրջանային գործակցության հզոր կողմ դարձնելու բաղձալի հեռանկարով և կառաջնորդվի Հայաստանի՝ աշխարհաքաղաքական տեսանկյունից քաղաքակրթական խաչմերուկի դեր ստանձնելու՝ պատմությամբ ընձեռվող հնարավորությունը խիստ համակարգված օգտագործելու կենսական պահանջով:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

ՆԺԿ-ի դիրքորոշումն այն է, որ ԼՂՀ-ն փաստացի կայացած պետություն է, և պետք է աշխատանք տանել նրա անկախության միջազգային իրավական ճանաչման համար:

խ. Ցեղասպանության ճանաչում

Ցեղասպանության ճանաչումը որպես բարոյական չափանիշ պետք է դրվի հայ-թուրքական հարաբերությունների հիմքում: Պետք է հասնել այն բանին, որ ցեղասպանության ճանաչումը՝ որպես ժողովուրդների ֆիզիկական բնաջնջման վտանգի վերացման կարևորագույն հակակշիռ, միջազգային իրավական դաշտից տեղափոխվի մարդու և ազգի ոտնահարված իրավունքների նկատմամբ պատմական արդարության վերականգնման գործողությունների դաշտ:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Անհրաժեշտ է արմատապես վերանայել «Հայրենիք-Սփյուռք» հարաբերությունների բովանդակությունը՝ նոր իմաստավորում ներդնելով այդ հասկացողության հիմքում: Սփյուռքի խնդիրները լուծելու և հայրենիքի հետ կապն ավելի սերտ ու արդյունավետ դարձնելու համար կուսակցությունն առաջարկում է ստեղծել Համաշխարհային հայկական կոնգրես, որին մաս են կազմելու բոլոր գաղթօջախները: Այդ մարմնի կենտրոնատեղին գտնվելու է ՀՀ մայրաքաղաք Երևանում:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

Հաշվի առնելով հասարակական պահանջով թելադրված օրենքների ժամանակային հարափոփոխության սկզբունքը՝ Ազգային Ժողովի ճկուն քաղաքականությամբ պետք է իրականացվեն հետևյալ հիմնախնդիրները.

1. երկրում իրական ժողովրդավարության հաստատման սահմանադրական նորմերի ամրագրում,

2. երկրում օրենքի գերակայության ապահովում, որի պայմաններում արմատախիլ կարվեն կոռուպցիան և կաշառակերությունը,
3. կրթական համակարգում իրավակրթության դերի բարձրացում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Պետական կառավարումը տնտեսության ասպարեզում ներառում է չորս գլխավոր ուղղություններ՝

1. արդյունաբերության հիմնարար ուղղությունների՝ հատկապես բարձր տեխնոլոգիաների զարգացմանը պետական հովանավորություն և անմիջական ֆինանսական աջակցություն,
2. պետական վարկավորում և տնտեսության մրցունակ ուղղություններին աջակցություն,
3. արտասահմանյան ներդրումների ներգրավման համար առավել նպաստավոր պայմանների, բարենպաստ օրենսդիր և հարկային դաշտի ձևավորում,
4. ագրոհամալիրին պետական աջակցություն և վարկավորում:

Գլխավորն այն է, թե ինչքանով է պետության ակտիվությունը տնտեսության ոլորտում բխում սովորական մարդու և հասարակության շահերից:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Բուն տնտեսության զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների շարքում անհրաժեշտ է օրենսդրության կատարելագործման ճանապարհով ապահովել պետության կարգավորիչ գործառույթները՝ տնտեսության բնականոն զարգացման կարևորագույն գործոններ հանդիսացող ազատ մրցակցության և սակագնային քաղաքականության գործընթացներում: Հատուկ դեպքերում համապատասխան օրենքի հիմքի վրա պետությունը կարող է հանդես գալ տնտեսվարող սուբյեկտի կարգավիճակով, անգամ մի շարք ռազմավարական ուղղություններում ունենալ մենաշնորհ:

գ. Հարկային

Անհրաժեշտ է հարկային արմատական բարեփոխման անցկացում: Այդ նպատակով պետք է արտադրության հարկային բեռը նվազեցնել մինչև 20-25%-ի մակարդակ, արտադրության զարգացմանն ու շրջանառու միջոցների ավելացմանն ուղղված շահութաբաժինն ազատել հարկերից:

զ. Տարածքային

Կուսակցությունը գտնում է, որ տարածքային կառավարման նման կառուցվածքը պետք է հիմնովին վերանայվի՝ վերադառնալով նախկինում իրեն լիովին արդարացրած և կառավարելի շրջանային բաժանման տարբերակին: Պետական կառավարման լիազորություններն այդ դեպքում համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով պետք է տրվեն ընտրովի շրջանային ղեկավար մարմնին:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Կարևորելով արտադրանքի իրացման համար սպառման շուկաների խնդիրը՝ կարևոր է ՀՀ բոլոր դիվանագիտական ներկայացուցչություններին կից ստեղծել առևտրական կցորդի ինստիտուտ, որը նպատակաուղղված պետք է լինի աշխարհի տարբեր երկրներին՝ Հայաստանում արտադրվող ապրանքները ներկայացնելուն, փոխշահավետ համաձայնագրեր կնքելուն, ֆինանսական և այլ ներդրումներ ներգրավելուն, Հայաստանում գործող թե մասնավոր, և թե պետական ձեռնարկություններին համապատասխան օժանդակություն ցուցաբերելու, արտաքին շուկայում իրենց տեղը գտնելու համար:

ը. Վճարային (առևտրային) հաշվեկշիռ

Արտահանման ծավալների ընդլայնման համար արտաքին առևտրում պետք է իրականացնել ողջամիտ պրոտեկցիոնիստական քաղաքականություն՝ նպատակ ունենալով ապահովել ներքին շուկայի և հայրենական արտադրողի պաշտպանությունը և արտահանման խթանումը:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Ազատ շուկայական հարաբերություններն այլևս այլընտրանք չունեն: Սակայն, ազատական տնտեսություն ասելով ամենևին էլ չպետք է հասկանալ վերջին 10-12 տարիներին Հայաստանում ձևավորված վայրի լիբերալիզմը, որը նպաստեց կոռուպցիայի, այսպես կոչված, տանիքային համակարգի, ստվերային տնտեսության արմատավորմանը, բոլոր հիմնական, շահութաբեր ոլորտների մենաշնորհային վիճակին և տնտեսության զարգացումն արգելակող երևույթների առաջացմանն ու զարգացմանը: Հետևաբար պետության տնտեսակարգի հիմքում պետք է դրված լինեն այնպիսի հիմնարար սկզբունքներ, որոնք երաշխավորում են ժողովրդավարական արժեքների հիմքի վրա կազմակերպված մրցակցություն:

ա. Ներդրումների խթանում

Անհրաժեշտ է ստեղծել ներքին ներդրումները խրախուսող օրենսդրության դաշտ:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Փոքր բիզնեսի զարգացումը պետք է իրականանա քլիրինգային հիմքի վրա՝ փոքր տեխնոլոգիաների ներդրումով:

թ. Արդյունաբերության զարգացում

Այսօր, ցավոք, հնարավոր չէ վերագործարկել այն բոլոր հզորությունները, որոնք առկա էին Հայաստանում Խորհրդային Միության ժամանակ: Ելնելով վերոհիշյալից՝ կուսակցությունը գտնում է, որ պետք է ընտրվեն այն լոկոմոտիվային ճյուղերը, որոնք պետք է խթանեն Հայաստանի տնտեսության զարգացումը: Դրանք են՝ քիմիական արդյունաբերությունը, թեթև արդյունաբերությունը, լեռնամետալուրգիական համալիրը, հաստոցաշինությունը, էլեկտրոնիկայի և բարձր տեխնոլոգիաների ոլորտը, ոսկերչության և թանկարժեք քարերի մշակման ոլորտը, սննդի արդյունաբերությունը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Կուսակցությունը, որպես ռազմավարություն, որդեգրվում է գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, պահպանման և իրացման հզոր համակարգի ստեղծումը, որը հանդես է գալիս որպես գյուղմթերքների ծավալների և տեսակների գլխավոր պատվիրատու: Այս ռազմավարական հիմնախնդրի իրականացման հետ կապված բոլոր գործընթացները դիտվում են որպես մարտավարություն Հայաստանի գյուղատնտեսական ողջ համալիրի համար (պարարտանյութերի, սերմացուի, բուժանյութերի, տեխնիկայի ապահովում և այլն):

Որպես ռազմավարություն որդեգրվում է նաև գյուղատնտեսական արտադրությամբ անմիջական զբաղվող սուբյեկտների (անհատ գյուղացիներ, ֆերմերային տնտեսություններ) համար առավել բարենպաստ պայմանների ստեղծումը:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում

Առաջիկա տասնամյակում Հայաստանի համար կարևորագույն խնդիր է մնալու տնտեսությանն էներգիայով ապահովելը՝ միաժամանակ ներդնելով այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կապահովեն հումքի և էներգիայի առավել խնայողական օգտագործումը:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Տնտեսության զարգացման, մասնավորապես արտադրանքի ինքնարժեքի վրա խիստ անբարենպաստ ազդեցություն են թողնում կոմունիկացիոն դժվարությունները: Այդ իսկ պատճառով կուսակցությունը նախատեսում է Վրաստանի հետ կնքել համապատասխան երկկողմ և բազմակողմ (Վրաստան-Հայաստան-Իրան, Հայաստան-Վրաստան-Ռուսաստան) տրանզիտային պայմանագրեր, ինչպես նաև չբացառելով այլ հնարավոր ուղիների գոյությունը: Հաղորդակցության ուղիները բացի տրանսպորտայինից լուծում են նաև հանրապետության էներգետիկ անվտանգության խնդիրը: Իսկ նավթամուղի կառուցման դեպքում հնարավոր կդառնա քայլեր ձեռնարկել Մեղրիում կամ Կապանում նավթավերամշակման գործարան կառուցելու ուղղությամբ՝ նավթամթերքի ներքին պահանջարկը բավարարելու նպատակով:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում

Տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է խթանել ինտելեկտուալ արտադրանքը, արտադրությունների գիտատար համալիրը և բարձրագույն որակի արդյունաբերական արտադրանքը: Այդ նպատակով պետք է միջոցառումներ անցկացնել վերականգնելու և տեխնոլոգիապես վերազինելու համար այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մեքենաշինության առաջատար ճյուղերը, ճշգրիտ սարքաշինությունն ու հաստոցաշինությունը և փոքր քիմիան:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Ազգաբնակչության սոցիալական խնդիրները «Նոր ժամանակներ» կուսակցության տեսանկյունից արմատական լուծում կարող են ստանալ արդյունաբերության և գյուղատնտեսության հիմնարար ուղղությունների զարգացման, ինչպես նաև երկրում առկա ստվերային տնտեսությունը օրինական հարկային դաշտ բերելու ճանապարհով, որի արդյունքում շեշտակի կաճեն բյուջեի մուտքերը:

ա. Աղքատության հաղթահարում

Դեպի մարդը կողմնորոշված սոցիալական քաղաքականության կարևորագույն խնդիրների թվին են պատկանում պաշտպանությունը զրկանքներից ու աղքատությունից և բնակչության կենսապայմանների ապահովման հիմունքները: Պետությունը, որպես հասարակության բարեկեցության երաշխավոր, առաքելություն ունի պաշտպանելու նյութական ու հոգևոր բարիքներին տիրելու համար պայքարող թույլերին ու փոքրամասնություններին: Այդ առաքելությունն իրականացնելու համար պետությունը պետք է տիրապետի բավարար ֆինանսական միջոցների:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Առողջապահության բնագավառում առկա իրավիճակի բարեփոխման, բուժսպասարկման մատչելիության և որակի բարձրացման նպատակով «Նոր ժամանակներ» կուսակցությունն առաջարկում է բնակչության բժշկական սպասարկման ֆինանսական բեռը թեթևացնելու նպատակով՝ պետական բժշկական ապահովագրման համակարգի զարգացմանը զուգահեռ, աջակցել մասնավոր բժշկական ապահովագրության զարգացմանը, ապահովել պետության դերը և մասնակցությունը՝ սոցիալական անապահով խմբերին բժշկական ծառայությունների մատուցման գործում:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Կրթական հաստատություններում վիճակը կարգավորելու համար անհրաժեշտ է վերստին կրթության իրականացման հիմքում դնել իրեն արդարացրած խորհրդային կրթական համակարգը՝ այն զարգացնելով ժամանակակից, փորձված մեթոդներով:

Բյուջետային մուտքերի ավելացման հաշվին լուծել ուսուցիչների սոցիալական խնդիրները, պետական աջակցության շնորհիվ լուծել դասագրքերի պակասի, դպրոցների շենքային, նյութատեխնիկական, գույքային անբավարարվածության խնդիրը, նպաստել մասնավոր դպրոցների կայացմանը, ապահովել պետական և մասնավոր դպրոցների արդար մրցակցություն, պետության մշտական հսկողության տակ պահել դպրոց-բուհ-գիտություն, ինչպես նաև բուհ-տնտեսություն և գիտություն-տնտեսություն կապը, որպես մասնագետներ պատրաստող հիմնական օղակ՝ բուհական համակարգը ևս պետք է գտնվի պետության մշտական հսկողության և աջակցության տակ, անհրաժեշտ է ապահովել պետական և մասնավոր բուհերի հավասար մրցակցությունը:

ը. Գիտության զարգացում

Անհրաժեշտ է խրախուսել երիտասարդ ու տաղանդավոր գիտնականների գործունեությունը՝ խթանելով գյուտարարությունների ու արժեքավոր հայտնագործությունների պրոցեսը: Հայ ազգի ինտելեկտուալ կարողությունները պետք է ծառայեն նաև գիտական համալիրի նյութական ժառանգության պահպանմանն ու զարգացմանը:

Ելնելով մեր մշակութային արժեքներից, գիտության նկատմամբ պատմականորեն ձևավորված առանձնահատուկ վերաբերմունքից՝ կուսակցությունն իր առջև դրված խնդիրների իրագործումը տեսնում է գիտական համակարգի զարգացման հայեցակարգի արմատական բարեփոխման ճանապարհով (իրավական դաշտի ապահովում, ֆինանսական միջոցների ներդրում և պետպատվերի առկայություն):

թ. Մշակույթ

Ցանկացած ազգի մշակույթը նրա հոգևոր զարգացման բնութագրողն է: Ըստ այդմ, մշակույթը պետք է ամենայն պատշաճությամբ ներկայացնել աշխարհին: Կուսակցությունը կարծում է, որ անհրաժեշտություն կա որոշել մշակույթի ճյուղերի (որոնք են՝ գիտությունը, կրթությունը, արվեստը, սպորտը) զարգացման և աշխարհին ներկայացնելու առաջնահերթությունները:

ժ. Սպորտ

Պետությունը պետք է ակտիվորեն զբաղվի առողջ ապրելակերպի քարոզչությամբ՝ խթանելով ֆիզդաստիարակության զարգացումը կրթական հաստատություններում, և նպաստի մարմնակրթական կենտրոնների ու մարզական ակումբների տարածմանը:

ի. Այլ /Տուրիզմ/

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը մարդկության համար հնագույն քաղաքակրթական արժեք ներկայացնող տարածք է դիտվում, պետք է զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականությունը նպատակաուղղել երեք կարևոր հիմնախնդիրների լուծմանը.

1. տուրիզմի լայն տարածում՝ որպես շահութաբեր ոլորտ՝ ներառելով բարձրակարգ սպասարկման ծառայությունները,
2. տուրիզմի զարգացում՝ որպես հայկական արժեքները քարոզելու և դրանք մարդկությանը հավուր պատշաճի ներկայացնելու արդյունավետ միջոց,
3. տուրիզմի համակարգային կազմակերպում՝ որպես պետական անվտանգության գործոն և տարածաշրջանային կայունության ու խաղաղության գրավական:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Ժողովրդավարական համակարգում պետական իշխանությունը կոչված է գործել հանուն ժողովրդի բարեկեցության, որը հնարավոր է, երբ ժողովրդի համատեղ կյանքի հիմքն են հանդիսանում քաղաքացիական հասարակության հիմնարար սկզբունքների վրա կառուցված քաղաքական և տնտեսական կարգերը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Ժողովրդավարական պետությունում օրենսդրորեն ամրագրված քաղաքական կարգը պետք է երաշխավորի քաղաքացիների այնպիսի միասնություն, որի դեպքում նրանք ազատ պատասխանատվություն կկրեն թե՛ միմյանց հանդեպ, և թե՛ հիմնարար սկզբունքների նկատմամբ՝ բացառելով ամեն մի փորձ՝ քայքայելու կամ խարխլելու արժեքների այդ աստիճանակարգը: Ժողովրդավարական պետության քաղաքական կարգը պետք է երաշխավորի ամբողջ պետական իշխանությունը ժողովրդի քվեով ձևավորվելու ճանապարհին որևէ այլընտրանքի կիրառման բացառումը: Ժողովրդավարական պետության քաղաքական կարգը պետք է երաշխավորի պետական իշխանության հավատարմությունը քաղաքացիների մարդկային արժանապատվությանը և հիմնարար իրավունքներին, քանի որ այդ քաղաքացիներն են ստեղծել տվյալ պետությունը ու ապահովում են նրա գոյությունը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Պետությունը պարտավոր է ճանաչել մարդու իրավունքները որպես բարձրագույն և անօտարելի արժեք, որպես սահմանադրորեն ամրագրված անմիջական գործող իրավունք: Ամեն մի օրենք բխում է այդ իրավունքներից, պաշտպանում է այդ իրավունքները, դրանք կարող է սահմանափակել միայն ու միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ այլոց իրավունքների ճանաչման ու երաշխավորման, հասարակական ներդաշնակ համակեցության համար: Այդ իրավունքները համընդհանուր են, ունեն պաշտպանության ոչ միայն ներպետական, այլև միջազգային երաշխիքներ:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

Կուսակցությունների ազատորեն կազմավորումը, նպաստելով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը, Սահմանադրության և օրենքների գերակայության պայմաններում պետք է երաշխավորի ժողովրդավարական հիմնական արժեքներին հավատարիմ քաղաքական համակարգի գոյություն: Քաղաքական դաշտում ստեղծված իրավիճակի վերլուծությունը վկայում է, որ այդ դաշտի սերնդափոխությունը, ինչպես նաև ցանկալի ժամանակահատվածում կուսակցությունների միավորումը քաղաքական հայացքների ներդաշնակության տրամաբանության շրջանակներում՝ միևնույն միավորման կամ դաշինքի մեջ համախմբելով համահունչ քաղաքական և տնտեսական հայացքներ ունեցող կուսակցություններին, ըստ էության բխում է մեր պետության արմատական շահերից:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում

Ժողովրդավարական պետության քաղաքական կարգը պետք է բացառի պետական իշխանության չարաշահումը և ապահովի հասարակական ուժերի բազմազանությունը: Այդ համակարգի հիմնական հատկանիշներից մեկը պետք է լինի անհատի բազմակողմանի բացահայտմանը նպաստելը և հասարակական բարիք ստեղծելու գործում նրա պատրաստակամությանը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Ազգային անվտանգությունը, արտաքին ու ներքին, ռազմական ու քաղաքական, տնտեսական ու սոցիալական անվտանգությունը փոխկապակցված են և լրացնում են միմյանց: Ազգային անվտանգությունը բոլոր քաղաքացիներից պահանջում է պատրաստակամորեն հանդես գալու հանուն մեր ազատ պետականության անվտանգության: Մեր պարտքն է պատանի սերնդին ներարկել այդ հիմնարար հայրենասիրական պարտքի ըմբռնումը: Պաշտպանության դժվարությունները անհրաժեշտ է կրել կոլեկտիվ կերպով, իսկ բաշխումը՝ արդարացի: Նշված ազգային անվտանգության հայեցակարգի իրագործման ճանապարհին էապես կարևորվում է նաև մարտունակ, վերազինված բանակի առկայությունը, որը կարող է տարածաշրջանային խաղաղության երաշխիք լինել: Այդպիսի բանակ ունենալու գլխավոր պայմաններից մեկը երկրի բյուջեի եռապատկման համատեքստում ռազմական բյուջեի կրկնապատկումն է:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կարևորելով Հայաստանում գործող հինգ տասնյակից ավելի բնապահպան հասարակական կազմակերպությունների դերը համակարգված էկոլոգիական քաղաքականություն իրականացնելու ճանապարհին՝ «Նոր Ժամանակներ» կուսակցությունը համոզված է, որ արդյունավետ էկոլոգիական քաղաքականությունը հնարավոր է իրականացնել բացառապես պետական միջոցների և պետության անմիջական մասնակցության շնորհիվ: Այս ճանապարհին արմատական բարեփոխման խնդիր ունեն ՀՀ բնության պահպանության օրենսդրության դրույթները:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

23. ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՊԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Գյուլիքեխվյան 11/4
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (37491) 40-97-37, (37491) 53-05-35, (37493) 25-05-52
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** conservative@conservative.am
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.conservative.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 10.06.1991թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 12.03.2000 թ., խմբագրմամբ՝ 01.11.2003թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 10.06.1991թ.
- **Պետական վերագրանցման ամսաթիվը՝** 24.11.2003թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 2450 անդամ
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** Առանձին գրքույկ, Պ0802000000/0128(01), 2001 թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Կենտրոնական խորհուրդ
- Կուսակցության նախագահ՝ Միքայել Հայրապետյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պահպանողական կուսակցության բարձրագույն արժեքներն են՝ Հայաստանի պետությունը, պետական անվտանգությունը, պետական լեզուն՝ հայերենը, մշակույթը, բարոյականությունը, քաղաքացու իրավունքները, խղճի ազատությունը, սեփականության իրավունքը: Հայաստանի պետությունը՝ հայ մարդու Հայրենիքը, 21-րդ դարում կարող է գոյատևել և զարգանալ միայն ժողովրդավարության, հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների, քաղաքացիական հասարակարգ և եվրոպական իրավական մոդել, բարձր զարգացվածությամբ կրթական և գիտական համակարգ ունենալու, ամուր և կարգապահ բանակի, պետական քաղաքականությամբ ուղղորդվող և ազատ շուկայի կողմից ղեկավարվող տնտեսության, համաշխարհային գործընթացներից առաջ կամ ետ չընկնելով՝ դրանց ներդաշնակորեն ինտեգրվելու պայմաններում:

Կուսակցությունը պայքարում է, որ բոլոր ռազմավարական և պետական անվտանգության տեսակետից առաջնային օբյեկտները լինեն բացառապես պետական սեփականություն:

Կուսակցության նպատակներն են՝

- ժողովրդավարական, ինքնիշխան, սոցիալական, իրավական հայոց պետության ամրապնդմանը նպաստելը,
- քաղաքական հավասարակշիռ դաշտի ստեղծումը, որը կբացառի հեղափոխական ճանապարհով իշխանափոխություններն ու բռնապետություն կամ ամբոխապետություն հաստատելը,
- քաղաքացիական հասարակության կայացման օժանդակումը,
- հասարակական-քաղաքական համաձայնության մթնոլորտի ամրապնդումը,
- ազգային արժեքների իմաստավորումն ու արժևորումը,
- ազգային զարգացման ծրագրերի մշակումը,
- հայրենիքի և սփյուռքի կապերի խորացումը և ամրապնդումը,
- ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանությունը:

Կուսակցության խնդիրներն են՝

- ՀՀ-ի բարգավաճմանը, միջազգային բարձր վարկի հաստատմանը, քաղաքացիների բարօրությանը՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ նախատեսված միջոցներով նախանձախնդիր մասնակցությունը,
- ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված միջոցներով կուսակցության ծրագրային դրույթների իրացումը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

1. Երկրի անվտանգության միջազգային երաշխիքների ապահովում:
2. Տարածաշրջանում և ողջ աշխարհում հայաստանյան մրցակցային բարենպաստ դաշտի ու շուկայի ապահովում:
3. Արցախի խնդրի ողջամիտ փոխզիջումային լուծման հնարավորության ապահովում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Հայաստանի պետությունն ու քաղաքացիները իրավունք ունեն և պարտավոր են տարածաշրջանի պետությունների ու ժողովուրդների և միջազգային հանրության հետ խաղաղ համակեցություն ապահովել, թոթափել հազարամյա մեկուսացման կաղապարներն ու դառնալ քաղաքակիրթ մարդկության մասնիկը՝ մերժելով ծայրահեղությունները՝ հեղափոխականությունն ու պասիվ հարմարվողականությունը:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Կուսակցությունը գտնում է, որ Կովկասից հեռացող Ռուսաստանի պարագան ՀՀ-ի առջև դրել է Հարավկովկասյան տան կառույցին և Մերձավոր արևելքին առավելագույնս ինտեգրվելու հրամայական: Հայաստանի ապագան առնվազն առաջիկա տասնամյակներում եվրասիականությունը չէ:

է. Թուրքիա

Թուրքերի և քրդերի հարցում ՀՀ դիվանագիտությունը պարտավոր է լինել առավել հեռատես և ոչ զգացմունքային: Հայության և ՀՀ-ի համար չպետք է լինի տարբերություն և շահագրգռություն՝ Արևմտյան Հայաստանի տարածքում թուրքակա՞ն, թե՞ քրդական պետություն է:

թ. Իրան

Կուսակցությունը, համարելով, որ Հայաստանի պետությունը չունի որևէ թշնամի, միևնույն ժամանակ պնդում է, որ դաշնակիցներ ընտրելու և դրանք փոփոխելու հարցում պետք է առաջնորդվել բացառապես պետական շահերով: Առնվազն առաջիկա տասնամյակների համար ՀՀ-ի բնական դաշնակիցը կարող է լինել առաջին հերթին Իրանը:

ժ. Վրաստան

Հայ դատի շրջանակներում Ջավախքի խնդրի ստեղծումը հայ պետականության համար հղի է անկանխատեսելի հետևանքներով: Կուսակցությունը դա ևս դիտում է բացառապես աշխարհաքաղաքական տեսանկյունից:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Կուսակցությունն օրենքի շրջանակներում անելու է ամեն ինչ, որպեսզի հանուն ինչ-որ գաղափարախոսությունների ՀՀ-ն դուրս չմնա տարածաշրջանային և միջազգային տնտեսական, կոմունիկացիոն, գիտակրթական, մշակութային, արդյունաբերական և ռազմական ինտեգրացիոն գործընթացներից:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Արցախի հարցի պատասխանը ոչ թե Հայ դատի ծիրում է, այլ աշխարհաքաղաքական իրավիճակի ընձեռած հնարավորությունների առավելագույն օգտագործման:

խ. Ցեղասպանության ճանաչում

Կուսակցությունը ջանալու է, որ պահանջատիրությունը չլինի ՀՀ պետական քաղաքականություն, քանզի դա դուրս է իրատեսության սահմաններից և կվտանգի Հայաստանի պետության գոյությունն ու զարգացումը: ՀՀ-ն առայժմ կարող է միայն պաշտպանել արևմտահայերի հետնորդների ազգային ինքնորոշման պահանջը, եթե սփյուռքահայերը և ՀՀ քաղաքացիների պահանջատեր հատվածը տեղափոխվեն նախնիների հայրենիք և հաստատեն այնտեղ բնակվելու իրենց կամքը: ՀՀ-ն երբևէ կարող է ունենալ ոչ թե սոսկական տարածքի, այլ կենսատարածքի խնդիր:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

1. Քաղաքացիական արժեքների ֆիքսում և անշրջելիության ապահովում:
2. Ժողովրդավարական ընտրությունների ազատության ապահովում և դրանց արդյունքների հարգում:
3. Արևմտյան չափանիշերին համապատասխան կոռուպցիայի հաղթահարում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Կուսակցությունը պաշտպանում է տնտեսության, գիտության, կրթության և սոցիալական ինստիտուտների ինքնավարությունը, որտեղ պետության ուղղակի միջամտությունը պետք է հասցվի նվազագույնի: Կուսակցությունը կողմնակից է հակամենաշնորհային քաղաքականության՝ բացառությամբ ընդհանուր անվտանգությունն ապահովող պետական մենաշնորհների (բանակ, հատուկ ծառայություններ և այլն):

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունը Հայաստանի զարգացումը տեսնում է արտահանումը և ներդրումները խրախուսող հարկային, մաքսային և ֆինանսավարկային քաղաքականության մեջ:
Ըստ այդմ, այս ոլորտում ևս կուսակցությունն աջ կենտրոնական՝ ազատական-պահպանողական (նեոկոնսերվատիվ) կուսակցություն է:

բ. Բյուջետային

Կուսակցությունը մշտապես պայքարելու է գոյատևման բյուջեները զարգացման բյուջեներով փոխարինելու համար:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ՊԿ-ն Հայաստանի տնտեսության առաջնահերթություններ է համարում բարձր տեխնոլոգիաները, գիտակրթական ինդուստրիան, էներգետիկան, ջրային պաշարների շահագործումը, ներքին և արտաքին կապուղիները, օգտակար հանածոների արդյունահանումն ու տեղում ցիկլային արդյունաբերության կազմակերպումը, գյուղատնտեսական, թեթև և սննդի արդյունաբերական ենթակառուցվածքները և բանկային համակարգերը, ինչպես նաև զբոսաշրջությունն ու առևտուրը:

ա. Ներդրումների խթանում

Օտարերկրյա կապիտալի ներհոսքը և շրջանառումը Հայաստանի զարգացման և պետական անվտանգության առաջնային գրավականներից են:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Կուսակցությունը մրցակցային դաշտի ապահովումը և պահպանումը համարում է ՀՀ կենսունակության և առաջընթացի պարտադիր պայման: Ազատ մրցակցությունն ապահովելու համար՝ ՊԿ-ն կողմնակից է մասնավոր սեփականության հակամենաշնորհային օրենքներին:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ՊԿ-ն միջին խավի, մտավորականների և ծառայողների շահերի արտահայտողն ու պաշտպանն է. պայքարելու է, որ աշխատատեղեր և ազատ ձեռներեցության հնարավորություն ստեղծելու ճանապարհով՝ ստորին և ընչազուրկ խավի կենսամակարդակը հավասարեցվի միջինին:
Պետությունը երաշխավորն է մանուկների և ծերերի բարեկեցիկ գոյության: Սոցիալական բեռը ժամանակի ընթացքում աստիճանաբար պետք է փոխանցվի գործատուին:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Որպեսզի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի բժշկական սպասարկումից պատշաճ չափով օգտվելու հնարավորություն ունենա, անհրաժեշտ է սոցիալական ինստիտուտների ինքնավար կայացում:

է. Կրթական համակարգի բարեփոխում և գիտության զարգացում

Հայաստանի պետությունը 21-րդ դարում կարող է գոյատևել և զարգանալ միայն բարձր զարգացվածությամբ կրթական և գիտական համակարգ ունենալու դեպքում:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

Մարդիկ ծնվում են տարբերություններով, միակ հավասարությունը պետության օրենքների և Աստծո առջև է: Ըստ այսմ՝ այդ հավասարությունը պետք է և հնարավոր է ապահովել միայն քաղաքացիական հասարակություն, իրավական պետություն և բարոյական հայրենիք ստեղծելով, որի համար Պահպանողական կուսակցությունը ներդնելու է բոլոր կարողությունները:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Սեփականության իրավունքը սրբազան իրավունք է, և այն պետք է օրենքով խստագույնս պաշտպանված լինի ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիների համար՝ անկախ նրանց ազգային և դավանանքային պատկանելությունից:

Մարդկային բազմաբղետության արդյունքը և զարգացման շարժիչը մասնավոր սեփականությունն է, առանց որի չի կարող լինել ազատություն, իսկ հասարակությունը կդատապարտվի մահվան: Սա գիտակցող ազգերը, որպես սեփականության վերաբերելով իրենց հայրենիքներին, պահպանում ու զարգացնում են իրենց հասարակությունները:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Միայն իրավական պետությունը կարող է լինել ամուր և կայուն, ապահովել համընդհանուր բարօրություն, արդարադատություն, հասարակական կարգ ու կայունություն:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում

ՊԿ-ն որևէ կուսակցության հզորության և արդյունավետության միակ պայման է համարում նրա արժեքային համակարգն ու համակիրների բանակը և մերժում է հասարակության ամբողջական կուսակցականացումն ու մարդորսությունը:

Հայաստանի ներքաղաքական ապագան եռահոսանք դաշտի ձևավորումն է՝ սոցիալիստներ, լիբերալներ, պահպանողականներ:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում

Կուսակցությունը համոզված է, որ ամենուր և առաջին հերթին քաղաքականության մեջ հնարավոր ու անհրաժեշտ է ապահովել բարոյականությունը, որը պատասխանատվության գիտակցումն ու դրա կատարումից չխուսափելն է՝ լինի դա պետության, ընտանիքի, եկեղեցու թե շրջապատի հանդեպ: Պահպանողական քաղաքական գործչի գործունեությունը գնահատվում է միայն հետևանքներով, ոչ թե ժամանակավոր հաջողություններով:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1995թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **1999թ. ընտրություններ՝**
  մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 1
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2007թ. ընտրություններ՝** մասնակցում է դաշինքով

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1991թ. ընտրություններ՝** մասնակցել է
- **1996թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **1998թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

5.3. Դաշինքի անդամները

- «Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցություն
- Պահպանողական Կուսակցություն

5.4. Դաշինք կազմելու նպատակը և հիմքերը /գաղափարական և այլն/

Նպատակը՝ գավառամիտ, քարեդարյա իշխանություններից երկրի ազատագրում և Հայաստանի քաղաքակիրթ զարգացման հնարավորության ստեղծում:

Հիմքը՝ գաղափարական և գաղափարախոսական:

24. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՍԴՀԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Բաղրամյան 1, բն. 57
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 56-96-44
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** hnchakyan@yahoo.com
- **Հիմնադրման տարեթիվը՝** 1887թ. (ԺՆԿ)
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 1888թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 1991թ.
- **Պետական. վերագրանցման ամսաթիվը՝** 20.02.2004թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 4530 անդամ
- **Կուսակցության պաշտոնական մամուլը՝** «Արարատ» - Բեյրութ, «Մասիս» - ԱՄՆ, «Ձահակիր» - Կահիրե, «Նոր սերնդի ձայն» - Լոնդոն
- **Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը՝** «Հայկական ժամանակ» և «Առավոտ» օրաթերթեր 2003թ.

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Կենտրոնական վարչություն՝ 7 անդամ
- Ատենապետեր
- Կուսակցության ղեկավար՝ Լյուդմիլա Նարիմանի Սարգսյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուսակցության գոյության ու գործունեության իմաստը հայ ժողովրդի ազգային անվտանգությունը, հայկական պետության ամրապնդումը և դեմոկրատական սոցիալիզմի հաստատումն է, երկրի դեմոկրատացումը և ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը, ինչպես նաև սոցիալիստական գաղափարախոսության հիմնական դրույթների ճանապարհով երկրում սոցիալիստական հասարակարգի ստեղծումը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները

1. Հայաստանի պետականության ամրապնդումը և միջազգային հեղինակության բարձրացումը:
2. Համայն հայության ազգային շահերի պաշտպանումը:
3. Ցեղասպանության ճանաչումը:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Կուսակցությունը գտնում է, որ արտաքին քաղաքականության մեջ կարևորագույն հիմնահարցը պետք է լինի Հայաստանի պետականության ամրապնդումն ու նրա միջազգային հեղինակության բարձրացումը՝ հանուն համայն հայության ազգային շահերի պաշտպանության:

ա. Եվրահինտեգրում

Արտաքին քաղաքականության ամենօրյա խնդիրը ՀՀ գործարար մասնակցության ապահովումն է համաշխարհային ինտեգրացող գործընթացներում, նրա տեղի ու դերի ամրապնդումը Եվրոպական կառույցներում:

բ. ԱՊՀ

Արտաքին քաղաքականության հիմնահարցերից մեկը պետք է լինի առևտրա-տնտեսական կապերի ստեղծումն ու զարգացումն ԱՊՀ պետությունների և Եվրամիության հետ, ինչպես նաև ճկուն քաղաքական գիծ վարելը, հեռանկարային ծրագիր կազմելը տարածաշրջանում հարևանների հետ խաղաղ գոյակցության ուղղությամբ:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)[5]

Այս ոլորտում կուսակցությունը կարևոր է համարում ակտիվ համագործակցությունն ի նպաստ երկրի անվտանգության:

դ. ՀԱՊԿ (NATO)[5]

Կուսակցությունը հարկ է համարում իր մասնակցությունը NATO-ի զորավարժություններին և կարևորում է երկրում այդ փորձառությունն ինտեգրելը:

ե. ԱՄՆ[5]

ԱՄՆ-ի հետ պետք է վարել զգուշավոր քաղաքականություն, պետք է ապահովել նվազագույն կախվածությունը:

զ. Ռուսաստանի Դաշնություն

Պետք է համագործակցել Ռուսաստանի հետ՝ որպես ավանդական դաշնակցի՝ պահպանելով ազգային շահերն ու ազգային արժանապատվությունը:

է. Թուրքիա

Պետք է պաշտոնական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ՝ առանց վերջինիս կողմից առաջադրվող նախապայմանների:

ը. Ադրբեջան

Պետք է երկկողմանի փոխզիջումներ հաստատել Ադրբեջանի հետ, որոնք չեն վնասի Արցախին և նրա տարածքային ամբողջականությանը:

թ. Իրան

Կուսակցությունը գտնում է, որ պետք է առավելագույնս զարգացնել տնտեսական կապերն Իրանի հետ:

ժ. Վրաստան

Կուսակցությունը կարևորում է բարիդրացիական հարաբերությունների պահպանումը Վրաստանի հետ:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն

Կուսակցությունը կարևոր է համարում հանրապետության արտաքին քաղաքականության ակտիվացումը՝ ի նպաստ տարածաշրջանային անվտանգության կայուն համակարգի ձևավորմանը, որին պետք է ծառայի տնտեսական, քաղաքական և հումանիտար բնագավառներում համագործակցության ընդլայնումն Իրանի, Վրաստանի և մերձավոր արևելքի երկրների հետ:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր

Կուսակցությունն Արցախյան հիմնահարցի լուծումը տեսնում է ազգերի ինքնորոշման իրավունքի և միջազգային իրավունքի սկզբունքների շրջանակներում, պայքարելու է զինադադարի պահպանման և ԵԱՀԿ խաղաղ կարգավորման գործընթացի շարունակման համար: Կուսակցությունը նպաստելու է հակամարտության կարգավորմանը նպատակաուղղված բանակցություններին՝ Հայաստանի, ԼՂՀ-ի, Ադրբեջանի և միջնորդ պետությունների, ինչպես նաև կազմակերպությունների միջև, պատմական արդարության վերականգնմանը: Կուսակցությունը կողմ է Հայաստանի հետ Արցախի վերամիավորմանը:

խ. Ցեղասպանության ճանաչում[4]

Հայ Դատը պետք է լինի արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասերից մեկը: Կուսակցությունը վճռականորեն պայքարելու է այն արտաքին ու ներքին ուժերի դեմ, որոնք Հայ դատի գաղափարն օգտագործում են իրենց հետին նպատակների համար:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում

Հայրենիքի և Սփյուռքի կապերի ամրապնդումը և զարգացումը ՀՀ ԱԳՆ-ն կողմից պետք է խրախուսվի և օգտագործվի արտաքին հարաբերություններում համահայկական կառույցների դերի բարձրացման համար: Այս առումով կուսակցությունը կարևորում է միջպետական հարաբերությունների զարգացումն այն երկրների հետ, որոնք ունեն հայկական գաղթօջախներ:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

1. Միջին և մանր բիզնեսի զարգացում:
2. Հարկային դաշտի հստակեցում և բարելավում:
3. Ժողովրդի սոցիալական վիճակի բարելավում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում

Բազմաձև սեփականությամբ տնտեսական համակարգ ստեղծելու համար պետությունը պետք է խրախուսի փոքր ու միջին գործարարության և դրա զարգացման արդյունքում նաև խոշոր ձեռնարկատիրության ծավալումը: Հաշվի առնելով ժառանգված խոշորածավալ պետական տնտեսությունը՝ պետք է իրագործել պետական գույքի մի հատվածի թափանցիկ և արդարացի մասնավորեցում մրցութային եղանակով: Տնտեսության բոլոր ոլորտներում պետք է ապահովել սեփականության բոլոր ձևերի զարգացումը:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝

Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան Կուսակցությունը կողմ է սեփականության տարբեր ձևերին (մասնավոր, պետական, կոլեկտիվ և խառը) և ձգտելու է այդ հիմքի վրա կառուցել սոցիալական ուղղվածություն ունեցող բարգավաճ տնտեսություն:

ա. Դրամավարկային

Պետության դրամավարկային, հարկային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորմանն ու ձեռնարկատիրության զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության առավելագույն զբաղվածության ապահովմանը: Պետք է ընդունել բանկային համակարգը վերահսկող օրենք, որը հնարավորություն կտա սահմանափակել բանկային տոկոսները և դրանք դարձնել մատչելի ժողովրդի համար:

գ. Հարկային

Անհրաժեշտ է վարել վերահսկելի, անկաշառ և տնտեսվարող սուբյեկտների համար մատչելի հարկային քաղաքականություն:

զ. Տարածքային

Կուսակցությունը կարևորում է գյուղական բնակչության արտահոսքի կանխարգելումը, գյուղերի՝ հատկապես ծայրամասային և սահմանամերձ բնակավայրերի զարգացումը, գյուղական բնակչության բարեկեցության բարձրացումը:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան Կուսակցությունը կողմ է սեփականության տարբեր ձևերին (մասնավոր, պետական, կոլեկտիվ և խառը) և ձգտելու է այդ հիմքի վրա կառուցել սոցիալական ուղղվածություն ունեցող բարգավաճ տնտեսություն:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Կուսակցությունը գտնում է, որ սոցիալական հասարակարգի կարելի է հասնել միայն տնտեսական զարգացածությամբ և բարեկեցության բարձր մակարդակով: Այն կարող է ապահովվել սեփականության բոլոր ձևերի առկայությամբ և նրանց միջև ազատ շուկայական հարաբերություններով ու մրցակցությամբ, եթե դրանք անհարիր չեն ազգային նկարագրին և չեն սպառնում ազգային անվտանգությանը:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում

Պետք է փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներին առժամանակ ազատել շահութահարկից՝ նպաստելով ՓՄՁ-ի զարգացմանը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Այս ոլորտում կուսակցությունը գտնում է, որ պետք է պայմաններ ստեղծել հողի արդյունավետ և լիարժեք օգտագործման համար: «Հողի հարկի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու ճանապարհով պետք է իջեցնել հողի հարկերը, անհրաժեշտության դեպքում այն գանձել գյուղացիական տնտեսությունների արտադրանքով: Պետք է հաշվառել գյուղացիական տնտեսություններին հատկացված, բայց չմշակվող,

խոպանացման ենթարկված հողահատվածները՝ հետագայում նպատակային վերաբաշխելու նպատակով: Գյուղատնտեսության զարգացման նպատակով պետք է գյուղացիներին և ֆերմերներին ցածր տոկոսադրույքներով տրամադրել վարկեր և սահմանել հսկողություն այդ վարկերի նպատակային օգտագործման ուղղությամբ:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում

Թեթև սննդի արդյունաբերության ճյուղերում, առևտրում և ծառայությունների մյուս ոլորտներում տիրապետող կարող են լինել մասնավոր ձեռնարկությունները, էներգետիկայում, մետաղածուլության, մեքենաշինության, տրանսպորտի, կապի ճյուղերի և ռազմավարական նշանակության այլ ձեռնարկությունները պետք է գործեն պետական սեփականության հիմքի վրա:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում

Երկրի տնտեսական ու սոցիալական վերելքի համար՝ կարևորելով գիտության և տեխնիկայի զարգացումը, կուսակցությունը ձգտելու է մշտապես նպաստավոր պայմաններ ստեղծել երկրի գիտատեխնիկական ներուժի բազմապատկման համար:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Սոցիալական զարգացման գլխավոր նպատակներից է մարդկանց բարեկեցության մակարդակի բարձրացումը, նրանց համար կրթության, բուժսպասարկման, սոցիալական պաշտպանվածության պայմանների ստեղծումը, կենսամիջոցների և ծառայությունների սպառման շարունակական աճի ապահովումը:

ա. Աղքատության հաղթահարում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում սոցիալիստական հասարակարգի վերականգնումը, մեծ ձեռնարկությունների պետականացումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և բանվոր դասակարգի արժանապատիվ ապագայի ապահովումը:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Կուսակցությունը կտրականապես մերժում է նեղ դասակարգային դիրքերից ելնող քաղաքականությունը, դեմ է դասակարգային հակամարտությանը և թշնամանքի բորբոքմանը, կողմ է սոցիալական համերաշխությանն ու համագործակցությանը:

գ. Զբաղվածության ապահովում

Տնտեսական ու սոցիալական քաղաքականության գերխնդիրը ձեռնարկատիրության զարգացման ու բնակչության զբաղվածության հիմքի վրա մարդկանց իրական եկամուտների ավելացումն է և կենսամակարդակի բարձրացումն է: Բացի աշխատանքային և ձեռնարկատիրական եկամուտներից, բնակչության բարձր տարիքի անդամների, անաշխատունակների և գործազուրկների կենսամիջոցները պետք է ապահովվեն կենսաթոշակների և նպաստների միջոցով:

դ. Արտագաղթի նվազեցում

Հայ ժողովրդի ապագային, նրա ֆիզիկական ու հոգևոր միասնության պահպանմանը վնասաբեր է զանգվածային արտագաղթը: Համոզված լինելով, որ վերջինս հարուցված է հիմնականում զանգվածային գործազրկությամբ, նյութական անբարվոք վիճակով՝ երևույթը կարելի է և պետք է կանխել սոցիալ-տնտեսական արմատական ձեռնարկումների միջոցով՝ այն զուգակցելով խելամիտ քարոզչությամբ:

ե. Առողջապահական համակարգի բարելավում

Կուսակցությունը գտնում է, որ պետք է վերականգնել անվճար բուժսպասարկումը՝ պահպանելով առողջապահական մասնավոր հիմնարկների համակարգը նրանց համար, ովքեր կարող են վճարել դրա դիմաց: Պետք է խրախուսել ամուսնություններն ու բազմազավակությունը՝ զարգացնելով դրան ծառայող բուժսպասարկման որակը, ընդլայնել ցանցը:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում

Յուրաքանչյուր տարի պետական բյուջեում պետք է երաշխավորված և պաշտպանված լինեն բնակչության սոցիալական պաշտպանվածությանը, կրթությանը, առողջապահությանը և մշակույթի զարգացմանը հատկացվող ֆինանսական միջոցները: Չափազանց էական է նրանց սոցիալական պաշտպանվածության պետական ամրապնդումը և այդ նպատակով հատկացվող միջոցների անընդհատ աճը: Կարևոր է նաև կատարելագործել բնակչության սոցիալական պաշտպանվածության համակարգը՝ զուգակցելով պետական և ոչ պետական բաղադրիչների ազատ զարգացումը:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Պետությունը, ազատություն տալով ուսումնական հաստատություններին, ուսման մեթոդների և ուսուցման կազմակերպման խնդիրներում պետք է ունենա որոշակի ստանդարտներ (չափորոշիչներ), որոնք կապահովեն կրթության համակարգի համապատասխանությունը ժողովրդի առջև կանգնած խնդիրների լուծմանը: Կրթական ամբողջ համակարգը պետք է համապատասխանի այդ չափորոշիչներին:

ը. Գիտության զարգացում

Պետությունը պետք է ունենա գիտության զարգացման հստակ հայեցակարգ, որտեղ նշված կլինեն գիտության զարգացման առաջնահերթությունները: Ընդ որում, դրանց մեջ կարևոր տեղ պետք է հատկացվի տեսական այնպիսի ճյուղերին, որոնք խոր արմատներ ունեն Հայաստանում՝ աստղագիտություն, մաթեմատիկա, ֆիզիկայի որոշ ճյուղեր, քիմիա, կենսաբանություն և այլ բնագավառներ: Հիմնարար գիտությունների զարգացումն անհնար է առանց պետական հովանավորության: Կործանարար է այս ամբողջ ասպարեզը թողնել շուկայական հարաբերությունների հույսին:

թ. Մշակույթ

Պետությունը պետք է ունենա հստակ մշակութային քաղաքականություն: Դրա նպատակը պետք է լինի հայկական արվեստի ազգային առանձնահատկությունների պահպանումն ու զարգացումը: Մշակութային քաղաքականության կարևոր կետերից մեկը պետք է լինի ամենալայն կապերն աշխարհի երկրների հետ՝ առանց զոհաբերելու մշակույթի ազգային դեմքը:

ժ. Սպորտ

Պետք է պետական հովանու տակ առնել սպորտը՝ ֆինանսավորելով այն, խրախուսել այս բնագավառում բարեգործությունը՝ հարկավճարման գործում հովանավորողների համար արտոնություններ սահմանելու միջոցով: Անհրաժեշտ է վերականգնել Հայաստանի երբեմնի մարզական համբավը:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Հասարակության քաղաքական համակարգի հիմքը պետք է լինի ժողովրդի իշխանությունը, որը երաշխավորում է յուրաքանչյուր քաղաքացու համար հավասար պայմաններ, ուղղակիորեն կամ իր ընտրած ներկայացուցիչների միջոցով մասնակցությունը պետական կառավարման գործընթացներին:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Պետք է ապահովել մամուլի, խոսքի և խղճի ազատությունը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Հետևողականորեն պետք է պաշտպանել մարդու իրավունքները և հիմնական ազատությունները:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Անհրաժեշտ է դատական համակարգը դարձնել բաց, անկաշառ, վերահսկելի և թափանցիկ:

ե. Ընտրական համակարգի բարելավում

Պետք է ընդունել ընտրական նոր օրենք, ըստ որի Ազգային ժողովի պատգամավորներին պետք է ընտրել բացառապես համամասնական սկզբունքով և նրանց հետ կանչելու իրավունքով: Բոլոր մակարդակներում ընտրությունները պետք է դարձնել արդարացի ու թափանցիկ, դրանք վերահսկելիս լայնորեն օգտագործել չորրորդ իշխանությունը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Կուսակցությունը գտնում է, որ ազգային անվտանգության հիմնախնդիրները մշակելիս առանձնահատուկ տեղ պետք է հատկացնել զինված ուժերին, դրանց կառուցվածքին, մարտունակությանը, սպառազինության որակին, բանակի թվակազմին, այլընտրանքային զինծառայության խնդրին, զինված ուժերի ռազմահայրենասիրական և բարոյահոգեբանական դաստիարակության հարցերին: Պետք է շարունակել խորացնել հայ-ռուսական ռազմական և ռազմատեխնիկական համագործակցությունը: Պաշտպանական ծախսերը պետք է կազմեն բյուջեում երկրի անվտանգության պահանջներին համազոր բաժին, սակայն չպետք է գերազանցեն հանրապետության ֆինանսական կարողությունները: Կուսակցությունը կարևորում է ռազմական, քաղաքական, տնտեսական միջոցներով երկրի և նրա ազգաբնակչության անվտանգության ապահովումը:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1995թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 1
- **1999թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 1
- **2003թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 7

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1991թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **1996թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **1998թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2008թ. ընտրություններ՝** մասնակցելու է

25. «ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՔԺՎԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Իրավաբանական հասցեն՝** ք. Երևան, Գայի պ. 4/1
- **Հիմնադրման տարեթիվը՝** մայիս, 2005 թ.
- **Կանոնադրության և ծրագրի ընդունման ամսաթիվը՝** 06.09.2005 թ.
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 10.10.2005 թ.
- **Կուսակցության անդամների թիվը հարցաթերթիկի լրացման ժամանակ՝** 2147 անդամ

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ՝ 7 անդամ
- Կուսակցության նախագահ՝ Մկրտիչ Եգիկի Գիմիշյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կուսակցության գլխավոր նպատակը՝ քրիստոնեական սկզբունքների, արժեքների, Աստծո պատվիրանների արմատավորումն ու կիրառումն է մեր առօրյա կյանքի բոլոր բնագավառներում:
Նպատակ ունենալով Հայ-Քրիստոնյա ժողովրդի կայացումը և բարգավաճումը՝ Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդությամբ պետք է համախմբել հայ ժողովրդի քրիստոնյա եկեղեցիների ջանքերը:
Մեր հասարակության համախմբման, մեր հայրենիքի վերածննդի, բարձր և ճշմարիտ արժեքային, հոգևոր, բարոյական, պետական և քաղաքական համակարգի հիմքը կարող է դառնալ քրիստոնեական գաղափարաբանությունը, որի շնորհիվ միայն հնարավոր կլինի ապահովել բոլորիս բարգավաճ և կանխատեսելի ապագան: Քանզի հենց քրիստոնեությունն է այն հիմնարար գաղափարների և արժեքների ձևակերպողն ու արմատավորողը, որոնք թե ի սկզբանե, թե այսօր համամարդկային արժեքներ են համարվում:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

1. Եվրաինտեգրում:
2. Գործընկերային և փոխշահավետ հարաբերություններ բոլոր երկրների հետ:
3. Ղարաբաղյան հիմնախնդրի լուծում՝ ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի հիման վրա:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Համաշխարհային հանրությանն ու ընթացող քաղաքական և այլ բնույթի գործընթացներին ինտեգրվելը չպետք է վնասի մեր ազգային, հոգևոր, բարոյական և մշակութային ինքնությանը: Մեր նպատակն է բարեկամական հարաբերություններ հաստատել բոլոր ժողովուրդների հետ և սերտորեն համագործակցել այն պետությունների հետ, որոնք հարգում են մարդու իրավունքներն ու նրա բարոյական արժեքները, ինչպես նաև հավատարիմ են ժողովրդավարական արժեքներին:

ա. Եվրաինտեգրում

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում անդամակակցությունը Եվրամիությանը:

բ. ԱՊՀ[5]

ԱՊՀ-ի հետ անհրաժեշտ է փոխշահավետ համագործակցություն:

գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)[5]

ՀԱՊԿ-ի հետ անհրաժեշտ է փոխշահավետ համագործակցություն:

դ. ՀԱԴԿ (NATO)[5]

ՀԱԴԿ-ի հետ պետք է խորացող համագործակցություն՝ անդամակցության հեռանկարով:

ե. ԱՄՆ[5]

ԱՄՆ-ի հետ անհրաժեշտ է փոխշահավետ համագործակցություն:

զ. Ռուսաստանի Դաշնություն[5]

Ռուսաստանի հետ պետք է փոխշահավետ համագործակցություն:

է. Թուրքիա[5]

Թուրքիայի հետ պետք է փոխշահավետ համագործակցություն և սահմանների բացում:

ը. Ադրբեջան[5]

Անհրաժեշտ է խաղաղության և բարիդրացիական հարաբերությունների հաստատում Ադրբեջանի հետ:

թ. Իրան[5]

Իրանի հետ պետք է փոխշահավետ համագործակցություն:

ժ. Վրաստան[5]

Վրաստանի հետ անհրաժեշտ է փոխշահավետ համագործակցություն:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր[5]

Անհրաժեշտ է Ղարաբաղյան հիմնախնդրի լուծում՝ ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի հիման վրա:

խ. Ցեղասպանության ճանաչում[5]

Պետք է աջակցություն ցեղասպանության ճանաչման գործընթացին:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում[5]

Պետք է համակողմանի աջակցություն Հայաստան-Սփյուռք կապերի խորացմանը և համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

4.3. Ներքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[4]

1. Ժողովրդավարության և մարդու իրավունքների իրական ապահովում ու երաշխավորում:
2. Ազատ, մրցակցային և մենաշնորհներից զերծ շուկայական տնտեսության ձևավորում:
3. Իրավական և սոցիալական արդարության ապահովում:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում[5]

Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում պետք է հասցնել նվազագույնի:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝[5]

ա. Դրամավարկային[5]

Անհրաժեշտ է դրամի իրական կուրսի ապահովում:

բ. Բյուջետային[4]

Անհրաժեշտ է ստվերային տնտեսության կրճատում և բյուջետային ծախսերի համամասնությունների վերանայում՝ հանրային առաջնահերթությունները լիարժեքորեն ապահովելու նպատակով:

գ. Հարկային[5]

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում հարկային բեռի թեթևացումը, վարչարարության պարզեցումը և հստակեցումը՝ հարկային դաշտի ընդլայնում և հավասարություն ապահովելու հեռանկարով:

զ. Տարածքային

Նպատակ ունենալով զարգացնել և խորացնել իշխանության ապակենտրոնացումը՝ կուսակցությունն անհրաժեշտ է համարում վերացնել մարզերը, միջհամայնքային միավորումների միջոցով վերականգնել նախկին շրջանների պես գործող տեղական ինքնակառավարման երկրորդ աստիճանը և լրջորեն ընդլայնել համանքների լիազորություններն ու ֆինանսական ապահովվածության մակարդակը:

է. Արտաքին տնտեսական հարաբերություններ

Անհրաժեշտ է փոխշահավետ համագործակցություն բոլոր երկրների հետ:

ը. Վճարային (առևտրային) հաշվեկշիռ[5]

Պետք է վճարային հաշվեկշռի դրական հարաբերակցության ապահովում:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Կուսակցությունն նահրաժեշտ է համարում տնտեսության պետական և շուկայական կարգավորվածության ճշգրիտ համակշռում, որի վերջնական նպատակը ժամանակակից և արդյունավետորեն գործառնող տնտեսությունը պետք է լինի:

ա. Ներդրումների խթանում

Անհրաժեշտ է իրավունքի հիման վրա ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորում:

բ. Ֆինանսական շուկաների զարգացում[5]

Պետք է վարկային միջոցների հանրային մատչելիության ապահովում:

գ. Մրցակցային դաշտի բարելավում[4]

Այս ոլորտում անհրաժեշտ է ազատ, մրցակցային, մենաշնորհներից զերծ շուկայական տնտեսության ձևավորում, ձեռներեցության և ազատ մրցակցության խթանման պետական հովանավորության քաղաքականություն:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում[5]

Պետք է փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված օրենսդրական դաշտի ձևավորում և աջակցության ծրագրերի կենսագործում:

ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում[5]

ԱՀԿ-ի հետ փոխհարաբերություններում պետք է ազգային շահի գերակայության սկզբունքի կիրառում:

զ. Մարզերի համաչափ զարգացում[5]

Անհրաժեծտ է մարզպետարանների վերացում և տարածքային զարգացման ծրագրերի իրականացման խթանում:

է. Ստվերային տնտեսության կրճատում[5]

Պետք է հարկային դաշտի ընդլայնում, հարկային և մաքսային վարչարարության կատարելագործում:

ը. Կոռուպցիայի հաղթահարում[4]

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում կոռուպցիոն երևույթների վերացում՝ «ձուկը գլխից բռնելու» սկզբունքով, հակակոռուպցիոն հիմնավորված և արդյունավետ քաղաքականութան մշակում և իրականացում:

թ. Արդյունաբերության զարգացում

Անհրաժեշտ է ինովացիոն տնտեսության զարգացման ապահովում և խթանում:[5]
Ժամանակակից աշխարհում այն երկրներն ու ժողովուրդները, որոնք գտնվում են արդյունաբերական ցածր մակարդակի վրա, զարգացած ու զարգացող երկրների համար վերածվում են ընդամենը էժան աշխատուժի շուկայի, հումքային կցորդի, կամ էլ նրանց համար վնասակար թափոնների աղբանոցի: Մենք ևս, թեկուզև ակամա, այդ կործանարար ճանապարհի վրա ենք:
Ելքը և փրկությունը մեկն է՝ արդյունաբերությունն ու տնտեսությունը նախ ոտքի կանգնեցնելը, ապա՝ զարգացնելը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում[5]

Պետք է վերամշակող արդյունաբերության զարգացման ապահովում և ոռոգման ջրի գնի նվազեցում:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում[5]

Անհրաժեշտ է այլընտրանքային էներգետիկ աղբյուրների ապահովում և էներգակիրների մուտքերի դիվերսիֆիկացում:

լ. Արտադրական ենթակառուցվածքների (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում[5]

Անհրաժեշտ է արտադրական ենթակառուցվածքների զարգացման ապահովում՝ երկրի հարաճուն պահանջմունքների լիարժեք ապահովման հեռանկարով:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում[5]

Տնտեսության ինովացիոն զարգացումը պետք է համարել ռազմավարական առաջնահերթություն:

ծ. Կորպորատիվ կառավարման բարելավում[5]

Կուսակցությունն անհրաժեշտ է համարում բաժնետիրության սկզբունքի խթանումը:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

Կուսակցության հավատամքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, ուր կարևորը և նպատակը մարդն է, նրա բարօրությունն ու արժանապատիվ կենսակերպը: Դա հնարավոր կլինի նաև՝ նպաստելով ամեն մի հայաստանցու ընտանիքին իր սեփական բիզնեսը կազմակերպելու միջոցով:

ա. Աղքատության հաղթահարում

Անհրաժեշտ է նոր աշխատատեղերի ստեղծում, նվազագույն աշխատավարձի էական ավելացում, զբաղվածության ծրագրերի իրականացման խթանում:

Մարդկանց արժանապատիվ կենսակերպն ապահովելու նպատակով ՔԺՎԿ-ն առաջնահերթ է համարում աղքատության վերացումը՝ հասցեագրված սոցիալական վճարների և նպաստների շնորհիվ, նվազագույն կենսապահովման ինդեքսավորվող զամբյուղի ամրագրումն օրենսդրական եղանակներով, կենսաթոշակային արդյունավետ ռեֆորմի իրականացումը, կրթաթոշակների բարձրացումը՝ այն հասցնելով սպառողական նվազագույն զամբյուղի արժեքին, պատերազմի վետերանների, զոհվածների ընտանիքների համար նախատեսված վճարների ավելացումը՝ նվազագույնը համարժեք հաշվարկով:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում[5]

Պետք է սոցիալական արդարության սկզբունքի արմատավորում՝ համապատասխան հարկային դաշտի ձևավորմամբ:

գ. Զբաղվածության ապահովում

Մարդկանց արժանապատիվ կենսակերպն ապահովելու նպատակով ՔԺՎԿ-ն առաջնահերթ է համարում գործազրկության նվազեցումը՝ բավարար աշխատավարձ ապահովող նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով: Անհրաժեշտ է զբաղվածության ապահովման ծրագրերի արդյունավետության բարձրացում:[5]

դ. Արտագաղթի նվազեցում

Անհրաժեշտ է իրավական և սոցիալական արդարության սկզբունքների արմատավորում և բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացում:[5]

Պետք է կանխել շարունակվող արտագաղթը, որի չափերն արդեն իսկ մոտ ապագայում կարող են սպառնալ մեր ազգային անվտանգությանը:

ե. Առողջապահական համակարգի բարելավում[5]

Անհրաժեշտ է պետպատվերի ընդլայնում, բուժծառայությունների մատչելիության ապահովում և ապահովագրական համակարգի ներդրում:

է. Կրթական համակարգի բարեփոխում

Պետք է ինքնուրույն և ինքնատիպ մտածողության զարգացում, կրթական համաշխարհային կրթակարգի ընդունում և կիրառում:[5]

Կուսակցության կարծիքով անհրաժեշտ է էապես ավելացնել կրթության համար նախատեսված բյուջետային հատկացումները, քանզի առանց կրթական լիարժեք գործառնող համակարգի անհնար է պատկերացնել մեր ապագան:

ը. Գիտության զարգացում[5]

Անհրաժեշտ է առաջնահերթությունների որոշում, առանջանցիկ ֆինանսավորման ապահովում և գիտական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ներդրում:

թ. Մշակույթ

Անհրաժեշտ է քրիստոնեական հոգևոր արժեքների արմատավորում, ազգային ինքնատիպության պահպանմամբ՝ ժամանակակից արժեքների ստեղծման համար անհրաժեշտ միջավայրի ձևավորում:5

Կուսակցության հիմնական խնդիրն է ազգային մշակույթի զարգացմանը նպաստելը, մշակութային իրական արժեքների քարոզչությունը, բարձր ճաշակի արմատավորումը հասարակության լայն շերտերի շրջանում, կորսված մշակութային, հոգևոր և բարոյական արժեքների վերածնունդն ու պահպանումը:

ի. Այլ /Եկեղեցի/

Անհրաժեշտ է համակողմանիորեն նպաստել քրիստոնեական հավատքի եկեղեցու և հոգևորականի իրական էության, դերի և մեր կյանքում նրա նշանակության վերածնունդին:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ՔԺՎԿ-ի սկզբունքային ելակետն ու նպատակն այս ոլորտում վարվող ցանկացած տիպի քաղաքականության և բարոյականության միասնության ապահովումն է, առանց որի անգամ ամենաբարի նպատակներով կատարված քայլը կամ կայացված որոշումը վերջնահաշվում դատապարտված կլինեն անհաջողության: Պետական և քաղաքական համակարգերի գործունեությունը պետք է ուղղել հայ մարդու հոգևոր, մտավոր և կենսական վերածնունդին ու զարգացմանը:

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում[4]

Պետք է իրական ժողովրդավարության սկզբունքների արմատավորում, հասարակական և քաղաքական կազմակերպությունների ավելի լայն ներգրավման ապահովում հանրային կյանքի բոլոր ոլորտներում՝ «Ձայն բազմաց ձայն Աստծո» սկզբունքի լիարժեք իացման նպատակով:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում[5]

Անհրաժեշտ է օրենսդրական հիմքերի բարեփոխում, պատասխանատվության խստացում դրանց խախտման համար:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Պետք է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդման գործնական կիրառման ապահովում:[5]

Հանրահայտ է, որ ընտրության ազատությունն անհրաժեշտ է նրան, ով ընդունակ է ընտրություն կատարելու, խոսքի ազատությունը նրան, ով ասելիք ունի, խղճի ու դավանանքի ազատությունը նրան, ով խիղճ և հավատք ունի, ուստի կուսակցության գործունեության կարևորագույն նպատակներից մեկը, պայքարելով ազատության համար հնարավորինս շատերի մոտ ընտրություն կատարելու ունակությանը, ասելիքի, խղճի ու հավատքի, միասնության, համերաշխության, արդարության, պատասխանատվության սկզբունքների սերմանումն ու արմատավորումն է:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Անհրաժեշտ է իրական անկախության և անձեռնմխելիության երաշխիքների ապահովում, վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացում:[5]

Պետք է առաջնահերթ ուշադրություն դառնցնել արդարադատության՝ անկախ դատական և արդյունավետ իրավական համակարգերի հիմնադրմանն ու զարգացմանը:

ե. Ընտրական համակարգի բարելավում[5]

Պետք է ընտրական նոր օրենսգրքի ընդունում, որը կապահովի ընտրություններին մասնակիցների լիարժեք հավասարությունը:

զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում[5]

Անհրաժեշտ է գաղափարական մրցակցության համահավասար պայմանների ապահովում, քաղաքականության և գործարարության համատեղումների բացառում:

է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում[5]

Անհրաժեշտ է հասարակական կարծիքի ներգործության արդյունավետության բարձրացում՝ պետական կառավարման համակարգի համարժեք արձագանքումների միջոցով:

ը. Այլ /Պետական կառավարման համակարգ/

Նպատակ ունենալով կառուցել արդարացի, իրավական և ժողովրդավարական պետություն՝ ելնելով իշխանության ապակենտրոնացման և տարանջատման սկզբունքից, կուսակցությունը կառավարման ոլորտում առաջնահերթ խնդիր է համարում հորիզոնական հարթությունում հստակ տարանջատել օրենսդիր, գործադիր և դատական իշխանության թևերը, իսկ ուղահայաց հարթությունում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման իշխանությունները:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները[5]

1. Իրական ժողովրդավարության ապահովում:
2. Ֆիզիկական անվտանգության ապահովում և երաշխավորում՝ բանակի մարտունակության և բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման միջոցով:
3. Հարևան և այլ երկրների հետ բարիդրացիական փոխհարաբերությունների հաստատում՝ հանդուրժողականության և ազգային լայնախոության սկզբունքների քարոզչության և արմատավորման միջոցով:

4.10. Ժողովրդագրական (դեմոգրաֆիկ) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները[4]

Անհրաժեշտ է արտագաղթի կասեցում և ներգաղթի խթանում, բազմազավակ ընտանիքներին ցույց տրվող պետական աջակցության և խրախուսման միջոցների էական ավելացում:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Անհրաժեշտ է երկարաժամկետ բնապահպանական ծրագրերի մշակում և իրականացման արդյունավետության ապահովում:[5]

Առանձնահատուկ հոգատարության և հոգածության առարկա պետք է հանդիսանա շրջակա միջավայրը՝ երկրի առողջությունը, որի պահպանությունը բոլորիս պարտքն է, սակայն արդյունավետ բնապահպանություն հնարավոր է իրականացնել համակարգված պետական քաղաքականության շնորհիվ միայն:

26. «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՕԵԿ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կենտրոնական գրասենյակի հասցեն՝** ք. Երևան, Աբովյան 43
- **Իրավաբանական հասցե՝** ք. Երևան, Կորյունի 14
- **Հեռախոսի և ֆաքսի համարները՝** (+37410) 56-99-69, 56-91-11
- **Էլեկտրոնային փոստի հասցեն՝** info@oek.am
- **Էլեկտրոնային էջի հասցեն՝** www.oek.am
- **Հիմնադրման տարեթիվը՝** 1997թ
- **Պետական գրանցման ամսաթիվը՝** 20.03.1998թ.
- **Պետական. վերագրանցման ամսաթիվը՝** 18.11.2003թ.
- **Կուսակցության պաշտոնական մամուլը՝** «Օրինաց Երկիր» պաշտոնաթերթ

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐԸ

- Համագումար
- Քաղաքական խորհուրդ
- Վարչություն
- Կուսակցության նախագահ՝ Արթուր Վահանի Բաղդասարյան

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ[4]

Կուսակցության գաղափարախոսությունը հենվում է հետևյալ դրույթների վրա.

- հույսի, այլ ոչ թե հուսալքության հասարակության ստեղծում,
- ազգային ոգու բարձրացում,
- տարածաշրջանում և աշխարհում մրցունակ և հեղինակություն վայելող երկրի կառուցում,

Կուսակցության գործունեության նպատակներն են.

- Հայաստանը դարձնել օրենքների երկիր,
- օրենքները պետք է ընդունվեն՝ ելնելով ազգային երկարաժամկետ ծրագրերից, ծառայեն երկրի ու ժողովրդի զարգացմանը,
- օրենքը չպետք է անզոր լինի և օրենքի առջև արտոնյալներ չպետք է լինեն,
- օրենքները պետք է կիրառվեն:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Արտաքին քաղաքականության երեք առաջնահերթությունները[5]

3. Եվրոպական կառույցներին ակտիվ ներգրավում՝ գլխավոր նպատակ ունենալով անդամակցել Եվրամիությանը:
4. Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունների հետևողական զարգացում:
5. ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացում:

4.2. Արտաքին քաղաքականության հիմնադրույթները, այդ թվում՝

Աշխարհում տեղի ունեցող գլոբալիզացիայի գործընթացը և պետությունների միջև խիստ բաժանարար սահմանների վերացումը բազմաթիվ ազգերի ավելի ակտիվ է ներքաշում միջազգային կյանք, ինչն ուղեկցվում է համաշխարհային հասարակության ձևավորմամբ: Այս պայմաններում յուրաքանչյուր ազգի զարգացումը պահանջում է առավել մեծ ներգրավում համաշխարհային զարգացման ընդհանուր գործընթացում՝ միաժամանակ ապահովելով սեփական ինքնության և պետական ինքնիշխանության պաշտպանությունը, որը կարող է իրականություն դառնալ յուրաքանչյուր պետության սահմաններում գործող և միջազգային կյանքը կանոնակարգող իրավական համակարգերի օրգանական համապատասխանեցման միջոցով:

ա. Եվրահինտեգրում[5]

Եվրահինտեգրումը գերակա է ՀՀ արտաքին քաղաքականության համար:

դ. ՀԱԴԿ (NATO)[5]

ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունների հետագա զարգացումը բխում է ՀՀ շահերից: Ներկայումս ՆԱՏՕ-ի շրջանակներում առավել կարևորվում է քաղաքական բաղկացուցիչը: ՀՀ–ՆԱՏՕ հարաբերություններում IPAP ծրագրի իրականացումը և Հայաստանի մասնակցությունը խաղաղարար գործողություններին բխում են մեր ազգային շահերից:

ե. ԱՄՆ[5]

ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացում:

զ. Ռուսաստանի Դաշնություն[5]

Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունների հետևողական զարգացում:

ժ. Վրաստան[5]

Վրաստանի կայունությունը և ժողովրդավարացումը բխում է մեր երկրի շահերից:

ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն[5]

Հայաստանը ներկայումս դուրս է մնում տարածաշրջանային ծրագրերից: Այս իրավիճակի հաղթահարումը և մեր պետության ընդգրկումը տարածաշրջանային պրոեկտներում պետք է հանդիսանա Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնային խնդիրներից:

լ. Ղարաբաղյան հիմնախնդիր[5]

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ և փոխշահավետ կարգավորում:

ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում[5]

- Կառավարությունում սփյուռքի հետ կապերով զբաղվող հատուկ մարմնի ստեղծում, սփյուռքի ներուժի օգտագործում:
- Սփյուռքահայ ներդրողների համար բարենպաստ պայմանների ստեղծում:
- Սփյուռքում հայապահպանության գործին աջակցության ցուցաբերում:

կ. Այլ /Դիվանագիտական քաղաքականություն/

Քաղաքական կառավարման համակարգի կարևորագույն բաղկացուցիչ մասը ճկուն և գործուն դիվանագիտությունն է, որը պետք է կարողանա երկրի թե՛ տնտեսական, և թե՛ ռազմական հաջողություններն ամրապնդել միջազգային ասպարեզում՝ ապահովելով նոր աշխարհակարգում համապատասխան դիրք ու կեցվածք:

4.4. Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում[5]

- Պետության մասնակցություն արդյունաբերության վերագործարկմանը և աշխատատեղերի ստեղծմանը:
- Ձեռնարկություններին պետական աջակցության ցուցաբերում.
  ա) նպատակային ծրագրեր,
  բ) բյուջետային վարկեր և պետական ֆինանսավորում,
  գ) հարկային և սոցիալական արտոնություններ,
  դ)երաշխիքային համակարգի ներդրում երկարաժամկետ վարկավորման համար:
- Տեղական արտադրողներին և արտահանմանը պետական աջակցության ցուցաբերում:

4.5. Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթները, այդ թվում՝[5]

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է ազատ շուկայական տնտեսության սկզբունքների, ներդրումների հուսալի իրավական պաշտպանվածության վրա խարսխված, սեփականության բազմաձևության և սեփականության բոլոր ձևերի հավասար իրավական պաշտպանվածության վրա հիմնված տնտեսական արդյունավետ համակարգի ստեղծում՝ բացառելով օլիգոպոլ շուկայի ձևակերպումը:

ա. Դրամավարկային

- Ավանդների վերադարձի շարունակականություն և առկա անարդարությունների վերացում:
- Բնակչության բանկային ավանդների ապահովագրման ծավալների մեծացում:
- Բանկային համակարգում կարճաժամկետ վարկավորումից անցում երկարաժամկետ վարկային ծրագրերի:
- Բանկային տոկոսադրույքների իջեցում, բարձր ռիսկայնություն պարունակող վարկավորման համար պետական երաշխավորության մեխանիզմների ստեղծում:
- Բանկային հանցագործությունների համար նախատեսվող պատասխանատվության խստացում և ավանդների պաշտպանություն:

գ. Հարկային

Հարկերի նվազեցում, սպասարկման ոլորտում մեկ համակցված հարկատեսակի կիրառում և նոր աշխատատեղեր ստեղծող գործարարներին հարկային արտոնությունների տրամադրում:

դ. Մաքսային

Մաքսերի նվազեցում և պայքար այս ոլորտում մեծ չափերի հասնող կոռուպցիայի դեմ:

4.6. Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Ներդրումների խթանում[5]

Կուսակցությունը կարևորում է օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքի ավելացումը:

գ. Մրցակցային դաշտի բարելավում

Կուսակցությունը կարևորում է հարկատուների շահերի պաշտպանությունը և տնտեսվարողների համար գործունեության հավասար պայմանների ապահովումը:

դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում[5]

Անհրաժեշտ է պետական աջակցություն ցուցաբերել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը:

է. Ստվերային տնտեսության կրճատում

Անհրաժեշտ է անզիջում պայքարել տնտեսության մեջ ստվերայնության, կլանների, պետական կառավարման ապարատում կոռուպցիայի և Հայաստանի զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների դեմ:

թ. Արդյունաբերության զարգացում

Կուսակցության խնդիրներից է արդյունաբերության վերականգնումը և վերագործարկումը բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված, արտահանողական ուղղվածությամբ, նոր աշխատատեղեր ապահովող արդյունաբերության ստեղծումը և կայուն զարգացումը, գյուղատնտեսության նկատմամբ պետական հոգածության բարձրացումը:

ժ. Գյուղատնտեսության զարգացում

Կուսակցության խնդիրներից է նպաստել Հայաստանում արտահանող ուղղվածության արդյունաբերության և գյուղատնտեսության, միջազգային մակարդակով ճանաչում գտնելու ընդունակ ինտելեկտուալ ծառայությունների զարգացմանը:

ի. Էներգետիկ անվտանգության ապահովում[5]

ՀՀ-ին անհրաժեշտ է էներգետիկ աղբյուրների դիվերսիֆիկացիա: Կուսկացությունը կարևորում է Իրան-Հայաստան երկրորդ գազամուղի կառուցումը և Հայաստանի տարածքով իրանական գազի արտահանումը դեպի միջազգային շուկաներ: Կուսակցությունը կարևորում է նաև Հայաստանում նոր ատոմակայանի կառուցումը:

խ. Տնտեսության ինովացիոն զարգացում[5]

ՀՀ տնտեսությունը կարող է զարգանալ նորարարական մոտեցումների և արտահանման հիման վրա:

4.7. Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում՝

ա. Աղքատության հաղթահարում

Կուսակցության խնդիրներից է սոցիալապես անապահով խավերի, անաշխատունակ խմբերի անհրաժեշտ կենսամակարդակի ապահովման համար օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների ճանապարհով պայմանների ստեղծումը և պայքարը սոցիալական բևեռացման դեմ:

բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում

Սոցիալական բևեռացման պայմաններում մարդու ինքնաբացահայտման համար հնարավորությունների ընձեռումը սերտորեն փոխկապակցված է տնտեսության առաջընթացի և սոցիալական պաշտպանվածության արդյունավետ համակարգերի ստեղծման ու ներդրման հետ՝ համակարգեր, որոնք զարգացած օրենսդրության և արդյունավետ մեխանիզմների գոյության պայմաններում կարող են խթան հանդիսանալ հասարակական զարգացումների համար: Զարգացած տնտեսություն ունեցող սոցիալական պետության ձևավորումը բխում է հասարակության անդամների շահերից, իսկ սոցիալական պաշտպանվածության արդյունավետ համակարգերի ստեղծումը կնպաստի հիրավի սոցիալական համերաշխության և սոցիալական գործընկերության սկզբունքների հետագա արմատավորմանը, որը և հանդիսանում է կուսակցության կարևորագույն նպատակներից մեկը:

գ. Զբաղվածության ապահովում

Աշխատանքի ազատ ընտրության հնարավորությունը մարդու և քաղաքացու կարևորագույն սոցիալական իրավունքներից է, իսկ երաշխավորված աշխատանքի ու արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը՝ յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից մեկը:

Կուսակցությունը գտնում է, որ պետությունը պարտավոր է մասնակցել աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև հարկային արտոնություններ տրամադրել նոր աշխատատեղեր ստեղծող ձեռնարկություններին:[5]

դ. Արտագաղթի նվազեցում[5]

Արտագաղթի նման դեպքերի պահպանումը սպառնում է մեր ազգային անվտանգությանը, և այս ոլորտում պետք է աշխատատեղերի ստեղծում, օրինական ընտրությունների անցկացում, երկրում բարոյահոգեբանական մթնոլորտի փոփոխություն և արդար հասարակության ձևավորում:

ե. Առողջապահական համակարգի բարելավում[5]

Առողջապահության ոլորտում կուսակցությունը կարևորում է.

- պարտադիր պետական բժշկական ապահովագրություն որոշակի հիվանդությունների համար,
- կամավոր բժշկական ապահովագրության համակարգի ներդրում,
- առողջապահության ոլորտում բարեփոխումների խորացում,
- առողջապահության ոլորտը կարգավորող օրենսգրքի ընդունում:

զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում[5]

- Կենսաթոշակը և նվազագույն աշխատավարձը պետք է ապահովեն նվազագույն կենսամակարդակ:
- Ընտանեկան նպաստի համակարգի հիմնովին վերանայում:
- Սոցիալապես անապահով խավերին պետական հասցեական օժանդակության հատկացում (ծերեր, հաշմանդամներ, փախստականներ և այլն):

է. Կրթական համակարգի բարեփոխում[5]

Կրթության ոլորտում կուսակցությունն առաջարկում է.

- կրթօջախների մասնավորեցման արգելում, դպրոցների դերի և ինքնավարության մեծացում,
- կրթական ոլորտի աշխատողների աշխատավարձերի շարունակական աճ և իրավական պաշտպանվածություն,
- առաջին դասարանից հանրապետության բոլոր դպրոցներում երկու օտար լեզվի և համակարգչային գիտելիքների ուսուցում,
- ընդունելության քննությունների աստիճանական վերացում:

ը. Գիտության զարգացում[5]

Կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է իրականացնել գիտության համակարգի արդիականացում, բյուջետային հատկացումների ավելացում՝ Հայաստանը տարածաշրջանում գիտական զարգացումների առաջատար երկիր դարձնելու նպատակով: Անհրաժեշտ է նորարարական նախաձեռնությունների, հետազոտությունների աջակցություն, ներդրման և համագործակցային դաշտի ապահովում: Պետությունը պարտավոր է աջակցել երիտասարդ գիտնականներին:

թ. Մշակույթ[4]

Կուսակցությունն առաջարկում է.

- աջակցել պատմամշակութային ժառանգության պահպանմանը,
- նպաստել արդի, ժողովրդական և կիրառական արվեստների ներդաշնակ զարգացմանը,
- խրախուսել մշակութային նշանակալի նվաճումների հեղինակներին,
- խորացնել արտերկրի և Սփյուռքի հետ մշակութային համագործակցությունը,
- հայկական մշակույթն արժանավայել ներկայացնել արտասահմանում:

ի. Այլ /Ազգային արժեքներ/

Կուսակցությունն իր առաջնային խնդիրներից է համարում հավատարիմ մնալ ազգային էությանը, նպաստել ազգային ինքնագիտակցության և ազգային ոգու պահպանմանն ու զարգացմանը՝ համամարդկային արժեքների համատեքստում:

4.8. Քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման հիմնախնդիրները, այդ թվում՝

ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում

Կուսակցությունը կարևորում է օրենդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը, ժողովրդավարական ինստիտուտների ձևավորումն ու կայացումը: ՀՀ զարգացումը և անվտանգությունն այսօր մեծ չափով պայմանավորված են մեր երկրի ժողովրդավարացմամբ:

բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում

Կուսակցության խնդիրներից է ԶԼՄ-ի, որպես հանրային իշխանության միջոցի, ազատ զարգացմանն աջակցությունը:

գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում

Զարգացած հասարակություններում մարդու և քաղաքացու ազատությունների պաշտպանությունը պետության հասարակական-քաղաքական համակարգերի կարևորագույն խնդիրներից է: Կուսակցությունը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունում պետք է երաշխավորվեն մարդու և քաղաքացու ազատ ապրելու և ազատ արարելու հնարավորությունները:

դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում

Կուսակցությունը կարևորում է դատաիրավական համակարգի անկախության ապահովումը և դերի բարձրացումը, արդարադատության իրականացման համար հաստատուն երաշխիքների ստեղծումը:

4.9. Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Ազգի, ժողովրդի, պետության, քաղաքացու և ի վերջո անհատի ինքնիշխանությունն ազատության առհավատչյան է: Հայ ժողովուրդն իր հազարամյա պատմության ընթացքում միշտ ձգտել է ազգային ինքնիշխանության՝ հայկական անկախ պետականություն ստեղծելու միջոցով, դրանում տեսնելով ազգի անվտանգության ապահովման գրավականն ազգապահպանության, հոգևոր և սոցիալական բնագավառներում: Եվ այդ անվտանգության առաջին պայմանը կուսակցությունն ինքնապաշտպանական գաղափարական իմունահամակարգի ստեղծումն է համարում, որը կբացառի օտարածին ներթափանցումները պետական և ազգային միջավայր:

4.10 Ժողովրդագրական (դեմոգրաֆիկ) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները[5]

Կուսակցությունը գտնում է, որ պետությունը պարտավոր է աջակցել բազմազավակ ընտանիքներին, ինչպես նաև խթանել ծնելիությունը՝ յուրաքանչյուր ծնվող երեխային հատկացնելով միանվագ ֆինանսական օգնություն՝ առաջին երեխային՝ 150.000 դրամ, երկրորդ երեխային՝ 250.000 դրամ, երրորդ երեխային՝ 400.000 դրամ:

4.11. Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները

Հայաստանի Հանրապետությունը ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում կանգնած է լուրջ բնապահպանական հիմնախնդիրների առջև, որոնց լուծման համար անհրաժեշտ է.

- աջակցել Սևանա լճի պահպանությանը և էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը, (ապագայում անհրաժեշտ է ֆինանսներ հայթայթել Սևանի կոլեկտորի կառուցման համար),
- աջակցել Որոտանի հիդրոհանգույցի շահագործման խնդրի լուծմանը,
- կարևորել անտառների պահպանության, օգտագործման և վերականգնման ծրագրերի իրականացումը, արգելել ապօրինի ծառահատումները,
- նպաստել Հայաստանում թափոնների վերամշակման ձեռնարկությունների ստեղծմանը՝ բնապահպանական տեխնոլոգիաների կիրառմամբ,
- որպես գերակայություն՝ դիտարկել հանքավայրերի օգտագործման և արդյունավետության բարձրացումը նոր տեխնոլոգիաների ներդրմամբ,
- խստացնել պատասխանատվությունն ընդերքի անխնա օգտագործման, կանաչ տարածքների և անտառածածկույթով հարուստ վայրերի օգտագործման համար:

5. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին և առաջադրված թեկնածուների թիվը

- **1999թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 31
- **2003թ. ընտրություններ՝**
  համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ 63

5.2. Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին

- **1998թ. ընտրություններ՝** չի մասնակցել
- **2003թ. ընտրություններ՝** չի մասնակցել

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

6.1. ԱԺ պատգամավորների թիվը

- ԱԺ II Գումարում՝ 5
- ԱԺ III Գումարում՝ 21

ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՐՑԵՐԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱԽՍԱՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեկնաբանություններ
հարցաթերթիկում ներառված հարցերի վերաբերյալ կուսակցությունների արտահայտած դիրքորոշումների պաշտոնական կարգավիճակի վերաբերյալ

Տարբերանշան	Մեկնաբանություն
1	Լրացված է կուսակցության կողմից, սակայն Հիմնադրամի կողմից ստուգված չէ՝ կուսակցության համապատասխան պաշտոնական փաստաթղթերի (ծրագիր, կանոնադրություն կամ հրապարակված պաշտոնական այլ փաստաթղթեր) անհասանելիության (կուսակցության կողմից հրապարակային աղբյուրների չնշման) և Հիմնադրամին տրամադրված չլինելու պատճառով:
2	Լրացված է Հիմնադրամի կողմից ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրամադրված տվյալների հիման վրա՝ հարցմանը կուսակցության չմասնակցելու պատճառով:
3	Լրացված է Հիմնադրամի կողմից ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրամադրված տվյալների հիման վրա՝ կուսակցությանն իր իրավաբանական և կենտրոնական գրասենյակի հասցեներով հարցմանը մասնակից դարձնելը հնարավոր չլինելու պատճառով:
4	Հարցաթերթիկում պատասխանը լրացված է կուսակցության կողմից, սակայն մասնակիորեն է ներառված (որոշ մասով է համապատասխանում) կուսակցության կողմից հրապարակված և/կամ Հիմնադրամին տրամադրված կուսակցության համապատասխան պաշտոնական փաստաթղթերում (ծրագիր, կանոնադրություն կամ հրապարակված պաշտոնական այլ փաստաթղթեր):
5	Հարցաթերթիկում պատասխանը լրացված է կուսակցության կողմից, սակայն ներառված չէ (բացակայում է) կուսակցության կողմից հրապարակված և/կամ Հիմնադրամին տրամադրված կուսակցության համապատասխան պաշտոնական փաստաթղթերում (ծրագիր, կանոնադրություն կամ հրապարակված պաշտոնական այլ փաստաթղթեր):
6	Հարցաթերթիկում պատասխանը լրացված է կուսակցության կողմից, սակայն ամբողջովին կամ մասնակիորեն հակասում է կուսակցության կողմից հրապարակված և/կամ Հիմնադրամին տրամադրված կուսակցության համապատասխան պաշտոնական փաստաթղթերում (ծրագիր, կանոնադրություն կամ հրապարակված պաշտոնական այլ փաստաթղթեր) տվյալ հարցի վերաբերյալ ամրագրված դիրքորոշմանը (Այսինքն՝ առկա է այլ դիրքորոշում, որը համահունչ չէ լրացված պատասխանի հետ):

Բացատրություններ
ուղեցույցում ներառված հարցերի վերաբերյալ կուսակցությունների դիրքորոշումների պաշտոնական կարգավիճակի մեկնաբանությունների կապակցությամբ

Տարբերակ	Տարբերանշանների տեղադրման դիրքը	Բացատրություն
ա.	Տարբերանշանը տեղադրված է հարցաթերթիկի որևէ բաժնի, հարցախմբի, հարցի կամ ենթահարցի մոտ:	Տարբերանշանի մեկնաբանությունը վերաբերում է համապատասանաբար տվյալ բաժնի, հարցախմբի, հարցի, կամ ենթահարցի ամբողջ պատասխանին:
բ.	Տարբերանշանը տեղադրված է հարցաթերթիկի որևէ բաժնի, հարցախմբի, հարցի կամ ենթահարցի պատասխանի որևէ պարբերության կամ նախադասության վերջում:	Տարբերանշանի մեկնաբանությունը վերաբերում է միայն տվյալ պարբերությանը կամ նախադասությանը:
գ.	Տարբերանշանը տեղադրված է հարցաթերթիկի որևէ բաժնի, հարցախմբի, հարցի կամ ենթահարցի պատասխանում առկա թվարկումները ներկայացնող տեքստի վերջում:	Տարբերանշանի մեկնաբանությունը վերաբերում է տվյալ տեքստին և նրան հաջորդող թվարկումներին:
դ.	Տարբերանշանը տեղադրված է հարցաթերթիկի որևէ բաժնի, հարցախմբի, հարցի կամ ենթահարցի պատասխանում ներառված թվարկումներից որևէ մեկից հետո:	Տարբերանշանի մեկնաբանությունը վերաբերում է միայն թվարկվող տվյալ դրույթին:
ե.	Տարբերանշանը տեղադրված է հարցի համարի մոտ:	Տարբերանշանի մեկնաբանությունը վերաբերում է ամբողջ հարցին, ներառյալ ենթահարցերը:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 17.01.07թ. ԹԻՎ 3-2/0043-07 ԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ (10.01.07թ.- ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՆՑՎԱԾ) ՀՀ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ[†]

հ/հ	Հիմնադրում	Գրանցում	Վերագրանցում	Անվանում	Հասցե
1	1991	14/05/1991	17/02/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Մելիք Ադամյան 2
2	1991	10/06/1991	24/11/2003	ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Նոր-Նորք 4-րդ զանգված, Գյուլիքեխվյան նրբ.11շ, բն.4
3	1991	10/06/1991	24/11/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Կորյունի 19ա, 3-րդ հարկ
4	1991	02/07/1991	28/11/2003	«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Հանրապետության փ. 30 շ
5	1991	15/07/1991	24/11/2003	«ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Սարյան փ. 38 շ
6	1991	15/07/1991	08/12/2003	ՆԺԴԵՀՅԱՆ ՑԵՂԱԿՐՈՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Գյուլիքեխվյան 31/1, բն.14
7	1991	29.07/1991	17/11/2003	ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԻՄ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան
8	1991	29/07/1991	24/11/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Ջաբյան փ. 10
9	1991	19/08/1991	25/11/2003	«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՍԻՄ)	ք. Երևան, Ե. Կողբացի 50ա
10	1991	19/08/1991	19/11/2003	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Վարդանանց փակուղի 8 շ.
11	1991	25/10/1991	26/11/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Կորյունի 14
12	1991	12/12/1991	01/12/2003	«ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Բուզանդի1/3
13	1992	19/03/1992	26/11/2003	«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» (ԱԺՄ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Աբովյան փ. 12
14	1994	21/02/1994	05/12/2003	«ՀԱՅԿԱՆԴՈՒԽՏ» ԱՎԱՆԴԱՊԱՇՏ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Մ. Սարյան փ. 4, բն.20
15	1994	05/05/1994	03/12/2003	«ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Քեռու փ., տուն 35
16	1994	12/09/1994	26/11/2003	ԼԻԲԵՐԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Չարենցի 1, 4-րդ հարկ
17	1994	12/09/1994	24/11/2003	«ԿԱՆԱՅՔ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Կորյունի 19ա, 8-րդ հարկ
18	1995	28/02/1995	01/12/2003	ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Կոմիտասի 59
19	1995	31/10/1995	01/12/2003	«ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Անտառային 190/16
20	1997	28/02/1997	24/11/2003	«ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	ք. Երևան, Մոսկովյան 33ա, 5-րդ հարկ
21	1997	20/06/1997	05/12/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Երզնկյան 1շ, բն.1
22	1997	04/07/1997	25/11/2003	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Վարդանանց 13
23	1997	12/09/1997	26/11/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Ավան 12 պոլիկլինիկա
24	1998	28/01/1998	25/11.2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Բուզանդի 1/3
25	1998	13/02/1998	01/12/2003	«ՀՁՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Տիգրան Մեծի 9
26	1998	20/03/1998	04/09/2003	«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 12
27	1998	20/03/1998	18/11/2003	«ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Կորյունի 14
28	1998	27/03/1998	08/12/2003	«ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՀԱՅ-ԱՐԻԱԿԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	ք. Երևան, Եղբայրության 7շ, բն.7
29	1998	15/06/1998	04/11/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Ղ. Փարպեցի 7
30	1998	24/07/1998	02/12/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Դրոյի 11, բն. 5
31	1998	25.12.1998	28/11/2003	«ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Անդրանիկի 110
32	1999	25/01/1999	13/11/2003	«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Օրբելի եղբայրների 12, բն.14
33	1999	14/07/1999	06/11/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան-51, Ն. Ջարյան 22
34	1999	24/08/1999	29/08/2003	«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Մամիկոնյանց 58, բն 42
35	2000	27/04/2000	19/11/2003	«ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3
36	2000	15/06/2000	06/10/2003	«ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Կորյունի փ. 15 շ, 3-րդ հարկ
37	2000	26/12/2000	14/02/2003	«ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Կորյունի փ., շ 19ա
38	2001	13/02/2001	02/07/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՄԵԿ ԱԶԳ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Գրիգոր Արծրունու փ., տուն 74
39	2001	27/03/2001	02/12/2003	«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	ք. Երևան, Մանթաշյան 6, բն.20
40	2001	06/06/2001	20/11/2003	«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Այգեստան թաղ. 7-րդ փ, թիվ 18
41	2001	08/06/2001	04/12/2003	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Գ. Նժդեհի 12, բն. 23

[†] ՀՀ կուսակցությունների հաջորդականությունը սույն աղյուսակում ներկայացված է ըստ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից տրամադրված ցանկի և չի համապատասխանում տեղեկագրում կուսակցությունների ներկայացման այբբենական հերթականությանը: Գունավորված տողերով ներկայացված են ՀՀ Ազգային ժողովի 2007թ ընտրություններին 2007թ. ապրիլի 7 դրությամբ մասնակցող և սույն ուղեցույցում ներառված կուսակցությունները:

42	2001	06/07/2001	26/11/2003	ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Պարոնյան 11, բն.4
43	2001	05/11/2001	14/03/2003	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Մամիկոնյանց 62, բն.1
44	2001	23/11/2001	17/11/2003	«ԱՇԽԱՏԱՆՔ, ՕՐԵՆՔ, ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Փ. Բուզանդի 15, բն.18
45	2003	31/10/2003		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Պուշկինի 46, բն 4
46	2002	14/08/2002	10/11.2003	«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Բաղրամյան 2, բն 11
47	2002	15/11/2002	28/11/2003	ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՇԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Գյուլբենկյան 29, բն. 18/19
48	2003	26/02/2003		«ԲԱԳՐԵՎԱՆԴ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Գյուլբեկյան 27
49	2003	11/03/2003		«ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Սարյան 22
50	2003	10/12/2003		«ԵՐԵՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Սեբաստիա 16շ, 30ա
51	2004	08/01/2004		«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Թումանյան 8
52	2004	19/01/2004		«ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Իսահակյան 28
53	2004	19/02/2004		«ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Կորյունի 1 նրբ. 11շ, 1ա
54	2001	14/10/2001	20/02/2004	ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Բաղրամյան պողոտա թիվ 1, բն. 57
55	1999	25/01/1999	26/02/2004	ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՈՒԽՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Նոր-Նորք, 9-րդ զանգված 17շ, բն.13
56	1992	15/09/1992	03/03/2004	«ԱՐՑԱԽ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Մոսկովյան փ. 11
57	2002	16/07/2002	04/03.2004	«ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒ ՊԱՏԻՎ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Մոսկովյան 33/8
58	1999	15/03/1999	16/03/2001	«ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՊԱԳԱ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Սայաթ Նովա 19, «Անի» հյուրանոց 1-ին հարկ,14 սենյակ
59	2004	10/03/2004		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Աբովյան 22ա
60	2004	15/04/2004		«ԱԶԳԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ» (ԱՓ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Ջեյթուն, Մինաս Ավետիսյանի 4-րդ փ. 16 շ, բն. 23
61	2004	15/04/2004		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Հակոբ Հակոբյան 12 շ, բն. 8
62	2004	18/06/2004		«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Դավթաշենի 4-րդ թաղ. 48 շ, բն. 31
63	2004	06/07/2004		«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Մ. Խորենացու 69
64	2004	10/08/2004		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Վարդանանց 7, բն. 41
65	2004	11/11/2004		ՄԵՐ ՏՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Կոնդ 88
66	2004	24/12/2004		ԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Սայաթ-Նովայի պող. 2
67	2005	20/09/2005		«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Պուշկինի 38
68	2005	07/10/2005		«ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Նոր-Նորքի 6-րդ զ. Լուքսեմբուրգի 1-ին նրբ. 4 շ. բն. 3
69	2005	10/10/2005		«ՔՐԻՍՏՈՆԵԱ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Գայի պողոտա 4/1
70	2005	26/12/2005		«ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Սայաթ-Նովա 22, բն. 6
71	2005	30/12/2005		«ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Ծխախոտագործների 58
72	2005	30/12/2005		«ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Մ. Բաղրամյան, 2-րդ նրբ. տ. 13
73	2006	05/06/2006		«ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Արշակունյաց 9
74	2006	18/10/2006		«ՆՈՐ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ք. Երևան, Շիրակի 17/2

ՉԼՐԱՑՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ, ԸՍՏ ՈՐԻ ՀԻՄԱՆԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՉԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

1. Ընդհանուր տեղեկություններ		
1.1	**Կուսակցության պաշտոնական անվանումը և հապավումը**	
1.2	**Կուսակցության հասցեն և կապի միջոցները**	իրավաբանական հասցե՝
		կենտրոնական գրասենյակի հասցե՝
		հեռախոս՝
		էլեկտրոնային փոստ՝
		էլեկտրոնային էջ՝
1.3	**Կուսակցության առանձնացված տարածքային ստորաբաժանումների քանակը**	
1.4	**Կուսակցության հիմնադրման, կանոնադրության և ծրագրի հաստատման, պետական գրանցման, վերագրանցման և վերջին համագումարի տարեթվերը**	հիմնադրում ___ _____ թ.
		կանոնադրության և ծրագրի ընդունում ___ _____ թ.
		պետական գրանցում ___ _____ թ.
		պետական. վերագրանցում ___ _____ թ.
		վերջին համագումար ___ _____ թ.
1.5	**Կուսակցության անդամների թիվը**	գրանցման ժամանակ /անդամ/
		վերջին համագումարի ժամանակ /անդամ/
		հարցաթերթիկի լրացման պահին /անդամ/
1.6	**Կուսակցության պաշտոնական մամուլը**	անվանում՝
1.7	**Կուսակցության ծրագրի և կանոնադրության հրապարակման տարեթիվը և լրատվամիջոցը**	ՁԼՄ անվանում՝ Տարեթիվ՝ ___ _____ թ.
2. Կուսակցության ներքին կազմակերպական կառույցները		
2.1	**Կանոնադրությամբ սահմանված կուսակցության ղեկավար մարմինները և դրանցում ներգրավված անդամների թիվը**	անվանում՝ անդամների թիվը՝
		անվանում՝ անդամների թիվը՝
		անվանում՝ անդամների թիվը՝
2.2	**Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը և անդամները**	անվանում՝ անդամների թիվը՝
		կուսակցության ղեկավար՝
2.3	**Կուսակցության անդամակցության կարգը**	
3. Կուսակցության գործունեության գաղափարախոսական հիմքերը, կանոնադրական նպատակներն ու խնդիրները		
4. Կուսակցության ծրագրային հիմնադրույթները և դիրքորոշումները հետևյալ հիմնախնդիրների վերաբերյալ		
4.1	**Արտաքին քաղաքականության առաջնահերթություններ (նշել և մեկնաբանել ըստ կարևորության դրանցից երեքը)**	
4.2	**Արտաքին քաղաքականության հիմնադրույթներ, այդ թվում**	
	ա. Եվրահինտեգրում	
	բ. ԱՊՀ	
	գ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն (ՀԱՊԿ)	
	դ. ՀԱԴԿ (NATO)	
	ե. ԱՄՆ	
	զ. Ռուսաստանի Դաշնություն	
	է. Թուրքիա	
	ը. Ադրբեջան	
	թ. Իրան	
	ժ. Վրաստան	
	ի. Տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի մասնակցություն	
	լ. Ղարաբաղյան հիմնախնդիր	
	խ. Ցեղասպանության ճանաչում	
	ծ. Հայաստան – Սփյուռք կապերի խորացում և համագործակցության արդյունավետության բարձրացում	
	կ. Այլ /նշել/	
4.3	**Ներքին քաղաքականության առաջնահերթություններ (նշել և մեկնաբանել ըստ կարևորության դրացից երեքը)**	
4.4	**Պետության դերը տնտեսության կարգավորման և զարգացման գործում**	
4.5	**Տնտեսական քաղաքականության սկզբունքային հիմնադրույթներ, այդ թվում**	
	ա. Դրամավարկային	
	բ. Բյուջետային	
	գ. Հարկային	
	դ. Մաքսային	
	ե. Ճյուղային	

	զ. Տարածքային	
	է. Արտաքին տնտեսական հարաբերություններ	
	ը. Վճարային (առևտրային) հաշվեկշիռ	
	թ. Այլ /նշել/	
4.6	**Տնտեսական զարգացման առկա հիմնախնդիրների լուծման ուղիներ, այդ թվում**	
	ա. Ներդրումների խթանում	
	բ. Ֆինանսական շուկաների զարգացում	
	գ. Մրցակցային դաշտի բարելավում	
	դ. Փոքր և միջին բիզնեսի զարգացում	
	ե. Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) պահանջների կատարում	
	զ. Մարզերի համաչափ զարգացում	
	է. Ստվերային տնտեսության կրճատում	
	ը. Կոռուպցիայի հաղթահարում	
	թ. Արդյունաբերության զարգացում	
	ժ. Գյուղատնտեսության զարգացում	
	ի. էներգետիկ անվտանգության ապահովում	
	լ. Արտադրական ենթակառուցվածքներ (էներգետիկա, կապ, տրանսպորտ և այլն) զարգացում	
	խ. Տնտեսության ինովացիոն զարգացում	
	ծ. Կորպորատիվ կառավարման բարելավում	
	կ. Այլ /նշել/	
4.7	**Սոցիալական քաղաքականության հիմնադրույթները և առկա խնդիրների լուծման ուղիները, այդ թվում**	
	ա. Աղքատության հաղթահարում	
	բ. Հասարակության շերտերի բևեռացման նվազեցում	
	գ. Զբաղվածության ապահովում	
	դ. Արտագաղթի նվազեցում	
	ե. Առողջապահական համակարգի բարելավում	
	զ. Սոցիալական ապահովության և ապահովագրական համակարգի բարեփոխում	
	է. Կրթական համակարգի բարեփոխում	
	ը. Գիտության զարգացում	
	թ. Մշակույթ	
	ժ. Սպորտ	
	ի. Այլ /նշել/	
4.8	**Քաղաքացիական հասարակության ձևավորում և զարգացում, այդ թվում**	
	ա. Ժողովրդավարության ինստիտուտների ամրապնդում	
	բ. Խոսքի և տեղեկատվության ազատության ապահովում	
	գ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում	
	դ. Դատաիրավական համակարգի բարեփոխում	
	ե. Ընտրական համակարգի բարելավում	
	զ. Կուսակցությունների կայացում և քաղաքական դաշտի զարգացում	
	է. Կուսակցությունների և քաղաքական գործիչների քաղաքական պատասխանատվության բարձրացում	
	ը. Այլ /նշել/	
4.9	**Ազգային անվտանգության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները**	
4.10	**Ժողովրդագրական (դեմոգրաֆիկ) հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները**	
4.11	**Բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները**	
4.12	**Այլ /նշել/**	

5. Ընտրությունների մասնակցություն

5.1	**Կուսակցության մասնակցությունն Ազգային ժողովի ընտրություններին. համամասնական, մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվը**	1995թ. ընտրություններ համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
		1999թ. ընտրություններ համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
		2003թ. ընտրություններ համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների թիվ՝
		Մասնակցելու եք արդյո՞ք 2007թ. ընտրություններին ☐այո ☐ոչ եթե այո, ապա ☐ միայնակ ☐ դաշինքով /եթե դաշինքով, ապա տես կետ 5.3 և 5.4/

5..2	**Կուսակցության մասնակցությունը նախագահական ընտրություններին**	1991թ. ընտրություններ ☐այո ☐ոչ
		1996թ. ընտրություններ ☐այո ☐ոչ
		1998թ. ընտրություններ ☐այո ☐ոչ
		2003թ. ընտրություններ ☐այո ☐ոչ
		Մասնակցելու եք արդյո՞ք 2008թ. ընտրություններին ☐այո ☐ոչ
5.3	**Դաշինքի անդամները**	
5.4	**Դաշինք կազմելու նպատակը և հիմքերը /գաղափարական և այլն/**	
5.5	**Երբ և զանգվածային որ լրատվության միջոցներով է հրապարակված կամ հրապարակվելու Ձեր նախընտրական ծրագիրը**	ՁԼՄ անվանում՝ Տարեթիվ ___ _____ թ.
5.6	**Այլ /նշել/**	
6. Կուսակցության մասնակցությունը Ազգային ժողովում		
6.1	**ԱԺ պատգամավորների թիվը**	ԱԺ I Գումարում՝
		ԱԺ II Գումարում՝
		ԱԺ III Գումարում՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2007թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԸՆՏՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

© «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2007թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ» Ընտրողի ուղեցույցի տպագրման, հրապարակման, բազմացման և էլեկտրոնային կամ թղթային կրիչների միջոցով տարածման իրավունքը պատկանում է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ:

Ցանկացած բնույթի թղթային և էլեկտրոնային բազմացումն ու տարածումը խնդրում ենք համաձայնեցնել Հիմնադրամի հետ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հասցե՝ ք. Երևան, Թոթովենցի փ., 13 շ., բն. 24
էլ. հասցե՝ foundcsd@yahoo.com
էլ. էջ՝ www.fcsd.am
Հեռ. (+37491) 20-68-42, 20-68-43

Տպաքանակ՝ 9000

Տպագրված է «ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ տպարանում
ք. Երևան, Գ. Քոչարի 21

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի ընթերցող

Դուք ծանոթացաք «ՀՀ Ազգային Ժողովի 2007թ. ընտրություններին մասնակցող կուսակցություններ» Ընտրողի ուղեցույցին, որը մշակվել է Քաղաքացիական և Սոցիալական Զարգացման Հիմնադրամի կողմից՝ հանրությանը ՀՀ Ազգային Ժողովի 2007թ. ընտրությունների նախօրեին ընտրություններին մասնակցող կուսակցությունների գործունեության, խնդիրների, նպատակների և ծրագրային հիմնադրույթների վերաբերյալ ամփոփ, անաչառ և համադրելի տեղեկատվություն ներկայացնելու նպատակով:

Մեզ համար խիստ անհրաժեշտ և գնահատելի է Ձեր կարծիքը սույն ուղեցույցի վերաբերյալ: Խորապես շնորհակալ կլինենք Ձեր առաջարկությունների և դիտողությունների համար: Այդ նպատակով, մասնավորապես, խնդրում ենք լրացնել և մեզ ուղարկել սույն հարցաթերթիկը:

Շնորհակալություն

✂ .....

«ՀՀ Ազգային Ժողովի 2007թ. ընտրություններին մասնակցող կուսակցություններ» Ընտրողի ուղեցույցի գնահատման թերթիկ

1. Լրացնողի տվյալները և հասցեն (խնդրում ենք լրացնել ըստ ցանկության)

_____

_____

2. Լրացնողի գործունեության հիմնական ոլորտը և զբաղմունքը

- ☐ Պետական ծառայություն
- ☐ Անհատ ձեռներեցություն
- ☐ Հասարակական գործունեություն
- ☐ Ձանգվածային լրատվություն
- ☐ Թոշակառու
- ☐ Մասնավոր հատվածի վարձու աշխատող
- ☐ Գիտամանկավարժական գործունեություն
- ☐ Կուսակցակցական գործունեություն
- ☐ Ուսանող
- ☐ Այլ /նշել/

3. Ձեր ընդհանուր գնահատականը Ուղեցույցի մասին:

- ☐ Գերազանց
- ☐ Բավարար
- ☐ Լավ
- ☐ Վատ

4. Որքանո՞վ է օգտակար Ուղեցույցը Ձեզ համար:

- ☐ Շատ օգտակար
- ☐ Օգտակար
- ☐ Ոչ այնքան
- ☐ Ոչ օգտակար

5. Խնդրում ենք նշել Ուղեցույցի երեք լավագույն հատկանիշները:

_____

_____

_____

6. Խնդրում ենք նշել Ուղեցույցի երեք հիմնական թերությունները:

_____

_____

_____

7. Խնդրում ենք նշել Ձեր առաջարկությունները :

_____

_____

_____

8. Կարևորու՞մ եք արդյոք Ուղեցույցի վերահրատարակումը 2008 թ. – ին:

- ☐ Այո
- ☐ Ոչ

9. Ցանկանու՞մ եք արդյոք ստանալ Ուղեցույցի լրացուցիչ օրինակ:

- ☐ Այո
- ☐ Ոչ

Շնորհակալություն հարցաթերթիկը լրացնելու համար

✂ .....

«ՀՀ Ազգային Ժողովի 2007թ. ընտրություններին մասնակցող կուսակցություններ»
Ընտրողի ուղեցույցի գնահատման թերթիկ

Անուն՝
Հասցե՝

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հասցե՝ ք. Երևան, Թոթովենցի փ., 13 շ., բն. 24
էլ. հասցե՝ foundcsd@yahoo.com
էլ. էջ՝ www.fcsd.am
Հեռ. (+374 91) 20-68-42, 20-68-43